

Մաս 3 Պատրաստվածության պլան

Բաժին 10 Նախապատրաստական աշխատանքները և քաղաքային համակարգի աջակցությունը դրանց անցկացմանը

Գլուխ 126. Քաղաքի դերը

Քաղաքը նախազգուշացման միջոցառումների հետ միասին, վնասի կրճատման համար պետք է անցկացնի համապատասխան նախապատրաստում նվազագույն վնասի և քառուսի ժամանակ արտակարգ միջոցառումների իրականացմանը երկրաշարժից հետո:

Այժմ Երևան քաղաքում ստեղծված է արտակարգ իրավիճակների կառավարման կետ, որը ստանձնելու է ԱԻ շտաբի դերը և շտաբի ղեկավարությամբ քաղաքային և վարչական շրջանների ԱԻ հանձնաժողովները, արագ արձագանքման ծառայությունները, Երևան քաղաքի փրկարարական վարչությունը ԱԻ առաջացման դեպքում ստանձնելու են համապատասխան դերեր անհապաղ միջոցառումների կատարման համար: Քաղաքի ընդհանուր դերը հետևյալն է՝

1) Քաղաքը վերահսկում է պլանի առանձին բաժինների կատարմանը, որը նշված է 11-22 գլուխներում: Քաղաքը որոշում է բաժինները և պլանի առանձին բաժինների կատարումն և կազմակերպումն, հիմնվելով հիմնական պլանի դրույթների հիման վրա, մշակում է տարեկան մանրամասն պլաններ և ստանում է անհրաժեշտ ֆինանսավորում, որը բաշխում է համապատասխան անձնակազմին:

2) Քաղաքը որոշում է համապատասխան պատասխանատու անձեր, որոնք վերահսկում են և կատարելու են մոնիտորինգ առանձին պլանների և տալու են ցուցումներ պլանների անհապաղ կատարմանը և իրականացմանը: Քաղաքը ստանում է հաշվետվություններ պատասխանատու անձերից, որոնց հիման վրա կատարում է գործունեության համապատասխան կորրեկցիան և հրահանգների իջեցում:

3) Քաղաքը տարվա վերջին համապատասխան անձերից ստանում է հաշվետվություններ պլանների կատարման վերաբերյալ և որի հիման վրա գնահատում է արդյունքները և առաջադրում նոր նպատակներ և խնդիրներ հաջորդ տարվա համար:

Գլուխ 127. Քաղաքի գործադիր համակարգը, աջակցման համակարգը և քաղաքի գործունեության վերաբերյալ տվյալներ

Քաղաքը օգտագործելով նույն կառուցվածքը (համակարգը), ինչ-որ անհապաղ որոշումներ ընդունելու դեպքում, իրականացնում է նախապատրաստական աշխատանքներ: Պետք է նշել, որ ԱԻ շտաբը և այն մարմինները, որոնք երկրաշարժի ժամանակ ազդարարվում (հավաքվում) են նախապատրաստական միջոցառումների համակարգի մեջ չեն մտնում:

Տվյալ պլանի պատասխանատուն է քաղաքապետը:

«ԱԻՆ Երևան քաղաքի փրկարարական վարչությունը, ինչպես նշված էր Բաժին 4-ում, իրականացնում է համակարգողի գործընթացը:

Երևան քաղաքի վարչական շրջանների ԱԻ հանձնաժողովները, քաղաքային տարահանման հանձնաժողովը, ինչպես նաև վարչական շրջանների ղեկավարները, Երևան քաղաքի փրկարարական վարչության բաժինները (վարչական շրջանների), կազմակերպությունների


(վարչական շրջանների տարածքի) տարահանման հանձնաժողովները համակարգում են կատարումը համապատասխան ըստ քաղաքի և ըստ տեղերի:

Երևան քաղաքի փրկարարական վարչության համապատասխան ստորաբաժանումը պատասխանատու է տվյալ վարչական շրջանի միջոցառումների կատարման համար:

Երևան քաղաքի աղետների կառավարումը իրականացնում է ԱԻ մշտական գործող հանձնաժողովը, որի կառուցվածքը համանուն է Քաղաքի կառավարման համակարգին՝ քաղաքապետ, քաղաքապետի տեղակալներ, Երևանի բոլոր վարչությունների և բաժինների պետեր, Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներ, ինչպես նաև պետական կառավարման մարմինների տարածքային (տվյալ դեպքում Երևան քաղաքի) տվյալ դեպքում Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովներում ներգրավված են նաև հանրապետական նշանակության կազմակերպությունները:

Ղեկավարել միաժամանակ բոլոր արձագանքման ծառայությունները բավականին դժվար է, դրա համար հաշվի առնելով, որ բոլոր գործողությունները պետք է վերահսկվեն սեյսմիկ աղետի հետևանքների մեղմացման ու արձագանքման ժամանակ: Արագ արձագանքման ծառայությունների ղեկավարման և գործողությունների վերահսկման համար առաջարկվում է նկար 14-ում պատկերված կառավարման և վերահսկման համակարգի ներդնումը: Ինչպես երևում է նկարից, համակարգը բաղկացած է մակարդակներից և խմբերից, իսկ մանրամասն պլանի տարբեր բաժինների ապահովման համար հստակ որոշված են պատասխանատու բաժինները(կազմակերպությունները):

Նկար 14 Արագ արձագանքման ծառայությունների կառավարման ու գործունեության վերահսկման համակարգ



Աղյուսակ 47 Նախապատրաստական միջոցառումների պլանի կատարման պատասխանատու բաժիններ և կազմակերպություններ

Պլանի բաժին	Պատասխանատու անձ կամ մարմին	Հիմնական կատարող բաժիններ(մարմիններ)
Բնակչության ԹՄ/համադիրությունների նախապատրաստական միջոցառումներ	Երևան քաղաքի փրկարարական վարչություն	Երևան քաղաքի փրկարարական վարչություն
ԱՌ արձագանքման մեթոդների մշակման նախապատրաստական միջոցառումների	Երևան քաղաքի փրկարարական վարչություն	Երևան քաղաքի փրկարարական վարչություն
Կապի համակարգի և տեղեկատվության հաղորդման հետ կապված նախապատրաստական միջոցառումներ	Վերահսկման պատասխանատու	Կապի և ազդարարման ծառայություն Հասարակական կարգի պահպանման ծառայություն
Հրդեհների և վտանգավոր օբյեկտների(իրերի) հետ կապված նախապատրաստական միջոցառումներ	Մարդկանց կյանքի պահպանման պատասխանատու	Հակահրդեհային ծառայություն
Փրկարարական աշխատանքների և տարահանման կազմակերպման հետ կապված նախապատրաստական	Մարդկանց կյանքի պահպանման պատասխանատու	Փրկարար ծառայություն

միջոցառումներ		
Արտակարգ բեռնափոխադրումների հետ կապված նախապատրաստական միջոցառումներ	Վերահսկման պատասխանատու	Տրասնպորտային ծառայություն, Հասարակական կարգի պահպանման ծառայություն, Տեխնիկական ծառայություն
Հրատապ բժշկական օգնություն ցուցաբերելու հետ կապված նախապատրաստական միջոցառումներ	Մարդկանց կյանքի պահպանման պատասխանատու	Բժշկական ծառայություն, Հիգիենիկ հակահամաճարակային տեսչություն, Բնության և շրջակա միջավայրի պաշտպանության ծառայություն
Անհայտ կորածների և մահացածների աշխատանքների հետ կապված նախապատրաստական միջոցառումներ	Մարդկանց կյանքի պահպանման պատասխանատու	Փրկարար ծառայություն, Հատուկ սպասարկումների ծառայություն
Ջրի և սննդամթերքի պաշարների ապահովման հետ կապված նախապատրաստական միջոցառումներ	Վերահսկման պատասխանատու	Կոմունալ ծառայություն, Առևտրի և սննդի ապահովման ծառայություն
Ենթակառուցվածքների վերականգնման հետ կապված նախապատրաստական միջոցառումներ	Ենթակառուցվածքի պատասխանատու	Էներգետիկայի ծառայություն, <Երևան ԳԳՄՄ> ՓԲԸ, <Երևան Ջուր> ՓԲԸ, Կապի և ազդարարման ծառայություն
Աղբի, կենսական գործունեության թափոնների ութիլիզացիայի և փլուզումների մաքրման հետ կապված նախապատրաստական միջոցառումներ	Ենթակառուցվածքի պատասխանատու	Հիգիենիկ հակահամաճարակային տեսչություն

Բաժին 11 Բնակչության և համայնքների գործունեությունը երկրաշարժերին պատրաստվածության հարցերում

Գլուխ 128. Բնակչության դերը

1. Ավերիչ երկրաշարժերի հետևանքների վերացման փորձը թելադրում է մի շարք վարչական հնարավորությունների զարգացում, մասնավորապես բնակչության, համայնքների, դպրոցների և կազմակերպությունների հնարավորությունների զարգացում, գործառույթների հստակ բաժանում, ինչը կնպաստի գործողությունների ներդաշնակությունը:

ԱՒ արձագանքման պատրաստվածության ամենօրյա աշխատանքները նպաստում են բնակչության համախմբությանը և էական դեր են խաղում գիտակցված մոտեցման բարձրացմանը ԱՒ արձագանքման միջոցառումներին, ինչպես նաև մեծ դեր են խաղում ԱՒ արձագանքման միջոցառումների արդյունավետության բարձրացման հարցում: Տվյալ բաժնում կհստակեցվեն բնակչության, համայնքների և կազմակերպությունների պատրաստվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացման նկարագիրը:

2. Նախորդ բաժիններում արդեն հստակեցվել են «Բնակչության հիմնական պարտականությունները» և «Բնակչության դերը» սեյսմիկ վտանգի պայմաններում հուսալի հասարակայնության ստեղծման հարցում, վնասի նվազեցման և սեփական պատրաստվածության բարձրացման միջոցով՝ աղյուսակ 48:

Աղյուսակ 48. Պատրաստվածության բարձրացման միջոցառումներ

<p>Հետևանքների նվազեցման միջոցառումներ</p>	<ol style="list-style-type: none"> 1. Բազմաբնակարան շենքերի բնակիչների միավորումների հիմնում 2. Շենքի սեյսմակայունության և հրդեհային անվտանգության ապահովում 3.. Հրդեհների կանխարգելում 4. Կահույքի և պատուհանների ապակիների ամրացում 5. Շենքի պատերի պրոֆիլակտիկ զննում և ամրացում, շենքի երեսպատման ամրացում 6. Մասնակցություն տեղական համատիրության շրջանակներում փոխօգնության ամրապնդման աշխատանքներին 7. ԱՒ հետևանքների վերացման գիտելիքների և իրազեկվածության կատարելագործում
<p>ԱՒ պատրաստվածությանն ուղղված միջոցառումներ</p>	<ol style="list-style-type: none"> 8. կրակմարիչների և հակահրդեհային պարզագույն միջոցների ձեռք բերում 9. Սննդի, խմելու ջրի և առաջին անհրաժեշտության պարագաների (դյուրակիր ռադիոն պարտադիր) պահեստավորում. Առնվազն 3 օրվա հաշվարկով 10. ԱՒ դեպքում Ընտանիքի անդամների միջև պարտականությունների և անելիքների հստակ բաշխում, տարահանման երթուղիների և ընտանիքի անդամների հավաքի վայրի որոշում 11. Ակտիվ մասնակցություն Վարժանքներին 12. Շենքի համատիրության կամ այլ միավորումներին տեղեկատվության հաղորդում ընտանիքում առանձնահատուկ մոտեցում պահանջող անդամների վերաբերյալ:

Վնասի նվազեցման մանրամասն մեկնաբանումները ներկայացված են Բաժին 5-ում:
Սույն գլխում ներկայացված են մեկնաբանումներ՝ ճգնաժամային իրավիճակներում բնակչության սեփական պատրաստվածության վերաբերյալ:

Գլուխ 129. ԱԻ դեպքում բնակչության կողմից Սեփական պատրաստվածության ապահովմանն ուղղված միջոցառումներ

1. Բնակչությունը պետք է իրականացնի ստորև նշված միջոցառումները ԱԻ դեպքում Սեփական պատրաստվածության ապահովման համար: Լիազոր մարմնի տարածքային ստորաբաժանումը պետք է իրազեկի և իրականացնի լայնածավալ աջակցություն տվյալ միջոցառումների ապահովման համար:

1) Կրակմարիչներով և հակահրդեհային պարզագույն միջոցներով ապահովում՝ բնակչությունը նախապես պետք է ձեռք բերի կրակմարիչներ և մշտական պատրաստ վիճակում և հասանելի վայրերում պահպանի հրդեհաշիջման պարզագույն միջոցները: Լիազոր մարմնի տարածքային ստորաբաժանումը պետք է իրականացնի համապատասխան քարոզչություն և խթանի բնակչության գործողությունները հարցի լուծման համար:

2) 3 օրվա հաշվարկով Սննդի, խմելու ջրի և առաջին անհրաժեշտության պարագաների (դյուրակիր ռադիոն պարտադիր) պահեստավորում. Բնակչությունը պետք է պահեստավորի սննդի, խմելու ջրի և առաջին անհրաժեշտության պարագաների պահեստավորում, 3 օրվա հաշվարկով ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար և պահպանի դրանք բոլորին հասանելի վայրում: Նշված միջոցառմանը, հատկապես մանրակրկիտ և լրջորեն պետք է մոտենան բազմահարկ բնակելի շենքերի բնակիչները, քանի որ աղետի ժամանակ հնարավոր են շարքից դուրս գան վերելակները, աստիճանավանդակը և այլն: Ի լրումն սեփական ընտանիքի անվտանգությանը, բնակիչները պետք է նախատեսեն նաև համատիրության և Թաղային միավորի անդամների անվտանգության հարցերը: Լիազոր մարմնի տարածքային ստորաբաժանումը պետք է ունենա կուտակված պաշարների ցուցակներ և բնակչության այլ անհրաժեշտ պարագաների և փաստաթղթերի ցուցակները:

3) ԱԻ դեպքում Ընտանիքի անդամների միջև պարտականությունների և անելիքների հստակ բաշխում, տարահանման երթուղիների և ընտանիքի անդամների հավաքի վայրի և միմյանց հետ կապվելու եղանակների որոշում

4) Երկրաշարժից հետո, սեփական անվտանգության ապահովումից հետո յուրաքանչյուր բնակչի խնդիրները կլինեն ընտանիքի անդամների որպիսության և գտնվելու վայրի մասին տեղեկատվության հայթայթումը: Տեղեկատվության բացակայությունը կհանգեցնի այնպիսի բացասական հետևանքների. Ինչպիսիք են անհանգստություն, վտանգավոր տարածքներում հարազատների փնտրում, խուճապ: Այս կապակցությամբ յուրաքանչյուր բնակիչ պետք է նախապես նախապատրաստվի և նախապատրաստի ընտանիքի անդամներին իրականացնելու ժամանակին և կոնկրետ գործողություններ, բացասական գործոնները բացառելու նպատակով:

Աղյուսակ 49 Յուրաքանչյուր ընտանիքում նախապես քննարկվող հարցեր

1. Շինությունից երթուղին	Տարահանման	Որ տարահանման երթուղին առավել անվտանգ և կարճն է
2. Ընտանիքի հավաքի վայր	անդամների	Որ տարահանման հավաքակետ ուղևորվել Որտեղ կհավաքվեն ընտանիքի անդամները տարբեր տարահանման հավաքակետերում հայտնվելու դեպքում
3. Տարահանման կարգը		Ինչ հերթականությամբ լքել շինությունը Ով կոգնի ընտանիքի ծերերին և երեխաներին
4. Կապի եղանակները		Ինչպես կկապվեն միմյանց հետ ընտանիքի անդամները առանձին տարահանման դեպքում
5. Արտակարգ փաստաթղթեր, սննդամթերք, առաջին անհրաժեշտության պարագաներ	հավաքածո՝	Ով պատասխանատու ընտանիքում պաշարների պահպանման և թարմացման համար Ով իր հետ կվերցնի ընտանիքի Արտակարգ հավաքածո
6. Գործողություններ բռնկման դեպքում	հրդեհի	Ով և ինչպես կիրականացնի հրդեհաշիջում
7. Գազի, ջրի, էլեկտրականության մատակարարման դադարեցում		Ով կփակի փականները
8. Կապի եղանակները և օգնություն հարևաններին		Ով և ինչպես կիրականացնի

5) Ակտիվ մասնակցություն Վարժանքներին

Բնակչությունը պետք է ակտիվ մասնակցի անցկացվող վարժանքներին և խթանի երկրաշարժերի պատրաստվածությանն ուղղված միջոցառումները, որոնք իրականացվում են ԹՄ կամ այլ ոչ ֆորմալ կազմակերպությունների կողմից: Բնակիչները պետք է մասնակցեն ռիսկերի քարտեզների կազմմանը, այդպիսով ճանաչելով իրենց շենքի հարակից տարածքի վտանգավոր հատվածները:

6) Շենքի համատիրության կամ այլ միավորումներին տեղեկատվության հաղորդում ընտանիքում առանձնահատուկ մոտեցում պահանջող անդամների վերաբերյալ:

Այն ընտանիքները, որոնք ունեն առանձին ուշադրություն պահանջող ընտանիքի անդամ նախապես պետք է նախապես այդ մասին տեղեկացնեն համատիրությանը, լիազոր մարմնի տարածքային ստորաբաժանմանը կամ այլ պատասխանատու ատյաններին: Բնակիչները պետք է առավել ուշադիր լինեն նման հարևան ընտանիքներին:

Գլուխ 130. ԹՄ/Համատիրությունների դերը

Նախորդ գլուխներում արդեն նշվել են «ԹՄ/Համատիրությունների հիմնական պարտականությունները» և «ԹՄ/Համատիրությունների դերը» երկրաշարժի հետևանքների մեղմացման համար վարչական շրջանի հնարավորությունների զարգացման գործում, տես աղյուսակ 50-ում:

Աղյուսակ 50 Համատիրության կողմից հնարավոր վնասի նվազեցման և ԱԻ պատրաստվածության միջոցառումների իրականացում

Վնասի նվազեցման միջոցառումներ	1. «Հնարավոր երկրաշարժի Համատիրության պատրաստվածության պլան»-ի մշակում և հաստատում, համապատասխան գործնական
-------------------------------	--

	ձեռնարկների մշակում
	2. Հնարավոր երկրաչափ կոլեկտիվ պատրաստվածության իրականացման համար բնակիչների կամավոր Կազմակերպությունների հիմնում և զարգացում
	3. Շենքերի սեյսմակայունության բարձրացման միջոցառումների ձեռնարկում
	4. Կահույքի ամրացում, պատուհանների ապակիների ժապավենով պատում, ճաղերի ամրացում
	5. Ուսումնական ձեռնարկների մշակում, ուսումնական ծրագրերի իրականացում
	6. Հրդեհների կանխում
ԱԻ պատրաստվածություն նր ապահովվող միջոցառումներ	7. Մենդի, խմելու ջրի և առաջին անհրաժեշտության պարագաների պաշարների ստեղծում, ԱԻ դեպքում անհրաժեշտ գործիքների պատրաստ վիճակում պահպանում
	8. Համատիրության անդամների ցուցակի կազմում, լիազոր մարմնի կոնտակտային համարներ
	9. Ռիսկերի քարտեզների կազմում, հավաքակետերի կահավորում, և դրանց մասին բնակիչների տեղեկացում
	10. Համատիրության անդամներին օգնության ցուցաբերելու պատրաստվածության ապահովում
	11. ԱԻ վարվելակերպի ունակությունների զարգացում, տեսական և գործնական վարժանքներ

Աղյուսակ 51 Համատիրությունների, կազմակերպությունների և կրթական օջախների վերաբերյալ տվյալներ, ըստ վարչական շրջանների

ՀՀ	Վարչական շրջաններ	Դպրոցներ	ՆՈՒՀ	Համատիրություն
1.	Ավան	8	7	13
2.	Արաբկիր	22	13	20
3.	Աջափնյակ	20	16	42
4.	Դավթաշեն	6	5	11
5.	Էրեբունի	24	14	20
6.	Կենտրոն	34	20	2
7.	Մալաթիա-Սեբաստիա	20	24	16
8.	Նոր Նորք	23	22	20
9.	Նուբարաշեն	3	1	1
10.	Նորք Մարաշ	6	4	0
11.	Շենգավիթ	31	22	30
12.	Քանաքեռ-Զեյթուն	17	15	20
	Ընդամենը	214 ավագ, միջին, Երաժշտական, արվեստի դպրոցներ	163	195

Գլուխ 131. Խմելու ջրի, սննդամթերքի, առաջին անհրաժեշտության պարագաների պահուստի ապահովում, ԱԻ դեպքում անհրաժեշտ գույքի ձեռք բերում և մշտական պատրաստ վիճակում պահպանում

1. Ի լրումն 120 գլխում նկարագրված խմելու ջրի, սննդամթերքի անհատական պաշարների, համատիրությունը պետք է կազմակերպի Խմելու ջրի, սննդամթերքի առաջին անհրաժեշտության պարագաների պահեստավորում, բնակչությանը տրամադրելու համար, անհատական պաշարներից զրկված բնակչության համար: Այդ ամենի պահեստավորման համար պետք է ընտրվի ապահով, սեյսմակայուն վայրում/շինությունում: Բացի այդ ԹՄ/համատիրությունները պետք է կազմակերպեն ԱԻ հետևանքների վերացման համար անհրաժեշտ նյութական միջոցների, շինանյութի և գործիքների ձեռք բերում, պահպանում և հաշվառում: Ընտրել պահեստավորման վայր, նշանակել պատասխանատու և կազմակերպել պրոֆիլակտիկ այց բնակչության համար առնվազն տարին մեկ անգամ: Բնակչության շրջանում նշված միջոցների ճիշտ և արդյունավետ կիրառման ունակությունների պատվաստման նպատակով պետք է առնվազն տարին մեկ անգամ անցկացնել նպատակային վարժանքներ: Աղյուսակ 52-ում բերված է՝ ԱԻ հետևանքների վերացման համար համատիրությանն անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ցանկը:

Աղյուսակ 52 ԱԻ հետևանքների վերացման համար համատիրությանն անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ցանկ

Կապ, տեղեկատվության փոխանակում	Բարձրախոս, ռադիոկապի պարզագույն միջոցներ
Հրդեհի մարում	Կրակմարիչ, Դոյլ, ավազով պարկեր
Ապաբլոկավորում	Լինգ, գերաններ, ձեռքի սղոց, սանդուղք, կացին, քլունգ, մկրատ, պարան, ամբարձիչ, էլ սղոց
ԱԲՕ	Պատգարակ, բժշկական միջոցների հավաքածո, ԱԲՕ պարագաներ
Տարահանում	Հզոր լապտեր, ձեռքի վրա կապվող տարբերանշաններ, դրոշակներ, պարան, էլ. Գեներատոր, էլ. Սալիկ, ամաններ, ջրի տարողություններ, ջրի մաքրման ֆիլտրեր, վրաններ, բրեզենտե կտոր, վառելիք, բիոզուգարան, ծածկոցներ, սննդամթերք և պահեստ

2. Նշված պարագաների ձեռք բերման և պահպանման պատասխանատուներն են ԹՄ/համատիրությունները: Ձեռք բերման ֆինանսական աղբյուրներն են համապատասխանաբար՝ բնակիչները, կազմակերպությունները, կրթական հաստատությունները: Քաղաքապետարանը պետք է նախատեսի ձեռք բերման ծրագրերի դրոշագիաներ՝ ԱԻ-ում քաղաքի տեխնիկական պատրաստվածության գործընթացի խթանման նպատակով:

3. Կազմակերպության կողմից նշված պաշարների ստեղծումը պետք է հիմնված լինի սեփական և հասարակական անվտանգության ապահովման պատասխանատվության զգացումի գիտակցմամբ, մասնավորապես իր անձնակազմի և հարակից բնակչության

նկատմամբ, հատկապես ԱԻ պայմաններում, երբ առաջանում է սննդամթերքի և առաջին անհրաժեշտության պարագաների սղություն: Այսպիսով, տնտեսվարող սուբյեկտի կողմից սպասվում է էական օգնություն հարակից ԹՄ-ներին, մասնավորապես պաշարների ձեռք բերման և պահպանման հարցում:

Գլուխ 132. Համատիրության անդամների ցուցակների կազմում, լիազոր մարմնի կոնտակտային տեղեկատվություն

Համատիրությունը պետք է կազմի իր անդամների ցուցակներ (բնակիչներ, ծառայողներ, դասատուներ, սովորողներ), առանձին ցուցակով՝ առանձնահատուկ մոտեցում/խնամք պահանջող անձինք, լիազոր մարմնի տարածքային ստորաբաժանման կոնտակտներ: Ավելի մանրակրկիտ ցուցակներ պետք է կազմվեն լիազորների կամ շենքի մուտքերի պատասխանատուների մակարդակով, հանձնարարելով նրանց կազմել և պահպանել համապատասխան հաշվառման մատյաններ (տես Աղյուսակ 53), ապահովվելով այդ մատյանների տեղեկատվության անվտանգությունը:

Աղյուսակ 53 Հաշվառման մատյանների օրինակելի ձև

Բաժիններ	Բովանդակություն
ԱԻ պատրաստվածության կամավորական խմբեր	Շենքերի քանակ, շենքերի կառավարում, վարժանքների անցկացում, հարակից վտանգավոր տարածքների բացահայտում, տարահանման, պատուպարման և բնակիչների հավաքի վայրի սահմանում
Շենքեր	Բնակիչների մասին տեղեկատվություն, ըստ տարիքի, ըստ սեռի, կոնտակտային տվյալներ, բարեկամներ
Առանձնահատուկ մոտեցում/խնամք պահանջող անձինք,	առանձնահատուկ մոտեցում/խնամք պահանջող անձինք, իրավիճակ, ծանրության աստիճան, խնամող կամ օգնություն ցուցաբերելու պատրաստակամություն հայտնաձև անձինք
Մասնագիտացված ռեսուրսներ	Բժիշկներ, քույրեր, տեխնիկական մասնագետներ և այլ

Գլուխ 133. Ռիսկերի քարտեզների կազմում, պատուպարման և հավաքի վայրերի կահավորում և դրանց տեղակայման վայրերի մասին բնակչության տեղեկացում

Ամեն ԹՄ պատասխանատուներ ուղքով շրջելով իր տարածքը պետք է կազմի ռիսկերի և ռեսուրսների քարտեզ: Որտեղ առանձին նշվում է երկրաշարժի դեպքում վտանգավոր տարածքները, ինքնաապահովման միջոցների տեղակայման վայրերը, պատուպարման և հավաքի վայրերը: Այս քարտեզների կազմման գործընթացում անհրաժեշտ է ներգրավել տարածքի համատիրությանը, շենքերի պատասխանատուներին, կազմակերպություններին և կրթական հաստատություններին, բնակիչներին:

Աղյուսակ 54 Քարտեզի կազմման ժամանակ պարտադիր կետեր

Ռիսկեր	1. Փլուզմանը ենթակա ոչ կայուն շինություններ, շենքերի երեսպատման սալիկներ,
--------	---

	պատշգամբներ, օդորակիչների արտաքին բլոկներ, ցուցանակներ, պատուհաններ և այլն
	2. Գազի խողովակներ, գազի կարգավորման բլոկներ, բենզալցակայաններ, էլ մատակարարման ենթակայաններ
	3. Փլուզման, շրջման ենթակա, ոչ կայուն հենարաններ, հենասյուներ, էլ. լարեր և սյուներ, լույսերի սյուներ
	4. Աղբի հավաքման կետեր
	5. Նեղ անցումներ, փողոցներ, խիտ ավտոկանգառներ, շրջմանը ենթակա ցանկապատներ, պարիսպներ, ծառեր
	6. Շինարարական և վերականգնողական աշխատանքների տեղամասեր, հատկապես վտանգավոր նյութերի կիրառմամբ, փլուզմանը ենթակա ստորգետնյա և վերգետնյա անցումներ
Ռեսուրսներ	7. Քաղաքի կամ վարչական շրջանի ադմինիստրացիայի շենքեր, հրշեջ փրկարարական ջոկատներ, ոստիկանություն, դպրոցներ մանկապարտեզներ Լիազոր մարմնի ստորաբաժանումներ, բնակչությանը օգնություն մատուցող կամ տարահանմանն աջակցող այլ պետական կազմակերպությունների շենքեր
	8. Այգիներ, ազատ տարածքներ, պատսպարման և հավաքի վայրեր
	9. Լայն ճանապարհներ, ավտոբազաներ, տրասնպորտային միջոցներ
	10. Սննդի և առևտրի կազմակերպություններ, կետեր: Ջրամատակարարման կետեր, սննդամթերքի և կենսաապահովման միջոցների ժամանակավոր պահեստներ
	11. Էլ. գեներատորային կայաններ, լուսավորում և ռադիոկապ ապահովող միջոցներ, դրսի հեռախոսներ, կապի կայաններ/ կապի և էներգամատակարարման միջոցներ
	12. Հիդրանտներ, հրդեհաշիջման միջոցներ հրշեջ և ջրի մեքենաներ
	13. Հիվանդանոց, պոլիկլինիկա, դեղատուն, ԱԲՕ և պատգարակների պահեստներ և այլ /բուժ/
	14. Վթարավերականգնողական տեխնիկայի և վթարավերականգնողական ու շինարարական միջոցների պահեստավորման վայրեր

ԹՄ պետք է տրամադրեն ռիսկերի և ռեսուրսների քարտեզները իր բնակչության և հարևան ԹՄ/Համատիրությանը, վտանգավոր տարածքներին և առկա ռեսուրսների մասին տեղեկատվություն ունենալու նպատակով, ինչպես նաև ԱԻ դիմակայման պատրաստվածության բարձրացման նպատակով:

Մշտական վարժանքները այս քարտեզների կիրառմամբ, կամրապնդի ԱԻ դիմակայման և պարտականությունների բաշխման և իմացության բարձրացմանը:

Բոլոր կրթական հաստատությունները, որոնք ԱԻ դեպքում վերաձվում են ապաստարանների կամ հավաքման վայրերի, պետք է իրականացնեն իրենց վարչական շինությունների հարմարեցման և պատրաստության միջոցառումներ (տես բաժին 15)

Գլուխ 134. Փրկության պատրաստվածության և համատիրության անդամների օգնության ցուցաբերման պատրաստվածության բարձրացում

Երկրաշարժի դեպքում համատիրության յուրաքանչյուր անդամ պետք է ապահովի իր անվտանգությունը, որից հետո ցուցաբերի օգնություն մնացածին: Յուրահատուկ մոտեցում են պահանջում առանձին ուշադրություն պահանջող համատիրության անդամները: Այս առումով կարևոր է շենքերի պատասխանատուների նախապես աշխատանքները կազմված մատյանների հիման վրա:

Բնակչության շրջանում անհրաժեշտ է իրականացնել բացատրական աշխատանքներ՝ տարահանման, հավաքի և պատուպարման վայրերում վարվելակերպի կանոնների վերաբերյալ: Նախապես կնքել պայմանագրեր սննդամթերք մատակարարող կազմակերպությունների հետ և տեղեկացնել բնակչությանը թե դրա, թե կամավորական փրկարարական կազմակերպությունների մասին, կազմակերպել պարբերաբար հանդիպումներ կամավորների հետ:

Գլուխ 135. Տեսական և գործնական վարժանքների անցկացման միջոցով Երկրաշարժի դեպքում Գործնական զարգացում

Տեսական և գործնական հմտությունների ուսուցումը ԱԻ պատրաստվածության բարձրացումը կոչված է ԱԻ գործողությունների արդյունավետության բարձրացմանը, երբ գործողությունների արդյունավետության հասնելը հնարավոր չէ իրականացնել առանց նախնական պատրաստվածության: Վարժանքները հնարավորություն են ընձեռնում հայտնաբերել ԱԻ արձագանքման պլանավորած տեսական միջոցառումների թույլ տեղերը, ինչպես նաև պատվաստել բնակչությանը ԱԻ վարվելակերպի և ինքնափրկության կանոնները:

Գլուխ 136. Բնակչությանը սեյսմիկ աղետի գիտակցված մոտեցման ունակությունների պատվաստում

ԹՄ/Համատիրությունը ԱԻՆ տարածքային ստորաբաժանման հետ/միջոցով պետք է կազմակերպեն բնակչության իրազեկվածության բարձրացման միջոցառումներ՝ ուսուցման, սեմինարների, ձեռնարկների տարածման և Աջին անհրաժեշտության պարագաների ցուցահանդես-վաճառքների միջոցով: Այս միջոցառումները պետք է հիմնված լինեն երկրաշարժի հետևանքների մոդելավորված իրավիճակների հիման վրա, խթանելով բնակչության գիտակցված մոտեցումը սեյսմիկ աղետի, վարվելակերպի կանոնների և ԱԻ դիմակայելու նկատմամբ:

Գլուխ 137. Հատուկ ուսուցման միջոցով գործնական հմտությունների զարգացում

1. Երկրաշարժի դեպքում վարվելակերպի կանոնների ուսուցման ուղղությամբ Պարբերաբար անցկացվող գործնական վարժանքները և դրանց ամրապնդումը

համատիրության լիազոր մարմնի և կամավորական փրկարարական կազմավորումների հետ համարվում է ԱԻ պատրաստվածության իրական զարգացում: Առաջարկվում է տարեկան 1 ավելի գործնական վարժանքների անցկացում, ներգրավվողների ֆունկցիոնալ պարտականությունների ստուգմամբ՝ տարահանում, տեղեկատվության հավաք և տարածում, հրդեհների մեկուսացում, ԱԲՕ, սննդամթերքի բաշխում և այլն, համաձայն 6-րդ բաժնի:

Առաջարկվող վարժանքների տեսակներն են՝

ա. Մեկ համատիրության շրջանակներում

բ. 2 և ավելի ԹՄ համատեղ վարժանք

գ. Տեղական իշխանությունների/լիազոր մարմնի հետ համատեղ վարժանքներ բնակչության առավելագույն ներգրավմամբ – Համալիր Վարժանքներ:

Աղյուսակ 55 Վարժանքների տեսակները և դրանց բովանդակությունը

Վարժանքների տեսակները	Բովանդակությունը
Նախապես պլանավորում և ԱԻ գործելու պատրաստվածություն	Անձնակազմի ազդարարում և հավաք, ԱԻ շտաբերի աշխատանքների կազմակերպում, տեղեկատվության հավաք և հաղորդում, անհապաղ արձագանքման կազմակերպում ըստ քարտեզների և այլն
Ուժերի օպերատիվ կառավարում ԱԻ իրական պայմաններում	ԱԻ շտաբերի աշխատանքներ, տեղեկատվության հավաք և հաղորդում, բնակչության իրազեկում, տարահանում, ապաստարանների շահագործում, տուժածների ապաբլուկավորում և փրկում, հումանիտար օգնության տեղափոխում և բաշխում, ճանապարհների մաքրում, վթարավերականգնողական աշխատանքներ, հարևան համայնքների օգնության ցուցաբերում և օգնության հայտի ներկայացում, անհապաղ արձագանքման կազմակերպում ըստ քարտեզների և այլն

2. Յուրաքանչյուր ԲԿ/ԹՄ/Հ ներկայացնում է իրանից բնակիչների մի խումբ, որոնցից յուրաքանչյուրի հնարավորությունները ինքնուրույն ապահովելու սեփական անվտանգությունը երկրաշարժի ժամանակ ն բավականին ցածր է: Այդ պատճառով ԲԿ/ԹՄ/Հ և բնակիչների նմանատիպ այլ կառույցները ներառված են ԱԻ դիմակայելու քաղաքի պատրաստվածության համակարգում, Քաղաքի համապատասխան պատասխանատվության ներքո՝ գործնական վարժանքների և այլ տիպի կանխատեսող/կանխարգելող միջոցառումների միջոցով բնակչության շրջանում սեյսմիկ աղետի կոլեկտիվ պաշտպանության մեխանիզմների զարգացման համար:

3. Բոլոր կազմակերպություններում պետք է իրականացվի առնվազն տարեկան մեկ գործնական վարժանք՝ երկրաշարժերին պատրաստվածությանն ուղղված, համաձայն համապատասխան ծրագրի, որը արդյունավետ կհամադրի գործնական պատրաստման հիմնական ուղղությունները, ըստ Աղյուսակ 56-ի:

Աղյուսակ 56 Կազմակերպություններում ԱԻ պատրաստվածության ապահովման վարժանքների հիմնական ուղղությունները

Ուղղություն	Գործնական պարապմունք
-------------	----------------------

Տեղեկատվության հավաք և հաղորդում	Իրավիճակի գնահատում վնասի ծավալների մասին և զեկույց ղեկավարությանը, անձնակազմի իրազեկում իրավիճակի վերաբերյալ և խնդրադրում, ԵՓՎ տեղեկատվության հաղորդման կարգը, այլ մարմիններին տեղեկատվության հաղորդման կարգը
Տարահանում	Տարահանման իրականացման կարգը, հրդեհային ահազանգման օգտագործման կարգը, տարածքների, որպես ապաստարաններ օգտագործման կարգը
Հրդեհների կանխում	Հրդեհավտանգ սարքավորումների ցանցի անջատման կարգը, վառելիքի մատակարարման դադարեցում, վառելիքի և այլ վտանգավոր նյութերի արտահոսքի կանխում
Հրդեհաշիջում	Կրակմարիչների, ներքին և արտաքին ջրամատակարարման և հրշեջ պոմպերի օգտագործման կարգերը
Փրկում և անհետաձգելի օգնության ցուցաբերում	Տուժածների տեղափոխում, Տուժածների և բեռների՝ պարաններով կապելու տեխնիկա (իջեցման նպատակով և այլ), վիրակապում ձեռքի տակ եղած պարագաներով (թաշկինակ, շորի կտոր և այլն), անհետաձգելի օգնության այլ միջոցառումներ

4. Քաղաքի դպրոցներում, Կրթության վարչության և ԵՓՎ և ՀՀ ԱԻՆ այլ կառույցների համագործակցության ներքո, աշակերտների անվտանգության ապահովման համար պետք է կատարեն ակտիվ աշխատանքներ վարժանքների կազմակերպման և անցկացման ուղղությամբ: Առաջարկվում է մշակել վարժանքների ծրագիր իրական իրավիճակների մոդելավորմամբ, բայց միևնույն ժամանակ բավականին պարզ և ընկալելի երեխաների համար, վերջիններիս ակտիվ մասնակցության խթանման նպատակով: Վարժանքների արդյունքներով պետք գնահատվեն ոչ միայն աշակերտները, այլ նաև ուսուցչական կազմը, մասնավորապես աշակերտների գործողությունների ղեկավարման/ուղղորդման և անվտանգության կանոնների պահպանման հարցերում:

5. Ի հայտ եկած թերությունները, անպայման, պետք է նախատեսվեն հաջորդ վարժանքներում: Վարժանքները պլանավորելիս պետք է ներառեն նաև դպրոցի և ՀՀ ԱԻՆ տարածքային ստորաբաժանման, հարևան կազմակերպության, ԲԿ/Հ միջև փոխհամագործակցության հիմնահարցերի ամրապնդումը: Վարժանքների ժամանակ նաև պետք է ստուգվեն ծնողների և երեխաների խնամողների միջև տեղեկատվության փոխանակման հարցերը, երեխաների անվտանգության ապահովման և դպրոցներից դեպի տուն անվտանգ տարահանման երթուղիների որոշման հարցերը: Այն դպրոցները, որոնք նախատեսված են որպես տարահանման վայրեր, պետք է անցկացնեն նաև դպրոցների տարածքները տարահանվողներին ընդունման համար նախապատրաստման թեմաներով վարժանքներ, ԵՓՎ և ՀՀ ԱԻՆ ստորաբաժանումների հսկողության ներքո:


Գլուխ 138. ԹՄ/Համատիրության շրջանում համագործակցության մեխանիզմները

1. ՀՀ ԱԻՆ պետք է առաջարկի համատիրությունների բաժանումը՝ ԱԻ պատրաստվածության ապահովման տարածքների, որոնք իրենցից կներկայացնեն 500 մետր շառավիղով տարածքներ: Այդ քառակուսում պետք է հիմնվի ԱԻ պատրաստվածության ապահովման տարածքային միավոր, որը պետք է հիմնված լինի դպրոցների, Համատիրության (շենքերի միավորման), տնտեսվարող սուբյեկտների միջև արտակարգ փոխհամագործակցության համակարգի զարգացման հիմունքի վրա: Նշվածներից յուրաքանչյուրը պետք է ներգրավված լինի հնարավոր երկրաշարժի պատրաստվածության պլանի մշակման գործընթացում և այդ պլանի հիման վրա կոլեկտիվ վարժանքներին:

2. ԵՓՎ տարածքային բաժինները պետք է կանոնակարգեն այն կազմակերպությունների գործունեությունը, որոնք ունեն ինժեներական տեխնիկա և ԱԻ պայմաններում անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ, այն կերպ, որ յուրաքանչյուր նման կազմակերպության երկրաշարժի պատրաստվածության պլանով սահմանված լինի նշված միջոցների տրամադրման կարգը իր տարածքային միավորում գտնվող դպրոցներին և Համատիրությանը (շենքերի միավորմանը):

Պետք է ապահովվի գտնվող բոլոր միջոցների համատեղ օգտագործման արդյունավետությունը և փոխհամագործակցության կայուն մեխանիզմները, տարածքային միավորման մեջ համակողմանի անվտանգությունը ապահովվելու նպատակով:

Նկար 15 Տարածքային միավորման մեջ ԱԻ պատրաստվածության ապահովման փոխհամագործակցության կազմակերպման



3. Մասնագետների գործուղումը ԱԻ պատրաստվածության ապահովման նպատակով՝ Տարածքային միավորման մեջ ԱԻ պատրաստվածության ապահովման միջոցառումների

աջակցման նպատակով ՀՀ ԱԻՆ տարածքային ստորաբաժանումները ՀՀ ԱԻՆ անմիջական վերահսկման և համակարգման ներքո պատրաստում և ուղարկում են իրենց մասնագետներին Տարածքային միավորումներ սեմինարների և աշխատանքային հանդիպումներ անցկացնելու նպատակով: Միաժամանակ այդ մասնագետները իրականացնում են Տարածքային միավորումների անդամների կարծիքների և առաջարկությունների հավաք, վերլուծություն և համակարգում:

Այդ մասնագետների աշխատանքների առաջարկվող հիմնական բովանդակությունն է՝


1) Բնակչությանը աղետի իրական սպառնալիքի մասին գիտակցված մոտեցման պատվաստում, իրենց բնակավայրի սեյսմիկ ռիսկի ազդեցության նկարագրության, փլուզումների իրական պարտքերի նկարագրման և աղետի ծավալների ու այլ վտանգավոր հետևանքների բացատրման միջոցով:

2) ԱԻ պատրաստվածության ապահովման միջոցառումների ցանկի ուսումնասիրում և քննարկում, հատկապես այդ միջոցառումների արտացոլվածությունը հնարավոր երկրաշարժի պատրաստվածության պլանում:

Մասնագետները պետք է ներգրավվեն իրենց կողմից կազմակերպված այս միջոցառումներին տարածքային միավորման բոլոր սուբյեկտների ներկայացուցիչներին:

Մասնագետների տեղերում ԱԻ աջակցման միջոցառումների համակարգը պատկերված է նկար 16-ում:

Նկար 16 ԱԻ աջակցման միջոցառումների համակարգ



Գլուխ 139. Տարածքային միավորումներին ԱԻ պատրաստվածության ապահովման հարցում Վարչական աջակցություն

1. Ջրի, սննդի, առաջին անհրաժեշտության պարագաների պաշարների ստեղծում, ԱԻ ժամանակ անհրաժեշտ գործիքների և գույքի ձեռք բերում ու պատրաստ վիճակում պահպանում

Տեղական մակարդակում Ջրի, սննդի, առաջին անհրաժեշտության պարագաների պաշարների, ԱԻ ժամանակ անհրաժեշտ գործիքների և գույքի ձեռք բերումը ու պատրաստ վիճակում պահպանումը իրականացվում է Տարածքային միավորման միջոցներով:

Քաղաքի իշխանությունները և ԵՓՎ պետք է կազմակերպեն վերը նշված միջոցառումների իրականացման աջակցություն և ակտիվացում:

Աղյուսակ 57 Տարածքային միավորման Արտակարգ պաշարներով ապահովվածության վարչական աջակցություն

ՀՀ ԱԻՆ	Իրավական դաշտի/հիմքի ստեղծում պարտադիր արտակարգ պաշարներով ապահովվածության ու պատրաստ վիճակում պահպանման մասին
	Ջրի, սննդի, առաջին անհրաժեշտության պարագաների տիպային ցանկի ու մեկ մարդու օրեկան չափաբաժնի մշակում և ԵՓՎ միջոցով տարածում
	ԱԻ ժամանակ անհրաժեշտ գործիքների և գույքի տիպային ցանկի մշակում ու դրանց քանակի ըստ մարդկանց բաշխվածության նորմերի սահմանում և ԵՓՎ միջոցով տարածում
	Տարածքային միավորման Արտակարգ պաշարներով ապահովվածության վերահսկում, անհրաժեշտության դեպքում գործընթացի անմիջական ղեկավարում
Քաղաքապետարանի Կրթության վարչություն	Դպրոցներում Արտակարգ պաշարներով ապահովվածության և պատրաստվածության վերահսկում
	Համապատասխան գնումների ֆինանսավորում
Քաղաքապետարանի Կոմունալ-էներգետիկ վարչություն	ԹՄ/Համատիրություններում Արտակարգ պաշարներով ապահովվածության և պատրաստվածության վերահսկում
Քաղաքապետարանի Առևտրի վարչություն	Կազմակերպությունների Արտակարգ պաշարներով ապահովվածության և պատրաստվածության վերահսկում
ԵՓՎ	Արտակարգ պաշարների պահպանման պայմանների, հաշվառման վերահսկում, Տարածքային միավորումներում պարբերաբար ստուգայցերի իրականացում

2. Համատիրության անդամների և խնամք պահանջող մարդկանց և ԱԻՆ կոնտակտային տեղեկատվության առանձին ցուցակների կազմում
ԹՄ-ին պետք է հանձնարարվի կազմել Համատիրության անդամների և խնամք պահանջող մարդկանց և ԱԻՆ կոնտակտային տեղեկատվության առանձին ցուցակներ:
Քաղաքային իշխանությունները և ԵՓՎ պետք է աջակցեն և ակտիվացնեն վերը նշված միջոցառումների իրականացումը, համաձայն Աղյուսակ 58-ի:

Աղյուսակ 58 Խնամք պահանջող մարդկանց աջակցման միջոցառումները

ՀՀ ԱԻՆ	Իրավական դաշտի/հիմքի ստեղծում համապատասխան ցուցակների կազմման, պահպանման և թարմացման մասին
	Ցուցակներում պարտադիր տեղեկատվության ցանկի սահմանում
	ՀՀ ԱԻՆ կոնտակտային տեղեկատվության տրամադրում
Քաղաքապետարանի Կրթության վարչություն	Դպրոցներում համապատասխան ցուցակների կազմման, պահպանման և թարմացման գործընթացի աջակցում և անմիջապես ղեկավարում
Քաղաքապետարանի	Համատիրություններում համապատասխան ցուցակների կազմման,

Կոմունալ-էներգետիկ վարչություն	պահպանման և թարմացման գործընթացի աջակցում և անմիջապես ղեկավարում
Քաղաքապետարանի Առևտրի վարչություն	Կազմակերպությունների համապատասխան ցուցակների կազմման, պահպանման և թարմացման գործընթացի աջակցում և անմիջապես ղեկավարում
ԵՓՎ	համապատասխան ցուցակների կազմման, պահպանման և թարմացման գործընթացի մշտական վերահսկում
	ՀՀ ԱԻՆ Արդյունքների և վիճակի մասին պարբերաբար զեկուցում

3. Ռիսկերի և ռեսուրսների քարտեզների կազմում, պատասպարման և հավաքի վայրերի կահավորում, բնակչության իրազեկում դրանց տեղակայման մասին: Այս նպատակով քաղաքի իշխանությունները և ԵՓՎ Տարածքային միավորումներին ցուցաբերում են հետևյալ օժանդակությունը (Աղյուսակ 59) ռիսկերի և ռեսուրսների, վտանգավոր հատվածների, անվտանգության ապահովման միջոցների քարտեզի վրա արտացոլման հարցում: Այս գործընթացը իրականացվում է ԹՄ տարածքով ոտքով անցնելու արդյունքում:

Աղյուսակ 59 Ռիսկերի և ռեսուրսների քարտեզների կազմակերպման հարցում Տարածքային միավորումներին ցուցաբերվող վարչական օգնություն

ՀՀ ԱԻՆ	Իրավական դաշտի/հիմքի ստեղծում ռիսկերի և ռեսուրսների քարտեզների պարտադիր կազմման և գործնական կիրառման մասին
	Ռիսկերի և ռեսուրսների քարտեզներում պարտադիր արտացոլվող տեղեկատվության հրահանգների կազմում
	Տարածքային միավորումներին տեղեկատվության տրամադրում՝ իրենց տարածքի վտանգավոր արտադրությունների և անվտանգության միջոցների վերաբերյալ
	Պաստառների տրամադրում՝ պատասպարանների/հավաքի տեղամասերի և աղետի պատրաստվածության հիմնական դրույթների արտացոլմամբ
Քաղաքապետարանի Կրթության վարչություն	Դպրոցներին ռիսկերի և ռեսուրսների քարտեզների կազմման և գործնական կիրառման հարցերում աջակցության ցուցաբերում և այդ գործընթացների անմիջական ղեկավարում
Քաղաքապետարանի Կոմունալ-էներգետիկ վարչություն	ԹՄ/Համայնատիրություններին ռիսկերի և ռեսուրսների քարտեզների կազմման և գործնական կիրառման հարցերում աջակցության ցուցաբերում և այդ գործընթացների անմիջական ղեկավարում
Քաղաքապետարանի Առևտրի վարչություն	Կազմակերպություններին ռիսկերի և ռեսուրսների քարտեզների կազմման և գործնական կիրառման հարցերում աջակցության ցուցաբերում և այդ գործընթացների անմիջական ղեկավարում
ԵՓՎ	Քաղաքի բաժանում զոնաների՝ ըստ յուրաքանչյուր Տարածքային միավորման հատկացված հատվածների
	Ռիսկերի և ռեսուրսների քարտեզների կազմման և գործնական կիրառման հարցերում գործընթացների համալիր ղեկավարում
	Բնակչության շրջանում ռիսկերի և ռեսուրսների քարտեզների տարածում
	ԹՄ-ի և այլ պատասխանատու անձանց ռիսկերի և ռեսուրսների քարտեզների գործնական կիրառման գործընթացների համալիր ղեկավարում
	Ռիսկերի և ռեսուրսների քարտեզների կազմման և թարմացման

	գործընթացների մշտական վերահսկում և արդյունքների մասին ՀՀ ԱԻՆ զեկույցների ներկայացում
--	--

4. Սեփական և հարևան Տարածքային միավորման բնակիչներին օգնության ցուցաբերման պատրաստվածություն ՀՀ ԱԻՆ և ԵՓՎ, Քաղաքապետարանի Կրթության, Կոմունալ-էներգետիկ և Առևտրի վարչությունները պետք է աջակցեն Տարածքային միավորումներին ԱԻ ժամանակին օգնության ցուցաբերման միջոցառումների պատրաստվածության հարցերում: Այս միջոցառումներում պետք է արտացոլված լինեն ԱԻ ժամանակին օգնության և պատրաստվածության հիմնական դրույթները, խոցելի մարդկանց խնամքի դրույթները և նման գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների մասին տեղեկատվությունը, ինչպես նաև պատասխարանների/հավաքի վայրերի գործարկման կարգերը:

5. Տեսական և գործնական վարժանքների միջոցով երկրաշարժի դեպքում գործնական հմտությունների զարգացում պետք է իրականացնեն ՀՀ ԱԻՆ ԵՓՎ անհրաժեշտ վարչական գործունեությունների միջոցով՝ իրավական դաշտի հիմնման համար՝ քաղաքում գործնական վարժանքների պարտադիր անցկացման համար: Այդ իրավական ակտերում պետք է նշվի վարժանքների պարբերականությունը և ծավալները (10 համատիրության համար ամեն վարչական շրջանում, և 70 համատիրության համար քաղաքում տարեկան մեկ անգամ):

Քաղաքապետարանի Կրթության, Կոմունալ-էներգետիկ և Առևտրի վարչությունները պետք է վերահսկեն ԹՄ-ի, դպրոցների, կազմակերպությունների կողմից անցկացվող Տեսական և գործնական վարժանքները:

6. ԵՓՎ պետք է աջակցի Տեսական և գործնական վարժանքների անցկացմանը իր մասնագետների (հրշեջ-փրկարարների, ԱԲՕ և այլ մասնագետների) այդ վարժանքներին ներգրավված միջոցով:

ԱԻՆ պետք է կարճ ժամանակում ապահովի Աղետների կառավարման կենտրոնի (քաղաքի ՃԿԿ կամ նման կենտրոնի հիմնում) գործարկումը՝ քաղաքը հնարավոր երկրաշարժին դիմակայելու պատրաստվածության ապահովման համար, ինչպես նաև ակտիվացնելու տեսական ուսուցումը ինչպես պաշտոնյաների և ԹՄ/Համայնատիրությունների բնակչության պաշտպանության համար պատասխանատու անձանց, այնպես էլ բնակչությանը:

Գլուխ 140. Կամավորական կազմավորումների հետ համատեղ միջոցառումների և փոխհամագործակցության իրականացում

Երկրաշարժի դեպքում տուժածներին իրական/գործնական օգնության ցուցաբերման նպատակով քաղաքի իշխանությունները պետք է նախապես կազմակերպեն Կամավորական կազմավորումների և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ միջոցառումների և փոխհամագործակցության իրականացումը:

ԱԻ Կամավորական՝ դա անհատներ են կամ մարդկանց մի խումբ, որոնք անմիջապես աղետից հետո պատրաստակամություն են հայտնում կամավոր հիմունքներով իրենց միջոցներով աջակցելու լիազոր մարմնի կողմից աղետի հետևանքների վերացման գործողություններին, տուժածներին օգնության ցուցաբերմանը և կենսաապահովման և բնականոն կյանքի պայմանների վերականգնմանը, ինչպես նաև չնայած իրենց զբաղվածությանը ժամանակ հատկացնել բնակչության ուսուցմանը:

Կամավորականները ձևավորվում են հետևյալ խմբերից՝ 1-ին. Հասարակական և ոչ կոմերցիոն կազմակերպությունների, կազմակերպությունների և կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչները. 2-րդ. Ոչ մի կազմակերպչական միավորման մեջ չընդգրկված ֆիզիկական անձինք/անհատներ, որոնք ունեն անհատ փրկարարի որակավորում և պատրաստակամություն են հայտնել կամավոր մասնակցելու աղետի հետևանքների վերացմանը. 3-րդ. Կամավորականներ, որոնք աղետի գոտուց դուրս ծավալում են օգնության (ֆինանսական, նյութատեխնիկական, պարենային և իրային) հայթայթման գործունեություն:

Գլուխ 141. Կամավորականի աշխատանքի բովանդակությունը/էությունը

1. Աի պայմաններում Կամավորականները բաժանվում են երկու ֆունկցիոնալ խմբերի՝ «Կամավորականներ-մասնագետներ»՝ բժիշկներ, բուժքույրեր, ճարտարապետ-շինարարներ և այլ, անձինք որոնք աշխատանքի բերումով ունեն հատուկ/մասնագիտացված գիտելիքներ և ունակություններ.

2. «Ընդհանուր պրոֆիլի Կամավորականներ»՝ անհատներ կամ մարդկանց խմբեր, որոնք ներգրավվում են տարահանման վայրերում հաշվառման, սննդի պատրաստման, օգնության բաժանման և այլ նման (հատուկ մասնագիտական գիտելիքներ և ունակություններ չպահանջող) գործունեության մեջ տես Աղյուսակ 60:

Աղյուսակ 60 Կամավորականների ֆունկցիոնալ խմբերը և դրանց կազմը

<p>«Կամավորականներ-մասնագետներ»</p> <ul style="list-style-type: none"> - Բժիշկներ, ատամնաբույժներ, միջին և կրտսեր բուժ անձնակազմ - Շենքերի շինությունների վիճակի գնահատման մասնագետներ, փլուզման և վթարայնության աստիճանի գնահատման տեսանկյունից - Թարգմանիչներ (բանավոր, գրավոր, խոլ համրերի համար) - Հոգեբաններ, տուժածներին մասնագիտացված օգնության ցուցաբերման համար - Ծերերի և հաշմանդամների խնամող անձնակազմ
<p>«Ընդհանուր պրոֆիլի Կամավորականներ», որոնք կատարում են հետևյալ աշխատանքները</p> <ul style="list-style-type: none"> - Տարահանման վայրերի և ապաստարանների աշխատանքի նախապատրաստում - Սննդի պատրաստում և բաշխում, խմելու ջրի և այլ պարագաների բաշխում - Մարդասիրական օգնության տեսակավորում և բաշխում - Ծերերին և հաշմանդամներին օգնության ցուցաբերում - Տեղեկատվության (տուժածների, անհայտ կորածների, ինչպես նաև կենսաապահովման հարցերի վերաբերյալ) հավաքի և տրամադրման իրականացում - Բոլոր տեսակի մաքրման աշխատանքներ - Աղետի և տարահանման վայրերում այլ տեսակի ընդհանուր տեսակի աշխատանքների իրականացում

Գլուխ 142. Կամավորականների աշխատանքներին աջակցման համակարգ

1. Աղետի պայմաններում Կամավորականների օգնությունը հնարավորինս առավելագույն արդյունավետությամբ օգտագործելու նպատակով ՀՀ ԱԻՆ, ԵՓՎ, և հրշեջ-փրկարարական ստորաբաժանումները նախապես Կարմիր Խաչի և նմանատիպ հասարակական կազմակերպությունների աջակցմամբ նախապես Աղետների հետևանքների վերացման կենտրոնին կից պետք է ստեղծեն հետևյալ երկու ստորաբաժանումներ՝

1 – ին Կամավորականների տեղեկատվական աջակցման կենտրոն

Կամավորականների տեղեկատվական աջակցման կենտրոնը ձևավորվում է Աղետների հետևանքների վերացման կենտրոնին կից անմիջապես ուժեղ երկրաշարժի մասին տեղեկատվության ստացումից հետո, կամավորականներին աղետի հետևանքների և ծավալների և այլ նման ու անհրաժեշտ օպերատիվ տեղեկատվության հաղորդման նպատակով:

2. Կամավորականների տեղեկատվական աջակցման կենտրոնի պարտականությունների մեջ է մտնում նաև ընդհուպ մինչև հանրապետական մակարդակում կամավորական միավորումների միջև փոխգործողությունները կազմակերպումը, տեղեկատվության փոխանակման կազմակերպումը, մասնավորապես տարբեր կամավորական միավորումների գործունեության վերաբերյալ, աջակցություն տեղական կամավորական կենտրոնների աշխատանքների կազմակերպմանը, ընդհուպ միջև անձնակազմի բաշխում ըստ աշխատանքների տեղամասերի:

Կամավորականների տեղեկատվական աջակցման կենտրոնի հիմնական խնդիրները բերված են Աղյուսակ 61:

Աղյուսակ 61 Կամավորականների տեղեկատվական աջակցման կենտրոնի հիմնական խնդիրները

- | |
|---|
| <ol style="list-style-type: none">1. Աղետի ծավալների մասին Աղետների հետևանքների վերացման կենտրոնի օպերատիվ տեղեկատվության հավաք և տրամադրում տեղամասերին2. Կամավորականների տեղեկատվական աջակցման տեղական կենտրոնների հիմնում և դրանց տեղեկատվությամբ ապահովում, այլ կառույցների հետ փոխգործողությունների կազմակերպում3. Հանրապետական մակարդակում կամավորական միավորումների միջև փոխգործողությունների կազմակերպում |
|---|

Գլուխ 143. Կամավորականների աշխատանքների ղեկավարման տեղական կենտրոններ

Վարչական շրջանների լիազոր մարմնի բաժինները ՀՀ ԱԻՆ և ԵՓՎ աջակցմամբ որոշում են վարչական շրջաններում աղետի մասին տեղեկատվությունից անմիջապես հետո Կամավորականների աշխատանքների ղեկավարման տեղական կենտրոնների, կամավորականների ուժերով կամավորականների հավաքման կետերի հիմնման կարգը:

Կամավորականների աշխատանքների ղեկավարման տեղական կենտրոնների հիմնական խնդիրները բերված են Աղյուսակ 62:

Աղյուսակ 62 Կամավորականների աշխատանքների ղեկավարման տեղական կենտրոնների հիմնական խնդիրները

- | |
|---|
| <ol style="list-style-type: none">1. Կամավորներին անհրաժեշտ աջակցման ձևերի որոշում, տեղեկատվական ապահովում2. Կամավորականների տեղեկատվական աջակցման կենտրոնի հետ փոխհամագործակցության կազմակերպում, տեղերում ուժերի բաշխման գործընթացի կառավարում (լրացուցիչ ուժեր տրամադրելու կամ ուժերի անհրաժեշտության բացակայության վերաբերյալ հայտերի ձևավորում)3. Տեղերում կամավորների գրանցում և բաշխում4. Նախնական հրահանգավորում (աշխատանքների տեսակ և բովանդակություն, ապրելու վայր և այլն)5. Կամավորների կատարված աշխատանքների ընթացքի վերաբերյալ տեղեկատվության հավաք և մշակում6. Վարչական շրջանի ԱԻ կետի հետ փոխհամագործակցության կազմակերպում |
|---|

7. Տարբեր հասարակական կազմակերպություններից կամավորների փոխհամագործակցության և կատարման միասնական համակարգի հիմնում

Գլուխ 144. Կամավորների ուսուցում և նախապատրաստում

Ամենօրյա՝ մինչև ԱԻ առաջացումը պլանային աշխատանքի արդյունքում, ինչպես նաև բնակչության ներգրավվումը կամավորների պատրաստմանը և գործող կամավորականների աջակցման մեխանիզմների հիմնումը հանդիսանում են ծավալուն աղետների հետևանքների վերացման գործում կամավորականների կողմից իրականացվող աշխատանքների բարձրացման գրավականը:

1. Ապագա կամավորների պատրաստման ծրագրի մշակում

ՀՀ ԱԻՆ, ԵՓՎ և ԵՓՎ վարչական շրջանների բաժինները պետք է դպրոցներում իրականացնեն նպատակաուղղված աշխատանք երիտասարդ սերնդին պատվաստելու գիտակցված մոտեցում տուժածներին օգնության ցուցաբերելու գործում, հասարակական աշխատանքների մասնակցելու և ծերերին և հաշմանդամներին օգնության նշանակությունը:

2. Համակարգողների և մնացած պատասխանատու աշխատողների տեսական և գործնական նախապատրաստում

ՀՀ ԱԻՆ և ԵՓՎ պետք է մշակեն ծրագրեր և կազմակերպեն իրենց ուսումնական բազաներում արհեստավարժ համակարգողների նախապատրաստում, որոնք հետագայում կիրականացնեն պարբերաբար աջակցություն կամավորական միավորումներին և կազմակերպությունների կազմավորումներին և հասարակական կազմակերպություններին եռակողմ (միմյանց միջև, համատիրությունների/ԹՄ և իշխանությունների միջև) փոխհամագործակցության և ԱԻ առաջացման դեպքում արագ արձագանքման կազմակերպման հարցերում:

ՀՀ ԱԻՆ և ԵՓՎ պետք է մշակեն ծրագրեր և կազմակերպեն իրենց ուսումնական բազաներում կամավորական միավորումների ղեկավարների ու համակարգողների վերապատրաստման ծրագրեր՝ կամավորական շարժումներին, մասնագիտացված, տեղեկատվական և տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

ԵՓՎ վարչական շրջանների բաժինները և հրշեջ-փրկարարական ջոկատները պետք է կազմակերպեն կամավորական միավորումների հետ համատեղ աշխատանքներ աղետի հետևանքների վերացման առաջնային միջոցառումների, առաջադրված խնդիրների ինքնուրույն կատարման հարցերում անհրաժեշտ գիտելիքների և գործնական ունակությունների պատվաստման նպատակով:

Գլուխ 145. Կամավորական միավորումների միջև փոխհամագործակցության համակարգի կատարելագործում

ԱԻՆ և ԱՆ/ առողջապահության վարչությունը պետք է իրականացնեն աշխատանքներ նախապես քաղաքում փոխհամագործակցության համակարգի հիմնում: Մասնավորապես կամավորական միավորումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում, կամավորական միավորումների հնարավորությունների առավելագույն կիրառման հարցերի կարգավորում, կամավորական միավորումների, հասարակական կազմակերպությունների և այլ նման կազմավորումների արդյունավետ գործունեության ապահովման համար բարենպաստ պայմանների ստեղծում:

Բաժին 12 Առաջնային գործողությունների իրականացմանն ուղղված նախապատրաստական միջոցառումներ

Գլուխ 146. Վարչական և օպերատիվ կառույցների նախապատրաստում և կահավորում

1. Երևանի արտակարգ իրավիճակների կառավարման կենտրոնի տարածքում է տեղակայվում Երևանի քաղաքապետի 2007թ. ապրիլի 13-ի թիվ 747-Ա որոշմամբ ստեղծված Երևան քաղաքի արտակարգ իրավիճակներում մշտական գործող հանձնաժողովը: Երևանի քաղաքապետարանի շենքը, ինչպես նաև այլ պահեստային և օժանդակ կառույցները, որտեղ աշխատանքները կիրականացնի Երևան քաղաքի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովը, երկրաշարժից անմիջապես հետո կունենան կարևոր դերակատարություն, որպես անհետաձգելի միջոցառումների համակարգման կենտրոններ:

2. Համաձայն նախագծային փաստաթղթերի՝ այս վարչական և օպերատիվ կառույցները պետք է ունենան 9 բալ ուժգնության երկրաշարժի սեյսմակայունություն: Սակայն հաշվի առնելով, որ նշված շենքերը և շինությունները կառուցվել են տարիներ առաջ անհրաժեշտ է կազմել դրանց սեյսմակայունության ստուգման ծրագիր (ժամանակացույց): Աղյուսակ 63-ում թվարկված են հիմնական հարցերը, որոնց վրա անհրաժեշտ է ուշադրություն դարձնել վերը նշված շենքերի և շինությունների նախապատրաստման ժամանակ:

Աղյուսակ 63 Վարչական և օպերատիվ շենքերի և շինությունների նախապատրաստում

Սարքավորումներ	Նախապատրաստման հիմնական բաժիններ
Հակահրդեհային սարքավորումներ	Շենքերում պետք է տեղադրված լինեն հակահրդեհային սարքավորումներ: Անհրաժեշտ է ստուգել այդ սարքավորումների աշխատանքային վիճակը (ցանկացած պահի աշխատելու հնարավորությունը)
Պատուհաններ, ապակիներ	Անհրաժեշտ է ամրացնել պատուհանների շրջանակները, ապակիների վրա փակցնել հատուկ (թափանցիկ) թաղանթ, որը երկրաշարժի ժամանակ կպաշտպանի ապակու բեկորներից, ինչը իր հերթին կապահովի շինության անվտանգությունը
Վթարային (պահեստային) էլեկտրասնուցման աղբյուր	Շենքերում պետք է տեղադրված լինեն պահեստային էլեկտրասնուցման աղբյուրներ՝ էլեկտրական գեներատորներ: Անհրաժեշտ է ստուգել էներգամատակարարման դադարեցման՝ դեպքում նվազագույնը մեկ օր տևողությամբ դրանց անխափան էներգամատակարարման հնարավորությունը (այդ իսկ պատճառով անհրաժեշտ է տեղադրել համապատասխան սարքավորումներ և ունենալ վառելիքի անհրաժեշտ պաշար)
Ջուր՝ խմելու և այլ նպատակների համար	Արտակարգ իրավիճակների ժամանակ անհրաժեշտ է պահեստավորված ունենալ առնվազն 9 լիտր ջուր մեկ անձի համար երեք օրվա համար (օրեկան 3 լիտր մեկ անձի համար), ինչպես նաև լվացվելու, զուգարանների և այլ նպատակների համար նախատեսված ջրի պաշարներ: Անհրաժեշտ է հետևել ջրի պահեստարանների վիճակին, երկրաշարժի ժամանակ օրինակ՝ կարերի ճեղքման հետևանքով ջրի արտահոսքից խուսափելու նպատակով: Շենքը

	պետք է ունենա պահեստային ջրամատակարարման համակարգ: Անհրաժեշտ է հետևել այդ համակարգի աշխատանքային վիճակին:
Սննդամթերք	Սննդամթերքի պահեստում, որը պետք է գտնվի առաջին հարկում (ոչ նկուղային), պահվում է անհրաժեշտ սննդամթերքը: Անհրաժեշտ է հետևել, որ պահեստավորված սննդամթերքը ունենա պահպանման երկար ժամկետ, ինչպես նաև պահեստավորվեն մթերքներ, որոնք չեն պահանջում հատուկ պատրաստում
Այլ	Շենքում պետք է առկա լինեն ջրի, տաքացման և օդափոխման վթարային համակարգեր: Անհրաժեշտ է հետևել այդ համակարգերի սարքին լինելու վիճակին: 400 լիտր ջրի տարողությամբ դյուրակիր արկղանման զուգարանները պետք է պահեստավորվեն առնվազն մեկ զուգարան 100 անձի համար հաշվարկով:

Եթե վարչական և օպերատիվ մարմինների աշխատակիցները ԱԻ պայմաններում չկարողանան այցելել իրենց բնակարանները, ապա նրանց համար անհրաժեշտ է կազմակերպել հանգստի համար նախատեսված ժամանակավոր տարածքներ:

Գլուխ 147. Երևան քաղաքի արտակարգ իրավիճակներում մշտական գործող հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումը

Երևան քաղաքի արտակարգ իրավիճակներում մշտական գործող հանձնաժողովը ղեկավարում է Երևանի քաղաքապետը: Հանձնաժողովի կազմում, որպես տեղակալ ընդգրկվում է ՀՀ ԱԻՆ ՓԾ Երևան քաղաքի փրկարարական վարչության պետը: Հանձնաժողովի կազմում ընդգրկված են քաղաքապետարանի աշխատակազմի վարչությունների պետերը, վարչական շրջանների և պետական կառավարման տարածքային մարմինների ղեկավարները, կոմունալ-էներգետիկ բնագավառում գործունեություն իրականացնող, հակահամաճարակային հսկողության և հատուկ սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարները:

Գլուխ 148. Երևան քաղաքի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի հավաք

Հանձնաժողովի անդամը զգալով MSK սանդղակով 4 բալլից ավելի ուժգնությամբ երկրաշարժ կամ տեղյակ լինելով երկրաշարժի պատճառած վնասների մասին, օգտվելով օպերատիվ կապի միջոցներից, ճշտում է ստեղծված իրավիճակը և ստանում հետագա ցուցումներ: Այնուհետ հանձնաժողովի անդամները ներկայանում են հանձնաժողովի աշխատանքների իրականացման համար նախատեսված վայր, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավիճակը ծայրահեղ չէ: Քաղաքապետարանի աշխատակիցները և արագ արձագանքման ծառայությունների անձնակազմերը, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավիճակը ծայրահեղ չէ, օպերատիվ կապի միջոցով ստուգում են ընթացիկ իրավիճակը և ներկայանում իրենց աշխատավայրեր կամ հավաքի համար նախատեսված վայրեր:

Այն դեպքերում, երբ իրավիճակը օրհասական չէ հանձնաժողովի անդամները պետք է

ներկայանան նիստի:

Գլուխ 149. Արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի անդամների փոխարինողների կազմի նախապես որոշում

Այն դեպքում, երբ հանձնաժողովի անդամի հետ հնարավոր չէ կապվել կամ նա չի կարող կատարել իր պարտականությունները վնասվածքի կամ որևէ այլ պատճառով, ապա անհրաժեշտ է նախապես որոշել հանձնաժողովի անդամներին փոխարինող անձանց կազմը, ինչպես նաև սահմանել դրանց փոխարինման կարգը: Եթե հանձնաժողովի հետ կապը բացակայում է ապա փոխարինողները ինքնաբերաբար գործում են որպես հանձնաժողովի անդամներ: Եթե հանձնաժողովի հետ կապը առկա է ապա փոխարինողները անցնում են պարտականությունների կատարմանը՝ փոխարինվողի կամ հանձնաժողովի ղեկավարի ցուցումով:

Գլուխ 150. Հերթապահությունը գիշերային ժամերին և հանգստյան օրերին

ՀՀ ԱԻՆ ՓԾ Երևանի փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման բաժինը բնակչությունից դեպքերի վերաբերյալ ահազանգեր ընդունում է շուրջօրյա ռեժիմում: Օգտագործելով կապի և ազդարարման անհրաժեշտ միջոցները ճգնաժամային կառավարման բաժնից իրականացվում է Երևան քաղաքի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի անդամների ազդարարումը: Ազդարարումը արագ և արդյունավետ կազմակերպելու նպատակով օգտագործվում են կապի առկա բոլոր միջոցները, ինչպիսիք են ստացիոնար, բջջային, ուղիղ կապի գծերը և հատուկ ռադիոկապի միջոցները:

Գլուխ 151. Անձնակազմի և միջոցների բաշխման պլան

1. Անձնակազմի և միջոցների բաշխման պլանը մշակվում է հաշվի առնելով հետևյալ մոտեցումները՝
 - 1) պլանում պետք է նախատեսել քաղաքապետարանի բոլոր ծառայությունների և արագ արձագանքման ստորաբաժանումների ներգրավումը.
 - 2) անձնակազմը պետք է բաժանվի՝ հանձնաժողովի անդամների, կցագրված անձնակազմի, գործուղվող անձնակազմի և փոխարինող անձնակազմի.
 - 3) անձնակազմի բաշխման պլանը վերանայվում և թարմացվում է յուրաքանչյուր տարի, որից հետո հանձնվում է ՀՀ ԱԻՆ ՓԾ Երևան քաղաքի փրկարարական վարչությանը, որը իրականացնում է պլանի վերջնական համապատասխանության ստուգումը, ինչից հետո պլանը ներկայացվում է քաղաքապետի հաստատմանը:
2. ՀՀ ԱԻՆ ՓԾ Երևան քաղաքի փրկարարական վարչությունը մշակվում է հանձնաժողովի անդամների հավաքի պլանը, ինչպես նաև նրա անխոչընդոտ իրականացման ցուցումները: Արագ արձագանքման և ծառայությունների ուժերի հավաքի պլանները մշակվում են համապատասխան ծառայությունների և վարչությունների կողմից: Մշակված Պլանը պետք է հասցվի պլանում ընդգրկված բոլոր ստորաբաժանումներին: Ծառայությունների և վարչությունների անձնակազմերի որոշակի փոփոխությունների դեպքում փոփոխություններ պետք է արվեն նաև Պլանում: Փոփոխություններ կատարելուց հետո բոլոր

ստորաբաժանումները պետք է ծանոթանան դրանց հետ: Հավաքի ենթակա չեն ծառայությունների և վարչությունների հետևյալ ծառայողները՝

1) հիվանդ կամ թույլ մարդիկ, հաշմանդամները.

2) հղի կամ մինչև մեկ տարեկան երեխա ունեցող կանայք.

3) այլ անձինք, ովքեր ունեն հատուկ պատճառներ:

3. Համապատասխան ծառայության կամ վարչության պետերը նախապես իրականացնում են հավաքի դեպքում ենթակա անձնակազմի՝ ըստ պատասխանատվության ոլորտների վերաբաշխում և տեղեկացնում նրանց իրենց նշանակման մասին: Կցագրված անձնակազմը բաժանվում է հետևյալ խմբերի՝

1) ԱԻ մշտական գործող հանձնաժողովի անդամներ, որոնք նշված են Բաժին 12-ում.

2) կցագրված անձնակազմ, ովքեր պատասխանատու են արձագանքման միջոցառումների իրականացման համար իրենց աշխատատեղերում.

3) գործուղված անձնակազմ, ովքեր գործուղված են տարահանման վայրեր, բժշկական օգնության ցուցաբերման կետեր, ինչպես նաև ենթակառուցների վերականգնման աշխատանքների իրականացման տեղամասեր.

4) տարածքային անձնակազմ, ում անհրաժեշտ է 1 ժամից ավել ժամանակ աշխատավայր հասնելու համար, ովքեր կարող են իրականացնել այս կամ այն գործառույթներ իրենց բնակության տարածքում: Ինչպես նշված է Բաժին 12-ում կցագրված անձնակազմը պետք է ինքնուրույն ներկայանա նշված վայրեր: Եթե աշխատակիցը չի կարող ներկայանալ նշված վայր, ապա նա պետք է այդ մասին տեղեկացնի հասանելի կապի միջոցով:

Գլուխ 152. Արտակարգ իրավիճակներին արձագանքող ծառայությունների և կազմավորումների համագործակցության ուժեղացում

1. Ուժեղ երկրաշարժի դեպքում անհետաձգելի միջոցառումները պետք է կազմակերպված լինեն այնպես, որ հնարավորինս արդյունավետ օգտագործվեն չտուժած մարդկային ուժերը և նյութական միջոցները: Բացի այդ արձագանքման միջոցառումներին պետք է ներգրավված լինեն նաև մոտակա վարչական շրջանների և կազմակերպությունների մարդկային ուժերը և նյութական միջոցները:

Երևան քաղաքում ուժեղ երկրաշարժի դեպքում քաղաքին օգնություն կցուցաբերեն հանրապետության բոլոր մարզերը: Մարզերի կողմից տրամադրվող օգնությունը պլանավորվում է նախապես, իսկ օգնություն ստացող ստորաբաժանումները (արձագանքող ծառայությունները և այլն) ստուգում են նրանց պատրաստականությունը և համապատասխանությունը, ինչպես նաև մարզերի հետ նախապես որոշում են օգնության ստացման կարգը:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այսօր կազմակերպությունների մեծամասնությունը մասնավոր են, անհրաժեշտ է նախապես նշել ԱԻ ժամանակ արձագանքող ծառայությունների ղեկավարությամբ մասնավոր Կազմակերպությունների միջոցների օգտագործման պայմանները: Այդ պատճառով անհրաժեշտ է ճշտել մասնավոր Կազմակերպությունների հնարավորությունները և կնքել նրանց հետ համապատասխան պայմանագրեր՝ նրանց կողմից ԱԻ ժամանակ տեխնիկայի և միջոցների տրամադրման վերաբերյալ: Համապատասխան արձագանքող ծառայությունները մասնավոր

Կազմակերպությունների հետ պետք է նաև նախապես կնքեն պայմանագրեր շինարարական տեխնիկայի, վարորդների, սննդի, խմելու ջրի և աջակցության այլ ձևերի տրամադրման վերաբերյալ:

Բաժին 13 Կապի ոլորտի նախապատրաստական աշխատանքներ

Գլուխ 153. Կապի բազային համակարգի կատարելագործումը ԱԻ տեղեկատվության հաղորդման համար

Աղետի հետևանքները նվազեցնելու համար անհրաժեշտ օպերատիվ ստանալ տեղեկատվություն ստեղծված իրավիճակի վերաբերյալ, որից հետո տրամադրել հստակ հրահանգներ աղետի հետևանքների վերացման և վարվելակերպի կանոնների վերաբերյալ: Ելնելով վերոգրյալից անհրաժեշտ է ստեղծել ցանկացած իրավիճակներում կայուն գործող կապի և տեղեկատվության հաղորդման ավտոմատացված համակարգեր: Տեղեկատվության հաղորդման արագությունը և հստակությունը առաջին հերթին կախված է կապի համակարգերի հագեցվածությունից, ինչպես նաև պարբերաբար իրականացվող կապի համակարգերի տեխնիկական ստուգումներից, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է իրականացնել կապի համակարգերի սեյսմակայունության բարձրացման պրոֆիլակտիկ աշխատանքներ:

Գլուխ 154. Կապի համակարգերի վիճակը

Ցանկացած խմբի, կազմակերպության, ինչպես նաև երկրի կայացման և զարգացման համար անհրաժեշտ պայմաններից կարևորագույնն է հանդիսանում կառավարումը, առանց որի հնարավոր չէ իրականացնել որևէ միջոցառում և լուծել տարաբնույթ խնդիրներ՝ ցանկացած ոլորտում: Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում պետության կարևորագույն գործառնություններից է կառավարման մարմինների և բնակչության ազդարարումը: Ակնհայտ է, որ արդյունավետ ու ճկուն կառավարման և ազդարարման համար, անհրաժեշտ է ունենալ ժամանակակից և արդի պահանջները բավարարող միասնական կապի համակարգ:

ՀՀ ԱԻՆ ստորաբաժանումներում շահագործվում է հիմնական հեռախոսակապ, ներքին հեռախոսակապ, բջջային հեռախոսակապ, ուղիղ հեռախոսակապ, հատուկ հեռախոսակապ և կապուղիներ, որոնց ծառայությունները տրամադրում են «Արմենթել», «Ղ-Տելեկոմ» և «ՕՐԱՆԺ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական կազմակերպությունները: ՀՀ ԱԻՆ համակարգում գործում է 458 հիմնական հեռախոսակապ, 96 բջջային հեռախոսակապ, 25 ուղիղ հեռախոսակապ, 68 հատուկ հեռախոսակապ (որից 54 հատուկ 1-01,4 հատուկ 1-12 և 10 հատուկ 9-11 հեռախոսահամարներ) և 9 միջքաղաքային կապուղիներ (որից 5-ը 100 կմ պակաս հեռավորության, 4-ը 100 կմ ավել հեռավորության): Համակարգում գործում է 6 ներքին ավտոմատ հեռախոսակայան, որոնց միջոցով ստեղծվել է ներքին հեռախոսացանց:

ՀՀ ԱԻՆ ստորաբաժանումներում շահագործվում է մոտ 750 միավոր կարճալիք և գերկարճալիք «Անգարա», «Ռ-143», «Ռակալ», «Կողան», «Այկոմ», «Ալինկո», «Մոտոռոլլա», «Քենվուդ», «Հիտ-SԱ», «Ռոջեր», «Վիոլլա», «Պալմա» և «Մայակ» տիպի ստացիոնար, շարժական և դյուրակիր ռադիոկայաններ:

ՀՀ ԱԻՆ ստորաբաժանումներում շահագործվում է անսահմանափակ, սահմանափակ, ստացիոնար և շարժական կապի ծառայություններ (համացանց), որի միջոցով կատարվում են էլեկտրոնային թղթաշրջանառություններ, ֆայլերի փոխանցումներ, տեսաձայնային կապ և այլն: Ըստ վիճակագրական տվյալների, Երևանում, Կապանում և Սպիտակում ուժեղ երկրաշարժի

ժամանակ կխափանվի ՀՀ տարածքում շահագործվող բջջային, քաղաքային կապի մոտ 20 տոկոսը: ՀՀ ԱԻՆ ստորաբաժանումները փրկարարական աշխատանքներ իրականացնելիս կապի կազմակերպման համար պետք է օգտվեն ռադիոկապից: «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական Կազմակերպությունը նման իրավիճակներում կապի վերականգնման համար օգտագործում է շարժական կապի կայաններ, որոնք դեպքի վայր հասնելիս ծավալվում և կապ են կազմակերպում երեք ժամվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում, կապի կազմակերպման համար կօգտագործվի նաև կառույցների, ծառայությունների և այլ կազմակերպությունների գործող կապի միջոցները:

- ՀՀ պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ազդարարման սխեմա
- կապի համակարգի զարգացման հեռանկարներ

Գլուխ 155. Կապի և տեղեկատվության համակարգերի հզորացման կազմակերպչական միջոցառումներ

ՀՀ ԱԻՆ ունի համապատասխան ցուցակներ կոնտակտային հեռախոսահամարներով ՀՀ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների ազդարարումը կազմակերպելու համար: Միևնույն ժամանակ պետական կառավարման մարմիններում նշանակված են պատասխանատու աշխատողներ, իրենց գերատեսչության ԱԻ արձագանքումը կազմակերպելու համար, սակայն այդ դրանց մեծամասնությունը չունի ԱԻ գործելու համապատասխան փորձ:

Որպեսզի երկրաշարժի դեպքում ազդարարումն իրականացվի արագ և հստակ անհրաժեշտ է իրականացնել Կապի և տեղեկատվության համակարգերի հզորացման կազմակերպչական միջոցառումներ: Այս նպատակով անհրաժեշտ է պարբերաբար ստուգել և թարմացնել ազդարարման ցուցակները, իրականացնել կոնտակտային հեռախոսահամարների ստուգումներ և այլն, ինչպես նաև՝

- 1) «911» ծառայության զարգացում
- 2) Տվյալների բազաների կատարելագործում, ներառյալ քարտեզների վրա արտացոլված տեղեկատվությունը
- 3) Ճգնաժամային արձագանքման կանոնակարգերի մշակում
- 4) իրական ժամանակում իրավիճակի ավտոմատ գնահատման համակարգչային համակարգերի ներդրում:

Գլուխ 156. Բնակչության իրազեկում և հասարակության կարծիքների գնահատում

1.Բնակչությունը պետք է իրազեկված լինի ԱԻ արձագանքման և հետևանքների մեղմացմանն ուղղված ՀՀ կառավարության և Երևանի քաղաքապետարանի մոտեցումներին և ամենօրյա գործունեության ժամանակ իրականացվող միջոցառումներին, ինչպես նաև սույն պլանի և այլ ԱԻ արձագանքման պլանների գոյության մասին:

Հասարակայնության հետ այդպիսի աշխատանքները իրականացնելու համար առաջ են գալիս հետևյալ խնդիրները՝

1) Հասարակության և բնակչության գիտակցության բարձրացումը և Աղետներից պաշտպանվելու ինքնուրույն գործողությունների խթանումը:

Առաջներում Պետական օգնությունը ժամանակին և ամբողջ ծավալով չի իրականացվել կամ չի հասցվել տուժածներին, ինչը անհամեմատ ավելացրել է վնասի չափը: Այդ պատճառով անհրաժեշտ է բարձրացնել Հասարակության և բնակչության գիտակցության մակարդակը և Աղետներից պաշտպանվելու ինքնուրույն գործողությունների խթանումը, ինչի համար անհրաժեշտ է բնակչությանը հստակ տեղեկացնել հնարավոր աղետի իրական ծավալների, սպասվող պետական օգնության ծավալների, ինչպես նաև այն գործողությունների վերաբերյալ, որոնք բնակչությունը պետք է ինքնուրույն անի:

2) Պետական օգնության ծավալների մեծացումը կպահանջի պետական և տեղական բյուջեների ավելացում, ինչը կարելի է անել հարկերի բարձրացմամբ: Դրա համար անհրաժեշտ է ժողովրդի համաձայնությունը: Այս գործընթացը (հարկերի բարձրացում և այդ միջոցների ուղղորդում ԱԻ կանխարգելման և հետևանքների վերացմանը) հնարավորինս կհեշտանա, եթե բնակչությունը ստանա հնարավոր Աղետի մասին իրական տեղեկատվություն, կգիտակցի առկա Պետական աջակցության սղությունը և ցանկություն կհայտնի աջակցել այդ պետական օգնության ավելացմանը:

3) Գոյություն ունեն բավականին քանակի պետական և հասարակական կազմակերպություններ, որոնք այս կամ այլ գործառույթներով առնչվում են ԱԻ արձագանքմանը: Այդ կառույցները պետք է իրականացնեն գործառույթների կրկնման» կրկնօրինակման ստուգում, ինչպես նաև բաց մնացած հարցերի հայտնաբերում, որից հետո իրականացնեն փոխգործողությունների կազմակերպումը:

Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, որ բոլորը հրապարակայնացնեն իրենց երկրաշարժերի պլանները:

4) ԱԻ արդյունավետ կառավարման կարևոր պայմաններից մեկը՝ բնակչության հանգստությունն ու Վստահությունն է քաղաքի իշխանություններին: Դրան կարելի է հասնել «Քաղաքի ռիսկերի կառավարման պլանի» հրապարակմամբ, ինչպես նաև այդ պլանով նախատեսված միջոցառումների ընթացքի և արդյունքների մասին բնակչության իրազեկմամբ: Դա իր հերթին կխթանի թե քաղաքապետարանի թե այլ կազմակերպությունների էլ ավելին ակտիվ գործողությունների իրականացումը:

2. Հասարակայնության հետ աշխատանքները պետք է իրականացնել ինտերնետի, ՋԼՄ, թերթերի և շենքերում փակցվող հայտարարությունների միջոցով: Այս գործընթացին պետք է ներգրավել ինչպես ԱԻ ոլորտներում պատասխանատու անձանց, այդպես էլ բնակչությանը, սեմինարների, վարժանքների տեսահաղորդումների միջոցով: Դրա հետ մեկ տեղ Լիազոր մարմնում պետք է հիմնվին տեղեկատվական ծառայություն անվճար հեռախոսահամարներով, համապատասխան ծառայություններ և տեղեկատվություն տրամադրելու համար, նման ծառայության միջոցով հնարավոր կլինի նաև պարզել գործող պլանների բաց կողմերը:

Բաժին 14 Նախապատրաստական միջոցառումներ հրդեհների կանխարգելման ուղղությամբ

Գլուխ 157. Հրդեհաշիջման համակարգի նախապատրաստում

1. ՀՀ ԱԻՆ համապատասխան ստորաբաժանումները (այսուհետ՝ Հակահրդեհային ծառայությունը) պետք է իրականացնի բնակչության և կազմակերպությունների ղեկավարումը հակահրդեհային պաշտպանության միջոցների սեյսմակայունության ապահովման ուղղությամբ՝ այդ միջոցները երկրաշարժի ժամանակ լրիվ աշխատունակ վիճակում պահպանելու և հրդեհները սկզբնական փուլում հայտնաբերելու և մարելու համար:

1) Հակահրդեհային ծառայությունը պարտավոր է խիստ հսկողություն սահմանել բնակելի շենքերում հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգերի տեղադրման գործընթացի նկատմամբ: Այս հարցում շատ կարևոր է հասարակության աջակցությունը:

Բացի այդ արտակարգ իրավիճակներում հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգերի հուսալի աշխատանքն ապահովելու նպատակով անհրաժեշտ է այն պարբերաբար փորձարկել:

2) Բնակչության և կազմակերպությունների կողմից հրդեհաշիջման համակարգերի ուժեղացումը նախատեսում է՝ աղետներից պաշտպանվելու գործում բնակչության ակտիվության բարձրացումը

2. Հակահրդեհային ծառայությունը հրդեհային անվտանգության հարցերով բնակչության շրջանում պետք է իրականացնի իրազեկվածության ուսումնասիրություններ, պարզի հրդեհաշիջման համակարգերի նախնական վիճակն ու իրականացնի ուսումնական վարժանքներ:

3. Ահ վարժանքների ուսումնական ծրագրերի շրջանակներում անհրաժեշտ է ընդգրկել հրդեհաշիջման իրականացման հմտությունների ուսուցումը: Հաջորդ փուլերում հրդեհաշիջման վերաբերյալ անհրաժեշտ է իրականացնել խորացված վարժանքներ՝ օգտագործելով վարժահրապարակները: Կամավորական միավորումների հետ արտակարգ իրավիճակներին պատրաստ լինելու համար, անհրաժեշտ է անցկացնել հրդեհաշիջման գործնական վարժանքներ՝ նպատակ ունենալով հստակեցնել տեղի բնակչության հետ փոխօգնության և փոխհամագործակցության հարցերը:

4. Հակահրդեհային ծառայությունը և պետական կառավարման մարմինները պետք է աջակցեն կազմակերպություններին, արտակարգ դեպքերին արձագանքելու պլանների կազմման և աշխատանքներ տանեն կամավոր խմբերի հրդեհաշիջման ունակությունների բարձրացման ուղղությամբ՝ անցկացնելով տարբեր վարժանքներ ու հրահանգավորումներ: Արտակարգ իրավիճակների ժամանակ պատրաստականության ապահովման նպատակով անհրաժեշտ է բարձրացնել համագործակցությունը կազմակերպությունների և կամավորական խմբերի միջև՝ նրանց ապահովել նյութական միջոցներով, ստեղծել մեխանիզմներ բնակչության հետ համագործակցելու համար:

Գլուխ 158. Հակահրդեհային համակարգի գործունեության բարձրացումը

1. Երկրաշարժերի ժամանակ ԱԻՆ հրշեջ-փրկարարական ջոկատների

հնարավորություններն առավել արդյունավետ օգտագործելու նպատակով, ԱԻՆ մշակում է երկրաշարժի ժամանակ տարբեր իրավիճակներում գործելու պլան՝ հաշվի առնելով սեյսմիկ վնասների կանխատեսումը, այդ թվում նաև հրդեհների տարածումը:

2. Հետագայում երկրաշարժերի հետևանքով առաջացած զանգվածային հրդեհների հրդեհաշիջման պատրաստականության ապահովման նպատակով անհրաժեշտ է ավելացնել հակահրդեհային միջոցների քանակը՝ համաձայն քաղաքի կառուցվածքի և աղետի բնույթի: Այդպիսի աշխատանքները ենթադրում են հատուկ հրշեջ և այլ տեխնիկայի միջոցների քանակի ավելացում, որը կնպաստի արդյունավետ հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների արդյունավետ իրականացմանն ու հրատապ օգնության ցուցաբերմանը:

3. Երկրաշարժի ժամանակ խոցված օջախներում փրկարարական և հրդեհաշիջման աշխատանքների իրականացման համար հակահրդեհային ծառայությունը հրշեջ փրկարարական ջոկատներում ստեղծում է փրկարարական խմբեր, որոնք համալրված են անհրաժեշտ տեխնիկայով և հրշեջ մեքենաներով, այդ թվում նաև մեծ տարողությամբ ավտոցիստերներով և հատուկ դասընթացներ անցած հրշեջ-փրկարարներով, որոնք կարող են մարել բարդ հրդեհներ, օրինակ՝ քիմիական նյութերից առաջացած հրդեհները:

Գլուխ 159. Հակահրդեհային պահպանության նյութերի և միջոցների ապահովումը

1. Երկրաշարժերի ժամանակ հակահրդեհային ծառայության հնարավորություններն առավել արդյունավետ օգտագործելու նպատակով, ծառայությունը պետք է համալրվի անհրաժեշտ միջոցներով: Անհրաժեշտ է նաև ուժեղացնել ավտոմեքենաների և այլ տեխնիկայի տեխսպասարկման համակարգը՝ անսարքության դեպքում օպերատիվ վերանորոգման համար:

1) Հակահրդեհային և ԱԻ ծառայությունները պետք է ուժեղացնեն ՀՓՋ-ների և շտապօգնության կայանների օպերացիոն գործողությունները՝ ռադիոկայանների հաճախականությունները թվայնացնելու ճանապարհով:

2) Անհրաժեշտ է վերամշակել տեղեկատվության հավաքման և փոխանցման համակարգի ուժեղացման հարցը՝ ներդնելով տեղեկատվության արտակարգ փոխանցման համակարգ: Համապատասխան կազմակերպությունների հետ անհրաժեշտ է համաձայնեցնել հրդեհային անվտանգության վերաբերյալ տեղեկատվության ստացումը՝ քաղաքում տեղադրված տեսախցիկների միջոցով:

Գլուխ 160. Տեղեկատվության հավաքման և մշակման համակարգի ուժեղացում

Տեղեկատվության հավաքման և վերլուծության համակարգի հնարավորությունների հզորացման նպատակով հակահրդեհային ծառայությունը պարտավոր է իրականացնել և ապահովել համակարգի անթերի աշխատանքը՝

ա) ավտոմեքենաները համալրել անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման համար նախատեսված կապի միջոցներով ու հրշեջ փրկարարական գույքով,

բ) հրատապ բժշկական օգնություն ցուցաբերող կազմակերպություններում տեղադրել ռադիոկապի միջոցներ,

- զ) արտակարգ իրավիճակներում հրատապ օգնություն ցուցաբերելու նպատակով ստեղծել պահեստային կապի համակարգ,
- ը) աշխատանքներ տանել կապի համակարգի սեյսմակայունության բարձրացման և անվտանգության բարձրացման ուղղությամբ:

Գլուխ 161. Հակահրդեհային կարիքների համար ջրօգտագործման կատարելագործումը

ՀՓՋ -ների կողմից պետք է մշտապես իրականացվեն հետևյալ միջոցառումները՝

- 1) առաջին հերթին տեղակայել հրդեհի տարածման բարձր ռիսկի շրջաններում հրշեջ սեյսմակայուն ջրաղբյուրներ.
 - 2) շահագրգիռ կազմակերպությունների հետ միասին կատարելագործել հրշեջ ջրաղբյուրների համակարգը,
 - բ) հրշեջ ջրավազաններն ու այլ հրդեհաշիջման սարքավորումները տեղադրել հատուկ շինություններում,
 - գ) տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարության և շահագրգիռ կազմակերպությունների հետ միասին իրականացնել գետերի, ջրամբարների և այլ ջրաղբյուրների արդյունավետ օգտագործում,
 - դ) հողերի և օբյեկտների վաճառքի դեպքում ապահովել նրանցում առկա հրշեջ ջրավազանների պահպանումը կամ գտնել այլ ընտրանքային ջրաղբյուրներ,
 - ե) կազմակերպությունների հետ միասին ապահովել հրշեջ ջրաղբյուրների արդյունավետ աշխատանքը:
- 2) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող աշխատանքներն են՝
- ա) հասարակական նշանակության օբյեկտների շինարարության ժամանակ կարգավորել նրանց մոտ հրշեջ ջրավազանների տեղադրման հարցերը,
 - բ) քաղաքաշինության նախագծերի կանոններում հաշվի առնել հրշեջ ջրավազանների և նրանց ծավալներին վերաբերվող հարցերը,
 - գ) քաղաքային սեփականություն հանդիսացող հողերի վաճառքի դեպքում ապահովել նրանցում առկա հրշեջ ջրավազանների պահպանումը կամ գտնել այլ ընտրանքային ջրաղբյուրներ:

Գլուխ 162. Կազմակերպություններում հրդեհաշիջում իրականացնող խմբերի պատրաստականությունը

Կազմակերպությունների արտակարգ իրավիճակների պատրաստականության ակտիվացման համար անհրաժեշտ է՝ կազմավորել և ամրապնդել կազմակերպությունների կամավոր միավորումները, նրանցում ստեղծել խմբեր, որոնք պատասխանատվություն կկրեն հրդեհաշիջման համար, այն ԹՄ կամ Համատիրության տարածքում, որտեղ գործում է կազմակերպությունը: Անհրաժեշտ նաև ստեղծել համագործակցություն կազմակերպությունների, դպրոցների և այլ կազմակերպությունների միջև, արտակարգ իրավիճակներին դիմագրավելու համար:

Աղյուսակ 64 Հակահրդեհային նպատակով ճանապարհների անցողունակության բարձրացման միջոցառումներ

1. Հակահրդեհային գործողություններ իրականացնելու նպատակով մայրուղիների լայնացում
2. Ավտոճանապարհների ցանցում փակուղիների վերացում
3. Նեղ ճանապարհների լայնացում
4. Զրահեռացման խողովակների հողանցում
5. Օդային էլեկտրալարերի փոխարինումը ստորգետնյա լարերով
6. Կտրուկ անկյունների վերացում

Գլուխ 163. Հակահրդեհային գործողությունների ժամանակ ճանապարհների ապահովվումը

ԱԽՆ և Քաղաքապետարանը պետք է ապահովեն հատուկ նշանակության ճանապարհների գործունեությունը՝ հրդեհաշիջման և հակահրդեհային գործողությունների իրականացման համար: Այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ, որոնք նշված են աղյուսակ 64-ում:

Գլուխ 164. Բարդ պայմաններում հրդեհաշիջման տարածքներում իրականացվող միջոցառումները

1. Երկրաշարժի ժամանակ նեղ և փայտե շինություններով ծանրաբեռնված փողոցներում իրականացվող հրդեհաշիջման տեղամասերը նվազեցնելու նպատակով, հրշեջ փրկարարական ջոկատները պետք է աշխատեն կատարելագործված ջրամատակարարումով: Հրշեջ փրկարարական ջոկատները պետք է ապահովվեն շարժական պոմպակայաններով, հրդեհաշիջման առաջնահերթությունը պետք է տրվի այն տեղամասերին, որտեղ այն իրականացնելն առավել բարդ է:

2. Ինչ վերաբերվում է հրդեհային անվտանգության ապահովմանը, ապա ներքոհիշյալ պատճառներից ելնելով այն հանդիսանում է ավելի արդարացված և արդյունավետ, երբ հակահրդեհային պատրաստության միջոցառումներին մասնակցում են մի քանի հրշեջ փրկարարական ջոկատներ, որոնք առկա են այդ տարածքում: Ելնելով դրանից, կամավորական խմբերից կազմված հրշեջ խմբերը, որոնք ունակ են գործելու արտակարգ իրավիճակներ ժամանակ, պետք է գործեն իրար հետ համագործակցության սկզբունքով. Հաշվի առնելով, որ՝

ա) հրդեհի ծագման դեպքում հնարավոր է, որ հրդեհը տարածվի մեկ շենքից ավել տեղամասեր,

բ) հրդեհների ծագման և տարածման դեպքում հակահրդեհային միջոցների պահպանման և նախապատրաստման աշխատանքները առավել արդյունավետ կարող են լինել, եթե իրականացվում են հասարակության ներգրավմամբ.

գ) հրդեհաշիջման համար անհրաժեշտ է իրականացնել նախապատրաստական աշխատանքներ՝ ելնելով տեղի առանձնահատկություններից, օրինակ՝ քաղաքի կառուցվածքից, դեմոգրաֆիկ և այլ առանձնահատկություններից:

3. Հակահրդեհային ծառայությունը պետք է տեղական մակարդակով մշակի հրշեջ

փրկարարական խմբերի ձևավորման հարցեր, որոնք համատեղեն ուժերը հասարակության հետ՝ հրդեհային անվտանգության ապահովման աշխատանքներում: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել այդ խմբերի փոխօգնության մեխանիզմներն ու հրդեհաշիջման նյութատեխնիկական բազան:

4. Կազմակերպությունների կողմից ձևավորված խմբերին առաջարկվում է ստեղծել մի համակարգ, որը թույլ կտա այդ թիմերի յուրաքանչյուր անդամին երկրաշարժի և վտանգավոր աղետների դեպքում, օգտագործել իր մասնագիտական ներուժը: Նշված խմբերին անհրաժեշտ է հատկացնել հրշեջ փրկարարական գույք, կապի միջոցներ:

Բաժին 15 Նախապատրաստական աշխատանքներ տարահանման և փրկարարական աշխատանքների վերաբերյալ

Գլուխ 165. Տարահանման պլանի բարելավումը

Ներկայումս Երևան քաղաքի տարահանման պլանի մշակման հարցերով զբաղվում է Երևան քաղաքի փրկարարական վարչությունը՝ տարահանման հանձնաժողովի (հանձնաժողովի նախագահ՝ քաղաքապետի տեղակալ) և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ համատեղ, իսկ վարչական շրջանները իրագործում են օգնություն տարահանման ժամանակ:

«Ուժեղ երկրաշարժի ժամանակ քաղաքի տարահանման պլանը» իր մեջ ներառում է պաշտոնատար անձանց գործառնական պարտականությունները, տարահանման և ընդունման մարմինները, երթուղիները, ապահովման հարցերը, քարտեզները և սեմաները:

Ամենամյա վարժանքների շրջանակներում, բացի երկրաշարժի վարքագծի կանոններից, դասընթացներից, նաև պետք է անցկացվեն դասընթացներ և սեմինարներ՝ սննդի, հագուստի, վառելիքի, դաշտային պայմաններում սննդի պատրաստման համար նախատեսված պարագաների հայթայթման և ապահովման համար, աշխատանքների իրականացում երթուղիների բացման նպատակով, ջրի ապահովման ուղղությամբ գործողությունների վերաբերյալ:

Եթե արտակարգ իրավիճակի ծավալները գերազանցել են քաղաքի տարահանման հնարավորությունները, ապա պետական աջակցությամբ և միջոցների հաշվին պետք է տրամադրվեն համապատասխան մասնագետներ, միջոցներ:

Գլուխ 166. Տարահանման պլանի կատարելագործում՝ հնարավոր վնասի կանխատեսման հիման վրա

1. Քանի որ հնարավոր երկրաշարժի հետևանքները, հնարավոր վնասները վերահաշվարկվել են «ՀՀ-ում սեյսմիկ ռիսկի գնահատման և կառավարման պլանավորման ծրագրի» շրջանակներում Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության հետ պետք է վերանայվի տարահանման կետերի դասավորվածությունը վարչական միավորումներում, հաշվի առնելով զոհվածների, տուժածների, վիրավորների բաշխվածության կանխատեսվող թիվը, երթուղիների անցողունակության հնարավորությունը դեպի տվյալ տարահանման հավաքակայան, հավաքատեղի տարողությունը, տեղակայման կետում անվտանգության ապահովման աստիճանը: Այդպիսի վերանայման դեպքում տվյալ տարահանման հավաքակայանները պետք է դառնան ժամանակավոր տեղակայման կետեր՝ նախատեսված բնակչության կարճաժամկետ տեղակայման համար մի քանի ժամից մինչև 3 օր:

2. Երկարատև բնակության վայրերում բնակչության տեղակայման կարգը

3. Անօթևան բնակչության տեղաբաշխելու համար խիստ անբավարար են Երևանում ստեղծված երկարատև բնակության վայրերը: Նախատեսված են նաև կացարաններ՝ վրանային ավանների տեսքով, որոնք պետք է ծավալվեն բաց տարածքներում, որն էլ կբերի լրացուցիչ խնդիրների ավելացմանը վատ եղանակային պայմանների առկայության դեպքում և կպահանջի լրացուցիչ համալրվածություն՝ համապատասխան սարքավորումներով, միջոցներով: Դրա

համար ցանկալի է, որպես երկարատև բնակության կետեր օգտագործվեն նաև դպրոցները, ուսումնական հաստատությունները և համայնքային նշանակության այլ օբյեկտները: Դա կբերի տեղաբաշխման կետերում տվյալ կազմակերպությունների շենքերի ու շինությունների սեյսմակայունության բարձրացմանը, ինչպես նաև համապատասխան մասնագետների և նյութատեխնիկական բազայի բարելավմանը:

4. Տարահանումը կազմակերպված անցկացնելու, համապատասխան պայմաններ ստեղծելու նպատակով տարահանման հանձնաժողովի նախաձեռնությամբ պլանավորվում են և իրականացվում են հետևյալ նախապատրաստական միջոցառումներ՝

1. տարահանման պլանի և նրան կցվող փաստաթղթերի մշակում.

2. ԱԻ ծագման դեպքում վտանգավոր գոտու սահմաններում գտնվող բնակչության հաշվառում և տարահանման երթուղիների որոշում,

3. ԱԻ ծագման դեպքում բնակչության համակողմանի կենսաապահովման հարցերի պլանավորում և ճշտագրում,

4. ՏՀԿ-երի, ԺՏԿ-երի, ԵԲՎ-երի և տրանսպորտային ծառայության հետ կայուն կապի հաստատում,

5. գործնական ուսումնավարժանքների անցկացում, որպեսզի պարզվեն և վերացվեն ի հայտ եկած թերությունները:

5. Վարժանքի դեպքում կարող են ի հայտ գալ թերություններ տարահանման ապահովման բոլոր ուղղություններով՝

1. Տրանսպորտային

2. Բժշկական

3. Հասարակական կարգի պահպանման և ճանապարհային երթևեկության անվտանգության

4. Ինժեներական և այլն:

Այսպիսով, բացի վերը վերոնշվածից տարահանման հանձնաժողովը պետք է համագործակցի ավտոտրանսպորտային կազմավորումների, ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության և ճանապարհային ոստիկանության հետ հասարակական կարգի և անվտանգ երթևեկության կազմակերպման նպատակով, ավտոշարայունների և հետիոտն շարայունների կարգավորված հոսքի ուղղորդման և այլ հարցերով:

Գլուխ 167. Երկրաշարժից դեպքում տարահանման կետերի որոշումը

Երկրաշարժից հետո տարահանման կետերի որոշման սկզբունքը ներկայացված է Աղյուսակ 65:

Աղյուսակ 65 Տարահանման փուլերը

Ընթացքը	Տարածքային կետ	Տեսակներ	Բնակավայրի օգտագործման ժամանակահատվածը
1 փուլ	Տարահանման կետ	Ժամանակավոր տեղաբաշխման կետեր	Սկսած մի քանի ժամից մինչև 1 օր
2 փուլ	Տեղաբաշխման կետեր	Երկարատև բնակության վայրեր, Կացարաններ,	Մշտական բնակավայրով ապահովմամբ (մինչև 1 տարի)

Մշտական բնակության վայրը	Հիմնական բնակավայրը	(բազմաբնակարանային շենքեր, սեփական տներ)	
--------------------------	---------------------	--	--

Տարահանման միջոցառումների կազմակերպման և իրականացման կարգը, ուժերն ու միջոցները, ապահովման հնարավորություններն ու ձևերը արտացոլված են «Ուժեղ երկրաշարժի դեպքում Երևան քաղաքի բնակչության տարահանման պլանում»:

Գլուխ 168. Տարահանման վարժանքների և դասախոսությունների անցկացում

Աղետից պաշտպանվելու համար քաղաքի տարահանման հանձնաժողովի, ԵՓՎ-ի տարահանման կետերի և տրանսպորտային կազմակերպությունների հետ, ներգրավելով նաև բնակչությանը պետք է ոչ պակաս, քան տարին մեկ անգամ անցկացնել տարահանման վարժանքներ: Այդ վարժանքի բովանդակությունը պետք է պարունակի հետևյալ գործնական պարապմունքները.

- ա. շտաբային վարժանքներ, ըստ քարտեզների
- բ. Քաղաքով անցկացված երթեր
- գ. Տարահանում
- դ. Առաջին օգնության ցուցաբերում
- ե. Պատրաստի սննդի բաշխում
- զ. Վրանային ավանների ծավալում
- է. Վահանակների միջոցով տեղեկատվության տրամադրում բնակչությանը
- ը. Հրդեհաշիջում և հրդեհային անվտանգության կանոնների պահպանում և այլն:

Առաջարկվում է տարահանման միջոցառումների արդյունավետության բարձրացման համար՝ անցկացնել համապատասխան պարապմունքներ, դասախոսություններ (երկրաշարժից պաշտպանվելու և վարքագծի կանոնների պահպանելու վերաբերյալ):

Բաժին 16 Պատրաստվածություն ԱԻ-ում փոխադրումների համար

Գլուխ 169. ԱԻ-ում տրանսպորտային ցանցի նախատեսում և բարելավում

1. Կարևոր է ապահովել տրանսպորտային այնպիսի համակարգ, (նվազեցնելով երկրաշարժի ժամանակ տրանսպորտային քառուրդ) որը կօժանդակի փրկարարական գործողությունների, հրատապ բուժօգնության, հրդեհաշիջման և նյութերի/անձնակազմի/քաղաքացիների փոխադրումների սահուն իրականացմանը: Երևանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչությունը և ՀՀ տրանսպորտի ու կապի նախարարությունը պետք է ղեկավարեն սեյսմիկ աղետի ժամանակ անձնակազմի/նյութերի փոխադրումը, ինչպես նաև տրանսպորտային օբյեկտների, օրինակ՝ կամուրջների պահպանումը:

2. ԱԻՆ, համագործակցելով Երևանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչության, ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության և ՀՀ Ոստիկանության Երևանի վարչության հետ, կնախատեսի ռազմավարական ճանապարհներ՝ աղետի ժամանակ երթևեկության ապահովման համար, ինչպես ցույց է տրված աղյուսակ 66-ում:

Աղյուսակ 66 Ռազմավարական ճանապարհների կատեգորիան

Կատեգորիա	Նպատակ
Ռազմավարական ճանապարհ N 1	Կապում է Երևանի ներսում հրամանատարական վայրերը քաղաքի դրսի հետ:
Ռազմավարական ճանապարհ N 2	Կապում է փրկարարական/բժշկական/հրդեհաշիջման վայրերը N 1 ռազմավարական ճանապարհների հետ:
Ռազմավարական ճանապարհ N 3	Կապում է ԱԻ դեպքում պահուստային տրանսպորտային վայրերը N 1 և N 2 ռազմավարական ճանապարհների հետ:

ԱԻՆ, Երևանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչությունը և ՀՀ Տրանսպորտի ու կապի նախարարությունը պետք է ամենօրյա պայմաններում պատրաստեն ռազմավարական ճանապարհները, ինչպես ցույց է տրված աղյուսակ 67-ում:

Աղյուսակ 67 Ռազմավարական ճանապարհների պատրաստում

Կետ	Բովանդակություն
Մեքենաների կայանման սահմանափակում	Մեքենաների կայանումը ռազմավարական ճանապարհների վրա պետք է արգելվի նույնիսկ սովորական պայմաններում, որպեսզի աղետի ժամանակ այն չստեղծի խոչընդոտներ:
Խոչընդոտների վերացում	Ծառերի ճյուղերի պատշաճ կտրատում և գովազդային վահանակների ամրացում երկրաշարժի ժամանակ՝ դրանց կտորվելու հետևանքով առաջացած երթևեկության խոչընդոտներից խուսափելու համար:
Ճանապարհային օբյեկտների սեյսմիկ ամրացում	Առաջնահերթ պետք է իրականացվի ռազմավարական ճանապարհների վրա գտնվող կառույցների (օրինակ՝ կամուրջներ և ցանկապատեր) սեյսմիկ զննում և սեյսմիկ ամրացում:

<p>Ռազմավարական ճանապարհները շրջապատող կառույցների սեյսմիկ ամրացում</p>	<p>Առաջնահերթ պետք է իրականացվի ռազմավարական ճանապարհների վրա գտնվող և փլուզման հետևանքով խցանումներ առաջացնելու հավանականություն ունեցող շենքերի սեյսմիկ զննում և սեյսմիկ ամրացում:</p>
<p>Տարածում</p>	<p>Ռազմավարական ճանապարհների վրա կարգելվի սովորական մեքենաների երթևեկությունը և կվերացվեն խոչընդոտները: Դրանք վերահսկելու հետևանքով առաջացած խառնաշփոթը նվազեցնելու համար բնակչությանը նախապես պետք է տրամադրվի տեղեկատվություն արգելված բաների և արձագանքման վերաբերյալ:</p>

Գլուխ 170. ԱԻ ժամանակ փոխադրումների վայրերի որոշում և բարելավում

1. ԱԻ ժամանակ Երևանի դրսից փոխադրումները կիրականացվեն ցամաքով՝ մեքենաներով և երկաթգծով, ինչպես նաև ինքնաթիռով: Ցամաքով՝ մեքենաներով տարածաշրջանային փոխադրումների բազաները տեղակայված են Երևանից արևմուտք և հյուսիս ձգվող շառավղային ճանապարհի երկայնքով: Տարածաշրջանային փոխադրումների բազաները ձևավորվել են բեռնավորման/բեռնաթափման, ժամանակավոր պահեստավորման, վառելիքով լիցքավորման և այլնի տարածքների հետ, և այդ օբյեկտներից շատերը շահագործվում են մասնավոր սեկտորի կողմից: Փրկարար ծառայությունը, համագործակցելով օբյեկտների օպերատորների հետ, պետք է նպաստի տարածքների ապահովմանը և օբյեկտների բարելավմանը, որոնք անհրաժեշտ են ԱԻ ժամանակ փոխադրումների համար:

2. Երկաթուղային կայանները և Զվարթնոց օդանավակայանը նույնպես հանդիսանում են բազաներ դրսից օգնություն ստանալու համար: Այդ օբյեկտները շահագործվում են ազգային Կազմակերպությունների կողմից: Փրկարար ծառայությունը պետք է հավաստիանա, որ ԱԻ ժամանակ փոխադրումների համար անհրաժեշտ տվյալները և միջոցները ապահովված են կայաններում և օդանավակայանում:

3. Կարող է այնպես լինել, որ դրսից եկող որոշ օգնություն անմիջապես ուղարկվի տուժած տարածքներ՝ առանց բեռնաթափելու տարածաշրջանային փոխադրումների բազայում: ԱԻՆ, համագործակցելով արտակարգ իրավիճակների հանձնաժողովի և վարչական շրջանների ղեկավարների հետ, պետք է նախապատրաստի անհրաժեշտ տարածքներ և միջոցներ, որոնք անհրաժեշտ են աղետի ժամանակ հրամանատարության, տարահանման, բուժօգնության համար, օրինակ՝ դրսից ստացված օգնության պահեստավորման տարածքների և տարածաշրջանային փոխադրումների բազաների ապահովում, որոնք ունեն տարածք՝ օգնություն բերած անձնակազմին տեղակայելու նպատակով հարմարություններ ստեղծելու համար:

Գլուխ 171. Ռազմավարական ճանապարհների վրա խոչընդոտների վերացման և երթևեկության կարգավորման գործընթացները

ԱԻՆ, համագործակցելով Երևանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչության և ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության հետ, պետք է մշակի ռազմավարական

ճանապարհների վրա խոչընդոտների արագ վերացման պլան: Վերացման արդյունավետ աշխատանքների համար պլանում պետք է նշվի Երևանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչության և ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության, ծանր տեխնիկա ունեցող Կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակի, անցանելի և անանցանելի ճանապարհների վերաբերյալ տեղեկատվության հավաքման և այլնի մասին:

ՀՀ Ոստիկանության Երևանի վարչությունը պետք է հաստատի իր գործողությունների շրջանակը, օրինակ՝ երթևեկության սահուն վերահսկման համար ոստիկանների գործողությունների պլանը:

Գլուխ 172. ԱԻ ժամանակ օգտագործվող մեքենաների նախապես գրանցում և տրանսպորտային միջոցների ձեռքբերում

Մեքենաները, որոնք կարող են անցնել ռազմավարական ճանապարհներով, պետք է լինեն հրդեհաշիջման, ոստիկանության, փրկարարական, ռազմական և կենսապահովման միջոցների մեքենաները: Բացի այդ, այն մեքենաները, որոնց թույլատրվում է ԱԻ ժամանակ անցնել ռազմավարական ճանապարհներով, պետք է ունենան երթևեկության թույլտվություն: ԱԻ ժամանակ օգտագործման ենթակա մեքենաները բերված են աղյուսակ 68-ում:

Աղյուսակ 68 ԱԻ ժամանակ օգտագործման ենթակա մեքենաները

Աղետի ժամանակ հրդեհաշիջման, ոստիկանության, գազի, փրկարարության (ներառյալ հասարակայնության հետ կապերի) և ռազմական նպատակի համար անհրաժեշտ մեքենաներ՝ ի լրումն առօրյա օգտագործվող մեքենաների:
Կենսապահովման գծերի, ներառյալ՝ էլեկտրականության/տաք ջրի/կոյուղու և հասարակական այլ հարմարությունների ստուգման և արագ վերականգնման համար անհրաժեշտ մեքենաներ:
Առողջության/սանիտարական պայմանների, օրինակ՝ մաքրման և համաճարակի վերահսկման ապահովման համար անհրաժեշտ մեքենաներ:
Անհապաղ փոխադրումների համար անհրաժեշտ մեքենաներ:
Աղետի տարածումը կանխող այլ նպատակների համար անհրաժեշտ մեքենաներ:

Երթևեկության թույլտվություններ նախապես կպահանջվեն այն կազմակերպությունների կողմից, որոնք ունեն ԱԻ դեպքում օգտագործման ենթակա մեքենաներ և որոնք ուղարկվում են արտակարգ իրավիճակների հանձնաժողովի կողմից: Աղետի ժամանակ օգտագործման ենթակա մեքենաները կարող են անցնել ռազմավարական ճանապարհներով՝ տեղադրելով և ցուցադրելով թույլտվությունը մեքենայի լավ երևացող մասում:

Բաժին 17 Նախնական պատրաստություն, կապված շտապ բժշկական օգնության ցուցաբերման հետ

Գլուխ 173. Բժշկական տեղեկատվության հավաք և փոխանցում

Բժշկական ծառայությունը ստեղծում է բժշկական տեղեկատվության հավաքի, փոխանցման, շտապ բժշկական օգնության տրամադրման, վիրավորների տեղափոխման և այլնի մի համակարգ, ինչպես նաև աղետներին հաջորդող բժշկական օգնության ցուցաբերման համակարգ, որպեսզի աղետի ժամանակ ունենա հնարավորություն իրականացնել օպերատիվ և համարժեք գործունեություն շտապ բժշկական օգնություն ցուցաբերելիս: Արագ և համարժեք շտապ բժշկական օգնության ցուցաբերման համար անհրաժեշտ է շտապ իրականացնել տեղեկատվության հավաք՝ վիրավորների և տուժածների մասին, բժշկական հիմնարկի վնասվածության մասին, հիվանդների ընդունում և ծառայությունների մատուցում իրականացնող հիմնարկներում տիրող իրավիճակի մասին և այլն: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է հստակ տրամադրել այդ ինֆորմացիան բժշկական հաստատություններին, ԱԻ շտաբին և մյուս շահագրգիռ մարմիններին, ինչպես նաև բնակչությանը:

Այդ իսկ պատճառով ավերիչ երկրաշարժի դեպքում բժշկական ծառայությունը իր համակարգում ստեղծում է «Շտապ բժշկական օգնության տեղեկատվության կառավարման կենտրոն», որի խնդիրն է իրականացնել հստակ տեղեկատվության հավաք և փոխադարձ փոխանակում հիվանդանոցների, նշանակված հիմնական հոսպիտալների, շտապ օգնության մեքենաների, ուրիշ բժշկական հաստատությունների, ինչպես նաև ԱԻ և երկրաշարժի հետևանքների վերացման այլ կազմակերպությունների հետ, այս նպատակով իրականացվում է՝

ա) Շտապ բժշկական օգնության ցուցաբերման տեղեկատվության կառավարման կենտրոնում ստեղծվում է տեղեկատվության կենտրոնացված համակարգ բնակչության շրջանում տուժածների և մահացածների իրավիճակի մասին, բժշկական հաստատության ավերվածության հետ կապված, գործողությունների իրականացման մասին և այլն:

բ) Հիմնական հոսպիտալներն ու դաշտային բուժկետերը օպերատիվ կերպով հագեցվում են, որը հնարավորություն է տալիս կապ հաստատել շահագրգիռ կազմակերպությունների հետ:

գ) Հիմնական հոսպիտալներն ու դաշտային բուժկետերի տեղադրման վայրերի ընտրությունը իրականացվում է նախօրոք և դրա մասին տեղյակ են պահում բնակչությանը:

դ) Սովորական պայմաններում իրականացվում է մեքենաների տեխսզնում և տեխսպասարկում բարձրախոսներով, որպեսզի ԱԻ ժամանակ դրանց միջոցով ապահովեն իրենց աշխատանքը:

Գլուխ 174. Առաջին բուժ օգնության (ԱԲՕ) ցուցաբերման համակարգ

ԱԻ ժամանակ օպերատիվ և հրատապ առաջին բուժ օգնության ցուցաբերելու համար պետք է ստեղծել շտապ բժշկական օգնության համակարգ: Դրա համար բժշկական ծառայությունը նախապես իրականացնում է աղյուսակում նշված ցուցումները:

Աղյուսակ 69 ԱԲՕ նախապատրաստման համակարգ ծրագրերը

Ծրագրեր	Բացատրություններ
Շտապ բժշկական օգնության օբյեկտներ	Դաշտային բուժկետեր, հիմնական հոսպիտալներ. ֆունկցիաները, տեղավորվածությունը, համալրումը
Շտապ բժշկական օգնության ֆունկցիաները	Ֆունկցիաների բաշխում և փոխգործողություն, շարժական բժշկական ստորաբաժանումների ամրապնդում
Բժշկական սարքավորումներ և նյութեր	Շտապ բժշկական օգնության սարքավորումների և նյութերի վերահաշվարկ, բժշկական նշանակություն ունեցող սարքավորումների ստեղծում և պաշարների հավաք
Կադրերի վերապատրաստման ապահովում	Ապահովել բժիշկներին, բժշկական անձնակազմին, կամավորների և օգնականների առկայությունն և ուսուցումն

Գլուխ 175. Շտապ բժշկական օգնության օբյեկտները: Ֆունկցիաները, տեղավորումը, հագեցումը

1. Շտապ բժշկական օգնության օբյեկտներ-դա բազայի հոսպիտալներն ու դաշտային բուժկետերն են: Բազայի հոսպիտալները ունիվերսալ հիվանդանոցներ են, սովորական պայմաններում բժշկական ծառայություն մատուցող, ինչպես նաև ունակ են Աի ժամանակ ծավալել լայն բժշկական գործունեություն:

2. Դաշտային բուժկետերը բժշկական հատուկ վրաններում, ազատ գոտիներում կառուցվող օբյեկտներ են, որոնք տրամադրում են ժամանակավոր բուժօգնություն ավերիչ երկրաշարժի դեպքում, դրանց ներկայացվող պահանջներից են՝

ա) Ելնելով սկզբնական ենթադրությունից՝ տրանսպորտային միջոցների օգտագործման անկարողությունից և կապի ընդհատումից, հաշվի առնելով հիմնական հոսպիտալների տեղադրվածությունը, նկատի են առնվում բոլոր այն հնարավոր շրջանները, որոնք կարող են օգտագործվել դաշտային բժշկական կետերի ծավալման համար, որպեսզի հնարավորության սահմաններում հնարավոր լինի հարթ իրականացնել շտապ բժշկական օգնություն աղետի ենթարկված շրջաններում:

բ) Հաշվի առնելով այն, որ կա մեծ հավանականություն, որ դաշտային բուժկետերը չեն կարող լիովին իրենց վրա վերցնել տուժածներին և վիրավորներին օգնության ցուցաբերումը, առաջ է գալիս սեյսմակայուն հիմնական հոսպիտալների առաջխաղացման գործընթացը, որը բերում է նրան , որ նրանք կարողանան ընդունել բավարար քանակությամբ վիրավորների և տուժածների:

գ) Ստեղծել դաշտային բուժկետերի համար նախատեսված անհրաժեշտ բժշկական վրանների և բժշկական սարքավորումների պաշարներ: Անընդհատ իրականացնել այդ պաշարների ստուգում և անհրաժեշտության դեպքում նորացնել դրանք:

Գլուխ 176. Ֆունկցիաների և փոխգործողության բաժանումը: Շարժական բժշկական միավորների հզորացումը

Որպեսզի շարժական բժշկական միավորումները և մյուս բժշկական անձնակազմերը հոսպիտալներում և դաշտային բուժկետերում կարողանան հստակ իրականացնել իրենց գործունեությունը ավերիչ երկրաշարժի դեպքում, նախապես իրականացվում է գործողությունների բաժանում և հստակ ձևակերպում են համագործակցության միջոցները:

Շտապ բժշկական օգնության դեպքում բժշկական ծառայությունը դաշտային բուժկետեր է ուղարկում շարժական բժշկական ստորաբաժանում, որը իրականացնում է բուժառայության գործունեությունը: Դրա համար բժշկական ծառայությունը նախապես իրականացնում է շարժական բուժ. միավորումների գործունեության բովանդակության կենտրոնացում և իրազեկում է շահագրգիռ անձանց: Հիվանդանոցների կողմից տրամադրված թեկնածուների ցուցակից, որոնք չունեն «Հիմնական հոսպիտալների» կարգավիճակ, բժշկական ծառայությունը նախապես ընտրում է կադրեր շարժական բժշկական միավորումների համար՝ պրակտիկա անցնող բժիշկների և աշխատող բժշկական անձնակազմից:

Շարժական բժշկական միավորումները իրենց մեջ ներառում են միավորների 2 տիպ: Բժշկական միավորումներ և հատուկ բժշկական միավորումներ, որոնց ցույց են տրված աղյուսակ 70-ում:

Աղյուսակ 70 Շարժական բժշկական միավորումների ծառայողական պարտականությունները և կոմպլեկտավորման ստանդարտները

Միավորման տեսակը	Կոմպլեկտավորման ստանդարտները		Ծառայողական պարտականությունները
Բուժքույրական միավորում	Բժիշկ-1 մարդ Բուժքույրական անձնակազմ-3 մարդ	30 բրիգադ	Կանխատեսում, տուժածներին և վիրավորներին առաջնային բժշկական օգնության ցուցաբերման, առաջնահերթության օգնության ցուցաբերումը թեթև վիրավորներին, տուժածներին և վիրավորներին առաջնային բժշկական օգնության ցուցաբերման, վիրակապման և վիրահատման, բուժման և այլ միջոցներ:
Հատուկ բժշկական միավորում	Բժիշկների, բուժքույրերի ընդհանուր թիվը-6 մարդ	30 բրիգադ	

Գլուխ 177. Շտապ բժշկական օգնության համար նյութերի և սարքավորումների կոմպլեկտավորում և բժշկական նշանակության պահուստների ստեղծում

Ըստ հիմնական հոսպիտալների և դաշտային բուժկետերի, բժշկական ծառայությունը կազմում է բժշկական նյութերի և սարքավորումների ցուցակները, որոնցով պետք է ապահովվեն շտապ բժշկական օգնության օբյեկտները: Շտապ բժշկական օգնության համապատասխան օբյեկտները ուսումնասիրում են այդ ցուցակները, պարզում են իրենց անհրաժեշտ սարքավորումները և նյութերը, իրականացնում են կոմպլեկտավորում բժշկական ծառայության հետ, որից հետո մշակում են սարքավորումներով ու նյութերով հագեցման պլանը:

Բժշկական ծառայությունը ստեղծում է բժշկական նշանակության գործիքների պահուստ, որոնք անհրաժեշտ են շտապ բժշկական օգնության օբյեկտներին ավերիչ երկրաշարժների դեպքում: Հաշվի առնելով, որ խոշոր երկրաշարժի դեպքում այդ պահուստները կարող են բավարար չլինել, նախօրոք համաձայնագրեր են ստորագրում քաղաքային դեղագործական միավորումների հետ, դեղորայքների օպերատիվ մատակարարման համար:

Բժշկական ծառայությունը համագործակցելով ավտոտրանսպորտային ծառայության հետ, մշակում է համաձայնագրեր, որոնք թույլատրում են երկրաշարժի ժամանակ ներկրել բժշկական նշանակության նյութեր, ապահովում են ավտոտրանսպորտային միջոցների առկայությունը:

Գլուխ 178. Շտապ բժշկական օգնության ցուցաբերման համար կադրերի առկայության և պատրաստման ապահովումը

Ավերիչ երկրաշարժի ժամանակ աշխատող բժիշկների և բուժ. աշխատողների քանակը կարող է բավարար չլինել բազմաթիվ վիրավորներին և տուժածներին օգնություն ցուցաբերելու համար: Կադրերի քանակի ավելացման և ուսուցման նպատակով, բժշկական ծառայությունը իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ա) Մարդկանց մի խումբը, որն ունի բուժքույրական որակավորվում, տարբեր պատճառներով չի իրականացնում բժշկական գործունեություն: Այդպիսի մարդիկ, դիտվում են որպես բուժքույրական անձնակազմի կոնտինգենտ:

բ) Բժշկական ծառայությունը համագործակցելով կրթության քաղաքային ղեկավարության և փրկարար ծառայության հետ, ձևավորում է շտապ բժշկական օգնության ցուցաբերման համակարգի ուսուցումը, որն կողմնորոշված է մասնագիտացված բուժաստատությունների բուժ.աշխատողների վրա:

գ) Տուժածներին և վիրավորներին մինչ բժշկական օգնության ցուցաբերման շահերից ելնելով, բժշկական ծառայությունը ողջունում է սանիտարական խմբերի ձևավորումը, կազմակերպումը, որոնք ստեղծվում են տեղի համայնքների մակարդակով:

դ) Բժշկական ծառայությունը ստեղծվում է կամավորների նախնական գրանցման համակարգ, որոնք կարող են իրականացնել առաջնային բժշկական օգնություն ավերիչ երկրաշարժի ժամանակ: Բացի դրանից բժշկական ծառայությունը տրամադրում է հնարավորություն և պայմաններ նրանց որակավորման բարձրացման և պարապմունքների

անցկացման համար:

Գլուխ 179. Տուժածների տեղափոխման համակարգ

1. Վիրավորների տեղափոխումը նախատեսում է՝

ա) Ծանր վիրավորներին, որոնց օգնություն ցուցաբերել դաշտային բուժկետերում հնարավոր չէ, տեղափոխում են հիմնական հոսպիտալներ:

բ) Ծանր վիրավորներին և խրոնիկ հիվանդություններով անձանց, որոնք անընդհատ բժշկական հսկողության կարիք ունեն, տեղափոխում են հիմնական հոսպիտալներ և շտաբեր բժշկական հետազոտություն ստանալու համար:

գ) Վիրավորների վիճակը հաշվի առնելով, օգտագործվում են շտապ օգնության մեքենաներ, քաղաքային և ՓԾ ավտոտրանսպորտը:

դ) Իրականացվում է կոորդինացում քաղաքացիների հետ, որոնց հետ համաձայնություններ են ստորագրվել և ապահովվում է բուժհաստատությունների առկայությունը ավերիչ երկրաշարժի ժամանակ տուժածներին ընդունելու համար:

2. Բուժ. անձնակազմի տեղափոխումը նախատեսում է՝

ա) Բժշկական ծառայությունը իրականացնում է կոնսուլտացիա և համաձայնության է գալիս ավտոտրանսպորտային և այլ շահագրգիռ ծառայությունների հետ, երկրաշարժի ժամանակ տրանսպորտային միջոցներով ապահովելու համար:

բ) Կանխատեսելով, որ բուժ. աշխատողները կարող են չբավականացնել, բուժ. ծառայությանը, մշակվում են պլաններ մոտակա քաղաքներից բուժ. անձնակազմ բերելու համար:

Գլուխ 180. Հետագա բժշկական օգնության ցուցաբերման համակարգը

Այլ բնակավայրերի բուժ. հաստատություններում տուժածների ընդունումն ապահովելու համար, բժշկական ծառայությունը իրականացնում է մոտակա քաղաքների ղեկավարների հետ կոնսուլտացիա և ստեղծում է հետագա բժշկական օգնության ցուցաբերման համակարգ: Բժշկական ծառայությունը ստեղծում է տարածաշրջանային բուժ. սպասարկման համակարգ, որն նախատեսված է շրջակա բնակավայրերից օգնություն ստանալու համար:

Գլուխ 181. Ինֆեկցիոն հիվանդությունների պրոֆիլակտիկան

Ավերիչ երկրաշարժի դեպքում վտանգ կա երկրորդային աղետների ծագման և զարգացման /սանիտարական պայմանների վատացում, ինֆեկցիոն հիվանդությունների տարածում/: Աղբի հեռացման, զուգարանների ապահովման հետ մեկտեղ ապահովվում է ինֆեկցիոն հիվանդությունների տարածման, կանխման սարքավորումների և միջոցների պրոֆիլակտիկա:

Գլուխ 182. Ինֆեկցիոն հիվանդությունների պրոֆիլակտիկայի սարքավորումների և միջոցների ձևավորումը

Սանիտարա-համաճարակային ծառայությունը իրականացնում է հետևյալ նախապատրաստական միջոցառումները՝

- ա) Բուժ. հաստատությունների հրահանգավորում
- բ) Այն հաստատություններում, որոնք ԱԻ ժամանակ պետք է իրականացնել բժշկական օգնության ցուցաբերում, հրահանգավորվում են իրականացնել դեղորայքային ապահովում:
- գ) Մշակվում է պլան սանիտարական նյութերով և միջոցներով ապահովելու համար: Այդ նպատակով որոշվում են մարտավարական աղբյուրները:

Գլուխ 183. Պրոֆիլակտիկ պատվաստումներ

Գրիպի և այլ ինֆեկցիոն հիվանդությունների տարածումը կանխելու համար բժշկական ծառայությունը քաղաքացիներին տեղեկացնում է պրոֆիլակտիկ պատվաստման մասին:

Գլուխ 184. Սպառողական հոգեբանական օգնություն

Ավերիչ երկրաշարժից շոկը և տարահանման կետերում երկարատև ապրելը մեծ սթրես է հանդիսանում տուժածների համար, դրա համար այդ մարդիկ կարիք ունեն հոգեբանական օգնության: Բժշկական ծառայությունը համագործակցելով շահագրգիռ կազմակերպությունների հետ իրականացնում է հետևյալ նախապատրաստումը՝

1. Հոգեբանական օգնության ցուցաբերման համար ուսումնասիրությունների անցկացման հովանավորում
2. Հոգեբանական օգնության ցուցաբերման համար ուսուցման հնարավորություն և պայմանների տրամադրումը

Բաժին 18 Անհայտ կորածների որոնմանը և դիակների հավաքմանը վերաբերող նախնական պատրաստություն

Գլուխ 185. Անհայտ կորածների որոնման համակարգ

ԱԻՆ, համագործակցելով շահագրգիռ կազմակերպությունների հետ ձևավորում է համակարգ, որի նպատակն է երկրաշարժի ժամանակ անհայտ կորած անձանց մասին տեղեկատվության հավաքագրումը, ինչպես նաև որոնողական աշխատանքների իրականացումը:

Այդ նպատակով ծառայությունը որոշում է անհրաժեշտ սարքավորումների և նյութերի քանակը, հաշվի են առնվում վնասի կանխատեսման արդյունքները: Ստեղծվում են սարքավորումների և անհրաժեշտ նյութերի պաշարներ, ինչպես նաև իրականացնում է անհայտ կորածների մասին տեղեկատվության հավաքագրման վարժանքներ, և որոնողավրկարարական միջոցառումներ:

Գլուխ 186. Դիակների որոնման և հավաքման համակարգը

Փրկարար ծառայությունը, հատուկ սպասարկումների ծառայության հետ համատեղ, ստեղծում է դիակների որոնման և հավաքման համակարգ, նախատեսված մինչ դիահերձարան դիակների տեղափոխումը: Համապատասխան գործողությունների ընթացքը ներառում է դիակների հայտնաբերում, նրանց մասին տեղեկատվության հաղորդում, դիտում, դագաղներում տեղադրում, անձի ճանաչում, բարեկամներին փոխանցում և այլն: Դրա համար անհրաժեշտ են դիահերձարաններ, որոնք ապահովված են համապատասխան սարքավորումներով:

Գլուխ 187. Հուղարկավորման և դիակիզման գործընթաց

Հատուկ սպասարկումների ծառայության ծառայությունը հետազոտում է թաղման ընդունված ձևը և գերեզմանների հնարավորությունները, և ապա նախապես կնքում է պայմանագիր առնչվող ծառայությունների հետ՝ հաշվի առնելով ծառայությունների հնարավորությունները՝ հղում կատարելով վնասի գնահատման արդյունքին:

Բաժին 19 Ջրով և պարենամթերքով ապահովումը, բաշխման համակարգը

Գլուխ 188. Խմելու ջրի բաշխման հիմունքները

Բնակչությանը խմելու ջրով և սննդամթերքով ապահովելու համար անհրաժեշտ է մշակել և գործողության մեջ դնել ԱԻ հետևանքների նվազեցման պլանները՝ կապված խմելու ջրի և սննդամթերքի սակավության հետ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ջրամատակարարման օբյեկտներում իրականացնել սեյսմիկ ուժեղացում, իրազեկել բնակչությանը իրենց հետ ունենալ 3 օրվա խմելու ջրի և սննդամթերքի պահուստ: Դրա հետ միաժամանակ, բնակչությանը օգնության կարգով՝ ջրամատակարարման օբյեկտների վնասվածության կամ պահուստային պաշարների ոչնչացման պատճառով անհրաժեշտ է կազմակերպել խմելու ջրի և սննդամթերքի բաշխում:

Խմելու ջրի բաշխման հիմունքներն են՝

- 1) ջրամատակարարման օբյեկտների վնասվածության դեպքում ջրամատակարարումը բնակչությանը ապահովվում է Ապարանի ջրաղբյուրներից:
- 2) եթե կառավարման կենտրոնները, բուժսպասարկման կամ տարահանման կետերը տեղաբաշխված են ջրի բաժանման կետերից 2կմ հեռավորության վրա, ապա այդ օբյեկտներին ջուրը պետք է ապահովել ավտոջրատարներով:
- 3) համեմատաբար քիչ ավերվածություններով տարածքներում, որտեղ ջրամատակարարումը դադարեցված է ջրագծերի վնասման հետևանքով, պետք է կազմակերպել ջրի բաշխման ժամանակավոր կետեր:
- 4) անհրաժեշտ է, որ ջրով ապահովման նվազագույն քանակը 1 մարդու համար, կազմի 3 լիտրից ոչ պակաս/պլանում կարելի է նախատեսել 10 լիտր 1 մարդու հաշվարկով/:
- 5) ջրամատակարարման ծառայությունը ապահովում է կառավարման կենտրոններին, բուժսպասարկման, ԺՏԿ և ՀՏԿ, ջրաբաժանման ժամանակավոր կետեր, որոնց ջրաբաշխման համար պատասխանատու է համապատասխան կառավարման մարմինը:

Գլուխ 189. Ջրի բաժանման կետերի կազմակերպումը

Ջրամատակարարման ծառայությանը առաջարկվում է քաղաքապետարանի համապատասխան ծառայությունների հետ համատեղ կառավարման կենտրոնից, բուժսպասարկման և ԺՏԿ և ՀՏԿ 2 կմ հեռավորության վրա տեղադրել ջրի պաշարներ: Ռեգերվուարները պետք է լինեն բավականին սեյսմակայուն, ինչպես նաև հագեցված լինեն ամուր փականներով, որպեսզի ջրագծերի վթարման դեպքում ջրի արտահոսք տեղի չունենա:

Գլուխ 190. Ջրի բաշխման համակարգ

Ավտոջրատարների/ջրացիստերների/ մեջ խմելու ջրի ներմղման, ինչպես նաև առանձնապես աղետի գոտի ջրի բաց թողման/ջրամատակարարման/ համար անհրաժեշտ է լրացուցիչ գեներատորներ և պոմպային սարքեր:

Ջրամատակարարման ծառայությանը առաջարկվում է ձևավորել արտակարգ

ջրամատակարարման դադարեցման ժամանակ, հիմնականում համագործակցելով Քաղաքապետարանի համապատասխան ծառայությունների հետ նախապատրաստել անհրաժեշտ քանակությամբ ջրային պոմպեր և գեներատորներ տեղադրելով ջրաբաշխման կետերում և ջրամբարներում:

Կառավարման, բուժսպասարկման և տարահանման կետերի ջրամատակարարումը, որոնք տեղաբաշխված կլինեն ռեզերվուարների/կամ ջրամբարների/ մոտ տարածքներում և որոնց ջրամատակարարումը չի իրականացվի ավտոջրատարների միջոցով, ջրամատակարարման ծառայությունը բուժսպասարկման և փրկարարական ծառայությունների, ինչպես նաև այլ կառավարման մարմինների հետ համատեղ, ջրամատակարարումը կիրականացնի ոչ մեծ ռեզերվուարներով՝ որտեղ տեղադրել համապատասխան գեներատորներ և ջրային պոմպեր:

Ջրային պոմպերը և գեներատորները պետք է պահվեն ռեզերվուարների մոտ տարածքում, իսկ համապատասխան սպասարկող անձնակազմը պետք է իմանա, թե ինչպես արագ գործարկել և ապահովել ջրի մատակարարումը արտակարգ իրավիճակի վայր:

Սարքավորումների տեղադրող և շահագործող անձնակազմը պետք է ստեղծել ջրամատակարարման ծառայության կազմում: Աշխատողների ուսուցումը կիրականացվի ջրամատակարարման ծառայության կողմից:

Գլուխ 191. Սննդամթերքի և կենցաղային ապրանքների բաշխման հիմունքներ

1) Սննդամթերքով և ամենօրյա անհրաժեշտության ապրանքներով ու պարագաներով ապահովում է այն բնակչության զանգվածը, որն անկարող է իրեն ապահովել սննդամթերքով և առաջին անհրաժեշտության պարագաներով, ինչպես նաև այն անձանց, որոնք զբաղված կլինեն օգնության ցուցաբերման գործողություններով:

2) ԱԻ-ից հետո առաջին 3 օրվա համար սննդամթերքով և առաջին անհրաժեշտության պարագաներով օգնությունը ցուցաբերվում է խոհանոցային պատրաստում չպահանջող: Առաջին 3 օրերի համար նախատեսված պարենամթերքի սպառման դեպքում սնունդը բաց է թողնվում հատուկ առանձնացված կետերից, որոնք ունեն անհրաժեշտ սպասքեղեն և պարագաներ սննդի պատրաստման համար:

3) սննդամթերքի և այլ ամենօրյա ապրանքների բաշխման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել մեծահասակ մարդկանց և երեխաների պահանջարկը:

4) բնակչության այն զանգվածը՝ որը ի վիճակի վճարել և ձեռք բերել սննդամթերք և առաջին անհրաժեշտության պարագաներ, գները պետք է լինեն մատչելի:

5) կառավարման կենտրոնների, բուժսպասարկման և տարահանման կետերում սննդամթերքի և ամենօրյա սպառման ապրանքների հասցման և ապահովման համար պատասխանատու է սննդի և առևտրի ծառայությունը:

Գլուխ 192. Ամենօրյա սպառման ապրանքների և սննդամթերքի պահուստի ապահովվումը և բաշխումը

1. Ամենօրյա սպառման ապրանքների և սննդամթերքի բաշխմամբ և պահուստի պաշարների ապահովմամբ զբաղվում է սննդի և առևտրի ծառայությունը, որի իրավասության

տակ է գտնվում ապրանքների արտադրման, տրանսպորտափոխադրման և առք ու վաճառքի վերահսկողության հարցերը:

2.Սննդի և առևտրի ծառայությունը մշակում և կազմում է ապրանքների կուտակման և բաշխման պլաններ: Պլաններում պետք է նախատեսվեն արտադրատեսակների պահուստի չափերը, դրանց բաշխման համակարգը և վաճառողները, որոնք կարող են անմիջապես օգտագործվել հումանիտար օգնության ցուցաբերման մեջ, ինչպես նաև, եթե անհրաժեշտ է, պլանում պետք է նախատեսվի այդ պահուստային պաշարների մեծացմանն ու ավելացմանն ուղղված միջոցները թույլատրելի սահմաններում: Հարկ է նշել, որ Քաղաքապետարանի ԱԻ ծառայությունները և այլ ուրիշ կազմակերպություններ նույնպես ունեն առաջին անհրաժեշտության ապրանքատեսակների և այլ պարագաների պահուստային պաշարներ, այդ իսկ պատճառով պլանների մշակման ժամանակ պետք է հաշվի առնել այլ մարմինների ու կազմակերպությունների պահուստային պաշարների կուտակման և բաշխման հարցերը:

3.Սննդի և առևտրի ծառայությունը վարում է նախապատրաստական աշխատանքներ արտադրողների, մատակարարողների /ապրանքագետ/ և վաճառողների հետ, կնքում նրանց հետ համաձայնագրեր սննդամթերքի և այլ ապրանքների ապահովման համար, որպեսզի երկրաշարժից հետո շտաբի պետի հրամանով անմիջապես անցնեն սննդամթերքների և այլ անհրաժեշտ ապրանքների հատկացմանը:

4.Սննդամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների մատակարարումը կառավարման կենտրոններին, բուժսպասարկման ծառայություններին և տարահանման կետերին իրականացվում է ապրանքի արտադրողների, ապրանքագետների և վաճառողների սեփական տրանսպորտով, իսկ սննդի և առևտրի ծառայությունը պետք է ապահովի այդ տրանսպորտային միջոցների հաշվառումը, հրատապ փոխադրումների համար հատկացնելով համապատասխան անցագրեր:

Բաժին 20 Կոմունալ-էներգետիկ, տրանսպորտային հաղորդակցության, կապի, հակասելավային պաշտպանության օբյեկտների վերականգնման պատրաստականության ապահովման նախապատրաստական միջոցառումներ

Գլուխ 193. Արագ արձագանքման մասնագիտացված շտաբերի և նրանց ստորաբաժանումների ձևավորման պատրաստականության ապահովումը

1. Աղետի հետևանքով ավերվածությունների արդյունքում կոմունալ-էներգետիկ ապահովման, տրանսպորտային հաղորդակցության, հեռահաղորդակցության, ինչպես նաև հակասելավային համակարգը բերում է ոչ միայն ենթակառուցվածքային օբյեկտների գործունեության խափանմանը, այլ նաև սեյսմիկ երևույթների երկրորդային վնասի տարածման վտանգին, էականորեն դանդաղեցնում է արագ արձագանքման իրականացումը: Դրա հետ կապված անհրաժեշտ է մշակել միջոցառումների համակարգ՝ նշված օբյեկտների վնասը նվազեցնելու ուղղությամբ (տես բաժին 8), որոնցից հատկապես պետք է ընդգծել խիստ կարևոր և արագ վերականգնման չենթարկվող և նախապես զրոյական վնասի ապահովում պահանջող օբյեկտները: Դրանք մասնավորապես ջրապատնեշային և ջրամաքրման շինություններ են, էլեկտրակայանները և ենթակայանները, գազապահեստարանները և գազակարգավորիչ կայանները, վերահաղորդման և կապի վերահաղորդման ու կոմուտատորային կայանները, կոմունիկացիոն կապի կայանները և հիդրոտեխնիկական օբյեկտները: Ինչպես նաև, անհրաժեշտ է նախատեսել հեռուստահաղորդակցման համակարգի ցանցային օբյեկտների շարքից դուրս գալու դեպքում կարճատև ժամանակահատվածում իրագործվող մի շարք միջոցառումներ:

Գլուխ 194. Արագ արձագանքման մասնագիտացված շտաբերի և նրանց ստորաբաժանումների ձևավորման պատրաստականության ապահովումը

1. Ուժեղ երկրաշարժի հետևանքով կոմունալ-էներգետիկ, հեռահաղորդակցության և տրանսպորտային հաղորդակցության գծերի վնասման դեպքում յուրաքանչյուր օբյեկտի գործունեության վերականգնումը կհանձնվի համապատասխան մասնագիտացված ծառայություններին: Այդ ծառայությունները ձևավորված են 70-րդ աղյուսակին համապատասխան (արագ արձագանքման գլխավոր շտաբը (ԳՇ) և նրա ստորաբաժանումները): Մասնագիտացված ԳՇ-ները, որպես կանոն ձևավորվում են 5 բալից բարձր երկրաշարժի կամ խոշոր ավերվածությունների դեպքում, սակայն մասնագիտացված ծառայություններին իրավունք է տրվում համապատասխան որոշումներ ընդունել երկրակեղևի ցնցումների 4 բալից բարձրի դեպքում:

2. Վերը նշված պայմանների դեպքում մասնագիտացված ԳՇ-ների հավաքի հրամանը

ուղղվում է շտաբի յուրաքանչյուր անդամին ռադիոկապի կամ այլ կապի միջոցներով: Դրա հետ միաժամանակ անհրաժեշտ է անձնակազմին հասցնել երկրակեղևի ցնցումից հետո ժամանման կարգը կամ ուժեղ ավերվածությունների տեղեկատվության ստացումը՝ առանց համապատասխան հրամանի (որը պայմանավորված է կապի համակարգի խափանման կամ այլ հանգամանքներով):

Աղյուսակ 71 Մասնագիտացված ԳՇ-ների և դրանց ստորաբաժանումների ձևավորումը կոմունալ-էներգետիկ ապահովման, կապի և տրանսպորտային հաղորդակցության գծերի վերականգնման համար

Գործության ոլորը	Համապատասխան կազմավորումներ	Շտաբի անվանումը	Ծառայություն, որը ձևավորում է ԳՇ	ԳՇ ստորաբաժանումներ	ԳՇ ստորաբաժանումների ձևավորման մասնակցած կազմակերպություն
Ջրամատակարարում, կոյուղի	Ջրամատակարարման ծառայություն	Ջրամատակարարման և հեռացման ապահովման ԳՇ	Երևան-Ջուր	-	ԵՋԿ մ/ճ
Էներգո և ջերմամատակարարում	Էներգետիկայի և լուսաքողարկման ծառայություն	Էներգետիկ և կոմունալ տնտեսության ԳՇ	ՀԷՑ ՓԲԸ Սան մաքրում Քաղաքապետարանի Վարչական շրջանի աշխատակազմ	Էներգոմատակարարման ստորաբաժանում	ՀԷՑ ՓԲԸ մ/ճ
				Էներգոարտադրության ստորաբաժանում	ՀԱԷԿ, ՋԵԿ, ՀԷԿ
				Ջերմամատակարարման ստորաբաժանում	Կաթսայատուն
Գազամատակարարում	Գազամատակարարման ծառայություն	Գազամատակարարման ԳՇ (գազաբաշխման համակարգի օբյեկտների ստորաբաժանումները)	ՀԱՅՈՒՌԻՍԳԱԶԱՐԴ	Գազի բաշխման հիմնական կետերում առկա ստորաբաժանումներ	ԵՐԵՎԱՆԳԱԶ
Կապ	Կապի և ազդարարման ծառայություն	Կապի ապահովման օբյեկտների ԳՇ	ԲԻԼԱՅՆ, ՎԻՎԱ ՍԵԼ, ՕՐԱՆԺ	-	-
Տրանսպորտային հաղորդակցություն	Ավտոտրանսպորտային ծառայություն (կամուրջների և ճանապարհների) ինժեներական ծառայություն	Տրանսպորտի հաղորդակցության ԳՇ (ներգրավելով ավտոճանապարհային կազմավորման հաղորդակցություն)	Քաղաքապետարանի ավտոտրանսպորտային վարչություն, Կապի և տրանսպորտի նախարարության համապատասխան վարչություն, Պետական եկամուտների կոմիտե, Հասարակական կարգի պահպանման ծառայություն, Բեռների	Ավտոտրանսպորտային վարչություն	Միջազգային օդանավակայան
				Կապի և տրանսպորտի վարչություն	
				Պետական կոմիտեի վարչություն	
				Հասարակական կարգի ծառայություն,	
Բեռնափոխադրումների ծառայություն					

			տեղափոխում		
Գյուղատնտեսական մշակաբույսերի պաշտպանություն	-	Գյուղատնտեսական օբյեկտների ԳՇ	ԳՆ բույսերի և մշակաբույսերի «գյուղապաշտպան» ծառայություն	-	-

Ենթակա օբյեկտների վերականգնման յուրաքանչյուր պրոֆիլային շտաբի գործունեությունը հիմնված է լինելու ԱԻ կենտրոնական շտաբի ցուցումների և ներգրավված մարմիններից, ծառայություններից և բնակիչներից ստացված օպերատիվ տեղեկությունների վրա:

Բոլոր պրոֆիլային ծառայությունները պետք է նախապես պարզեն ԳՇ գտնվելու վայրը և նրա ստորաբաժանումները, ինչպես նաև հաստիքների կազմակերպչական և գործառնական բաշխումը՝ սեյսմիկ աղետից անմիջապես հետո շտաբների, ստորաբաժանումների աշխատանքները ապահովելու համար:

Գլուխ 195. Հիմնական վերականգնողական կետերի տեղակայումը

Մասնագիտացված ծառայությունները ծավալում են հենակետային վերականգնողական կետեր՝ անմիջական ենթակառուցվածքային կարևոր օբյեկտներում կամ նրանց մոտ (աղյուսակ 72):

Աղյուսակ 72 Կոմունալ-էներգետիկ ապահովման գծերի հիմնական օբյեկտների, կապի, տրանսպորտային հաղորդակցության, բույսերի և մշակաբույսերի պահպանման համակարգ

Ոլորտը	Մասնագիտացված ծառայություններ	Օբյեկտների քանակը
Ջրամատակարարում, կոյուղի	Ջրամատակարարման ծառայություն	Ջրապաշտպան, ջրամաքրման,
Էներգո- և ջերմակայան	Էներգո ծառայություն	Էլ. ենթակայաններ, ջերմային տնտեսություն
Գազամատակարարում	Գազամատակարարման ծառայություն	Գազակարգավորիչ բլոկներ, գազապահեստներ
Կապ	Ազդարարման և կապի ծառայություն	Վերահաղորդիչ, կոմուտատորային կայաններ
Տրանսպորտային հաղորդակցություն	Ավտոտրանսպորտային ծառայություն (ճանապարհ և կամուրջ)	Կամուրջներ, երկաթուղային կայարաններ, օդանավակայաններ
Գյուղտեխնիկա	բույսերի և մշակաբույսերի „գյուղապաշտպան„ ծառայություն	Հիդրոտեխնիկական օբյեկտներ (պատվարներ, գետերի կարգավորիչ կայաններ)

Վերականգնողական հենակետերի ծավալումը, ներկայացված 73 աղյուսակում, յուրաքանչյուր համակարգի համապատասխան ոլորտը կիրականացնի աղետի գոտում, ուժերի և միջոցների բաշխումով՝ կախված օբյեկտների ավերվածությունների աստիճանից: Արագ արձագանքման ապահովման նպատակով՝ անհրաժեշտ է նախապես պարզել հենակետային վերականգնողական կետերի տեղակայման վայրերը:

Աղյուսակ 73 Կոմունալ-էներգետիկ ապահովման, կապի, տրանսպորտային հաղորդակցության ցանցային կառույցները

Ոլորտը	Մասնագիտացված ծառայություններ	Օբյեկտների քանակը
Ջրամատակարարում, կոյուղի	Ջրամատակարարման ծառայություն	Ջրագծերի/կոյուղագծերի համակարգ խողովակաշարերով, մոտակա ջրամբար և ջրի պոմպակայաններ
Էներգո- և ջերմակայան	Էներգո ծառայություն	Էլեկտրաէներգիայի մատակարարման և բաշխման (միացնել գծերը էլեկտրահաղորդման) և փոքր ենթակայաններ, խողովակաշարերի համակարգ ջերմային տնտեսության և մոտակա ջրի պոմպակայաններ
Գազամատակարարում	Գազամատակարարման ծառայություն	Գազի խողովակաշարերի համակարգ, գազակարգավորիչ կայաններ, խցանման- կարգավորիչ համակարգ
Կապ	Ազդարարման և կապի ծառայություն	Հեռախոսային գծեր, հեռահաղորդակցության հիմնական գծեր, փոքրածավալ անտենաներ կապի համակարգում
Տրանսպորտային հաղորդակցություն	Ավտոտրանսպորտային ծառայություն (ճանապարհ և կամուրջ)	Ավտոճանապարհներ, երկաթգծի ուղիներ, ենթակայաններ և այլ էլեկտրահաղորդման աղբյուրներ

Քաղաքի կենսաապահովման ոլորտի վերականգնումը կիրականացվի հանրապետական այլ միավորների ուժերի ու միջոցների զգալի առկայության դեպքում, ինչի հետևանքով աղետի գոտում անհրաժեշտություն կառաջանա արդյունավետ տեղաբաշխել մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսը հենակետայի և վերականգնողական կետերի միջև, ինչպես նաև նախապես որոշել ստացվող օգնության ընդունման և հավաքի կետերի տեղակայման վայրը:

Գլուխ 196. Տեխնիկական զննման և վթարված օբյեկտների վիճակի վերաբերյալ վկայագրերի տրամադրման կարգը

Մասնագիտական զննումը և վթարների չափերի ներկայացումը ԱԻ Ժամանակ, կիրականացվի համապատասխան ստորաբաժանումների տեխնիկական անձնակազմի կողմից՝ առօրյա պայմաններում նմանատիպ հսկողություն իրականացնող մասնագիտական ծառայությունների ղեկավարությամբ: Պատասխանատու ստորաբաժանումը ինքնուրույն ներկայանում է օբյեկտ 4 բալից բարձր երկրաշարժի, կամ տվյալ օբյեկտում ուժեղ ավերվածության մասին տեղեկություն ստանալու դեպքում: Անհրաժեշտ է հաշվի առնել հնարավոր բազմակի վնասների հնարավորությունը ենթակա տարածքի տարբեր տեղամասերում և նախապես որոշել անձնակազմի հավաքի, ուժերի տեղաբաշխման և

աշխատանքների իրականացման վայրերը՝ ապահովելով զննման և օբյեկտի վիճակի վերաբերյալ վկայագրերի տրամադրման գործընթացի պատրաստականությունը: Որպես կանոն զննման աշխատանքը հաշվառված օբյեկտներում կատարվում է յուրաքանչյուր առանձին օբյեկտներում, կառուցվածքային օբյեկտների վնասի չափի ներկայացումը պահանջում է հիմնական հանգույցների ստուգում և ընդհանուր զննում՝ նախապես որոշված երթուղիով:

Գլուխ 197. Տեղեկատվության հավաքման և փոխանակման համակարգի մշակման կարգը

Յուրաքանչյուր ուղղությամբ վթարավերականգնողական աշխատանքների ժամանակին և համապատասխան ապահովումը, պահանջում է տեղում վերանորոգման աշխատանքներ իրականացնող խմբերին, փլուզումների և աղետի հետևանքների վերացման աշխատանքների ընթացքի վերաբերյալ ճշգրիտ օպերատիվ տեղեկատվության հիման վրա, մասնագիտացված ԳՇ-ներից և նրանց ստորաբաժանումներից հստակ ցուցումների տրամադրում: Նաև կարևոր է տեղեկատվության փոխանակում մասնագիտացված ԳՇ-ների և ԱԻ կենտրոնական շտաբի միջև՝ վթարա-վերականգնողական աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև բոլոր գործող մարմինների և կազմակերպությունների գործողությունների համակարգման համար: Անխափան և հստակ տեղեկատվության փոխանակման համակարգը, ներառյալ նշված ասպեկտները, պետք է մշակվեն նախօրոք:

Օբյեկտների տեղազննման արդյունքները և վկայագրերը պատասխանատու անձինք ուղարկում են մասնագիտական ԳՇ-ի համապատասխան ծառայություն, կազմակերպությունում ընդունված գերատեսչական ռադիոկապի կամ ընդհանուր օգտագործման քաղաքային հեռախոսագծերի միջոցով: Բնակչությունից և այլ աղբյուրներից մասնագիտացված ԳՇ տեղեկատվության ստացումը նույնպես կիրականացվի հատուկ ռադիոկապով և քաղաքային հեռախոսակապով՝ յուրաքանչյուր ծառայության տարածքային ստորաբաժանման և դիսպետչերական կետերի միջոցով:

Գլուխ 198. Վերանորոգման աշխատանքների նյութատեխնիկական պաշարների ապահովումը

Մասշտաբային ավերվածությունների վերականգնման աշխատանքների համար կարող են պահանջել մեծ ծավալի նյութատեխնիկական պաշարներ, որպեսզի հնարավոր լինի անհապաղ ապահովել քաղաքային մասնագիտացված ծառայությունների ուժերը: Դրա հետ կապված, անհրաժեշտ է համագործակցել հարևան տարածքային ծառայությունների հետ՝ անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների տրամադրման մասով, ինչը իր հերթին պահանջում է քաղաքային յուրաքանչյուր ծառայությունից համապատասխան մանրամասն պլանի մշակում՝ հնարավոր վնասի չափերի կանխատեսումների հիման վրա նշելով նյութատեխնիկական միջոցների անվանակարգը և քանակը:

Գլուխ 199. Առաջնահերթ վերականգնողական աշխատանքների իրականացման կարգը

Վերականգնողական աշխատանքների արդյունավետությունն ապահովվում է քաղաքի կենսաապահովման առաջնային ոլորտների, ինչպես նաև յուրաքանչյուր ոլորտի միջոցառումների առաջնային իրականացման կարգի որոշմամբ: Արտակարգ իրավիճակների դեպքում վնասի իրական չափի մասին օպերատիվ տվյալների հիման վրա ճշտվում է կոնկրետ միջոցառումների իրականացման հերթականությունը՝ հիմք ընդունելով աղյուսակ 74-ում բերված հերթականությունը:

Աղյուսակ 74 Կոմունալ – էներգետիկ ապահովման, կապի և տրանսպորտային հաղորդակցության կապերի առաջնահերթ վերականգնողական աշխատանքների իրականացման հերթականությունը

Ոլորտը	
Ջրամատակարարում, կոյուղի	<ol style="list-style-type: none"> 1. Ջրահավաքման, ջրամաքրման, ջրամատակարարման, ջրահեռացման, ջրաբաշխման և տնօրինման հիմնական օբյեկտներ 2. Մագիստրալային գծեր և նրանց առնչվող օբյեկտներ 3. Ջրահեռացման գծեր, կառավարման կետերը, ապաստարանները, բժշկական օգնության կետերը մագիստրալային գծերին միացնող կից օբյեկտներ 4. Ցանցի հատված, ներառյալ կից օբյեկտներ՝ ընդունակ զգալի կրճատել ջրամատակարարումից զրկված բնակավայրերի (շրջանների) քանակը 5. Այլ գծեր, կից օբյեկտներ
Էներգամատակարարում	<ol style="list-style-type: none"> 1. Էլեկտրաէներգիայի արտադրման, փոխակերպման, հաղորդման և բաշխման հիմնական օբյեկտներ 2. Էլեկտրահաղորդման մագիստրալային մալուխներ և կից տեխնիկական օբյեկտներ 3. Կառավարման կետերը, ապաստարանները, բուժհաստատությունները Էլեկտրականությամբ ապահովվող տեղային մալուխներ և կից տեխնիկական օբյեկտներ 4. Էլեկտրահաղորդման մալուխներ և կից տեխնիկական օբյեկտներ՝ ընդունակ զգալի կրճատել Էլեկտրամատակարարումից զրկված բնակավայրերի (շրջանների) քանակը 5. Էլեկտրամատակարարման այլ մալուխներ և կից օբյեկտներ
Գազամատակարարում	<ol style="list-style-type: none"> 1. Հիմնական օբյեկտներ՝ կարգավորող կայաններ, խոշոր պահեստարաններ 2. Մագիստրալային գծեր և կից տեխնիկական օբյեկտներ 3. Գազամատակարարման տեղային ցանցի ճյուղեր, կառավարման կետերը, ապաստարանները, բժշկական օգնության կետերը մագիստրալային գծերին միացնող կից տեխնիկական օբյեկտներ

	<ol style="list-style-type: none"> 4. Մագիստրալային և տեղական ցանցի ճյուղեր և կից տեխնիկական օբյեկտներ՝ ընդունակ զգալի կրճատել գազամատակարարումից զրկված բնակավայրերի (շրջանների) քանակը 5. Գազաապահովման այլ ցանցեր և կից տեխնիկական օբյեկտներ
Կապ	<ol style="list-style-type: none"> 1. Կապի հիմնական օբյեկտներ 2. Հեռահաղորդակցության ցանցի հատվածներ և կից տեխնիկական օբյեկտներ 3. Արտակարգ իրավիճակներում ինֆորմացիոն հոսք ապահովող կապուղիներ և կից տեխնիկական օբյեկտներ 4. Տեղական ցանցի հատվածներ և կից տեխնիկական օբյեկտներ՝ ընդունակ զգալի կրճատել քաղաքային կապի գծերից անջատված բնակավայրերի (շրջանների) քանակը 5. Հեռահաղորդակցության ցանցի այլ հատվածներ և կից տեխնիկական օբյեկտներ
Տրանսպորտային հաղորդակցություն	<ol style="list-style-type: none"> 1. Առաջին կարգի ավտոճանապարհներով տրանսպորտային հաղորդակցությունն ապահովող ճանապարհներ և կամուրջներ, երկաթգծեր և կից կառույցներ, օդային հաղորդակցությունն ապահովող ավտոտրանսպորտային օբյեկտներ (թռիչքուղիներ) 2. Երկրորդ կարգի ավտոճանապարհներով տրանսպորտային հաղորդակցությունն ապահովող ճանապարհներ և կամուրջներ 3. Երրորդ կարգի ավտոճանապարհներով տրանսպորտային հաղորդակցությունն ապահովող ճանապարհներ և կամուրջներ 4. Ճանապարհներ և կամուրջներ՝ ընդունակ զգալի կրճատել տրանսպորտային հաղորդակցությունից կտրված բնակավայրերի (շրջանների) քանակը 5. Տրանսպորտային հաղորդակցության այլ օբյեկտներ
Սելավային պաշտպանություն	<ol style="list-style-type: none"> 1. Խոշոր հիդրոտեխնիկական կառույցներ (ամբարտակներ, ջրապատնեշներ) 2. Հիմնական գետերի երկայնքով կարգավորիչ կառույցներ 3. Սելավից պաշտպանող այլ կառույցներ

Գլուխ 200. Համաձայնագրերով դրսից եկող օգնության ամրագրում և հաստատում

Արտակարգ իրավիճակների ժամանակ անհրաժեշտ է անհապաղ ապահովել դրսից եկող օգնությունը, նախօրոք ունենալով համապատասխան տարածքային ծառայությունների համաձայնությունը մարդկային և նյութատեխնիկական օգնություն ցուցաբերելու գործում՝ կապելով աշխատանքային պայմանագրեր՝ նշելով ուժերի և միջոցների անվանակարգը, կազմը և քանակական բնութագրերը:

Բաժին 21 Պատրաստվածությունը շինարարական աղբի մշակման և միջավայրի ու սոցիալական նկատառումների վերաբերյալ այլ հարցերում

Գլուխ 201. Կառավարման և շահագործման շրջանակը

Շինարարական աղբի կառավարման համար պատասխանատու են Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունն ու քաղաքաշինության ու հողի վերահսկողության վարչությունը: Դեպի աղբավայր շինարարական աղբի տեղափոխումն իրականացնում են շինարարական Կազմակերպությունները, որոնց հետ կնքվում են պայմանագրեր և որոնք հրահանգ են ստանում լիցենզավորված ընկերության կողմից:

Աղբի կառավարման համար պատասխանատու է Երևանի քաղաքապետարանի կոմունալ տնտեսության վարչությունը: Աղբի հավաքումը և Նուբարաշեն վարչական շրջանում գտնվող վերջնական աղբավայր դրա տեղափոխումն իրականացվում է 12 վարչական շրջանների կողմից մրցութային կարգով վարձակալված Կազմակերպությունների կողմից: Նուբարաշեն վարչական շրջանում գտնվող վերջնական աղբավայրի կառավարումն իրականացվում է Էրեբունի վարչական շրջանի աղբի կառավարման ընկերության կողմից:

Գլուխ 202. Սեյսմիկ աղետի հետևանքով առաջացած շինարարական աղբի և թափոնի հաշվարկը

Սեյսմիկ աղետից առաջացած շինարարական աղբի և թափոնի քանակը հաշվարկվել է ԳԽ2 սցենարի դեպքում վնասի հաշվարկների հիման վրա (տես աղյուսակ 75-ը): Հաշվարկների պայմանները բերված են ստորև.

ա. Շենքի հատակի մակերեսը (ըստ Կադաստրի)

Բազմահարկ շենք - 4,568 մ²

Սեփական տուն - 232 մ²

բ. Շինարարական աղբի և թափոնի քանակը միավոր մակերեսի համար (Կոբեի երկրաշարժի փաստացի տվյալներ)

Դյուրավառ - 0.120 տոննա/մ² (շինարարական աղբ)

Ոչ-դյուրավառ - 0.987 տոննա/մ² (թափոն)

Արդյունքում, Երևան քաղաքում շինարարական աղբի և թափոնի քանակը համապատասխանաբար 5,887,478 տոննա և 715,803 տոննա է, որը ներկայացված է աղյուսակ 75-ում:

Աղյուսակ 75 ԳԽ2 սցենարային երկրաշարժի դեպքում ամբողջությամբ քանդված շենքերի քանակը

Համայնք	Հաշվեգրում			Ամբողջությամբ քանդված					
	շենք	տուն	միավոր	շենք	%	տուն	%	միավոր	%
Աջափնյակ	390	3,058	26,655	39	10%	906	30%	3,033	11%
Ավան	230	1,224	12,712	51	22%	557	46%	3,346	26%
Արաբկիր	580	3,324	34,734	100	17%	972	29%	6,168	18%
Դավթաշեն	170	783	9,781	3	2%	265	34%	424	4%
Էրեբունի	220	10,642	22,832	42	19%	3,202	30%	5,729	25%
Կենտրոն	710	5,509	36,445	207	29%	1,295	24%	8,547	23%
Մայաթիա-Սեբաստ	570	4,529	34,610	26	5%	860	19%	2,213	6%
Նոր Նորք	640	176	36,907	86	13%	46	26%	5,952	16%
Նորք-Մարաշ	0	2,398	2,445	0	-	693	29%	702	29%
Նուբարաշեն	30	549	1,628	7	23%	118	21%	349	21%
Շենգավիթ	550	7,197	29,831	121	22%	1,364	19%	6,101	20%
Քանաքեռ-Զեյթուն	290	3,244	16,348	38	13%	1,277	39%	3,078	19%
Ընդամենը	4,380	42,633	264,928	720	16%	11,555	27%	45,642	17%

Աղյուսակ 76 ԳԽ2 սցենարային երկրաշարժի պատճառով առաջացած շինարարական աղբի և թափոնի հաշվարկված քանակը

No.	Համայնք	Բազմահարկ շենք		Սեփական տուն	
		Վառվող թափոն (տոննա)	Չվառվող թափոն (տոննա)	Վառվող թափոն (տոննա)	Չվառվող թափոն (տոննա)
1	Աջափնյակ	21,274	174,979	25,212	207,372
2	Ավան	27,688	227,730	15,503	127,512
3	Արաբկիր	54,772	450,501	27,051	222,492
4	Դավթաշեն	1,469	12,083	7,380	60,701
5	Էրեբունի	23,039	189,497	89,151	733,264
6	Կենտրոն	113,316	932,021	36,044	296,466
7	Մայաթիա-Սեբաստ	14,351	118,036	23,945	196,951
8	Նոր Նորք	47,273	388,823	1,272	10,465
9	Նորք-Մարաշ	104	857	19,299	158,736
10	Նուբարաշեն	3,640	29,937	3,298	27,130
11	Շենգավիթ	66,207	544,551	37,967	312,277
12	Քանաքեռ-Զեյթուն	21,000	172,725	35,547	292,371
	Ընդամենը	394,133	3,241,740	321,669	2,645,737

Գլուխ 203. Շինարարական աղբի և թափոնի տեղափոխումը

Սեյսմիկ աղետից հետո շինարարական աղբի և թափոնի տեղափոխումը կիրականացվի, համապատասխանաբար, աղբահավաք բեռնատարների և սեղմիչ բեռնատարների միջոցով: Աղբահավաք բեռնատարները և սեղմիչ բեռնատարները ներկայումս շահագործվում են քաղաքի աղբի հավաքման համար: Տեղափոխման համար պահանջվող օրերի քանակը հաշվարկվել է հետևյալ կերպ. Շինարարական աղբի տեղափոխման համար պահանջվող օրերի քանակը հաշվարկվել է հետևյալ պայմանների հիման վրա.

ա. Հեռացվող շինարարական աղբի քանակը - 5,887,478 տոննա

բ. Հասանելի աղբահավաք բեռնատարների թիվը - 200 (151 բեռնատար շահագործվում են, իսկ 49 բեռնատար էլ կավելացվի անմիջապես)

գ. Աղբահավաք բեռնատարի տարողությունը - 4 տոննա

դ. Տեղափոխման թիվը - 10 շրջայց

Շինարարական աղբի տեղափոխման համար պահանջող օրերի քանակը հաշվարկվել է հետևյալ կերպ.

$$\text{Օրերի քանակը} = 5,887,478 \text{ (տոննա)} / 200 \text{ (բեռնատար)} / 4 \text{ (տոննա/բեռնատար/շրջայց)} / 10 \text{ (շրջայց/օր)} = 736 \text{ օր}$$

Թափոնի տեղափոխման համար պահանջվող օրերի քանակը հաշվարկվել է հետևյալ պայմանների հիման վրա.

- Հեռացվող աղբի քանակը - 715,803 տոննա
- Հասանելի սեղմիչ բեռնատարների թիվը - 85 (նույն թվով բեռնատարներ շահագործման մեջ են)
- Աղբահավաք բեռնատարի տարողությունը - 4 տոննա
- Տեղափոխման թիվը - 10 շրջայց

Թափոնի տեղափոխման համար պահանջող օրերի քանակը հաշվարկվել է հետևյալ կերպ.

$$\text{Օրերի քանակը} = 715,803 \text{ (տոննա)} / 85 \text{ (բեռնատար)} / 4 \text{ (տոննա/բեռնատար/շրջայց)} / 10 \text{ (շրջայց/օր)} = 211 \text{ օր}$$

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ հասանելի բեռնատարների քանակը կարող է կրճատվել հետևյալ պատճառներով.

- Ելնելով ԳԽ2 սցենարի դեպքում վնասի գնահատումից՝ բնակչության կեսը, հավանաբար, կմնա չվնասված շենքերում: Առօրյա աղբի տեղափոխման համար օգտագործվող սեղմիչ բեռնատարներն այդ դեպքում չեն կարող օգտագործվել սեյսմիկ աղետից առաջացած աղբի տեղափոխման համար:
- Բեռնատարների մի մասը սեյսմիկ աղետի հետևանքով կվնասվի և կդառնան ոչ պիտանի շահագործման համար:

Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը, քաղաքաշինության ու հողի վերահսկողության վարչությունը և Կոմունալ տնտեսության վարչությունը պետք է համագործակցեն հարևան մարզերի և տրանսպորտային Կազմակերպությունների հետ, որպեսզի ավելացվի բեռնատարների քանակը՝ սեյսմիկ աղետի հետևանքով առաջացած շինարարական աղբի և թափոնի քանակին ու տեղափոխման պլանավորված օրերին համապատասխան:

Գլուխ 204. Շինարարական աղբի և թափոնի հեռացումը

Երևան քաղաքում շինարարական աղբի հեռացման համար օգտագործվում են բազալտի քարհանքի ամայի հողամասերը: Սեյսմիկ աղետի ժամանակ Աջափնյակ վարչական շրջանում գտնվող աղբավայրը (10 հա, A1-ը աղյուսակ 77-ում) կարող է օգտագործվել շինարարական աղբը թափելու համար: Ավելին, կարող են օգտագործվել Աջափնյակ համայնքում գտնվող մեկ այլ աղբավայրը (1 հա, A2), Նոր Նորք վարչական շրջանում գտնվող աղբավայրը (15 հա, N1) և

Էրեբուն վարչական շրջանում գտնվող աղբավայրը (6 հա, E1), ինչպես ցույց է տրված աղյուսակ 77-ում և նկար 17-ում: Այս աղբավայրերի ընդհանուր տարողունակությունը 7,750,000 մ³ է:

Աղյուսակ 77 Շինարարական աղբի հեռացման հնարավոր վայրեր

No	Պայմանական անվանում	Վարչական շրջան	Մակերես (հա)	Խորություն (մ)	Տարողունակություն (1,000 մ ³)
1	A1	Աջափնյակ	10	40	4,000
2	A2	Աջափնյակ	1	60	600
3	N1	Նոր Նորք	15	15	2,250
4	E1	Էրեբունի	6	15	900
Ընդամենը					7,750

Նկար 17 Շինարարական աղբի հեռացման հնարավոր վայրեր



Հեռացվող շինարարական աղբի ծավալը հաշվարկվում է՝ օգտագործելով 1.2 տոննա/մ³ շինարարական աղբի միավոր զանգվածը հետևյալ կերպ.

$$\text{Հեռացվող շինարարական աղբի ծավալ} = 5,887,478 \text{ (տոննա)} / 1.2 \text{ (տոննա/մ}^3\text{)} = 4,906,232 \text{ մ}^3 \approx 5,000,000 \text{ մ}^3$$

Ներկա պահին Երևան քաղաքում հասանելի շինարարական աղբավայրերն ունեն ԳԽ2 սցենարի դեպքում առաջացող շինարարական աղբի տեղավորման համար բավարար տարողունակություն: Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունն ու քաղաքաշինության ու հողի վերահսկողության վարչությունը պետք է ապահովեն 5,000,000մ³ տարողունակությամբ աղբավայր, երբ նվազեն վերոնշյալ աղբավայրերի տարողունակությունները:

Երևան քաղաքում աղբը տեղափոխվում և թափվում է աղբավայրերի հորատեղում, քանի որ աղբի այրման համակարգ չի ներդրվել: Նուբարաշեն վարչական շրջանում գործող

աղբավայրում ընդհանուր 52.3 հա տարածքից աղբի հեռացման համար հասանելի է ընդամենը 20 հա:

Հեռացվող աղբի ծավալի հաշվարկման համար օգտագործվել է 1.2 տոննա/մ³ միավոր ծավալը: Թափոնի հեռացման համար պահանջվող մակերեսը հաշվարկվել է այն պայմանով, որ հորատեղի հաստությունը 5մ է, որը նույն է ինչ ներկայիս չափը:

$$\text{Հեռացվող թափոնի ծավալը} = 715,803 \text{ (տոննա)} / 1.2 \text{ (տոննա/ մ}^3\text{)} = 596,503 \text{ մ}^3$$

$$\text{Թափոնը տեղավորելու համար պահանջվող մակերես} = 596,502 \text{ մ}^3 / 5\text{մ} = 119,301 \approx 12 \text{ հա}$$

ԳԽ2 սցենարային երկրաշարժի հետևանքով առաջացող աղբը հնարավոր է թափել ներկայումս շահագործվող Նուբարաշենի աղբավայրում: Երևանի քաղաքապետարանի կոմունալ տնտեսության վարչությունը պետք է ապագայում ապահովի 600,000 մ³ տարողունակությամբ աղբավայր, երբ նվազեն վերոնշյալ աղբավայրերի տարողունակությունները:

Գլուխ 205. Միջոցառումներ շինարարական աղբի մեջ հայտնված ազբեստի դեմ

Հայաստանում ազբեստի օգտագործումն արգելված չէ: Այդ պատճառով, հնարավոր է, որ շինարարական աղբի մեջ լինի ազբեստ:

Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունն ու քաղաքաշինության ու հողի վերահսկողության վարչությունը պետք է տեղեկացնեն շինարարական աղբ տեղափոխող և թափող Կազմակերպություններին ազբեստի դեմ միջոցառումների մասին, ինչպիսիք են ազբեստի թափման աշխատանքների ժամանակ դիմակի կրումը, աշխատանքների ժամանակ ազբեստ պարունակող նյութերի թրջումը, ազբեստի պահեստարանների մոտ ցուցատախտակի տեղադրում և այլն:

Գլուխ 206. Մարդկային արտաթորանքի հեռացումը և զուգարաններով ապահովումը

Երևան քաղաքի զուգարաններից դուրս եկած մարդկային արտաթորանքը, կենցաղային կոյուղաջրի հետ միախառնված, խողովակաշարի ցանցի միջոցով հավաքվում է Շենգավիթ վարչական շրջանում գտնվող Չարբախի կեղտաջրերի մշակման կայանում: Այնուամենայնիվ, կոյուղաջրերն առանց ստերիլիզացիայի անմիջապես հոսում է դեպի գետը, քանի որ վերամշակման օբյեկտը չի գործում: Հետևաբար, վերամշակման օբյեկտների վնասի հետևանքով գետի ջրի որակի վատթարացման հնարավորությունը ցածր է՝ համեմատած ներկայիս վիճակի հետ:

Գլուխ 207. Զուգարանների պահանջվող քանակի հաշվարկը


Տարահանման և այլ կետերում սանիտարական պայմանների պահպանման համար կարևոր է զուգարաններով ապահովումը: Ցանկալի է ապահովել 1 զուգարան 100 տարահանվողի համար: Այնուամենայնիվ, դժվար է պատրաստել և պահեստավորել 1500 զուգարան՝ կանխատեսելով 150,000 տեղահանվող: Հետևաբար, զուգարանների ձեռքբերման

ուղին պետք է նախօրոք հստակեցվի և խթանվի շարժական զուգարանների կուտակումը: Բացի այդ, պետք է խթանվի մարդկային արտաթորանքի մշակման միջոցառումը, ինչպես նշված է հաջորդ կետում:

Գլուխ 208. Մարդկային արտաթորանքի մշակման միջոցառումներ


- Շարժական զուգարան առանց ողողման ջրի (տես նկար 18-ը) Ջրամատակարարման խափանման պատճառով ողողվող ջրով զուգարանների շահագործման անհնարինության դեպքում կարելի է օգտագործել ողողող ջուր չպահանջող շարժական զուգարան՝ զուգարանակոնքը տուրակով ծածկելու միջոցով: Զուգարանն օգտագործելուց հետո տուրակը կարող է հեռացվել որպես սովորական աղբ:

Նկար 18 Շարժական զուգարան առանց ողողման ջրի



- Ժամանակավոր զուգարաններ՝ հորերի օգտագործմամբ (տես նկար 19-ը) Ժամանակավոր զուգարան կարող է տեղադրվել հորի խուփի հեռացման, անցքով տախտակի տեղադրման և պատերով շրջափակման միջոցով: Կոյուղագծում կոյուղաջրի հոսքի բացակայության դեպքում պետք է ողողել խողովակներում առկա արտաթորանքը ջրատար մեքենաներով ողողման ջուր մատակարարելու միջոցով: Այն դեպքում, երբ անհրաժեշտ լինի հեռացնել արտաթորանքը խողովակից, կօգտագործվեն պոմպով սեպտիկ ջրատար մեքենաներ: Ներկայումս “Երևան Զուրն” ունի յոթ (7) սեպտիկ ջրատար մեքենա (5 մեքենա 3.5մ³, 1 մեքենա 12մ³, և 1 մեքենա 7մ³ տարողունակությամբ):

Նկար 19 Հորի օգտագործմամբ ժամանակավոր զուգարան



Մաս 4 Արտակարգ իրավիճակների արագ արձագանքման պլան

Բաժին 22 ԱԻ արձագանքման հիմունքները

Գլուխ 209. ԱԻ արձագանքման գործունեության հիմունքները

Ավերիչ երկրաշարժի գրանցման դեպքում հետևանքներից վնասների առաջացումը կանխելու համար անհրաժեշտ է համակարգված և փուլային սկզբունքով իրականացնել համապատասխան միջոցառումներ առաջին 3 օրվա կամ ամենաուշը՝ 7 օրվա ընթացքում, ինչպես նաև ինչքան հնարավոր է շուտ սկսել վթարավերականգնողական գործընթացը: Ստորև նկարագրված են օպերատիվ արձագանքման գործունեության հիմունքները: Օպերատիվ արձագանքման հիմնախնդիրը մարդկանց կյանքի պաշտպանությունն է: Այդ իսկ պատճառով առաջնայնությունը տրվում է խոցված օջախներից բնակչության փրկմանը:

Գլուխ 210. Արդյունավետ գործելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը

Անհետաձգելի միջոցառումների իրականացման, մասնավորապես՝ այն միջոցառումների, որոնք ուղղված են մարդկանց կյանքի փրկմանը, սոցիալ-տնտեսական համակարգի և պետական կառավարման պահպանման համար անհրաժեշտ է հնարավորինս սեղմ ժամկետներում ստեղծել ԱԻ ղեկավարման շտաբ, տեղեկատվության հավաքի և փոխանցման համակարգ, տրանսպորտային համակարգ, ինչպես նաև մշակել շահագրգիռ մարմինների միջև փոխհամագործակցության համակարգ:

Գլուխ 211. Անհետաձգելի միջոցառումների օպերատիվ իրականացումը

Ներդաշնակ գործող մեխանիզմը պետք է ապահովի տարահանման, առաջին օգնության, այդ թվում անհետաձգելի բժշկական, անհայտ կորածների որոնման և փրկման միջոցառումների իրականացման հնարավորինս արագ ծավալումը: Ազգաբնակչությունը պետք է սկսի օգնության ինքնուրույն ցուցաբերումը, սեփական անձնի անվտանգության ապահովումը՝ գիտակցելով “փրկիր քեզ և քո ունեցվածքը ինքդ” մոտեցումը, այնուհետև անցնելով փոխօգնության ցուցաբերմանը, մասնակցելով այլ միջոցառումներում՝ տեղային հանրության անդամի կարգավիճակով, այն է՝ տուժածների փրկման, հրդեհների տեղայնացման, տարահանման մեջ: Գործադիր իշխանության պատասխանատու մարմինները օգնություն են ցուցաբերում բնակչությանը, ջանքեր ներդնելով վարչական օգնության շուտափույթ հատկացման գործում: Պետք է նշել, որ ԱԻ հետևանքների վերացման գործում մեծ դեր ունի տեղեկատվության տրամադրումը, որի օպերատիվությունն ու ճշտությունն ունակ է էապես փոխել արձագանքման միջոցառումների արդյունքները: Այս ամենն ընդգծում է օպերատիվ տեղեկատվության հավաքի և փոխանցման կարևորությունը ԱԻ գծով շտաբի և շահագրգիռ մարմինների միջև համագործակցության ապահովման գործում:

Գլուխ 212. Անցումը անհետաձգելի վթարավերականգնողական միջոցառումներին

Ծավալվում են հստակ գործողություններ՝ ուղղված անհետաձգելի վթարավերականգնողական միջոցառումների իրականացմանը, ընդ որում՝ զուգահեռ իրականացվում են աշխատանքներ ինչպես մարդկանց կյանքի փրկման, այնպես էլ սոցիալ-տնտեսական և պետական վարչական համակարգերի անխափանության ապահովման ուղղությամբ:

Գլուխ 213. Օպերատիվ համալիր արձագանքման կազմակերպումը, ԱԻ ծառայությունների և մարմինների փոխհամագործակցությունը

Սեղմ ժամկետներում նպատակաուղղված միջոցառումների իրականացման անհրաժեշտության դեպքում, ԱԻ-ում օպերատիվ արձագանքումը շահագրգիռ ծառայությունների կողմից պահանջում է սեղմ ժամկետներում տարաբնույթ պատասխան գործողությունների իրականացում՝ ուղղված փրկմանը, հրդեհաշիջմանը, ԱԲՕ ցուցաբերմանը՝ մեծածավալ՝ զգալի գերազանցող ամենօրյա գործունեության, աշխատանքների պայմաններում: Այս կապակցությամբ, խոցված օջախներից դուրս վարչական միավորների օգնության ցուցաբերումը հանդիսանում է հիմնական գործոն: Այսպիսով, տեղեկատվության փոխանակման համակարգի շուտափույթ հիմնումը հարակից տարածքների շահագրգիռ և ստեղծվող մարմինների, ինչպես նաև ազգային այլ ծառայությունների հետ, պետք է դառնա առաջնային խնդիր:

Գլուխ 214. Ազգաբնակչության և կազմակերպությունների համագործակցությունը

Պետք է նախապես նկատի ունենալ կամ պլանավորել աղետի այնպիսի ծավալներ, որոնց դեպքում վարչական օգնության հնարավորությունները (անգամ ծառայությունների և մարմինների ուժերի և միջոցների ամբողջությամբ ներգրավված լինելու և ներդաշնակ համագործակցելու դեպքում) միևնույն է կլինեն ոչ բավարար: Աղետալի երկրաշարժերի պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բնակչության կողմից իրականացված ինքնապաշտպանության, հրդեհաշիջման, մարդկանց փրկման աշխատանքները լինում են ավելի արդյունավետ և ճիշտ՝ վնասի նվազեցման ապահովման գործում:

Այս կապակցությամբ քաղաքային իշխանություններին անհրաժեշտ է սահմանել համատեղ գործողությունները բնակչության հետ՝ ընդունելով դա որպես օպերատիվ արձագանքման միջոցառումների հիմնական մոտեցման ձև՝ նախապես փորձարկելով բնակչության, ԹՄ և կամավորական միությունների հետ փոխհամագործակցության սկզբունքները:

Գլուխ 215. Մանևրայնություն, նախաձեռնություն

Աղետալի երկրաշարժի դեպքում նախապես հաստատված ԱԻ պլաններով գործելը, որոնք կազմված են՝ հիմնվելով հնարավոր վնասների կանխատեսման գնահատման վրա, հանդիսանում են ԱԻ կանխարգելման վարժանքների և միջոցառումների հիմնական սկզբունքը:

Սակայն, իրականում, ոչ միշտ է հաջողվում արձագանքումն իրականացնել նախապես պլանավորված սկզբունքով, ինչը մատնանշում է, որ անձնակազմի կարողությունները՝ տեղում արագ իրավիճակը գնահատելու, որոշումներ կայացնելու գործում, ապահովում է աղետի ծավալների որոշակի մեղմացում: Քանի որ աղետալի երկրաշարժերը հազվադեպ գրանցվող իրադարձություններ են, ճգնաժամային կառավարման ոլորտում հիմնական կարողությունների և հմտությունների ձևավորման գործում մեծ դեր ունի պարբերաբար ուսումնավարժությունների, վարժանքների անցկացումը՝ հիմնված նաև այն անվիճելի իրականության գիտակցման վրա, որ գործունեությունն իրականացվում է ամենօրյա պայմաններում ոչ ստանդարտ որոշումների կայացման և ԱԻ-ում մանևրելու պայմաններում:

Բաժին 23 Քաղաքի ԱԻ կառավարման շտաբի ձևավորումը, գործունեության կազմակերպումը

Գլուխ 216. Երևան քաղաքի ԱԻ կառավարման շտաբի ձևավորումը

1. Քաղաքապետը կամ քաղաքապետի պարտականությունները կատարող վստահված անձը որոշում է կայացնում ՃԿԿ-ում ԱԻ կառավարման շտաբի ձևավորման վերաբերյալ հետևյալ դեպքերում.

1) երբ Սեյսմիկ ծառայության կողմից պաշտոնական հաղորդագրություն է ստացվում 5 բալից բարձր ուժգնությամբ հնարավոր կամ տեղի ունեցած երկրաշարժի մասին:

2) քաղաքի տարածքում երկրաշարժի հետևանքով մասշտաբային ոչնչացման/վնասի դեպքում

2.Քաղաքապետը տեղեկացնում է քաղաքի ԱԻ կառավարման շտաբի ձևավորման մասին հետևյալ կարգով.

1) Սահմանված կարգով, ՃԿԿ-ի միջոցով, հրաման է տալիս վարչական շրջանների ղեկավարներին, կառուցվածքային ստորաբաժանումների պետերին հավաքի վերաբերյալ:

2) ՃԿԿ-ն ազդարարման համակարգերի, քաղաքային և բջջային կապի միջոցով բնակչությանը տեղեկացնում է ԱԻ կառավարման շտաբի ձևավորման մասին:

3) ԱԻ կառավարման շտաբի ղեկավարը (քաղաքապետը կամ քաղաքապետի պարտականությունները կատարող վստահված անձը) համապատասխան հայտարարությամբ հանդես է գալիս ՋԼՄ-ների համար:

Գլուխ 217. ԱԻ կառավարման շտաբի լուծարումը

1. ԱԻ կառավարման շտաբի պետը կարող է կրճատել շտաբի անդամների թիվը կամ լուծարել այն՝ քաղաքի տարածքում հնարավոր ավերվածությունների բացառման կամ արագ արձագանքման միջոցառումների ավարտի դեպքում:

2. ԱԻ կառավարման շտաբի պետը անհապաղ տեղեկացնում է ԱԻ կառավարման շտաբի լուծարման մասին հետևյալ կարգով.

1) ԱԻ կառավարման շտաբի ղեկավարն անմիջապես տեղեկացնում է ԱԻ կառավարման շտաբի շենքում գործող անձնակազմին, իսկ ԱԻ կառավարման շտաբի շենքից դուրս գործող անձնակազմը տեղեկատվությունը ստանում է ազդարարման համակարգի միջոցներով:

2) ԱԻ կառավարման շտաբի կապի և ազդարարման բաժնի անձնակազմը, բնակչության ազդարարման համակարգի և կապի այլ միջոցներով, ազդարարում է բնակչությանը ԱԻ կառավարման շտաբի լուծարման մասին:

3) ԱԻ կառավարման շտաբի պետը շտաբի շենքում համապատասխան հայտարարություն է կատարում ՋԼՄ-ների համար:

Գլուխ 218. ԱԻ ղեկավարման տարածքային շտաբեր

Վարչական շրջանների ղեկավարները ձևավորում են ԱԻ կառավարման տարածքային շտաբեր: ԱԻ կառավարման տարածքային շտաբերը իրականացնում են ԱԻ հետևանքների

վերացման միջոցառումներ և համակարգում են տվյալ տարածքում տեղի ունեցող բոլոր գործողությունները՝ համաձայն Երևան քաղաքի ԱԻ կառավարման կենտրոնական շտաբի հրահանգների՝ ապահովելով փոխհամագործակցության և աջակցության երկկողմանի մեխանիզմ: ԱԻ կառավարման կենտրոնական շտաբի լուծարման դեպքում ԱԻ կառավարման տարածքային շտաբերը նույնպես ենթակա են լուծարման:

Գլուխ 219. Կառուցվածքը, կառավարումը

1. ԱԻ կենտրոնական շտաբը ձևավորվում է ԱԻ նախագգուշացման համակարգին համապատասխան հատուկ կարգով: ԱԻ կառավարման շտաբը բաժանվում է 2 խմբի՝

- 1) ղեկավարի ենթակայության տակ գտնվող խումբ
- 2) շտաբի հիմնական կազմի մեջ մտնող խումբ:

ՀՀ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքը սահմանում է աղետի դեպքում կառավարման մակարդակը՝ ըստ աղետի մասշտաբների:

Աղյուսակ 78 Տարերային արտակարգ իրավիճակների դասակարգումը

Տարերային բնույթի ԱԻ տիպերը	Տուժածների քանակը		Հետևանքների տարածման մասշտաբները
	Չոհեր, վիրավորներ	Կենսական պայմանների խախտում	
Տեղական	10-50	300-500	բնակավայր, շրջան, մարզ
Տարածաշրջանային	50-5000	500-1000	մի քանի մարզեր
Գլոբալ	500-ից ավել	1000-ից ավել	ՀՀ տարածքը և նրան հարակից հանրապետությունները

Գլուխ 220. Կառավարում

1. ԱԻ կառավարման կենտրոնական շտաբ

1) ԱԻ կառավարման շտաբի ձևավորմանը զուգահեռ՝ շտաբի պետն անց է կացնում 1-ին խորհրդակցությունը՝ արձագանքման միջոցառումների հայեցակարգի մշակման ուղղությամբ: Անհրաժեշտությունից ելնելով՝ հետագա խորհրդակցություններն անցկացվում են շտաբի աշխատանքի ղեկավարմանը, ԱԻ հետևանքների վերացմանն ուղղված հարցերի քննարկման նպատակով:

2) Կառուցվածքային մարմինների ղեկավարները շտաբի պետին զեկուցում են պատրաստության աստիճանի, ինչպես նաև արձագանքման գործընթացին ներգրավվող ուժերի և միջոցների տեղաբաշխման վերաբերյալ:

3) Շահագրգիռ մարմինների ղեկավարները նշանակում են համապատասխան պաշտոնյաներ՝ ԱԻ կառավարման շտաբ ուղարկելու համար, ինչի մասին զեկուցում են շտաբի պետին:

դ) Շտաբի պետը, իր հայեցողությամբ, օղակներում և խմբերում կարող է նշանակել նոր ղեկավար անձնակազմ: Բացի այդ, անհրաժեշտության դեպքում կամ ստեղծված իրավիճակից ելնելով՝ շտաբի պետը սահմանված կարգով կարող է ներգրավել ոլորտային ղեկավարում իրականացնող կազմակերպությունների խմբեր:

2. Տարածքային ԱԻ կառավարման շտաբերի ղեկավարները, ելնելով ԱԻ կառավարման կենտրոնական շտաբի ցուցումներից, իրականացնում են հետևյալ գործառույթները.

1. ԱԻ կառավարման կենտրոնական շտաբ են ներկայացնում տեղերում ստեղծված իրավիճակը՝ վնասի չափերը, ԱԻ հետևանքների վերացման աշխատանքների ընթացքը, անհրաժեշտ օգնությունը և այլն:

2. ԱԻ կառավարման կենտրոնական շտաբի, տեղի հանրության և բնակչության հետ միասին գործողությունների համատեղ համակարգում և տեղեկատվության փոխանակում:

3. Օպերատիվ արձագանքման համար անհետաձգելի միջոցառումների ինքնուրույն իրագործում:

4. Այլ գործառույթներ՝ ըստ անհրաժեշտության:

Գլուխ 221. Հաստիքային անձնակազմի մոբիլիզացիա

1. Ներգրավված մարմինների ղեկավարները, ստանալով ԱԻ կառավարման կենտրոնական շտաբի ղեկավարից ծանուցում ԱԻ կառավարման շտաբ ձևավորելու մասին, աշխատանքի վայրում գտնվող անձնակազմին հրաման են արձակում՝ ԱԻ դեպքում մոբիլիզացիայի և տեղակայման պլանի համաձայն օպերատիվ արձագանքման միջոցառումների իրականացման գործընթացին մասնակցելու վերաբերյալ:

2. Ներգրավված մարմինների ղեկավարները տեղավորում են ժամանած անձնակազմին ոչ աշխատանքային ժամերին հավաքի համար սահմանված վայրերում՝ առաջնայնություն տալով հետևյալ խնդիրների լուծմանը.

1) Գերատեսչական տարածքներում և օբյեկտներում վնասի չափերի վերաբերյալ տեղեկատվության հավաքն ու համակարգումը.

2) որոշումների ընդունումը օպերատիվ արձագանքման միջոցառումների իրականացման և դրանց բնույթի վերաբերյալ.

3) ԱԻ կառավարման կենտրոնական շտաբի հետ տեղեկատվության փոխանակումն ու համակարգումը:

3. Ներգրավված մարմինների ղեկավարները կարող են իրենց հրամանով փոփոխություն մտցնել անձնակազմի պարտականությունների բովանդակության և կարգի մեջ՝ հետապնդելով արձագանքման ավելի արդյունավետ իրականացմանը:

4. Ներգրավված մարմինների ղեկավարները տեղեկացնում են ԱԻ կառավարման կենտրոնական շտաբի ղեկավարին իրենց անձնակազմի տեղակայման կարգի, ինչպես նաև ԱԻ կառավարման կենտրոնական շտաբի ղեկավարի միջոցով հայտ են ներկայացնում լրացուցիչ անձնակազմ տրամադրելու վերաբերյալ, երբ սեփական անձնակազմը չի բավարարում առաջադրված խնդիրները լուծելու համար կամ այդ պատճառով դանդաղում է օպերատիվ արձագանքումը: Հայցը ստացող ղեկավարներն ապահովում են անհրաժեշտ անձնակազմ՝ չվնասելով սեփական խնդիրների լուծման գործընթացը:

5. Ներգրավված մարմինների ղեկավարները կարող են իրենց անձնակազմին ուղարկել քաղաքային օբյեկտներ (որտեղ առկա են մարդկանց զանգվածային կուտակումներ) պատասխանատու անձանց տարհանման կամ այլ օպերատիվ արձագանքման միջոցառումների իրականացման գործում աջակցություն ցուցաբերելու համար:

Գլուխ 222. Կարևոր հանգամանքներ, որոնք պետք են անձնակազմի հավաքի ժամանակ

Ոչ աշխատանքային ժամերին անձնակազմի հավաքի դեպքում անհրաժեշտ է.

1. ապահովել անվտանգությունը

1) ապահովել սեփական անվտանգությունը

2) համոզվել ընտանիքի, բնակարանի և հարակից տարածքների անվտանգության մեջ

2. ապահովել անհրաժեշտ հագուստի ձևն ու առարկաների պահուստը

1) ապահովել այնպիսի հանդերձանք, որը խոչընդոտ չի հանդիսանա ԱԻ վերացման գործընթացին մասնակցելու ժամանակ.

2) ունենալ ձեռնոցներ, սրբիչ, փոխնորդ հագուստ, ջրի և սննդամթերքի պահուստ, դյուրակիր լապտեր և ռադիոընդունիչ:

3. Մասնակցություն ցուցաբերել դեպի հավաքակետ ճանապարհին առաջացած անհետաձգելի աշխատանքներին.

1) Արտակարգ դեպքերի, պատահարների հանդիպելու դեպքում անմիջապես ահազանգել ՀՀ ԱԻՆ ՃԿԿ՝ «911» հեռախոսահամարով և ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ գործելով արդարացված ռիսկի պարագայում.

2) Արտակարգ դեպքերի, պատահարների աղբյուրի վերացման ընթացքում կատարել հետևանքների վերացման ղեկավարի պահանջները, անհրաժեշտության դեպքում ստանձնել ղեկավարումը:

4. Ներգրավված մարմիններին տեղեկացնել հետևանքների ծավալների մասին.

1) Դեպի հավաքի վայր ճանապարհին միջոցներ ձեռնարկել հասցված վնասների մասին տեղեկատվության հավաքման ուղղությամբ, մասնավորապես հատուկ ուշադրություն դարձնել բժշկական հաստատությունների, ավտոճանապարհների, կամուրջների և այլ հատուկ կարևորագույն օբյեկտների վիճակին:

Բաժին 24 Տեղեկատվության հավաքումը և փոխանցումը

Գլուխ 223. Տեղեկատվության հավաքման և փոխանցման սկզբունքները

Արտակարգ իրավիճակներում արձագանքման կարևորագույն պայման է հանդիսանում ճշգրիտ տեղեկատվության օպերատիվ հավաքումն ու փոխանցումը:

Վնասի վերաբերյալ տեղեկատվության հավաքումն ու փոխանցումը, որն իրականացվում է օպերատիվ արձագանքման շրջանակներում, կատարվում է հետևյալ սկզբունքների հիման վրա.

1) ԱՒ ծառայություններից, այլ կազմակերպություններից, ինչպես նաև բնակչությունից և այլ զանազան աղբյուրներից ստացված տեղեկատվության համակարգում, վնասի չափերի ճշտում և պայմանների ստեղծում օպերատիվ արձագանքմանն անհրաժեշտ միջոցառումների իրականացման համար.

3) Արտակարգ իրավիճակներում արձագանքմանը վերաբերող ճշգրիտ և արագ տեղեկատվության տրամադրում.

4) Աղետների ժամանակ բնակչությանը ակտիվորեն տեղեկատվության տրամադրում, քանի որ այսպիսի տեղեկատվությունը շատ կարևոր է հանգստություն, արդյունավետ արձագանքում և կազմակերպված ու համակարգված գործունեություն իրականացնելու տեսանկյունից.

5) Բնակչությանը տեղեկատվության տրամադրման միջոցների ապահովում՝ զանգվածային տեղեկատվության միջոցների կիրառում, տեղեկատվության տեղեկագրերի թողարկում:

Գլուխ 224. Աղետներին վերաբերող տեղեկատվության հավաքում, հաշվետվություն և գրանցում

ԱՒ ծառայությունները շահագրգիռ մարմիններին տրամադրում են ՀՀ ԱԻՆ «ՍՊԾ» գործակալության կողմից ստացված տեղեկատվություն (էպիկենտրոն, մասշտաբ, հետցնցումներ և այլն):

Քաղաքին հասցված վնասների գնահատմամբ զբաղվող ԱՒ ծառայությունների աշխատակիցները, արդյունավետորեն օգտագործելով կապի բազմաթիվ միջոցներ, հավաքում և ընդհանրացնում են վնասի չափերին վերաբերող ՀՀ ԱԻՆ «ՍՊԾ» գործակալության կողմից ստացված տեղեկատվությունը:

Գլուխ 225. ԱՒ կառավարման շտաբի և ԱՒ տարածքային շտաբերի հաշվետվություն

ԱՒ շահագրգիռ մարմինները հավաքում են տեղեկատվությունը և հաշվետվություն են ներկայացնում ԱՒ կառավարման շտաբի պետին: Հաշվետվությունները պետք է պարունակեն օպերատիվ և համապատասխան տեղեկատվություն: Դրա հետ մեկտեղ պետք է պահպանել ներքին ստորաբաժանումների և ծառայությունների համագործակցությունը տարածաշրջանային բաժինների և նմանատիպ այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ:

ԱՒ կառավարման շտաբի կազմում ստեղծվում է տեղեկատվության կառավարման

սեկտոր, որում կուտակվում է ամբողջ մուտքային տեղեկատվությունը: Այս սեկտորը համակարգում և վերլուծում է հավաքված տեղեկատվությունը՝ ԱԻ կառավարման շտաբի ղեկավարի հրահանգների համաձայն:

Գլուխ 226. Աղետներից անմիջապես հետո ստացված տեղեկատվությունը

Աղետներից անմիջապես հետո ստացված տեղեկատվությունը բերված է աղյուսակ 79-ում:

Աղյուսակ 79 Աղետներից անմիջապես հետո ստացված տեղեկատվությունը

Դասակարգում	Հաղորդագրության բովանդակությունը	Հավաքման միջոցները (օրինակներ)
Մարդկային կորուստներ	<ul style="list-style-type: none"> - Չոհերի և վիրավորների թիվը, այդ թվում՝ բնակչության կյանքին սպառնացող վտանգները - Տուժածների վիճակը - տարահանման անհրաժեշտությունը և տարահանման վիճակը 	<ul style="list-style-type: none"> - Վնասների գնահատումը՝ ըստ ԱԻ կառավարման շտաբի և ԱԻ տարածքային շտաբերի կողմից շրջակա տարածքի վիզուալ դիտման արդյունքների - Վնասների չափի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ստացված ԱԻ դեպարտամենտի հրդեհաշիջման ստորաբաժանումների կողմից
Հրդեհներ	<ul style="list-style-type: none"> - Հրդեհների առաջացման և տարածման իրավիճակը 	<ul style="list-style-type: none"> - ԱԻ մարմիններից և ծառայություններից ստացված հաղորդագրությունները
Նյութական վնասներ	<ul style="list-style-type: none"> - պետական կառույցների վնասների չափը - երթևեկելի ճանապարհներին և կամուրջներին հասցված վնասները - կառույցների և շինությունների փլուզման իրավիճակը - փլուզումները և դրանց առաջացման վտանգները - էլեկտրալարերին, գազատար, ջրատար խողովակներին և հեռախոսային կապին հասցված վնասները 	<ul style="list-style-type: none"> - Հաղորդագրությունները՝ ստացված երթևեկության մեջ գտնվող վարորդներից և ուղևորներից - (քաղաքային ավտոբուսներ, երթուղային տաքսիներ և այլ) - Հեռուստատեսությամբ և ռադիոյով տրամադրվող տեղեկատվությունը - Հաղորդագրությունները՝ ստացված բնակչությունից և տարբեր կազմակերպություններից
Այլ	<ul style="list-style-type: none"> - Արագ արձագանքման իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվությունը 	

Գլուխ 227. Հետագա հաշվետվություններ

Վնասի չափի վերաբերյալ նոր տեղեկատվության ստացման հետ մեկտեղ կազմվում է դրա հաշվետվությունը՝ ի լրումն աղետի առաջացումից անմիջապես հետո տրամադրված տեղեկատվությանը: Բացի այդ, կանոնավոր կերպով հաշվետվություն է կազմվում նաև վնասի չափերի մեծացման կամ փոփոխության, օպերատիվ միջոցառումների և պլանավորված միջոցների իրականացման վիճակի մասին:

Գլուխ 228. Աղետի վերաբերյալ տեղեկատվության գրանցում

1. Տեղեկատվության գրանցում: ԱԻ կառավարման շտաբի տեղեկատվության

կառավարման բաժինը կատարում է աղետի վերաբերյալ տեղեկատվության ճշգրիտ գրանցում՝ դասակարգելով այն ըստ հրատապության, կարևորության և նմանատիպ այլ սկզբունքների:

2. Անհրաժեշտության դեպքում կատարվում են լուսանկարահանումներ և տեսաձայնագրություններ, որոնք անհրաժեշտ են օպերատիվ արձագանքման իրականացման, ինչպես նաև աղետի վերաբերյալ լուսանկարահանման և տեսաձայնագրման տեսանյութերի ապահովման համար:

Գլուխ 229. ԱԻ մասին բնակչության իրազեկումը

ԱԻ վերաբերյալ բնակչության իրազեկումն իրականացվում է հետևյալ նպատակներով.

1. Կանխարգելել մարդկանց մոտ անհիմն մտքերի հետևանք հանդիսացող անհանգստության և խոսակցությունների ու բամբասանքի արդյունքում ստեղծված հասարակական քաոսի առաջացումը.

2. Կայունացնել բնակչության կյանքի պայմանները՝ իրականացվող հրատապ միջոցառումների և ցուցաբերվող աջակցության մասին հայտարարություններ կատարելու եղանակով.

3. Աջակցել տուժածներին նորմալ կյանքի վերադարձնելու գործում:

Գլուխ 230. Բնակչության իրազեկումը տեղեկատվական միջոցներով

1. Աղետից անմիջապես հետո բնակչության իրազեկումը

ԱԻ կառավարման շտաբի ստեղծման ժամանակ նրա ղեկավարը անմիջապես հրավիրում է մամլո ասուլիս և կոչ է անում բնակչությանը պահպանել զգուշություն: Մամլո ասուլիսի բովանդակությունը բերված է ներքոնշյալ աղյուսակում:

Աղյուսակ 80 ՃԿԿ կողմից արված հայտարարության մեջ ներառվող կետեր

1. Հրդեհի բռնկման կանխարգելման և հրդեհաշիջման կազմակերպման կոչ
2. Անհիմն ասեկոսների և խուճապի կանխարգելման կոչ
3. Կարիքավոր մարդկանց պաշտպանության և կյանքերի փրկման գործին մասնակցելու կոչ
4. Վնասների չափի ընդհանուր պատկերը
5. Քաղաքային ԱԻ կառավարման շտաբի ստեղծումը և դրա կողմից իրականացվող գործունեությունը
6. Հանձնարարականների հրապարակումը և տարահանման մասին ցուցումները

Բացի այդ, անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն է տրամադրվում ՋԼՄ-ներին տիրող իրավիճակի և ԱԻ կառավարման շտաբի գործունեության վերաբերյալ:

Աղյուսակ 81 ԱԻ կառավարման շտաբի կողմից ՋԼՄ-ներին տրամադրվող տեղեկատվություն

1. Տեղեկատվություն հետցնցումային իրավիճակի մասին
2. Վնասի չափը
3. Իրականացվող գործունեության համակարգը
4. Տեղեկատվություն տարահանված և որոնման մեջ գտնվող մարդկանց մասին
5. Սոցիալ-կենցաղային տեղեկատվություն
1) Ջրի, գազի և էլեկտրաէներգիայի մատակարարման վիճակը
2) Առաջին անհրաժեշտության պարագաների մատակարարման ընթացքը
3) Տեղեկատվություն ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների վերաբերյալ

- | |
|--|
| 6. Բժշկական կենտրոնների աշխատանքային կարգավիճակը |
| 7. Քաղաքային գործունեության վերականգնման և հասարակական ծառայությունների մատակարարման ընթացքը |

2. ԱՒ շահագրգիռ մարմիններն իրականացնում են բնակչության իրազեկման գործընթացը՝ կիրառելով ձեռքի տակ եղած տարաբնույթ տեղեկատվական միջոցներ, իսկ, անհրաժեշտության դեպքում, կարող են նաև համագործակցել տարբեր մարմինների և կազմակերպությունների հետ: ԱՒ կառավարման շտաբը հավաքում, համակարգում և վերլուծում է ԱՒ ծառայությունների և մարմինների կողմից ստացված տեղեկատվությունը և այն ամբողջական կարգով տրամադրում է բնակչությանը (այդ թվում՝ տարահանված և տուժած անձանց) բարձրախոսների միջոցով և այլն:

3. Լուրջ բնույթ ունեցող և մարդկանց կյանքին ու ունեցվածքին սպառնացող աղետի առաջացման դեպքում հեռարձակող Կազմակերպությունները պետք է դադարեցնեն առօրյա հաղորդումները և եթեր հեռարձակեն արագ նախազգուշացման վերաբերյալ հաղորդումներ: Այդպիսի արագ նախազգուշացման հաղորդումների ավելի օպերատիվ և ճշգրիտ հեռարձակման նպատակով ԱՒ կառավարման շտաբի քարտուղարությունը պետք է նախապես համաձայնագրեր կնքի հեռարձակող Կազմակերպությունների հետ օպերատիվ տեղեկատվության ստացման կարգի, բովանդակության, միջոցների վերաբերյալ և այլն:

Գլուխ 231. Բնակչության իրազեկումը տպագրական հրատարակությունների միջոցով

1. Բնակչությանը տեղեկատվության տրամադրման նպատակով ԱՒ կառավարման շտաբի քարտուղարությունը տրամադրում է վարչական բնույթի տպագրված տեղեկատվություն, որն անհրաժեշտ է ինքնուրույն արձագանքման միջոցառումների իրականացման և փոխաջակցության զարգացման, ինչպես նաև քաղաքացիներին հանգստություն ներշնչելու համար: Բնակչությանը կանոնավոր կերպով հասնում է նաև մանրամասն տեղեկատվություն՝ հատկապես տարահանված շրջաններին օգնություն ցուցաբերելու մասին:
2. Անհրաժեշտության դեպքում կազմում են թերթիկներ և պաստառներ, որոնք բաժանում են կամ փակցնում են տարբեր վայրերում:

Գլուխ 232. ԶԼՄ-ների իրազեկումը ԱՒ վերաբերյալ

ԱՒ ժամանակ ԶԼՄ-ների հետ աշխատանքն իրականացվում է միասնական կերպով մամլո քարտուղարի միջոցով, ով հանդիսանում է ԱՒ կառավարման շտաբի քարտուղարության անձնակազմի անդամ:

Գլուխ 233. Հայտարարություն մամուլի համար

Տեղեկատվության կարևորության աստիճանից կախված՝ ԱՒ կառավարման շտաբի անունից հայտարարություն անում է շտաբի ղեկավարը կամ մամլո քարտուղարը: Շփոթմունք չառաջացնելու համար տեղեկատվությունը տրվում է տեղում և ԱՒ կառավարման շտաբի կողմից սահմանված կարգով: Շտաբի հարևանությամբ թերթի, ռադիոյի և հեռուստատեսության լրագրողների համար

ստեղծվում են ժամանակավոր լրագրողական կետեր:

Գլուխ 234. Հեռարձակող Կազմակերպությունների աջակցության դերը տեղեկատվության փոխանցման գործում

Բնակչությանը, ԱԻ ծառայություններին և մարմիններին օպերատիվ տեղեկատվության տրամադրման անհրաժեշտության դեպքում հեռարձակող Կազմակերպությունները եթեք են հեռարձակում հրատապ նախազգուշացնող հաղորդումներ:

Գլուխ 235. Հասարակական կարծիքի լուսմներ

Բնակչության խնդիրներ ունեցող տուժածների հետ խորհրդատվություն անցկացնելու և նրանց օգնություն ցուցաբերելու համար անցկացվում են լուսմներ մարդկանց ցանկությունների և բողոքների վերաբերյալ, որոնք իրականացվում են ԱԻ հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների ժամանակ:

Գլուխ 236. Բնակչության համար ժամանակավոր կացարանների բացումը

1. ԱԻ ժամանակ սոցիալ-կենցաղային խնդիրներ ունեցող բնակչության անհանգստությունը մեղմացնելու, նորմալ կյանքին վերադարձնելու նպատակով ԱԻ շահագրգիռ մարմինները ստեղծում են ժամանակավոր կացարաններ, որտեղ քաղաքացիները կարող են ներկայացնել իրենց հայցերը, ցանկությունները և ստանալ խորհրդատվություն:

2. ԱԻ տարածքային շտաբերը զբաղվում են տարահանված բնակչության խնդիրներով, ցանկություններով և խորհրդատվության դիմումներով մարզպետարաններում և տեղի ապաստարաններում: Բնակչության անվտանգությունն ապահովելուց և իրավիճակը կայունացնելուց հետո սկսվում է տարաբնույթ խորհրդատվական ծառայությունների փուլային տրամադրում մասնագիտացված խորհրդատուների կողմից՝ ելնելով ստեղծված իրավիճակից:

Գլուխ 237. Դիմումների հետ աշխատանք

1. ԱԻ կառավարման շտաբի կողմից ընդունված բնակչության ցանկությունները, որոնք թույլատրվում են տվյալ մարզի մակարդակից ելնելով, իրականացվում են համապատասխան տարածքային շտաբի կողմից: Հանրության այն պահանջները, որոնք չեն կարող բավարարվել տվյալ մարզի ուժերով, անհրաժեշտության դեպքում ուղղվում են ԱԻ կառավարման շտաբի քարտուղարություն համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:

2. ԱԻ կառավարման շտաբի քարտուղարությունը, ըստ թեմաների, դասակարգում է հանրության ցանկությունները, որոնք ստացվել են անմիջապես բնակչության կողմից կամ տարածքային շտաբերի կողմից և առնչվում են ԱԻ համապատասխան ծառայություններին և այլ շահագրգիռ մարմիններին:

Գլուխ 238. Տեղեկատվական քառուսի կանխարգելման միջոցառումներ

Երկրաշարժի գրանցման ժամանակ այնպիսի մարդաշատ վայրերում, ինչպիսիք են

սուպերմարկետները, կինոթատրոնները, փողոցները, քաղաքային կայարանները, և այլ հասարակական վայրերում կարող է առաջանալ խուճապ: Այդպիսի խուճապը հոգեբանական (անհանգստություն, վախ և այլն) և տեղեկատվական (տեղեկատվության պակաս, ոչ բավարար գիտելիքներ, ասեկոսներ և այլն) բնույթի տարբեր գործոնների փոխազդեցության հետևանք է: Դրա կանխարգելման համար անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ տեղեկատվական քառսի նախազգացման վերաբերյալ, որի հիմքում ընկած է բնակչության իրազեկման խնդիրը:

Գլուխ 239. Կազմակերպության պատասխանատվությունը

Երկրաշարժի գրանցման ժամանակ փողոցներում տեղակայված խանութներն ու այլ մարդաշատ օբյեկտները այցելուների անվտանգության ապահովման նկատառումներով բարձրախոսների միջոցով հորդորում են մարդկանց հանգստություն պահպանել և համապատասխան կերպով ուղղորդում են նրանց:

Գլուխ 240. Հասարակական տրանսպորտի գործողությունները

Անվտանգության ապահովման նպատակով հասարակական տրանսպորտից օգտվող քաղաքացիներին տեղեկացնում են ստեղծված իրավիճակի մասին, ուղղորդում են տարահանման անվտանգ վայրեր և ձեռնարկվում են այլ միջոցառումներ քառսի կանխարգելման ուղղությամբ:

Գլուխ 241. Հեռարձակող կազմակերպությունների պատասխանատվությունը

Աղետների առաջացման ժամանակ հնարավոր քառսի կանխարգելման նպատակով հեռարձակող կազմակերպությունները պետք է դադարեցնեն առօրյա հաղորդումները և եթե հեռարձակեն արագ նախազգուշացման հաղորդումներ, ինչպես նաև նախապես մշակված պլանի համաձայն տեղեկացնեն բնակչությանը ԱԻ մասին:

Բաժին 25 Պահպանություն, Ճանապարհներով երթևեկության կարգավորում, հրատապ տեղափոխումներ

Գլուխ 242. Ընդհանուր դրույթներ

Սեյսմիկ աղետի ժամանակ հնարավոր են շփոթություն և խուճապ բնակչության շրջանում, ճանապարհային երթևեկության խափանումներ:

Տալով առաջնահերթություն բնակչության անվտանգությանը՝ հասարակական կարգի և ավտոտրանսպորտային ծառայությունները ջանքեր են գործադրում հասարակական կարգի և հրատապ տեղափոխումների համակարգերի հիմնման ուղղությամբ, օպերատիվ և հստակ իրականացնում են հրատապ հասարակական կարգի պահպանման, ճանապարհային երթևեկության և հրատապ տեղափոխումների միջոցառումներ:

Դա իրականացվում է հետևյալ նպատակներով՝

- ա. Քաղաքացիների կյանքի, առողջության և ունեցվածքի պահպանման.
- բ. Հանցագործությունների կանխման և կանխարգելման.
- գ. Ճանապարհային երթևեկության կարգ ու կանոնի պահպանման.
- դ. Հասարակական կարգի պահպանման:

Գլուխ 243. Պահպանման գործունեություն

1. Սեյսմիկ աղետի ժամանակ հասարակական կարգի պահպանման ծառայությունը իրեն կից հիմնում է հրատապ արձագանքման շտաբ (այսուհետ՝ ՀԿՊԾ ՇՏԱԲ), ծավալում է հրատապ պահպանման միջոցառումների իրականացման համակարգ, շահագրգիռ մարմինների փոխհամագործակցության և համագործակցության համակարգ և իրականացնում է հետևյալ գործունեությունը՝

2. ՀԿՊԾ ՇՏԱԲ-ը իրականացնում է հրատապ պահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաք և փոխանցում այդ հավաքագրված տեղեկատվությունը շահագրգիռ մարմիններին.

3. Վնասի և փլուզումների մասին ստացված տեղեկատվության հիման վրա ՀԿՊԾ ՇՏԱԲ-ը հրամանով դուրս է բերում իր պահպանման ստորաբաժանումները, որոնք պատասխանատու են որոնողափրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների և այլ հրատապ միջոցառումների պահպանության ապահովման համար: ՀՀ Ոստիկանության այն տարածքային ստորաբաժանումների ղեկավարները, ում սպասարկման տարածքում է տեղի ունեցել աղետը, բաշխում են պահպանվող տարածքները ուղարկված ուժերի և այդ տարածքում գործող շահագրգիռ մարմինների պատասխանատու աշխատակիցների և ստորաբաժանումների միջև:

Գլուխ 244. Պահպանման գործունեություն

1. Ելնելով իրավիճակից՝ ՀՀ Ոստիկանության աշխատակիցները ցուցաբերում են համակողմանի աջակցություն տարահանման միջոցառումներին, այդ միջոցառումները հնարավորինս հարթ և անխափան իրականացնելու նպատակով:

2. Տարահանման ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում տարեց մարդկանց,

հաշմանդամների և ԱԻ Ժամանակ յուրահատուկ ուշադրություն պահանջող մարդկանց:

3. Տարահանվողների ընդունում ենթակա տարածքներում, Տարահանման վայրերի պատրաստ վիճակի բերումից հետո տարահանվողներին այդ վայրեր տեղափոխման կազմակերպում:

Գլուխ 245. Երկրորդային աղետների կանխարգելում

Ծառայության իրականացման ընթացքում ՀԿՊԾ ՇՏԱԲ-ի ուժերը իրականացնում են մշտական հետախուզություն վտանգավոր տարածքների երկրորդային երևույթների բացահայտման և ՀՀ ԱԻՆ հաղորդման ուղղությամբ, ինչպես նաև աջակցում են ՀՀ ԱԻՆ-ին բնակչության տարահանման և այլ փրկարարական գործունեությանը վերաբերվող տեղեկատվության հաղորդման հարցերում:

Գլուխ 246. Հասարակական կարգի պահպանում

Դատարկված թաղամասերում դիակապտության, օգնության տեղափոխման ճանապարհներում, մարդկանց առավել կուտակումների վայրերում խցանումների և խուճապի ու տարահանման վայրերում միջադեպերի բացառության նպատակով ՀԿՊԾ ՇՏԱԲ-ը ուժեղացնում է ինչպես այդ վայրերի, այնպես էլ աղետի հարևան տարածքների պահպանությունը, սահմանում է պարեկային ծառայություն:

Բացի այդ իրականացվում է հասարակական կարգի ուժեղացված պահպանություն աղետի տարածքներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով կենցաղային տնտեսական հանցագործությունների կանխմանը (ոչ բարեխիղճ առևտուր և այլն), դիակապտությանը, բռնությանը և այլ հանցագործություններին, որոնք կարող են զարգանալ աղետի գոտում:

Գլուխ 247. Կամավորական Հասարակական կարգի գործունեության աջակցություն

Համատիրությունների/ԹՄ, կազմակերպությունների և այլ հիմնարկ ձեռնարկությունների կողմից Հասարակական կարգի պահպանման և հանցագործությունների դեմ պայքարի միավորումների ստեղծման դեպքում ՀԿՊԾ ՇՏԱԲ-ը փոխհամագործակցում է դրանց հետ և ցուցաբերում դրանց գործունեության իրականացման համար անհրաժեշտ աջակցություն, հանցագործությունների և նման այլ պատահարների կանխարգելման, ինչպես նաև բնակչության ու տարահանվածների շրջանում լարվածության, տագնապի զգացմունքի և անվստահության նվազեցման նպատակով:

Գլուխ 248. Տուժածներին և մնացած բնակչությանը Հասարակական կարգի Պահպանման վերաբերյալ տեղեկատվության հաղորդում

ՀԿՊԾ ՇՏԱԲ-ը տուժածներից և բնակչությունից հավաքագրում է պահպանությանը ներկայացվող պահանջների վերաբերյալ տեղեկատվությունը և ՀՀ Ոստիկանության աշխատակիցների միջոցով տեղերում իրականացնում է հուզող հարցերի և խնդիրների լուծում:

Գլուխ 249. Ճանապարհային երթևեկության կարգավորում

Անմիջապես երկրաշարժից հետո, հրատապ արձագանքման առաջին փուլում, որոնողափրկարարական և անհրաժեշտ վթարավերականգնողական, հրդեհաշիջման աշխատանքների իրականացման և բժշկական օգնության ցուցաբերման օպերատիվությունը ապահովվելու նպատակով ՀԿՊԾ ՇՏԱԲ-ը ապահովում է հատուկ տրանսպորտային միջոցների անխափան և սահուն երթևեկությունն ու տարահանման համար անվտանգ երթուղիների առկայությունը: Այս նպատակով ՀԿՊԾ ՇՏԱԲ-ը իրականացնում է հետևյալ միջոցառումները՝

ա. Կախված աղետի ծավալներից և փվածքներից՝ արգելում կամ սահմանափակում է երթևեկությունը այնպիսի ավտոճանապարհներով, որոնք նախապես սահմանված են որպես «ռազմավարական» (տես Աղյուսակ 66), ինչպես նաև առավել վնասված տարածքներով:

բ. Իրականացնում է ճանապարհային երթևեկության անհրաժեշտ կարգավորումը հասարակ ճանապարհներում և փողոցներում.

գ. Նշանառում է վտանգավոր հատվածները.

դ. Նշանառում է շրջանցիկ ճանապարհները.

ե. Հավաքում և շահագրգիռ մարմիններին է հաղորդում ճանապարհային երթևեկության վերաբերյալ տեղեկատվությունը.

զ. Բնակչության շրջանում իրականացնում է բացատրական աշխատանքներ՝ կոչելով սահմանափակել անհատական տրանսպորտային միջոցներով երթևեկելը:

Ճանապարհային երթևեկության կարգավորումը՝ կախված աղետի ծավալներից և փվածքներից, իրականացվում է ճկուն, ստորև նշված ցուցումների համաձայն:

Գլուխ 250. Ավտոտրանսպորտի՝ աղետի գոտի մուտք գործելու կարգավորում

Ճանապարհային երթևեկության ապակարգավորումը կանխելու նպատակով սահմանափակվում է ավտոտրանսպորտի մուտքը աղետի գոտի: Այդ նպատակով քաղաքի կենտրոն տանող ճանապարհներին և փողոցներում հիմնվում են անցակետեր, որոնք կարգավորում և կանոնակարգում են ավտոտրանսպորտի հոսքերը՝ սահմանափակելով երթևեկությունը կամ լիովին արգելելով այն:

Գլուխ 251. Ճանապարհային երթևեկության կարգավորումը անհապաղ տեղափոխումների և երթուղիների ապահովման համար

Անմիջապես երկրաշարժից հետո հնարավոր է ճանապարհային երթևեկության ապակարգավորում, ինչը կարող է հանգեցնել աղետի գոտու սահմանների ընդլայնմանը կամ պատճառ հանդիսանալ երկրորդային ԱԻ արագացմանը:

Այս ամենը կանխելու, ինչպես նաև տարահանման, փրկարարական, օգնության ցուցաբերման, այդ թվում նաև բժշկական, հրդեհաշիջման և այլ անհետաձգելի միջոցառումների սահուն և անխափան իրականացման նպատակով անհրաժեշտ է նախապես որոշել նշված միջոցառումների տրանսպորտային ապահովման երթուղիները:

Այս նպատակով, նախապես որոշված երթուղիներով սահմանափակվում կամ լիովին արգելվում է այլ տրանսպորտային միջոցների երթևեկությունը, բացառությամբ նախապես սահմանված

տրանսպորտային միջոցների, որոնց երթևեկությունը թույլատրվում է արտակարգ իրավիճակների ժամանակ:

Անհրաժեշտ է նախապես մշակել և սեյսմիկ աղետի ժամանակ կիրառել ավտոտրանսպորտի համար տարբեր մակարդակների անցագրեր, որոնք կկարգավորեն ինչպես ընդհանրապես երթևեկությունը աղետի ժամանակ, այնպես էլ թույլատրված տրանսպորտային երթևեկությունը աղետի գոտում:

Գլուխ 252. Ճանապարհների համար պատասխանատուների տեղեկացում

Վերոնշյալ կետում նշված սահմանափակումների կամ արգելքների՝ ուժի մեջ մտնելու մասին տեղեկացվում են ՀՀ պետական կառավարման տարածքային մարմինների (մարզպետարաններ) և տեղական ինքնակառավարման մարմինների (քաղաքային և գյուղական համայնքներ) ղեկավարներին և շահագրգիռ ստորաբաժանումների ղեկավարներին:

Գլուխ 253. Ճանապարհների մաքրման/ազատման ուստիկանական միջոցառումներ

Այն դեպքերում, երբ արգելված կամ հրատապ տեղափոխումների համար նախատեսված երթուղիներում մնացել են ավտոտրանսպորտային միջոցներ, որոնք խոչընդոտում են կամ կարող են խոչընդոտել ԱԻ հետևանքների վերացման տրանսպորտային ապահովման և անհապաղ տեղափոխումների միջոցառումների իրականացումը, ՀՀ Ոստիկանությունը իր նախաձեռնությամբ կամ ՀՀ ԱԻՆ հրահանգով պետք է ազատի երթուղիները այդ տրանսպորտային միջոցներից:

Գլուխ 254. Հրատապ տեղափոխումների իրականացումը

Սեյսմիկ աղետի ժամանակ Տրանսպորտային ծառայությունը, որը պատասխանատու է մարդկանց և հատուկ բեռների տեղափոխման համար և Հասարակական կարգի պահպանման ծառայությունը Տրանսպորտային ծառայության կից հիմնում են Հրատապ տեղափոխումների Շտաբ (այսուհետ՝ ՏԾ ՇՏԱԲ): Իսկ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ, ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը և «Զվարթնոց» միջազգային օդանավակայանը պետք է հիմնեն համապատասխանաբար երթուղայի և օդային փոխադրումների ենթաշտաբեր (տես Աղյուսակ 20.1 և 20.1.1): Այսպիսով, հիմնվում է մարդկանց և բեռների հրատապ տեղափոխումների, ինչպես նաև շահագրգիռ կառույցների հետ փոխհամագործակցության ու համագործակցության համակարգ: Այս համակարգի հիմնական նպատակն է՝ ապահովել երթուղիների և համապատասխան տրանսպորտային միջոցների առկայությունը:

Գլուխ 255. Տեղափոխումների երթուղիների առկայության ապահովում

Տեղափոխումների երթուղիների առկայության ապահովման քայլերի հերթականությունը հետևյալն է՝

ա. Անմիջապես երկրաշարժից հետո ՏԾ ՇՏԱԲ-ը Տրասնպորտային ծառայության ուժերով կազմակերպում է հետախուզություն՝ ճանապարհների, մայրուղիների, փողոցների վիճակի և վնասվածության ուսումնասիրման և այդ վնասվածքների վերացման եղանակների հայթայթման նպատակով: Հետախուզության տվյալները ամփոփվում և ներկայացվում են ԱԻ հանրապետական հանձնաժողովին և ՀՀ ԱԻՆ, ինչպես նաև ներկայացվում է ճանապարհների, մայրուղիների, փողոցների մաքրման և անցողունակության ապահովման նախնական պլանը: Միաժամանակ ներկայացված պլանով կազմակերպվում է հիմնական երթուղիների մաքրման և անցողունակության ապահովման անհապաղ գործողությունները:

բ. ԱԻ հանրապետական հանձնաժողովում քննարկվում է ճանապարհների, մայրուղիների, փողոցների մաքրման և անցողունակության ապահովման նախնական պլանը, անհրաժեշտության դեպքում ճշգրտելով այն կամ նշելով պլանում նշված միջոցառումների առաջնայնությունը, որից հետո հաստատվում է այդ պլանը: Հաստատված պլանը ներկայացվում է շահագրգիռ մարմիններին:

գ. Համաձայն հաստատված պլանի՝ ՏԾ ՇՏԱԲ-ը և ՀԿՊԾ ՇՏԱԲ-ը ՀՀ ԱԻՆ համակարգման ներքո իրականացնում են ճանապարհների, մայրուղիների, փողոցների մաքրման և անցողունակության ապահովման աշխատանքներ: ՀՀ ՊՆ, Ճանապարհաշինարարական և այլ շինարարական կազմակերպությունների ուժերով իրականացվում են ճանապարհների, մայրուղիների, փողոցների մաքրման և հրատապ ինժեներա-վերականգնողական (կամուրջների ամրացում, նորոգում և այլն) աշխատանքներ: Այս աշխատանքների նպատակն է ապահովել յուրաքանչյուր ճանապարհին, մայրուղում, փողոցում նվազագույնը 2 երթևեկության գծի առկայությունը:

Պատասխանատու/ղեկավար կազմի, ծայրահեղ աստիճանի տուժածների և առավելագույն կարևորություն ունեցող բեռների անհապաղ տեղափոխման համար վերը նշված պլանով պետք է նախատեսվեն տեղափոխումներ ուղղաթիռով: Այս նպատակով նախապես սեյսմիկ աղետի արձագանքման պլանում պետք է նշված լինեն քաղաքում ուղղաթիռների վայրէջքի համար հարթակներ:

Գլուխ 256. Տեղափոխումների համակարգի ապահովում

1. Տեղափոխումներ կազմակերպելիս և իրականացնելիս առաջնահերթությունը տրվում է մարդկանց կյանքի և առողջության ապահովմանը, ինչպես նաև հաշվի են առնվում աղետի էլ ավել չտարածման և հրատապ տեղափոխումների անխափան և սահուն իրականացման գործոնները: Տեղափոխումների առաջնային օբյեկտները տարբերակվում են՝ կախված ԱԻ վնասից և ԱԻ հետևանքների վերացման գործընթացի առաջընթացից (տես Աղյուսակ 82):

Աղյուսակ 82 Տեղափոխումների առաջնային օբյեկտները/ Դասակարգում ըստ առաջնայնության

Դասակարգում ըստ առաջնայնության	Տեղափոխումների առաջնային օբյեկտները
--------------------------------	-------------------------------------

<p>I-ին փուլ</p>	<ol style="list-style-type: none"> 1. Փրկարարական և բժշկական անձնակազմ, բժշկական և փրկարարական գույք և այլն 2. Հրդեհաշիջման և երկրորդային խոցման գործոնների առաջացումը կանխող ստորաբաժանումներ և գույք 3. Անհետաձգելի վթարավերականգնողական և կենսագործունեության վերականգնման (կապի համակարգերի, գազա-, ջրա-, էլեկտրամատակարարման վերականգնման և այլն) ստորաբաժանումներ և գույք 4. Բուժփմնարկներ տեղափոխվող տուժածներ և վիրավորներ 5. Ճանապարհատրանսպորտային օբյեկտները սպասարկող, երթևեկությունն ապահովող, տրանսպորտի առանցքային օբյեկտները (մայրուղիներ, ճանապարհներ, կամուրջներ) վերականգնող անձնակազմ
<p>II -րդ փուլ</p>	<ol style="list-style-type: none"> 1. I-ին փուլի տեղափոխումների առաջնային օբյեկտներ 2. Սննդամթերք, խմելու ջուր և այլ կենսաապահովման միջոցներ 3. Տուժածների, վիրավորների և հիվանդների տեղափոխում աղետի գոտուց դուրս 4. Տրանսպորտային օբյեկտները (մայրուղիներ, ճանապարհներ, կամուրջներ) վերականգնող անձնակազմ, գույք և այլն
<p>III-րդ փուլ</p>	<ol style="list-style-type: none"> 1. II -ին փուլի տեղափոխումների առաջնային օբյեկտներ 2. Վթար/աղետը վերականգնող անձնակազմ և գույք 3. Առաջնային անհրաժեշտության պարագաներ

Գլուխ 257. Ավտոտրասպորտի տրամադրում տեղափոխումների համար

ՏԾ ՇՏԱԲ-ը ապահովում է ավտոտրանսպորտի տրամադրումը անհապաղ տեղափոխումներ ապահովելու նպատակով՝ այդ նպատակով հաշվառելով նաև կազմակերպությունների տրանսպորտային միջոցները, որոնք ամրագրված են պայմանագրային հիմունքներով:

Աղետի հետևանքների վերացման գործընթացում յուրաքանչյուր մարմին առաջնահերթ պետք է օգտագործի, ինչպես նաև կազմի իր արձագանքման պլանները՝ հիմնվելով սեփական ավտոտրասպորտի վար: Սեփական տրասպորտային միջոցների անբավարարության դեպքում, նախապես, իր պլանը մշակելիս կամ անմիջապես սեյսմիկ աղետի դեպքում խնդիրներ կատարելու ժամանակ պետք է ներկայացվի համապատասխան հայտ ավտոտրանսպորտ ստանալու նպատակով. անմիջապես աղետի դեպքում այդ հայտերը ներկայացվում են ԱԻ հանրապետական հանձնաժողով կամ ՀՀ ԱԻՆ:

Ավտոտրանսպորտի սակավության դեպքում, երբ այն հնարավոր չէ ստանալ, ԱԻ հանրապետական հանձնաժողովը կամ ՀՀ ԱԻՆ հրահանգներով ՏԾ ՇՏԱԲ-ը պետք է դիմի շահագրգիռ մարմիններին կամ ՀՀ գործող կազմակերպություններին, անկախ սեփականության ձևից, այս գործընթացը ապահովելու նպատակով: ՏԾ ՇՏԱԲ-ը պետք է ունենա նախապես հաստատված փոխհամագործակցության և փոխօգնության պայմանագրեր կամ առնվազն նախնական պայմանավորվածություններ:

Գլուխ 258. Վառելիքաքսուկային նյութերով ապահովում

Այն դեպքերում, երբ ՏԾ ՇՏԱԲ-ը կամ այլ ծառայություններ, որոնք պատասխանատու են

ավտոտրանսպորտի հատկացման համար, կզգան վառելիքաքսուկային նյութերի պահանջ իրենց պարտականությունների կատարման համար, պետք է դիմեն նյութատեխնիկական մատակարարման համար պատասխանատու հանրապետական մարմին կամ անմիջապես ԱԻ հանրապետական հանձնաժողով:

Գլուխ 259. Անհապաղ տեղափոխումների համար նախատեսված ավտոտրանսպորտի հատկացման հաստատում

Ավտոտրանսպորտային միջոցները, որոնք նախատեսված են անհապաղ տեղափոխումներ իրականացնելու համար, և որոնց վրա չեն տարածվում ԱԻ դեպքում երթևեկության սահմանափակումները և որոնց համար նախատեսված են համապատասխան անցագրեր, նախապես պետք է հայտարարագրված և ամրակցված լինեն համապատասխան պլաններում: Հասարակական կարգի պահպանման հանրապետական ծառայությունը՝ ՀՀ Ոստիկանությունը, ՀՀ ԱԻՆ հետ համատեղ, սահմանում է դրանց համար համապատասխան անցագրեր, և հաշվի առնելով յուրաքանչյուրի կիրառման կարևորությունը՝ անցագրի աստիճանը կարող է լինել տարբեր (տես Աղյուսակ 68):

Կոնկրետ անցագրեր ունեցող ավտոտրանսպորտային միջոցների երթևեկությունը չպետք է սահմանափակվի որևէ պետական կառավարման մարմնի կողմից, եթե այն իրականացվում է անցագրում նշված անցագրային իրավունքների/սահմանների շրջանակներում:

Արգելվում է անցագիր ունեցող ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումը սեփական շահերի համար:

Գլուխ 260. Տարբեր կարևոր ապրանքների տարբեր բազաներ

Աղյուսակ 83 Ցուցակ առաջին անհրաժեշտության ապրանքների արտադրության խոշոր կազմակերպությունների և մեծածախ առևտրի կենտրոնների

h/h	Կազմակերպության անվանումը	Հասցե	Արտադրանք	
1	«Դավթաշենի հացի գործարան» ՓԲԸ	Դավթաշեն 7 փող	հացամթերք	
2	«Էլիտ պրոդեքտ» ՍՊԸ	Դավթաշեն 1 փող. 34 տուն	երշիկ	
3	«Ալիկա» ՍՊԸ	3-րդ մ/շ, Սաֆարյան փող	հաց	
4	«Դվին-1» ՍՊԸ	Թոթովենց 5 շենք		
5	«Գապեկս» ՍՊԸ	Բագրևանդի փող		
6	Թիվ 7 հացի գործարան	Մասիսի փող. 7	հաց	
7	«Գրանդ Քենդի» ՀԶ	Մասիսի 31	սննդի արտադրություն	
8	«Գրանդ Տոբակո» ՀԶ	Շահամիրյանների փող.	սիգարետ	
9	«Երևանի թռչնաբուծական ֆ-կա»	Շիրակի փող. 45	մսամթերք	
10	«Ջոնսոն» ՍՊԸ	Լոմոնոսովի 48	կաթնամթերք	
11	Թիվ 6 հացի գործարան	Շահումյան 16 փող. 71	հաց	
12	Ս.Բիլյան ՍՊԸ	Բաբաջանյան 40/1	երշիկ	
13	«Ջավախք» ՍՊԸ	Օհանովի փող. 9	մակարոն	
14	«Մուշ» ՍՊԸ	Միքայելյան փող.	Հաս. սնունդ	

15	«Ձյունիկ սառնարան» ՍՊԸ	Արշակունյաց 9		
16	«Գարուն» ԲԲԸ	Բրյուսովի 26		
17	«Երևանի պլազաց» ԲԲԸ	Նար-Դոսի 2		
18	Երևանի «Պահածոների գործարան»	Արշակունյաց 15		
19	Երևանի «Քրարատ» ԿԳՕ կոմբինատ	Իսակովի 9		
20	«Երևանի Գարեջուր» ԲԲԸ	Իսակովի 8		
21	«Աղի կոմբինատ» ՓԲԸ	Աճառյան 2-րդ նրբ. 4-րդ շենք	աղ	3000 տոննա.
22	«Արգիշտ» ՍՊԸ	Չարենցի թաղ.,	հացամթերք	350 տոննա
23	«Աթենք » ՍՊԸ	Ծարավ Աղբյուրի 59/1	մսամթերք	200 տոննա

Բաժին 26 Համագործակցությունը արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման կազմակերպությունների հետ

Գլուխ 261. Աղետի գոտի հայտարարելու կարգը

Երևան քաղաքի տարածքում ուժեղ երկրաշարժի դեպքում, բացի քաղաքային մակարդակի ԱԻ արձագանքման միջոցառումներից, կարող են իրականացվել նաև հանրապետական մակարդակի արձագանքման միջոցառումներ: Ուժեղ երկրաշարժի դեպքում Երևան քաղաքի ԱԻ մշտական գործող հանձնաժողովի համապատասխան խմբերը հավաքում են ստեղծված իրավիճակի, վնասների, տուժածների վերաբերյալ տեղեկատվություն և ներկայացնում Երևան քաղաքի ԱԻ մշտական գործող հանձնաժողովի նախագահին: Այս տեղեկատվությունը Երևան քաղաքի ԱԻ մշտական գործող հանձնաժողովի ղեկավարը ներկայացնում է ՀՀ կառավարություն, որից հետո գումարվում է ԱԻ հանրապետական հանձնաժողովը, որը ստացված տեղեկատվության հիման վրա, հայտարարում է աղետի գոտի: Այնուհետ ԱԻ հանրապետական հանձնաժողովը որոշում է կայացնում աղետի գոտի համապատասխան ուժեր և միջոցներ ուղարկելու վերաբերյալ:

Գլուխ 262. Օգնության դիմելու ուղղությունները

Երևան քաղաքի ԱԻ մշտական գործող հանձնաժողովը ԱԻ հանրապետական հանձնաժողովին դիմում է օգնության հետևյալ ուղղություններով՝

1. Ստեղծված իրադրության և վնասների չափերի որոշում:

Օգտագործելով հասանելի բոլոր տրանսպորտային միջոցները (ցամաքային կամ օդային) տեղեկատվության հավաք, ստեղծված իրադրության և վնասների չափերի որոշում:

2. Տարահանում:

Տարահանման վերաբերյալ որոշում ընդունելուց հետո տարահանման միջոցառումների կազմակերպում:

3. Տուժածների հայտնաբերում:

Անհայտ կորածների հայտնաբերման, տուժածներին օգնության ցուցաբերման, վիրավորներին դուրս բերման նպատակով որոնողափրկարարական աշխատանքների իրականացում:

4. Հրդեհաշիջում:

ՀՀ ԱԻՆ ՓԾ հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների հետ համատեղ հրդեհաշիջման աշխատանքների իրականացում:

5. Ճանապարհների և մոտեցման ուղիների մաքրում:

Ճանապարհների և ուղիների վնասման դեպքում դրանց մաքրում կամ վերանորոգում:

6. Առաջին բուժօգնություն, հակահամաճարակային միջոցառումներ:

Տուժածներին առաջին բուժօգնության ցուցաբերում, համապատասխան հակահամաճարակային միջոցառումների իրականացում:

7. Բեռների և անձնակազմի անհապաղ տեղափոխում:

Արձագանքման կազմակերպման և օգնության ցուցաբերման նպատակով բեռների, համապատասխան ուժերի և մասնագետների անհապաղ տեղափոխման աշխատանքների

իրականացում:

8. Զրամատակարարում և սննդով ապահովում.

Տուժածներին ջրով և սննդով ապահովման միջոցառումների իրականացում:

9. Վտանգավոր նյութերի ոչնչացում և պահպանում.

Պայթուցիկ և այլ տեսակի վտանգավոր նյութերի անվտանգ պահպանությանը և ոչնչացմանն ուղղված միջոցառումների իրականացում:

Գլուխ 263. Օգնության ընդունման համակարգը

Երևան քաղաքի ԱԻ մշտական գործող հանձնաժողովը օգնության ընդունումը իրականացնում է հետևյալ ուղղություններով՝

1. Արձագանքող ստորաբաժանումների և կազմավորումների հետ տեղեկատվության փոխանակում և համատեղ օգտագործում.

Արձագանքող ստորաբաժանումները և կազմավորումները որոշում և ճշգրտում են ստեղծված իրավիճակը, իրականացնում են տեղեկատվության փոխանակում և համատեղ օգտագործում:

2. Կապի ստորաբաժանումների մասնակցությունը.

Արձագանքող ստորաբաժանումների և կազմավորումների գործունեության համակարգման, կապի ապահովման նպատակով ներգրավվում են կապի ստորաբաժանումները:

3. Արձագանքող կազմավորումների և ուժերի բաշխում.

Աշխատանքների առավել արդյունավետ իրականացման նպատակով Երևան քաղաքի ԱԻ մշտական գործող հանձնաժողովի կողմից արձագանքող ստորաբաժանումների և կազմավորումների հետ համատեղ արձագանքում իրականացնող այլ ուժերի ճիշտ բաշխում՝ ըստ աշխատանքային տեղամասերի:

4. Կազմավորումների տեղաշարժման ղեկավարում.

Այն ծառայությունը, որն ընդունում է օգնության հասած կազմավորումներին, ընտրում է դրանց հավաքակետերը, տեղաշարժման ուղիները և ուղղությունները, որպես օգնություն ստացված բեռների բաշխման կետերը և այլն:

5. Ուղղաթիռների վայրէջքի հրապարակների տրամադրում.

Օգնության տրամադրման մասին հայտերի ներկայացմանը զուգահեռ արձագանքող ստորաբաժանումներին հատկացվում են ուղղաթիռների վայրէջքի համար նախատեսված համապատասխան հրապարակներ:

6. Արձագանքող ստորաբաժանումներին և կազմավորումներին գույքով և սարքավորումներով ապահովում.

Արձագանքող կազմավորումները իրենց գործունեության իրականացման համար արդեն իսկ պետք է ապահովված լինեն համապատասխան գույքով և սարքավորումներով, սակայն Երևան քաղաքի ԱԻ մշտական գործող հանձնաժողովը կարող է ստացված գույքից և սարքավորումներից հատկացումներ անել համապատասխան կազմավորումներին ներկայացված հայտերի հիման վրա:

7. Արձագանքող ստորաբաժանումներին և կազմավորումներին կացարաններով ապահովում կամ դաշտային ճամբարի ծավալում.

Երևան քաղաքի ԱԻ մշտական գործող հանձնաժողովը արձագանքող կազմավորումներին ապահովում է կացարաններով կամ դաշտային ճամբար ծավալելու համար համապատասխան տարածքով:

Գլուխ 264. Հարևան մարզերին օգնության դիմելու կարգը

Ելնելով աղետի մասշտաբներից, ավերվածությունների ծավալից, առկա արձագանքող ստորաբաժանումների քանակից և հազեցվածությունից՝ Երևան քաղաքի ԱԻ մշտական գործող հանձնաժողովը կարող է որոշում կայացնել այն մասին, որ ստեղծված իրավիճակում Երևան քաղաքի արձագանքող ստորաբաժանումների և ուժերի քանակը փրկարարական, արձագանքման և վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար բավարար չէ, որից հետո հայտ ներկայացնել ՀՀ ԱԻ հանրապետական հանձնաժողովին՝ օգնության նպատակով մարզային ուժերի ներգրավվման համար:

Գլուխ 265. Օգնության տրամադրման մասին հայտի բովանդակությունը

Օգնության ստացման նպատակով Երևան քաղաքի ԱԻ մշտական գործող հանձնաժողովը ՀՀ ԱԻ հանրապետական հանձնաժողովին ներկայացնում է համապատասխան հայտ, որում նշվում է հետևյալ տեղեկատվությունը՝

1. Աղետի հետևանքով ստեղծված իրավիճակը և օգնության դիմելու պատճառները.
2. Այն կազմակերպությունների և գերատեսչություններին ցանկը, որոնց անհրաժեշտ է օգնություն.
3. Անհրաժեշտ գույքի, սարքավորումների, տեխնիկայի և այլ անհրաժեշտ միջոցների ցուցակը և քանակը.
4. Օգնության անհրաժեշտ ժամանակահատվածը.
5. Այն վայրերը, որտեղ անհրաժեշտ է ուղարկել օգնությունը.
6. Գործունեության բնույթը, որին անհրաժեշտ է տրամադրել օգնություն:

Գլուխ 266. Միջազգային օգնության ստացման համար դիմելու կարգը

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ ՀՀ ԱԻ հանրապետական հանձնաժողովը որոշում է ընդունում դիմել միջազգային հանրությանը՝ նրանց կողմից օգնություն ստանալու նպատակով:

Միջազգային օգնություն ստանալու նպատակով ՀՀ ԱԻ հանրապետական հանձնաժողովը ներկայացնում է համապատասխան հայտ: Հայտում նշվում է՝

1. Դիմում՝ ուղղված ՄԱԿ-ի մարդասիրական գործերի համակարգման գրասենյակին՝ որոնողափրկարարական աշխատանքների իրականացման, ինչպես նաև ֆինանսական, մարդասիրական և տեխնիկական աջակցության տրամադրման վերաբերյալ:
2. Դիմում՝ ուղղված Կարմիր խաչի միջազգային ֆեդերացիային՝ բժշկական օգնության ցուցաբերման, հակահամաճարակային միջոցառումների իրականացման, սննդամթերքով և ջրով ապահովման վերաբերյալ:
3. Դիմում՝ ուղղված ԱՊՀ ԱԻ միջպետական խորհրդին՝ որոնողափրկարարական միջոցառումների իրականացման աջակցության վերաբերյալ:
4. Դիմում՝ ուղղված Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպությանը՝ տեխնիկական և մարդասիրական օգնության տրամադրման վերաբերյալ:

Գլուխ 267. Միջազգային օգնության ստացում

Երևան քաղաքի ԱԻ մշտական գործող հանձնաժողովը դիմում է ԱԻ հանրապետական հանձնաժողովին՝ միջազգային օգնության ստացման համար: Միաժամանակ, համապատասխան ծառայությունների հետ իրականացնում է համակարգման աշխատանքներ՝ կապված միջազգային օգնության ստացման գործընթացի պլանավորման հետ (ըստ օգնության տեսակի, ծավալների, բնույթի և այլն): Ըստ օգնության տեսակի իրականացվում են օգնության ընդունման, տեղափոխման, պահեստավորման, բաշխման համակարգման և այլ միջոցառումներ:

Միջազգային օգնությունը կարող է տրամադրվել հետևյալ ուղղություններով՝

1. Որոնողափրկարարական միջոցառումներ (նաև փրկարար շների մասնակցությամբ)։
2. Բուժօգնության տրամադրում (բուժանձնակազմ, դեղորայք, բուժսարքավորումներ և այլն)։
3. Տեխնիկական աջակցություն (օբյեկտների շտապ վերականգնում)։
4. Տարահանվողների տեղաբաշխում (արագ կառուցվող ժամանակավոր կացարանների, վրանների տրամադրում, ժամանակավոր վրանային և այլ ավանների կառուցում)։
5. Սննդամթերքի տրամադրում։
6. Խմելու ջրի տրամադրում։
7. Առաջին անհրաժեշտության իրերի տրամադրում (հագուստ, ծածկոցներ և այլն)։
8. Կապի սարքավորումների և միջոցների տրամադրում։
9. Տրանսպորտային միջոցների տրամադրում (ավտոբուսներ, բեռնատար և մարդատար մեքենաներ)։
10. Ֆինանսական միջոցների (հանգանակությունների) տրամադրում:

2) Մաքսային ընթացակարգերի իրականացման և մուտքի արտոնագրերի (վիզաների) տրամադրման պարզեցված կարգը:

2) ՀՀ ԱԻ հանրապետական հանձնաժողովի համապատասխան աշխատանքային խումբը ճշգրտում է տրամադրվելիք օգնության տեսակը, քանակը, միջազգային ուժերի կազմը, փոխանցում է այս տեղեկատվությունը համապատասխան ծառայություններին և միջնորդում մաքսային ընթացակարգերի պարզեցված կարգով իրականացման և մուտքի արտոնագրերի (վիզաների) պարզեցված կարգով տրամադրման համար:

Գլուխ 268. Կամավորների ընդունում

1. Ուժեղ երկրաշարժի դեպքում կամավորական ուժերի արդյունավետ ներգրավման և օգտագործման նպատակով, ՀՀ ԱԻ հանրապետական հանձնաժողովին կից, քաղաքապետարանի առողջապահության վարչության կողմից ստեղծվում են հետևյալ երկու կազմակերպությունները՝

2. Ուժեղ երկրաշարժից հետո Երևան քաղաքի ԱԻ մշտական գործող հանձնաժողովին կից ստեղծվում է «Կամավորների համար ԱԻ տեղեկատվական կենտրոն», որը տրամադրում է տեղեկատվություն ստեղծված իրավիճակի, ավերածությունների, տուժածների և կամավորական ուժերի անհրաժեշտության վերաբերյալ: «Կամավորների համար ԱԻ տեղեկատվական կենտրոն»-ը կապ է հաստատում կամավորական կազմավորումների հետ, դիմում է ներկայացնում կամավորական ուժերի հատկացման համար, համակարգում է նրանց

աշխատանքները, գործում է որպես քաղաքային մակարդակի կամավորական ուժերի հետ աշխատող տեղեկատվության ստացման և փոխանցման կենտրոն: Այս կենտրոնը նաև աջակցում է աղետի գոտու տարբեր տեղամասերում «Կամավորական ուժերի հավաքագրման կենտրոններ»-ի ստեղծման գործում:

3. «Կամավորների համար ԱԻ տեղեկատվական կենտրոն»-ի գործունեության հիմնական ուղղություններն են՝

- 1) Երևան քաղաքի փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի հետ համատեղ աղետի վերաբերյալ տեղեկատվության ստացում և փոխանցում:
- 2) Աղետի գոտու տարբեր տեղամասերում «Կամավորական ուժերի հավաքագրման կենտրոնների» ստեղծման և աշխատանքների համակարգման գործում աջակցության ցուցաբերում:
- 3) Համագործակցություն ԱԻ արձագանքման հանրապետական և կամավորական ուժերի հետ:

Գլուխ 269. Աղետի գոտու տարբեր տեղամասերում ստեղծվող «Կամավորական ուժերի հավաքագրման կենտրոններ»

1. Ուժեղ երկրաշարժից հետո, Երևան քաղաքի ԱԻ մշտական գործող հանձնաժողովի կողմից, Երևանի քաղաքապետարանի առողջապահության վարչության հետ համատեղ, Երևան քաղաքի փրկարարական վարչության համայնքային բաժիններին կից ստեղծվում են «Կամավորական ուժերի հավաքագրման կենտրոններ»: Այս կենտրոնները, ելնելով ստեղծված իրավիճակից, իրականացնում են կամավորների հավաքագրման, այդ ուժերի գործունեության համար անհրաժեշտ համապատասխան միջոցների, սարքավորումների և գույքի ձեռք բերման աշխատանքներ, ինչպես նաև հայտեր են ներկայացնում համապատասխան անձնակազմի ներգրավվման համար:

2. Աղետի գոտու տարբեր տեղամասերում ստեղծվող «Կամավորական ուժերի հավաքագրման կենտրոն»-ները աշխատանքներ են իրականացնում հետևյալ ուղղություններով՝

1) Կամավորական ուժերի անհրաժեշտության պարզաբանում և տեղեկատվության տրամադրում:

2) Կամավորական ուժերի անհրաժեշտության և հատկացման մասին հայտի ներկայացում, Երևան քաղաքի փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի հետ կապի հաստատում:

3) Կամավորների հավաքագրում, կամավորների հետ աշխատանքների իրականացման գործում ներկայացուցչության դերակատարման իրականացում:

4) Կամավորական գործունեության մասին հավաքագրվող կամավորների նախնական հրահանգավորում (գործունեության տեսակները և բովանդակությունը, բնակեցման վայրերը և այլն):

5) Քաղաքի տվյալ համայնքում կամավորական ուժերի գործունեության մասին տեղեկատվության հավաք և ամփոփում:

6) Համագործակցություն Երևան քաղաքի փրկարարական վարչության համայնքային բաժինների հետ:

7) Համագործակցություն հասարակական և ոչ առևտրային կազմակերպությունների, այլ կամավորական կազմավորումների հետ:

Բաժին 27 Տարահանում և փրկարարական աշխատանքներ

Գլուխ 270. Ընդհանուր դրույթներ

Երևան քաղաքի բնակչությանը սպառնացող վտանգ կամ առաջացած ԱԻ-ի դեպքում, անմիջապես իրականացվում է քաղաքի ԱԻ և տարահանման հանձնաժողովների հավաք և օպերատիվ կերպով կազմակերպում են տարահանման միջոցառումները և փրկարարական աշխատանքները, ինչպես ցույց է տրված աղյուսակ 84-ում

Աղյուսակ 84 Փրկարարական և տարահանման գործողությունների ընդհանուր տեսքը

	Աղետի ստուգումից հետո		
	1 ժամ	24 ժամ	72 ժամ
Մարմին	Զորահավաքի ընթացք	Արագ արձագանքման ընթացք	Հետևանքների վերացման և վերականգնողական աշխատանքների ընթացք
Տարահանման շտաբի ձևավորում և աշխատակիցների հավաքագրում			
Տարահանման շտաբ	Տարահանման կետերի ընտրում և նորերի ծավալում: Տարահանման կետերի կառավարում և ազդարարման գոտիների կարգավորում: Տեղակայման վայրերում շարայույնների շարժման կարգավորում, տուժած բնակչության ընդունում: Տարահանվողների բնակելի և հիգիենիկ կարիքների բավարարում		
Փրկարար ծառայության (ԵՓՎ) արագ արձագանքման շտաբ	Փրկարարական աշխատանքների կազմակերպման շտաբի ձևավորում և աշխատակիցների հավաք Փրկարարական աշխատանքների կատարում և հրատապ բժշկական օգնության ցուցաբերում		

Գլուխ 271. Տարահանման նախապատրաստման առաջարկության և տարահանման կազմակերպում, անցկացում

1. Աղետի առաջացման ժամանակ բնակչության կյանքի և առողջության պահպանման համար, ինչպես նաև մեծամասշտաբ վնասներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է նախատեսել և կատարել տարահանում:

2. Չափորոշիչները, որոնք հիմք են ծառայում հայտարարելու տարահանման նախապատրաստում, համարվում են հետևյալ գործոնները, եթե սկսում է իրավիճակը բարդանալ և անհապաղ գործողությունների անհրաժեշտություն է առաջանում, հայտարարվում է տարահանման մասին, մասնավորապես՝

- 1) երկրաշարժի ժամանակ, երբ բնակչության կյանքին վնաս է սպառնում հրդեհի տարածման և գազի արտահոսքի հետևանքով,
- 2) երբ երկրաշարժի հետևանքով առաջանում է սովյալ գոտում բնակվող բնակչության կյանքի համար վտանգավոր սողանք, գետերի հեղեղում կամ հեղեղման և սողանքի սպառնալիք,

- 3) եթե արտակարգ իրավիճակների կամ տարահանման հանձնաժողովի նախագահը, ինչպես նաև այլ ղեկավար մարմիններ գտնում են դրա անհրաժեշտությունը՝ ելնելով աղետի հանգամանքներից:

Այստեղ այլ ղեկավարների հասկացության տակ հասկացվում են հետևյալ պաշտոնատար անձանց՝ վարչական շրջանի ղեկավարը, ԵՓՎ պետը:

Գլուխ 272. Պաշտոնատար անձիք, որոնք կարող են նախապատրաստել և հրամայել կատարել տարահանում.

1. Նախապատրաստել կամ հրամայել կատարել տարահանում. հայտարարվում է կազմակերպված ձևով արտակարգ իրավիճակների հանձնաժողովի նախագահի կողմից ՀՀ ԱԻՆ ՓԾ հետ համաձայնեցնելով,

2. Դրա հետ միասին այն դեպքերում, երբ իրադրությունը թույլ չի տալիս սպասել տարահանման հրամանի ստացմանը, արտակարգ իրավիճակների հանձնաժողովի նախագահի կողմից կամ անմիջական վտանգ է սպառնում բնակչության կյանքի և առողջության համար, նման դեպքերում տարահանման հրաման կարող է տրվել վարչական շրջանի ղեկավարի կողմից: Այն անձը, որը հայտարարել է տարահանման մասին, անմիջապես պետք է այդ մասին զեկուցի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի նախագահին:

Գլուխ 273. Տարահանման նախապատրաստման կարգադրության բովանդակությունը

Արտակարգ իրավիճակների հանձնաժողովի նախագահի կամ այլ ղեկավարի կողմից տարահանման նախապատրաստման կամ անցկացման հրամանն իր մեջ ներառում է կետեր, որոց կատարումը կապահովի քաղաքացիների արագ և անվտանգ տարահանումը:

Աղյուսակ 85 Տարահանման նախապատրաստման կամ անցկացման կարգադրության կետեր

- | |
|---|
| <ol style="list-style-type: none">1. Պատճառ, որ պահանջում է կատարել տարահանում,2. Տարածք, որտեղից իրականացվում է տարահանում,3. Տարահանման տեղանք և նրա բաշխվածությունը,4. Տարահանման երթուղին,5. Կարևոր հիշեցումներ |
|---|

Գլուխ 274. Տարահանման նախապատրաստման կարգադրության հաղորդումը

1. Տարահանման նախապատրաստման կամ կարգադրության հաղորդումը բնակչությանն իրականացվում է արտակարգ իրավիճակների հանձնաժողովի նախագահի կամ այլ ղեկավարի կողմից, կարգադրությունը ներառում է՝

1) տրվում է հանձնարարական տարահանման հանձնաժողովի նախագահին հետևյալ միջոցառումների վերաբերյալ (տես Աղյուսակ 86)

Աղյուսակ 86 Տեղեկատվության փոխանցման ձևը

1. Տարահանման նախապատրաստման և անցկացման հրահանգը հասցնել տվյալ տարածքի բնակչությանը քաղաքային շրջանների, ավտոմոբիլային ընդհատվող ճայնային ազդանշանների, բարձրախոսների և այլ միջոցներով:
2. Տարահանման նախապատրաստման և անցկացման որոշման մասին տեղեկացնել այն կազմակերպություններին, որոնք պատրաստ են օգնելու:
3. Քաղաքային ինտերնետ կայքում տեղադրվում է տեղեկատվություն տարահանման նախապատրաստման և անցկացման վերաբերյալ, որը կառավարվում է ԵՓՎ կողմից:

2) Հեռահաղորդակցման միջոցներին տեղեկատվություն տրամադրվում է այն դեպքում, երբ անհրաժեշտություն է առաջանում տարահանման նախապատրաստման և անցկացման վերաբերյալ որոշումը հասցնել այն տարածքներին, որոնք դժվարամատչելի են: Ահ հանձնաժողովի նախագահը տալիս է հարցազրույց տարբեր ՋԼՄ-ների միջոցով:

3) Շահագրգիռ կազմակերպությունների ազդարարում

Ահ հանձնաժողովի նախագահի կողմից տարահանման կազմակերպման կամ անցկացման հրահանգ ստանալուց կամ հրահանգի ծանուցում տալուց անհրաժեշտ է այլ մարդկանց ևս ծանուցել տվյալ հրահանգի բնույթի վերաբերյալ արտակարգ իրավիճակների ծառայություններին և մարմիններին:

Գլուխ 275. Տարահանման վերաբերյալ զեկույց

1. Տարահանման հանձնաժողովի նախագահը կամ այլ ղեկավարը, որը տվել է տարահանման նախապատրաստման և անցկացման հրահանգը կամ ստացել է հրահանգ տարահանման վերաբերյալ և հաղորդել է ուրիշ մարմիններին ու կազմակերպություններին, Ահ հանձնաժողովի նախագահին զեկուցում է համապատասխան կետերով (տես Աղյուսակ 87)

2. Ահ հանձնաժողովի նախագահը, որը հայտարարել է տարահանման նախապատրաստման և անցկացման վերաբերյալ կարգադրությունը կամ ստացել է զեկույց տարահանման նախապատրաստման և անցկացման վերաբերյալ տարահանման հանձնաժողովից կամ ուրիշ ղեկավար մարմիններից, անմիջապես պետք է զեկուցի Ահ հանրապետական հանձնաժողովի նախագահին աղյուսակ 87-ում նշված կետերով:

Աղյուսակ 87 Կենտրոնական պետական մարմիններին զեկուցվող կետեր

1. Անձը, որը հայտարարել է տարահանման նախապատրաստման և անցկացման վերաբերյալ:
2. Հայտարարության ժամը և օրը:
3. Հայտարարության համար ինչ է հիմք ծառայել:
4. Տարածք որտեղից կատարվում է տարահանում:
5. Տարահանվող ընտանիքների և մարդկանց քանակը:
6. Տարահանման վայրը:

Գլուխ 276. Տարահանման նախապատրաստման և անցկացման հրահանգի կասեցումը

Տարահանման անհրաժեշտություն ներկայացնող պատճառների վերանալու դեպքում Ահ հանձնաժողովի նախագահը անմիջապես այդ մասին հայտարարություն է տալիս հասանելի կապի միջոցներով, տեղեկատվությունը տեղադրում է Երևանի քաղաքապետարանի ինտերնետ կայքում և զեկուցում է Ահ հանրապետական հանձնաժողովի նախագահին:

Գլուխ 277. Տարահանման կետերի ծավալումը և նրանց կառավարումը

Տարահանման նախապատրաստման և անցկացման հրահանգ ստանալուց հետո նախապատրաստվում է տարահանվող մարդկանց ընդունում թվով 165 ԺՏԿ-ներում: Եթե սեյսմիկ աղետից հետո այդ տեղամասերից որևէ մեկում նկատվում է վտանգ, ապա տարահանման հանձնաժողովի նախագահին անհապաղ որոշում է ընդունում փակել տեղամասը և այդ տեղամասի փոխարեն տարահանվողներին տեղավորել ուրիշ ընդունման կետում, և այդ մասին տեղյակ է պահվում բնակչությանը:

Գլուխ 278. Տարահանվողների ընդունման նախապատրաստումը

Եթե MSK սանդղակով երկրաշարժի ուժգնությունը կազմում է 4 և ավելի բալ, ինչպես նաև, երբ հայտարարվում է տարահանման նախապատրաստման և տարահանման միջոցառումների սկսելու մասին, տարահանման հանձնաժողովի կողմից վարչական շրջաններ են գործուղվում պատասխանատու աշխատողներ: Գործուղված պատասխանատու անձինք ստուգում են ընդունման կետերի անվտանգությունը և այդ մասին զեկուցում տարահանման հանձնաժողովին: Դրա հետ միասին նույն կետեր են բերում պահեստում գտնվող դյուրակիր ռադիոկապի միջոցներ, ջուր, սննդամթերք և ուրիշ միջոցներ՝ նախապատրաստվելով տարահանվողների ընդունմանը:

Գլուխ 279. Տարահանվողների թվի վերահսկում

Պատասխանատու անձինք տվյալ կետից զեկուցում են տարահանման հանձնաժողովին տարահանվողների թվաքանակի, ինչպես նաև նրանց մեջ գտնվող հիվանդների, վիրավորների և այլ անհրաժեշտ հարցերի մասին: Տարահանման հանձնաժողովը հավաքում է այդ զեկույցները, ընդհանրացնում դրանք և զեկուցում ԱԻ հանրապետական հանձնաժողովի նախագահին:

Գլուխ 280. Տարահանման երթուղիներում շարժման կառավարում

1. Տարահանման հանձնաժողովը, համագործակցելով հրշեջ-փրկարարական ջոկատների, ոստիկանության և այլ համագործակցող մարմինների հետ, կազմակերպում են տարահանվողների շարժը տարահանման երթուղիներով՝ ապահովելով նրանց արագ և անվտանգ տարահանումը:

2. Տարահանման հանձնաժողովը տալիս է հանձնարարական վարչական շրջանների ղեկավարներին՝ անվտանգ տարահանման երթուղիներ նախատեսման և տարահանման երթուղու վտանգավոր հատվածներում պատասխանատուների և երթևեկության կարգավորողների նշանակման համար:

3. Վարչական շրջանի ղեկավարը ԵՓՎ հետ միասին կազմակերպում են տարահանման ընթացքում մեծահասակներին, երեխաներին, հիվանդներին և այլ անձանց օգնության ցուցաբերումը:

Գլուխ 281. Տազնապի գոտու հայտարարում

Աղետի առաջացման կամ դրա սպառնալիքի դեպքում կամ այլ հատուկ դեպքերում՝ մարդկանց առողջության և կյանքի պահպանման նպատակով ձևավորվում են «Տազնապի գոտի»-ներ:

Աղետի առաջացման կամ դրա սպառնալիքի դեպքում ԱԻ և տարահանման հանձնաժողովների նախագահները կամ այլ ղեկավարներ, մարդկանց կյանքի ապահովման նպատակով կարող են սահմանել «Տազնապի գոտի»: Որից հետո տալիս են հանձնարարական ոստիկանությանը շրջափակելու այդ գոտին կամ գոտիները՝ կողմնակի անձանց մուտքը սահմանափակելու կամ արգելելու նպատակով: Արգելվում կամ սահմանափակվում է բոլորի մուտք ու ելքը, ովքեր ներգրավված չեն արտակարգ իրավիճակների հետևանքները վերացնելու գործողություններում:

Գլուխ 282. Տուժածների ընդունում

1. Այն բնակիչները, որոնք աղետի հետևանքով կորցրել են իրենց բնակարանները կամ չեն կարող բնակվել այնտեղ՝ վերջիններին պատճառված վնասների հետևանքով և այլ նմանատիպ հանգամանքներում, նույնպես տարահանվելու ենթակա են:

2. Ընդունման ենթակա է բնակչությունը, որոնց սպառնում է վտանգ, ինչպես նաև այն անձինք, որոնք աղետի հետևանքով կորցրել են մշտական բնակության վայրերը՝ տան փլուզման կամ վնասված լինելու պատճառով:

3. Հիմնականում տարահանման վայրը ընդունման կետն է: Որոշ դեպքում հասարակական նշանակության օբյեկտները կարող են դառնալ ԺՏԿ-ներ, որոնք և ընդունում են բնակչությանը՝ դառնալով լրացուցիչ տեղաբաշխման կետեր:

4. Հիմնականում ընդունումը կատարվում է նախօրոք որոշված տարածքներում (ԺՏԿ-ում): Անհրաժեշտության դեպքում տեղաբաշխումը կարող է էականորեն փոխվել՝ ելնելով ստեղծված իրավիճակից:

5. Տարահանվածները մնում են տարահանման վայրերում այնքան ժամանակ, մինչև ապահովվի բնակարանների անվտանգությունը կամ բնակարանը կորցրածներին ապահովվեն նոր մակերեսով: ԺՏԿ-ներում մարդկանց ընդունումը և բնակվելը կարող է տևել 3 ժամից մինչև 3 օր:

Գլուխ 283. Տարահանման տեղամասերի ծավալումը և զեկույցներ

ԺՏԿ-երի ծավալումն իրականացվում է համաձայն 85 աղյուսակի, բնակչության տարահանումը սկսելուց հետո: Այն դեպքերում, երբ աղետի հետևանքով ստեղծվում է այնպիսի իրավիճակ, երբ հնարավոր չէ սպասել և անհրաժեշտ է ձեռնարկել անհապաղ միջոցառումներ՝ ԺՏԿ-ները կարող են ծավալվել վարչական շրջանի ղեկավարի որոշմամբ:

Գլուխ 284. Զեկույց տարահանման ընթացքի մասին

1. ԹՄ/Համատիրության տարահանման համար պատասխանատուները, համագործակցելով բնակչության և տարահանման կետերի պատասխանատուների հետ ճշգրտում և զեկույցում է տարահանման հանձնաժողովի նախագահին տեղեկություններ այդ

տեղամասում գտնվող տարահանվողների վերաբերյալ անուն, ազգանուն, հասցեն, քանակը և առողջական վիճակ, հիվանդներ և վիրավորներ, առաջին բուժօգնության ապահովվածություն և այլ կարևոր տեղեկություններ: Ինչպես նաև տրամադրում է տարահանման հանձնաժողովին և տարահանման կետերի պատասխանատուներին տեղեկատվություն իրադրության վերաբերյալ, որը ստացվել է ԵՓՎ-ից կամ այլ կազմակերպություններից: ԱԻ հանձնաժողովը և վարչական շրջանների ղեկավարներն ընդունում են որոշումներ, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով տարահանվողների բնակ-կենցաղային պայմաններին և նրանց անձնական կյանքին վերաբերող հարցերին:

2. Կառավարումը վարչական շրջաններում իրականացվում է ստեղծված ԱԻ հանձնաժողովների միջոցով, որի նախագահին է հանդիսանում վարչական շրջանի ղեկավարը

3. Վարչական շրջանի ղեկավարը պատասխանատու անձերից ընդունում է զեկույց խմելու ջրով, սննդամթերքով, առաջին անհրաժեշտության պարագաներով և զուգարաններով ապահովվածության, տարահանվածների առողջական վիճակի և այլ հարցերի վերաբերյալ և անհրաժեշտության դեպքում օպերատիվ կերպով իրականացնում ծագած հարցերի կարգավորում՝ համաձայնեցնելով շահագրգիռ կազմակերպությունների հետ:

4. Տարահանման մարմինները, գործելով խուճապի և իրարանցման պայմաններում, պետք է պատրաստ լինեն ապահովվելու ճշգրիտ աշխատանքի կատարումը, անվտանգությունը, կարգ ու կանոնը տարահանման վայրերում՝ համաձայն գործող հրահանգների: Այդ մարմինների հիմնական պարտականությունները բերված են աղյուսակ 88-ում:

Աղյուսակ 88. Կենսագործունեության պայմանների ապահովումը տարահանման ժամանակ

1. Վնասների և սոցիալ-կենցաղային իրավիճակի մասին տեղեկատվության հավաքում,
2. Պատրաստի սննդի, բնամթերքի և օգնության ուրիշ պարագաների բաշխում,
3. Օգնության ցուցաբերում ծերերին, հաշմանդամներին և այլ անձանց, որոնք ունեն դրա կարիքը,
4. Տարահանվողների շարասյան շարժման կարգավորում, աշխատանքի բաշխում համաձայն հրահանգի,
5. Շարժական զուգարանների տեղադրում, ջրի զտման սարքավորումների տեղադրում, հակահրդեհային և այլ սանիտարահիգիենիկ միջոցառումներ,
6. Վիրավորներին առաջին բուժօգնության ցուցաբերում և բժշկական հիմնարկներ ուղարկում,
7. ՓԱՎՎԱ-ի իրականացում՝ օգտագործելով վթարափրկարարական միջոցներ
8. Ուրիշ անհրաժեշտ գործունեություններ.

Գլուխ 285. Տարահանման լրացուցիչ տեղերի ծավալում և նրանց կառավարում

Եթե տարահանման տեղերը բավարար չեն, ապա վարչական շրջանի ԱԻ հանձնաժողովն այդ մասին հայտնում է քաղաքի տարահանման հանձնաժողովին, որը և ծավալում է լրացուցիչ տարահանման տեղամասեր, հրապարակներում, հասարակական նշանակության օբյեկտներում և այլ նմանատիպ վայրերում, որոնք գտնվում են տարահանման տեղամասի մոտակայքում: Լրացուցիչ տարահանման կետերի ծավալումը պետք է կատարվի հիմնական տարահանման կետերի նմանությամբ, լրացուցիչ տարահանման տեղամասերի ծավալման դեպքում տարահանման հանձնաժողովն այդ մասին զեկուցում է արտակարգ

իրավիճակների հանձնաժողով:

Գլուխ 286. Խնամքի կարիք ունեցողների տարահանում և օգնության ցուցաբերում

Անհրաժեշտ է օպերատիվ և ճշգրիտ կերպով պարզել իրադրությունը, որը վերաբերում է մեծահասակներին, վիրավորներին և այլ անձանց հասցված վնասներին: Արտակարգ իրավիճակներում խնամքի կարիք ունեցողներին պետք է ցուցաբերվի օգնություն տարահանման երթուղիներում, տարահանման վայրերում և տեղաբաշխման կետերում, ինչպես նաև իրականացնել նրանց անհրաժեշտ սոցիալական և բժշկական ապահովումը:

Գլուխ 287. Քաղաքացիների և տեղական հասարակության դերը

1. Սեյսմիկ աղետների ժամանակ հատուկ խնամքի կարիք ունեցող բնակչությանը ԹՄ, բնակչությունը և կամավոր կազմակերպությունները, հիմնվելով փոխօգնության սկզբունքի վրա, համայնատիրության կամ վարչական շրջանի ԱԻ հանձնաժողովի աջակցմամբ պետք է իրականացնեն անհրաժեշտ օգնության ակտիվ գործողություններ:

2. Կամավոր կազմակերպությունները վարչական շրջանի ԱԻ հանձնաժողովի հետ միասին հատուկ խնամքի կարիք ունեցող անձանց նախօրոք պատրաստված ցուցակներով, պարզում են նրանց ճակատագիրը և եթե հայտնաբերում են նրանց մեջ անհայտ կորածներ, ձեռք են առնում համապատասխան միջոցառումներ:

Գլուխ 288. Հրատապ օգնության հիմնական սկզբունքները

1) Այն անձանց նկատմամբ, որոնց անհրաժեշտ է բժշկական օգնություն, անմիջապես կապ է հաստատվում բժշկական կազմակերպությունների հետ, կազմակերպվում է հոսպիտալացնում կամ այլ գործողություններ առողջության պահպանման նպատակով:

2) անձինք, որոնք կարիք հատուկ խնամքի ունեն, ինչը հնարավոր չէ կազմակերպել տարահանման տեղամասերում կամ տանը, ընդունվում են հատուկ տեղակայման վայրերում:

3) անհրաժեշտ է, որքան հնարավոր է պարզեցնել վարչարարական գործընթացները և ձգտել հնարավորինս արագ ցուցաբերել անհրաժեշտ ծառայություններ:

դ) մեծահասակների, վիրավորների և այլ անձանց, որոնք ունեն հատուկ խնամքի կարիք, ոչ միայն պետք է ցույց տրվի օգնություն, այլև անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ նրանց կենսունակությունը վերականգնելու ուղղությամբ:

4) խնամքի կարիք ունեցող անձանց անհրաժեշտ է ցուցաբերել երկարաժամկետ նախօրոք պլանավորված օգնություն, ինչը կամավորական կազմակերպությունների առաջնային խնդիրներից է, անհրաժեշտ է այդպիսի կազմակերպություններին և անհատներին տրամադրել պահանջվող տեղեկատվություն, համագործակցության առաջարկություն և ցուցաբերել անհարժեշտ աջակցություն:

5) տարահանման յուրաքանչյուր տեղամասում պետք է պարզել խնամքի կարիք ունեցող անձանց վիճակի և կանխել հնարավոր վատթարացման դեպքերը, անհրաժեշտության դեպքում ցուցաբերել հատուկ մասնագիտական խնամք:

Գլուխ 289. Օգնության ցուցաբերման համակարգի ձևավորումը

Տարահանման հանձնաժողովը պատասխանատու անձանցից պարզաբանում է խնամքի կարիք ունեցող անձանց վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվություն և անհրաժեշտության դեպքում կազմակերպում է օգնություն: Այս նպատակով կազմակերպվում է՝

1) Տարահանման տեղամասեր գործուղված պատասխանատու անձինք, համագործակցելով վարչական շրջանի ԱԻ հանձնաժողովի հետ, պարզաբանում և զեկուցում են տարահանման հանձնաժողով խնամքի կարիք ունեցող անձանց հասցեները, անուն, ազգանուն, առողջական վիճակը, հիվանդությունները, վնասվածքները և այլ անհրաժեշտ տեղեկություններ:

2) Վարչական շրջանի ԱԻ հանձնաժողովը պարզում է այն անձանց ցուցակը, որոնք ունեն խնամքի կարիք և բնակվում են տներում:

3) Տարահանման հանձնաժողովը, ելնելով տարահանման վայրերում ստեղծված իրավիճակից, 48 ժամվա ընթացքում երկրաշարժից հետո ձևավորում է ստուգման խմբեր և գործուղում է նրանց տարահանման վայրեր, որոնք առաջնահերթ զննման են ենթարկում այն անձանց, որոնք ունեն խնամքի կարիք: Տարահանման հանձնաժողովը դիմում է նաև սոցիալական ուղղություն ունեցող կազմակերպություններին համագործակցության համար և նրանց հետ կնքում է համաձայնագիր իրենց բնակարաններում ապրող խնամքի կարիք ունեցող անձանց մասին տեղեկություններ հավաքելու նպատակով:

4) ԹՄ պարզաբանում է հիմնական վնասի չափերը, որը հասցվել է տեղակայման վայրերին և այդ մասին զեկուցում են տարահանման հանձնաժողով:

Գլուխ 290. Կենցաղային օգնություն տուժածներին

Տարահանման մարմինը կազմակերպում է տարեցների, վիրավորների և այլ անձանց, որոնք ունեն խնամքի կարիք, տեղաբաշխումը սոցիալական մասնագիտացված հաստատություններում, հասարակական բնակարաններում կամ տեղավորում է այլ քաղաքացիների բնակարաններում: Տարահանման հանձնաժողովը քննարկում և իրականացնում է օգնության ծրագրեր, որոնցով տրամադրում է սոցիալ-կենցաղային վարկեր, մատակարարում է կենցաղային ապրանքներով և այլն:

Գլուխ 291. Փրկարարական աշխատանքներ

Ենթադրվում է, որ երկրաշարժի ժամանակ կլինեն մարդկանց մեծաքանակ կորուստներ միաժամանակ մի քանի գործոնների ազդեցության շնորհիվ, դա առաջին հերթին հրդեհներն են, ինչպես նաև շինությունների փլուզումները, առարկաների շրջվելը, երկաթգծերի և ավտովթարները, վտանգավոր թունավոր նյութերի արտանետումը և այլն: ԱԻ հանձնաժողովը, համագործակցելով Փրկարար ծառայության հետ, պետք է ապահովի բնակչության անվտանգությունը՝ օգտագործելով այդ ուժերը և միջոցները փրկարարական աշխատանքներում և առաջին բուժօգնություն ցուցաբերելու նպատակով: Այն ուժերը և միջոցները, որոնք պետք է օգտագործվեն փրկարարական աշխատանքներում և բժշկական օգնության համար սերտորեն համագործակցելով ոստիկանության և այլ մարմինների հետ, պետք է ապահովեն աշխատանքների առավելագույն արդյունավետությունը հերթափոխային

բաշխման ճանապարհով:

1) ԱՒ հանձնաժողովը, որը գործում է ԵՓՎ հետ, իրականացնում է կազմակերպչական գործունեություն մարդկանց կյանքի փրկության և առաջին բուժօգնության ցուցաբերման ուղղությամբ՝ դրա համար օգտագործելով համագործակցող մարմինների անձնակազմը, վթարափրկարարական և հրատապ բուժօգնության միջոցները, անհրաժեշտության դեպքում ստեղծելով հատուկ փրկարարական ջոկատներ:

2) Բժշկական օգնություն աղետի տեղամասում ցուցաբերվում է առաջնահերթության կարգով, իսկ փրկարարական ջոկատներն ուղղորդվում են կենդանի մնացածներին փրկելու աշխատանքներին:

3) Վիրավորները փլատակների տակից ազատելուց հետո անմիջապես փոխանցվում են հրատապ բժշկական օգնության բրիգադներին՝ բժշկական հաստատություններ տեղափոխելու համար՝ հաշվի առնելով տուժածի ծանրության աստիճանը: Բժշկական հաստատություններ արագ տեղափոխման անհրաժեշտության դեպքում կիրառվում են ուղղաթիռներ:

4) Եթե ստեղծվում է այնպիսի իրավիճակ, որ չեն բավարարում փրկարարական ուժերը և միջոցները փրկարարական աշխատանքներ կատարելու և առաջին բուժօգնություն ցուցաբերելու համար, ապա վարչական շրջանի ԱՒ հանձնաժողովն այդ մասին զեկուցում է Երևանի ԱՒ հանձնաժողովին, որն իր հերթին դիմում է ԱՒ հանրապետական հանձնաժողով՝ անհրաժեշտ օգնության խնդրանքով:

5) Փրկարարական աշխատանքները, որոնք կատարվում են այլ երկրներից կամ մարզերից ներգրավված կամավորների կողմից, ղեկավարվում են ԱՒ հանձնաժողովի կողմից:

6) Մինչև բժշկական կետերի ծավալումն, առաջին բուժօգնություն ցուցաբերվում է տեղերում, առկա ուժերով և միջոցներով: Հիվանդներին և վիրավորներին օգնություն է ցուցաբերվում՝ օգտվելով ձեռքի տակ եղած կամ հրատապ բժշկության միջոցներով, փոխհամագործակցելով բժշկական հաստատությունների, հրշեջ ջոկատների, ոստիկանության աշխատակիցների, կամավոր կազմակերպությունների և բնակչության հետ:

7) փրկարարական աշխատանքների և հրատապ բժշկական օգնության ցուցաբերման համար բժշկական և փրկարարական տեխնիկայի անբավարարության դեպքում անհրաժեշտ լրացուցիչ տեխնիկայի և միջոցների ներգրավվումը կատարվում է մասնավորի հաշվին՝ նախապես կնքված պայմանագրերի հիման վրա:

Բաժին 28 Շտապ բժշկական օգնությունը /ՇԲՕ/, առողջապահությունը և սանիտարական պայմանները

Գլուխ 292. Շտապ բժշկական օգնությունը

Բժշկական ծառայությունը և սանիտարա-համաճարակային ծառայությունը ստեղծվում են որպես բժշկական ծառայության կազմում գործող շտապ արձագանքման շտաբ: Շտաբի կողմից ղեկավարվող գործողությունները բերված են աղյուսակ 89-ում

Աղյուսակ 89 ՇԲՕ ցուցաբերման ընդհանրացված բնութագիրը

Մարմին	Աղետի առաջացում		
	→ 1 ժամ →	24 ժամ →	72 ժամ
	Առաջնային արձագանքման փուլ	Շտապ արձագանքման փուլ	Վերականգնողական գործունեության փուլ
Շտապ բուժօգնության շտաբ	<ul style="list-style-type: none"> ○ Տուժածների և վիրավորների մասին տեղեկատվության հավաք ○ ՇԲՕ օբյեկտների ստեղծում ○ Բուժ-անձնակազմի տեղափոխում 	<ul style="list-style-type: none"> ○ Տուժածների և վիրավորների տեղափոխում ○ ՇԲՕ ցուցադրման գործունեություն ○ Բուժ-նշանակության գործիքների տրամադրում ○ Հոգեբանական օգնության ցուցաբերում ○ Այլ շրջաններից օգնության խնդրանք 	<ul style="list-style-type: none"> ○ Միջավայրի առողջության ապահովում ○ Օգնության ստացում

Գլուխ 293. ՇԲՕ օբյեկտների դասակարգումը

Շտապ արձագանքման շտաբը իրականացնում է տուժածների և վիրավորների, ինչպես նաև բուժապահովման օբյեկտների վնասի, այդ օբյեկտների կողմից տուժածների ընդունման մասին տեղեկատվության հավաք: Ստացված տեղեկատվության հիման վրա որոշվում են ՇԲՕ օբյեկտները: Շտապ արձագանքման շտաբը, անհրաժեշտության դեպքում, ԱԻ շտաբ է ներկայացնում տեղեկատվություն ՇԲՕ օբյեկտների վիճակի մասին:

Գլուխ 294. Բժշկական օգնության ցուցաբերման գործունեությունը

Արագ արձագանքման շտաբը կազմակերպում է բուժանձնակազմի տեղափոխումը հետևյալ կերպ՝

1. Շտապ արձագանքման շտաբը, համագործակցելով ավտոտրանսպորտային ծառայության հետ, կազմակերպում է շարժական բժշկական ջոկատների տեղափոխումը
2. Նրանց տեղափոխման համար օգտագործում են ավտոտրանսպորտային միջոցներ, որոնք գրանցված են հասարակական կարգի պահպանման շտաբում:
3. Ավտոտրանսպորտային միջոցների անբավարարության դեպքում տրանսպորտային միջոցներ են պահանջվում մոտակա շրջաններից:

Գլուխ 295. Վիրավորների և տուժածների տեղափոխումը

Տուժածներին, որոնց հնարավոր չէ օգնություն ցույց տալ տեղում, տեղափոխում են հիվանդանոցներ, որոնք գտնվում են տվյալ տարածքի սահմանից դուրս:

1) Առաջնային տեղափոխման համակարգը.

Շարժական բժշկական ջոկատները իրականացնում են տուժածների տարբերակում և սահմանում են օգնության ցուցաբերման առաջնահերթությունը

2) Երկրորդային տեղափոխման համակարգը.

Տուժածներին և վիրավորներին, որոնց բուժ. սպասարկումը քաղաքի բուժ. հաստատություններում հնարավոր չէ, տեղափոխում են այլ քաղաքներ, որոնց հետ ունեն փոխհամագործակցության համաձայնագրեր:

Գլուխ 296. ՇԲՕ ցուցաբերումը

Համապատասխան մասնագետներից ստանալով տեղեկատվություն համապատասխան օբյեկտների անվտանգության մասին՝ շտապ արձագանքման շտաբը սահմանում է այդ օբյեկտների կողմից տուժածների ընդունման կետերը:

Գլուխ 297. Բժշկական նշանակության գործիքներով ապահովումը

1. ՇԲՕ օբյեկտների կողմից օգտագործվող բժշկական սարքավորումները և նյութերը վերցվում են բժշկական ծառայության պահուստներից

2. Երկրաշարժի ժամանակ, դեղորայքների պակասի դեպքում, ձեռնարկվում են դրանք բուժ. Աշխատողներին տրամադրելու միջոցառումներ՝ օգտագործելով նախօրոք ձևավորված համակարգը

3. Սանիտարա-համաճարակային ծառայությունը օպերատիվ կերպով պարզում է վնասված օբյեկտները և իրականացնում է սանիտարական մշակում հատուկ նյութերով և միջոցներով:

Գլուխ 298. Հոգեբանական օգնություն

Շտապ արձագանքման շտաբը դիմում է տարբեր կազմակերպություններին լրացուցիչ անձնակազմ տրամադրելու խնդրանքով՝ նախօրոք ուսուցանված և պատրաստված կադրերին օգնելու համար, ձևավորում է հոգեբանական օգնության ցուցաբերման մասնագետների բրիգադներ, ուղարկում նրանց տարահանման առաջնային կետեր և այլն:

Գլուխ 299. Տարահանման կետերում սանիտարական հսկողություն

Ինֆեկցիոն հիվանդությունների պրոֆիլակտիկայի համար շտապ արձագանքման շտաբը անց է կացնում 90 աղյուսակում նշված գործունեությունը

Աղյուսակ 90 Ինֆեկցիոն հիվանդությունների պրոֆիլակտիկ գործունեությունը

1. Ինֆեկցիոն հիվանդությունների մասին տեղեկատվության նախնական հավաք
2. Կրծողների, միջատների առաջացման մասին ուսումնասիրության անցկացում, անհրաժեշտության դեպքում դեռատիզացիայի անցկացում և այլն:
3. Զուգարաններից օգտվելիս սանիտարական պայմանների պահպանման հրահանգավորում

4. Ինֆեկցիոն հիվանդությունների բռնկման դեպքում դեզինֆեկցիայի անցկացում
5. Ինֆեկցիոն հիվանդությունների պրոֆիլակտիկայի համար սարքավորումների և միջոցների ներդրում
6. Ինֆեկցիոն հիվանդությունների պրոֆիլակտիկայի միջոցների անբավարար լինելու դեպքում շահագրգիռ կազմակերպությունների հետ համագործակցության հայտի ներկայացում

Բաժին 29 Անհայտ կորածների որոնում և փրկում: Դիակների հավաքում

Գլուխ 300. Անհայտ կորածներ

Անհայտ կորածների որոնման և փրկման համար փրկարար ծառայությունը ստեղծում է արագ արձագանքման շտաբ: Աղյուսակ 91-ում ամփոփված են արագ արձագանքման շտաբի կողմից իրականացվելիք գործողությունները, ինչպես նաև ոստիկանության և հատուկ սպասարկման ծառայության կողմից իրականացվող դիակների հավաքման գործընթացը:

Աղյուսակ 91 Անհայտ կորածների որոնման և դիակների հավաքման հետ կապված գործունեության միասնական բնութագիր

ՄԱՐՄԻՆԸ	ԱՂԵՏ		24 ժամ
	72 ժամ	1 ժամ	
	Առաջնային գործունեության փուլ	Արագ արձագանքման փուլ	Վերականգնողական գործունեության փուլ
Արագ արձագանքման շտաբ	<ul style="list-style-type: none"> ○ Արագ արձագանքման շտաբի ստեղծում, աշխատակիցների հավաք ○ Անհայտ կորածների որոնում ○ Անհայտ կորածների փրկում և հետագա օգնության ցուցաբերում 		
Ոստիկանություն, սզո ծառայություններ		<ul style="list-style-type: none"> ○ Դիակների որոնում, ստեղծում ○ Դիակների փրկում, մահվան արձանագրում, դիակի ճանաչում, բարեկամներին հանձնում ○ Դիակների գնում ○ Թաղում 	<ul style="list-style-type: none"> տրամադրում, մահվան ճանաչում,

Գլուխ 301. Անհայտ կորածների որոնման և փրկման սկզբունքները

ԱԻ դեպքում, կապված ավերիչ երկրաշարժերի հետ, ԱԻ հանձնաժողովի նախագահը, կապված ավերվածությունների և կորուստների իրավիճակի հետ, անհրաժեշտության դեպքում, տալիս է հանձնարարություն արագ արձագանքման շտաբին իրականացնել անհայտ կորածների որոնում և փրկում՝ համագործակցելով ոստիկանության, բանակի և այլ մարմինների հետ:

Գլուխ 302. Որոնողափրկարարական աշխատանքների կառավարումը

1. Որոնողափրկարարական աշխատանքների թիրախային օբյեկտներ են հանդիսանում երկրաշարժի ժամանակ անհայտ կորած անձիք, երբ բացակայում է նրանց կենդանի լինելու

կամ չլինելու մասին տեղեկատվությունը:

2. Հայտարարությունների ընդունման կարգը հետևյալն է՝

1) Արագ արձագանքման շտաբը ստեղծում է ներկայացուցչություն՝ հայտարարություններ տալու համար այն անձանց վերաբերյալ, որոնց նկատմամբ անհրաժեշտ է իրականացնել որոնողափրկարարական աշխատանքներ: Հայտարարություն տվողից պարզում և գրանցում են այն անձանց տվյալները, որոնց անհրաժեշտ է փնտրել. ԱԱՀ, տարիքը, հասակը, սեռը, հագուստը և այլ անհրաժեշտ տվյալներ:

2) Արագ արձագանքման շտաբը իր աշխատակիցներին ուղարկում է հրդեհաշիջման, վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնող ծառայություններ, ոստիկանություն և այլ կազմակերպություններ՝ տեղեկատվությունը ճշտելու նպատակով:

3. Որոնողափրկարարական գործունեության կարգը հետևյալն է՝

1) Անհայտ կորածների որոնողափրկարարական աշխատանքներում առանցքային դեր է խաղում արագ արձագանքման շտաբը: Այդ գործընթացը կատարվում է արագ՝ սերտ համագործակցելով համապատասխան մարմինների, տարահանման հանձնաժողովների հակահրդեհային և փրկարարական ծառայությունների, ոստիկանության, բանակի և այլ ծառայությունների հետ:

Տվյալ դեպքում, յուրաքանչյուր կազմակերպություն գործում է իր գործառույթների շրջանակներում:

2) Արագ արձագանքման շտաբը նպաստում է որոնողափրկարարական աշխատանքների արդյունավետ կառավարմանը, որոնողափրկարարական աշխատանքներ իրականացնող ԱԻ կանխման և հետևանքների վերացման կազմակերպություններին տալիս է տեղեկատվություն անհայտ կորած անձանց վերաբերյալ:

3) Անհայտ կորածների որոնման և փրկման աշխատանքներում արագ արձագանքման շտաբը և այլ կազմակերպություններ օգտագործում են անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ, ավտոմոբիլային տրանսպորտ, ծանր տեխնիկա և այլն:

4) Արագ արձագանքման շտաբի կողմից իրականացվող որոնողափրկարարական գործողություններից հետո, առաջին բուժօգնության կազմակերպման համար, բժշկական ծառայության շտաբը համագործակցում է համապատասխան ծառայությունների և քաղաքի վարչական շրջանների հետ:

5) Թիկունքային ապահովման կարգը հետևյալն է՝

ա) ԱԻ տարածքային հանձնաժողովները իրականացնում են համակարգման և փոխգործակցության աշխատանքներ՝ որոնողափրկարարական աշխատանքների թիկունքային ապահովման ուղղությամբ (անվտանգության, երթևեկության կազմակերպում, հանրային իրազեկում և այլն): Այդ դեպքում նրանք հիմնվում են երկրաշարժերի, ԱԻ կանխման և հետևանքների վերացմամբ զբաղվող կազմակերպությունների հետ համագործակցության վրա:

բ) ԱԻ տարածքային հանձնաժողովները անհապաղ տեղեկություն են տրամադրում ԱԻ վերադաս հանձնաժողով անհայտ կորածների որոնման և փրկման, թիկունքային ապահովման վերաբերյալ, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, խնդրանքով դիմում են համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին՝ համագործակցել այն կազմակերպությունների հետ, որոնց հետ կան համապատասխան պայմանագրեր և համաձայնագրեր:

գ) ԱԻ հանձնաժողովի ղեկավարը ճշտում է անհայտ կորածների որոնման և փրկման,

թիկունքային ապահովման վերաբերյալ տեղեկատվությունը և խնդրանքով դիմում է համապատասխան կազմակերպություններին, որոնց հետ կան համապատասխան պայմանագրեր և համաձայնագրեր:

դ) Որոնողափրկարարական աշխատանքներում արդյունավետ է օգտագործել խոշոր վերամբարձ կռունկներ, էքսկավատորներ և այլ հողագործական ու շինարարական տեխնիկա: Այդ պատճառով, բացի որոնողափրկարարական խմբերում առկա տեխնիկայից, կազմակերպվում է տեխնիկայի ստացումը այն կազմակերպություններից և ընկերություններից, որոնց հետ կան պայմանագրեր:

Գլուխ 303. Դիակների հավաքում և այլ գործողություններ

Դիակների հավաքումը իրականացվում է համապատասխան կերպով: Այդ դեպքում մեծ չափով հաշվի է առնվում զոհվածի հարազատների և բարեկամների զգացմունքները:

Գլուխ 304. Դիահերձարանների կազմակերպում

ԹՄ տարահանման միավորների, ոստիկանության տարածքային բաժինների, և ԱԻ հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո, հատուկ սպասարկումների ծառայությունը ուղարկում են իր աշխատակիցներին յուրաքանչյուր վարչական շրջանում դիահերձարաններ բացելու համար:

Գլուխ 305. Սգո պարագաների մատակարարումը

Հատուկ սպասարկումների ծառայությունը դիմում է խնդրանքով համապատասխան կազմակերպություններին՝ դազադներով և սգո այլ պարագաներով ապահովելու համար:

Գլուխ 306. Դիակների հավաքման միջոցառումները

1. Դիակի հայտնաբերումը և դրա մասին տեղեկացումը իրականացվում է հետևյալ կերպ՝ աղետի վայրում դիակ հայտնաբերած անձիք այդ մասին անմիջապես հայտնում են ոստիկանության բաժանմունք կամ մոտակայքում գտնվող ոստիկանին, և (կամ) տվյալ վարչական շրջանի աշխատակազմի աշխատակցին: ԱԻ տարածքային հանձնաժողովի պատասխանատուները, քաղաքացիներից կամ վարչական շրջանի աշխատակազմի աշխատակիցներից ստանալով ինֆորմացիա դիակի հայտնաբերման վերաբերյալ, այդ մասին անհապաղ հաղորդում են ոստիկանության համապատասխան բաժին:

2. Դիակի զննումը և մահվան փաստի արձանագրումը իրականացվում է հետևյալ կերպ՝ ոստիկանությունը դիակի հայտնաբերման վայր է ուղարկում իր աշխատակիցներին, որոնք տեղում զննում են դին և արձանագրում մահը:

3. Դիակի մասնագիտական զննումը իրականացվում է հետևյալ կերպ՝

1) Դիակի մասնագիտական զննումը իրականացվում է դատաբժշկական փորձագետի, դատական բժիշկ – մասնագետի կողմից՝ համագործակցելով ոստիկանության և (կամ) բժիշկների հետ:

2) Մասնագիտական զննումից հետո դին լվացվում, կարվում է, կատարվում են դիակի հատուկ սանիտարական մշակման և այլ համապատասխան միջոցառումներ:

4. Դիակի տեղավորումը դազադի մեջ իրականացվում է հետևյալ կերպ՝

1) ԱԻ տարածքային հանձնաժողովները կազմակերպում են դիակների տեղափոխումը դիահերձարաններ: Այդ դեպքում, անպայման, պարզվում և ոստիկանությանն է տրամադրվում հստակ տեղեկատվություն հետևյալի մասին՝ դիակը տեղափոխողի ԱԱՀ և հասցեն, դիակի հայտնաբերման վայրը, հանգուցյալի ԱԱՀ – ն, հասցեն և այլ տվյալներ:

2) ԱԻ տարածքային հանձնաժողովների պատասխանատու աշխատակիցները, որոնք աշխատում են դիահերձարաններում, կազմում են «Դիակի մշակման արձանագրություն», որից հետո տեղավորում են դիակը դազադի մեջ, և դազադին են ամրացնում ցուցանակ՝ հանգուցյալի ԱԱՀ – ով և գրանցամատյանի համարով:

5. Զոհվածի ինքնության պարզումը իրականացվում է հետևյալ կերպ՝

1) Ոստիկանության հետ համատեղ՝ ԱԻ տարածքային հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկում մահացածի ինքնությունը պարզելու, նրա հարազատներին գտնելու և դիակը նրանց հանձնելու ուղղությամբ: Այն դեպքում, երբ հնարավոր չէ պարզել մահացածի ինքնությունը, կատարվում է նրա և նրա իրերի լուսանկարում, ինչպես նաև գրանցում են մահացածի արտաքին տվյալները:

2) Ինքնությունը չպարզված դիակների ինքնությունը պարզելու համար ոստիկանությունը դիմում է տարբեր գերատեսչությունների օգնությանը, ինչպես նաև առկա տվյալները համեմատվում են անհայտ կորածների տվյալների հետ:

6. Դիակների հանձնումը իրականացվում է հետևյալ կերպ՝

1) Դիակի զննումից և մահվան արձանագրության կազմումից հետո, դիակները, որոնց ինքնությունը պարզվել է, հանձնվում են հարազատներին, բարեկամներին: Դիակները, որոնց ինքնությունը պարզված չէ, հանձնվում են ԱԻ տարածքային հանձնաժողովների համապատասխան աշխատակիցներին:

2) ԱԻ տարածքային հանձնաժողովների համապատասխան աշխատակիցները օժանդակություն են ցուցաբերում ոստիկանությանը՝ դիակների հանձնման գործում:

3) Դիակի զննումից և մահվան արձանագրության կազմումից հետո, ինքնությունը պարզված դիակների մասին տեղեկատվությունը փակցվում է տարահանման կետերի հայտարարությունների տախտակին՝ հարազատներին գտնելու նպատակով:

Գլուխ 307. Դիակների քանակի մասին տեղեկատվության տրամադրումը և դիակների հուղարկավորումը

Հատուկ սպասարկումների ծառայությունը, ոստիկանության և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ խորհրդակցելով, բնակչությանը իրազեկում է մահացածների քանակի մասին, նշելով ԱԱՀ, տարիքը, սեռը և այլ տեղեկատվություն, ինչպես նաև տրամադրվում է տեղեկատվություն ինքնությունը չպարզված դիակների քանակի մասին:

Գլուխ 308. Գերեզմաններ

1) Հատուկ սպասարկումների ծառայությունը ճշտում է քաղաքային գերեզմաններում առկա թաղման տեղերի քանակը:

2) Դիակների հուղարկավորումը կատարվում է քաղաքային գերեզմաններում:

Գլուխ 309. Ժամանակավորման թաղման վայրեր

Քաղաքային գերեզմանատներում հուղարկավորության անհնարինության դեպքում, Հատուկ սպասարկումների ծառայությունը, քաղաքի առողջապահության վարչությունը և այլ շահագրգիռ կազմակերպություններ, անց են կացնում խորհրդակցություն և որոշում են հուղարկավորման այլ վայրեր:

Բաժին 30 Հակահրդեհային գործունեություն և պաշտպանություն վտանգավոր նյութերից

Գլուխ 310. Մոբիլիզացնող միջոցառումներ

Երկրաշարժի հետևանքով առաջացած հրդեհների կամ փրկարարական աշխատանքների իրականացման և շտապ բուժօգնության ցուցաբերման անհրաժեշտության դեպքում, հակահրդեհային ծառայությունում հրշեջ փրկարարական աշխատանքների համար պատասխանատու պաշտոնատար անձինք, անհապաղ ձևավորում են հրդեհաշիջման շտաբ, որն էլ համաձայն նախօրոք կազմված պլանների, հրամաններ է տալիս հակահրդեհային միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ: Արտակարգ իրավիճակների հակահրդեհային ծառայությունը իրականացնում է մոբիլիզացիոն միջոցառումներ՝ համաձայն 92 աղյուսակի:

Աղյուսակ 92 Հակահրդեհային ծառայության կողմից անցկացվող մոբիլիզացիոն միջոցառումները

1. ԱԻՆ կից հրդեհաշիջման շտաբի ստեղծում,
2. տարբեր տեղեկատվությունների ընդունում և հաղորդում,
3. տեղակայման սխեմայի ստուգում և ստուգման արդյունքների վերաբերյալ զեկույցի ներկայացում,
4. տեղեկատվության հավաք և զեկույց,
5. ստորաբաժանումների ղեկավարման հարցերի քննարկում,
6. կապի միջոցների ապահովում,
7. հատուկ նշանակության շենքերին և տրանսպորտային միջոցներին հասցված վնասի պարզում,

Գլուխ 311. Սկզբնական փուլում տեղեկատվության հավաքում

1. ԱԻՆ կից հրդեհաշիջման շտաբը ընդհանրացնում է (1-01 և 911) զանգերից, ինչպես նաև այցելուներից, ԱԻ ծառայությունների լարային և ոչ լարային կապի ուղիներով ստացված հաղորդագրություններն ու տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվությունը: Այդ տեղեկատվության հիման վրա հրդեհաշիջման շտաբը իրականացնում է իրավիճակի գնահատում և ձևավորում է մոբիլիզացիոն համակարգ:

Գլուխ 312. Մոբիլիզացիոն տեղեկատվություն

1. Մոբիլիզացիոն տեղեկատվությունն իրենից ներկայացնում է աղետների չափերի, գոտիների, սահմանների վերաբերյալ տվյալների տեղեկագիր: Հրդեհների ծագմամբ և փրկարարական աշխատանքների կատարմամբ պայմանավորված՝ ՀՓՋ-ների ներգրավումը անհրաժեշտության դեպքում իրականացվում է 93 աղյուսակում նշված տեղեկատվության հավաքագրման կետերի համաձայն:

Աղյուսակ 93 Հրշեջ մոբիլիզացիայի համար տեղեկատվության կետերը

1. հրդեհի կամ վթարի առաջացման վայրի և օբյեկտի անվանումը,
2. վնասի չափը,
3. վնասի տարածման վտանգավորությունը և հրդեհաշիջման ուժերի համալրման անհրաժեշտությունը,
4. անվերադարձ կորուստների առկայությունը և նրանց քանակն ըստ սեռի ու տարիքի,

2. Աղյուսակ 94 նշված են տեղեկատվության այն կետերը, որոնք անհրաժեշտ են հրդեհների արձագանքման համար և իրենցից ներկայացնում են տեղեկատվություն ՀՓՋ-ների անձնակազմի վերաբերյալ:

Աղյուսակ 94 ՀՓՋ-ների ղեկավարմանը վերաբերող տեղեկատվության կետերը:

1. ՀՓՋ-ների կազմը և արտակարգ զորահավաքային իրավիճակը,
2. տեղեկատվություն երթևեկության սահմանափակումների, խախտումների և այլ ճանապարհատրանսպորտային խափանումների վերաբերյալ,
3. տեղեկատվություն, որն անհրաժեշտ է անվերադարձ կորուստների հավաքագրման վերաբերյալ,
4. տեղեկատվություն ջրամատակարարման ցանցի և այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են հրդեհաշիջման նպատակով ջրի ապահովման համար,

3. Կատարվում է տեղեկատվության հավաքագրում, որն անհրաժեշտ է բնակչության կյանքի անվտանգության ապահովման համար համաձայն 95. աղյուսակում նշված կետերի:

Աղյուսակ 95 Բնակչության կյանքի անվտանգության ապահովման համար տեղեկատվության կետերը:

1. Տեղեկատվություն տարահանման վայրերերի, տարահանվողների քանակի, բժիշկների և այլ բուժ. անձնակազմի գործուղման անհրաժեշտության վերաբերյալ,
2. էլեկտրացանցերին, գազատարներին և ջրատարներին հասցված վնասը և նրանց վերականգման հեռանկարները,
3. Բացի ՀՓՋ-ներից, ԱԻ ծառայությունների իրականացրած գործունեության վիճակը,
4. տեղեկատվություն բնակչությանը հատկացվող օգնության վերաբերյալ

Գլուխ 313. Հակահրդեհային գործունեություն

1. Երկրաշարժի հետևանքով առաջացած հրդեհների ձևերը և քանակը սովորաբար կախված են սեյսմիկ տատանումների ուժգնությունից, երկրաշարժի առանձնահատկությունից, տարվա եղանակից, ժամից և այլ գործոններից: Հակահրդեհային միջոցառումները համապատասխանաբար ճկուն ձևով պետք է հարմարեցնել ստեղծված իրավիճակին, ելնելով հրդեհների քանակից և չափերից:

2. Աղետների ժամանակ սովորաբար անհրաժեշտ է լինում լուծել մարդկանց կյանքի պաշտպանության հետ կապված առաջացած բազմաթիվ խնդիրներ, որոնք առաջանում են հրդեհների, փրկարարական աշխատանքների և բուժօգնության ցուցաբերման ժամանակ: Այս դեպքում հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ հնարավոր չէ անհրաժեշտ քանակի ռեսուրսներ ուղղել հակահրդեհային միջոցառումների իրականացման համար: Այդ պատճառով էլ շատ կարևոր է, որպեսզի հակահրդեհային ծառայությունը հրդեհները հայտնաբերի վաղ փուլում, դրանք արագորեն մեկուսացնի ու մարի:

3. Հրդեհներին և այլ ԱԻ-ներին արձագանքելու հասարակության պատրաստականության ուժեղացման նպատակով, անհրաժեշտ է զարգացնել բնակչության և տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնությունը: Հրդեհաշիջման արդյունավետությունը կարող է բարձրացվել պարտականությունների հստակ բաշխման և կամավորական միավորումների ու բնակչության հետ փոխհամագործակցության ճանապարհով:

4. Հակահրդեհային ծառայության հրդեհաշիջման շտաբը ճշտում է իրավիճակը՝ հասցրած վնասի չափի, քաղաքի մակարդակով տարվող աշխատանքների ծավալի վերաբերյալ և որոշ ստորաբաժանումների աշխատանքների խաթարման դեպքում, փոխում է ստորաբաժանման տեղակայման վայրը, բարձրացնելով աշխատանքների իրականացման արդյունավետությունը:

Գլուխ 314. Գործունեության իրականացման սկզբունքները

1. Ակտիվ հրդեհաշիջումն է՝ հրդեհների նախնական հայտնաբերման տեղամասերում, սկզբնական փուլում միջոցներ են ձեռնարկվում ջրի ակտիվ մղման եղանակով հրդեհների մարման ուղղությամբ:

2. Նպատակային հրդեհաշիջումն է՝ այն տեղամասերում, որտեղ հնարավոր է հրդեհի տարածումը մի շինությունից մյուսը, անհրաժեշտ է իրականացնել ջրի հավասարաչափ մղումը, ապահովելով արդյունավետ հրդեհաշիջում: Նման դեպքերում անհրաժեշտ է հաշվի առնել հրդեհի տարածման ուղղությունը, հարակից շինությունների կառուցվածքը, միջշենքային տարածքները և ավտոճանապարհների վիճակը:

3. Կենտրոնացված հրդեհաշիջումն է՝ հրդեհի ծավալների մեծացման դեպքում և հրդեհաշիջման ուժերի չբավարարելու պատճառով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ բնակչությանը լրիվ տարահանել, ճշգրիտ գնահատել իրավիճակը, հաշվի առնել քամու ուղղությունը, հրդեհի արագ տարածմանը նպաստող հանգամանքները (փայտե շինություններ, վտանգավոր նյութերով օբյեկտներ, գազի արտահոսք), որոշել հրդեհի տարածման կանխման տեղամասը, օգտագործելով լայն ավտոճանապարհները (15մ և ավել), գետերը, վերգետնյա երկաթուղային ուղիները, այգիները, բաց տարածքները և այլ չայրվող տարածքները, հակահրդեհային ուժերն ու միջոցները կենտրոնացնել հրդեհի մեկուսացման և մարման ուղղությամբ:

4. Հրշեջ-փրկարարական ջոկատների հրդեհաշիջման տեղամասից այլ տեղամասեր տեղափոխելն իրականացվում է այն դեպքերում, երբ հրդեհը մեկուսացված է և կանխվել է նրա տարածումը այլ տեղամասեր: Մեկուսացված հրդեհների մարումը հանձնարարվում է հրշեջ միավորումներին և այդ տարածքում ապրող բնակչությանը:

5. Առաջնահերթ տարահանման կարգն է՝ երբ հրդեհաշիջման ուժերը չեն բավականացնում հրդեհի տարածումը կանխելու համար, և կամ հրդեհը հնարավոր չէ դադարեցնել ուժգին քամու կամ այլ գործոնների պատճառով, առաջնահերթ խնդիր է մարդկանց կյանքի փրկումը, բնակչության տարահանումը և տարահանման ուղիների հրդեհաշիջումը:

6. Առաջնահերթ շրջանների պաշտպանության կարգն է՝ միաժամանակյա հրդեհների օջախների հայտնաբերման դեպքում հրշեջ փրկարարական ջոկատները շարժվում են առաջնահերթ պաշտպանության տարածքներ: Այդպիսի տարածքները որոշվում են տարբեր գործոնների համալիր գնահատման եղանակով (քամու ուղղությունը, հրդեհի տարածման հավանականությունը թաղամասում, հրշեջ ջրաղբյուրների վիճակը, կարևորագույն օբյեկտների տեղաբաշխումը, վտանգավոր նյութերով օբյեկտները և այլն):

7. Համագործակցության նպատակով անհրաժեշտ է դիմել տեղական ընկերությունների կամավոր հրշեջ միավորումներին և առավելագույնս օգտագործել նրանց հրդեհաշիջման հնարավորությունները՝ նախնական հրդեհաշիջման փուլում: Անհրաժեշտ է նաև օգնություն ցուցաբերելով հրդեհաշիջման տեղամասերում:

Գլուխ 315. Հրատապ միջոցառումներ պայթուցիկ և դյուրավառ նյութեր օգտագործող կազմակերպություններում

1. ԱԻՆ կից հիմնված անհապաղ գործողությունների շտաբը, հրահանգավորում է պայթուցիկ և դյուրավառ նյութեր օգտագործող ու կիրառող կազմակերպությունների ղեկավարներին, պատասխանատու աշխատողներին և անձնակազմին իրականացնելու ստորև նշված միջոցառումները: Այս միջոցառումները իրականացվում են նշված կազմակերպություններին պատճառված վնասի չափի համապատասխան՝

1) Հրատապ հետախուզության իրականացում և այրումը/պայթուցումը կանխող միջոցների ձեռնարկում.

2) Վաղ հրդեհաշիջման կանոնների խստորեն պահպանում.

3) Ստեղծված իրավիճակի բացահայտում, անձնակազմի և հարակից տարածքի բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացում դրան համապատասխան, ԱԻ տարածքային ստորաբաժանումների հետ արձագանքման իրականացում:

2. Հրատապ միջոցառումներ քիմիական վտանգավոր նյութեր օգտագործող ու կիրառող կազմակերպություններում

(1) ԱԻՆ կից հիմնված անհապաղ գործողությունների շտաբը, հրահանգավորում է նյութեր պայթուցիկ և դյուրավառ նյութեր օգտագործող ու կիրառող կազմակերպությունների ղեկավարներին, պատասխանատու աշխատողներին և անձնակազմին իրականացնելու ստորև նշված հրատապ միջոցառումները, քիմիական վտանգավոր նյութերի արտահոսքի կամ արտանետման պատճառով թունավոր գազերի տարածումը կանխելու նպատակով՝

1) Կազմակերպությունների հրահանգավորում քիմիական վտանգավոր նյութերի արտահոսքի կամ արտանետման դեպքում չեզոքացնող նյութերով վարակազերծման համար.

2) Մշտական կապի պահպանում շահագրգիռ կազմակերպությունների հետ, տեղեկատվության ստացում և փոխանակում.

3) Վտանգավոր քիմիական նյութերի տարածման դեպքում բնակչությանը վարվելակերպի կանոնների ուսուցանում կամ տարահանման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

4) Վթարի դեպքում բնակչության իրազեկում և տեղաշարժումների սահմանափակում:

(2) Վտանգավոր քիմիական նյութերով ուղեկցվող վթարների դեպքում անհրաժեշտ է մշակել գործողությունների խնդիրների լուծումները, որոնց հիման վրա պետք է իրականացվեն համապատասխան գործողությունները՝

1) Պարտականությունների հստակ բաժանում, վտանգավոր քիմիական նյութերի պահեստների բանալիների պահպանման վայրերի որոշում.

2) Հրդեհների առաջացումը կանխող և հրատապ հրդեհաշիջման միջոցառումների իրականացում.

3) Վտանգավոր նյութերի արտանետումը/արտահոսքը կանխող միջոցառումների իրականացում.

4) Վտանգավոր նյութերի տարաների շրջումը կանխող միջոցառումների իրականացում, վթարի կամ լաբորատոր և այլ աշխատանքների իրականացման ժամանակ, ինչպես նաև շրջման պատճառով հրդեհների առաջացումը կանխող միջոցառումների իրականացում,

5) Աղետի վայրում իրավիճակի ճշգրտման եղանակների որոշում, տեղեկատվության հավաք և փոխանցում.

6) Տարահանման ձևերը և վայրը:

Բաժին 31 Հրատապ միջոցառումներ ուսումնական հաստատություններում

Գլուխ 316. Հրատապ միջոցառումներ ուսումնական հաստատություններում

Ուսումնական հաստատություններում հրատապ արձագանքման միջոցառումները նշված են «ԹՄ/Համայնատիրությունների հնարավոր երկրաշարժի նախապատրաստման պլանի» 2-րդ բաժնում:

Այս գլխում մենք ուսումնական հաստատություններին մոտենում ենք որպես ուսումնական պրոցեսի անցկացման վայր և այդ տեսանկյունից ենք դիտում սովորողների անվտանգության ապահովման հարցերը, ուսուցումը արտակարգ իրավիճակներում և ուսումնական հաստատությունների աշխատանքի վերականգնումը:

Գլուխ 317. Սովորողների անվտանգության ապահովումը

1. Սեյսմիկ վտանգ առաջանալու դեպքում իրականացվող միջոցառումներ սովորողների ուսումնական հաստատություններում գտնվելու ժամանակ հետևյալն են՝

1) Սեյսմիկ վտանգ առաջանալու դեպքում ուսումնական հաստատության տնօրենը կատարում է ներքոհիշյալ միջոցառումները՝ գործելով ստեղծված իրավիճակին համապատասխան՝ ուսումնական հաստատությունում առկա ԱԻ կանխարգելման և վերացման պլանի համաձայն (բաժին 2): Ուսուցիչների ղեկավարությամբ սովորողները տարահանվում են ուսումնական հաստատության բակ:

2) Սեյսմիկ վտանգ առաջանալուց անմիջապես հետո ուսումնական հաստատության տնօրենը ստուգում է սովորողների անվտանգությունը, պարզում է վնասվածքներն ու փրկումները և տեղեկություններ է հաղորդում քաղաքապետարանի կրթության վարչություն:

3) Եթե ուսումնական հաստատության տնօրենը որոշում է, որ սովորողների համար ավելի անվտանգ կլինի վերադառնալ տները, ապա սովորողները, ուսուցիչների ղեկավարությամբ, վերադառնում են ծնողների և խնամակալների մոտ:

2. Սեյսմիկ վտանգ առաջանալու դեպքում ուսումնական հաստատություններում իրականացվող միջոցառումները տներում գտնվող սովորողների համար հետևյալն է՝ եթե սեյսմիկ վտանգը տեղի է ունենում վաղ առավոտյան, ուշ երեկոյան, կիրակի օրը և այլն, անհրաժեշտության դեպքում ուսումնական հաստատություններում դասապրոցեսը դադարեցվում է, ինչպես նաև կիրառվում են այլ միջոցառումներ: Պարապմունքների դադարեցման դեպքում տնօրենը այդ մասին զեկուցում է քաղաքապետարանի կրթության վարչություն: Պարապմունքների դադարեցման և վերականգնման մասին սովորողներին տեղեկացնում է տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը կամ խումբը՝ դրա համար օգտագործելով նախօրոք կազմված սովորողների ցուցակները:

Գլուխ 318. Ուսուցման պրոցեսը ԱԻ պայմաններում

Ուսումնական հաստատության տնօրենը կազմակերպում է հնարավոր իրական ուսումնական գործունեությունը՝ հաշվի առնելով ավերվածությունների և վնասների իրավիճակը, ինչպես նաև վերականգնման ժամանակահատվածը: Եթե ուսումնական օբյեկտներն աննշան

են տուժել, ապա օպերատիվ կեպով իրականացվում են հրատապ միջոցառումներ և կազմակերպվում է ուսուցումը: Եթե ուսումնական օբյեկտներին հասցված վնասները ծանր են, ապա ուսումնական պրոցեսը կազմակերպվում է ուսումնական շենքերի անվտանգ դասարաններում, սպոտ-դահլիճներում և այլն: Հնարավոր է նաև կրթության կազմակերպումը միացյալ դասարանների տարբերակով և այլ միջոցառումներ:

Այն դեպքում, երբ ուսումնական հաստատությունը հնարավոր չէ լրիվ օգտագործել, կապվում են քաղաքապետարանի կրթության վարչության հետ և որպես այլընտրանքային ձև ընտրվում է ուսումնական հաստատությունների միավորումը անվտանգ վայրերում և այլն: Ուսումնական պրոցեսի՝ տեղում ապահովման դժվարության դեպքում ծավալում են ժամանակավոր ուսումնական շենքեր և վերականգնվում են պարապմունքները:

Գլուխ 319. Ուսումնական նյութերի մատակարարումը

Ուսումնական պրոցեսի վերականգնման ժամանակ ուսումնական հաստատության տնօրենը՝ քաղաքապետարանի կրթության վարչության հետ միասին միջոցներ է ձեռնարկում աղետներից տուժած սովորողների ուսուցման համար անհրաժեշտ նյութերի մատակարարումը ապահովելու համար:

Ինչ վերաբերվում է ուսումնական նյութերին, ապա՝ սկզբունքորեն նպատակահարմար է ուսումնական հաստատությունում առկա ուսումնական նյութերի օգտագործումը, որոնց բավարար չլինելու դեպքում, քաղաքապետարանի կրթության վարչության հետ համագործակցությամբ, նախապատրաստվում են նոր ուսումնական նյութեր:

Գլուխ 320. Ուսումնական հաստատությունների վերաբացումը

Քաղաքապետարանի կրթության վարչությունը օպերատիվ կերպով պարզում է վերանորոգման և վերակառուցման ենթակա ուսումնական հաստատությունների շենքերը, բաց երկնքի տակ տեղակայված դպրոցները, ամբողջությամբ վերակառուցման անհրաժեշտությունը, ինչպես նաև սահմանում է անհրաժեշտ շին-վերանորոգման աշխատանքների և համապատասխան ծախսերի ժամկետները և մշակում է վերականգնման ու վերակառուցման պլաններ: Այդ պլանների հիման վրա կրթության քաղաքային վարչությունը իրականացնում է ուսումնական հաստատությունների ժամանակավոր շենքերի շինարարությունը, այլընտրանքային օբյեկտների օգտագործումը, վերականգնողական աշխատանքները և այլ միջոցառումներ աղետի հետևանքների վերացման համար:

Ուսումնական հաստատությունների ժամանակավոր շենքերի շինարարությունը սկզբունքորեն կատարվում է այլ ուսումնական հաստատությունների տարածքներում: Եթե առաջանում են դժվարություններ, ապա դրանց շինարարությունը իրականացվում է այլ վայրերում:

Գլուխ 321. Ուսումնական պարապմունքների վերականգնման նախապատրաստում

1. Ուսումնական գործընթացի արագ վերականգնման համար, ուսումնական հաստատության տնօրենի ղեկավարությամբ, ուսուցչական կազմը պարզում է սովորողների և

ուսուցչական կազմի թվում վնասվածներ ունեցողների քանակը և աստիճանը, ուժեր է ներդնում շենքերում դասարանային պարապմունքները ապահովելու համար: Պարապմունքների վերականգնման ժամանակ իրականացվում են դասարանների անվտանգության, ինչպես նաև դրանց հարմարավետության և լուսավորության անհրաժեշտ ստուգումներ: Պարապմունքները վերականգնելու հիմնական ժամկետները սահմանում է քաղաքապետարանի կրթության վարչությանը: Յուրաքանչյուր ուսումնական հաստատության տնօրեն, իրավիճակից ելնելով, սահմանում է պարապմունքների վերականգնման կոնկրետ ժամկետները:

2. Հարցեր, որոնք հաշվի են առնվում ուսումնական պարապմունքների վերականգնման ժամկետները որոշելու ժամանակ՝

1. Ուսումնական հաստատությունների վերականգնման իրավիճակը
2. Անվտանգության միջոցառումները այն վայրերում, որտեղ դեռևս չեն հասցրել վերանորոգել
3. Ջրատարերի վերականգնման իրավիճակը
4. Պիտանի դասասենյակների թիվը
5. Սովորողների թիվը, ովքեր կարող են հաճախել ուսումնական հաստատություն
6. Ծնողների կարծիքները

3. Ուսումնական հաստատության տնօրենը քաղաքապետարանի կրթության վարչությանը զեկուցում է իր կողմից հաստատված պարապմունքների վերականգնման ժամկետների մասին և միաժամանակ հայտարարությունների, տեղեկատվական թերթիկների տարածման միջոցով տեղեկացնում է սովորողներին և ծնողներին: Հեռու բնակվող անձանց համար քաղաքապետարանի կրթության վարչությանը տեղեկատվության փոխանցումը կազմակերպվում է տարահանման հանձնաժողովի ու կապի և ազդարարման ծառայության միջոցով:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում սովորողներին հոգեբանական օգնություն ցուցաբերելուն (վախ երկրաշարժից և հարազատներին կորցնելուց, ապագայի նկատմամբ անվստահություն):

Ուսումնական հաստատությունների տնօրենները, համագործակցելով քաղաքապետարանի կրթության վարչության և բժշկական ծառայության հետ, ապահովում են անհրաժեշտ մասնագետի ներկայությունը սովորողներին հոգեբանական օգնություն ցուցաբերելու համար:

Գլուխ 322. Ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխվելիս սովորողների հաշվառման գրառման մեջ փոփոխությունների մուտքագրումը

Եթե տարահանման կետը տեղակայված է հեռու և սովորողները չեն կարող շարունակել հաճախել նախկին ուսումնական հաստատությունը, ապա կազմակերպվում է՝ նրանց այլ ուսումնական հաստատություններ տեղափոխելը: Քաղաքապետարանի կրթության վարչությանը տարահանման հանձնաժողովի և կապի ու ազդարարման ծառայության միջոցով մանրամասն տեղեկատվություն է տալիս սովորողների ծնողներին՝ այլ ուսումնական հաստատություններ տեղափոխվելու կարգի վերաբերյալ:

Քաղաքապետարանի կրթության վարչությանը տարահանման վայրերում ունենում է իր ներկայացուցչությունը՝ ուսումնական հաստատություններ ընդունվելու հարցերով

խորհրդատվություններ տալու համար: Այն ծնողներին և սովորողներին, որոնց առջև դրված է նոր ուսումնական հաստատություններ ընդունվելու հարցը, ներկայացվում են ուսումնական հաստատություններին նախապատրաստման և դպրոց հաճախելու ժամանակ անվտանգության միջոցառումները: Միջոցներ են ձեռնարկվում մարդկանց մեջ տիրող տագնապը և անվստահությունը ցրելու համար:

Բաժին 32 Սննդամթերքի և ջրի մատակարարում

Գլուխ 323. Ջրի մատակարարում

Արտադրական օբյեկտներին և քաղաքացիներին, որոնք չեն կարող իրենց ապահովել խմելու ջրով և սննդամթերքով՝ ջրագծերի վնասվածության և պահուստային պաշարների բացակայության պատճառով, մատակարարումն իրականացվում է պետական աջակցության կարգով: Ջրամատակարարման ծառայությանը կից ստեղծվում է արագ արձագանքման շտաբ (այսուհետ՝ ՋԾ ԱԱ շտաբ), որը մատակարարում է ջրով: Սննդի և առևտրի ծառայությունը հիմնում է սննդի և առևտրի ծառայությանն առընթեր արագ արձագանքման շտաբ (այսուհետ՝ ՍԱԾ ԱԱ շտաբ), որն իրականացնում է առաջին անհրաժեշտության ապրանքների և ջրի մատակարարումը:

ՋԾ ԱԱ և ՍԱԾ ԱԱ շտաբների հիմնական գործունեությունը ներկայացվում է աղյուսակ 96-ում.

Աղյուսակ 96 Խմելու ջուր, սնունդ և առաջին անհրաժեշտության պարագաներ տրամադրելու գործողությունների ընդհանուր նկարագիրը

Ծառայության՝ անվանումը՝	աղետի առաջացում՝		
	<1 ժամ>	<24 ժամ>	<72 ժամ>
	գործունեության առաջնային փուլ, ծառայությունների ծավալում՝	Աի փուլ՝	վերականգնողական գործունեության փուլ՝
ջրամատակարարման ծառայությանը կից ԱԱ շտաբ՝	<ul style="list-style-type: none"> o ՋԾ ԱԱ շտաբի հիմնում, աշխատակիցների մոբիլիզացում:՝ o ջրամատակարարման բազային օբյեկտների/ջրամբարների/ և ջրային պաշարների ռեզերվուարների ստուգում:՝ o ջրամատակարարման օբյեկտների/ջրամբարների/ և ջրային ռեզերվուարների վրա ջրապոմպային համակարգի տեղադրում և սարքավորում:՝ <ul style="list-style-type: none"> o ջրապահուստային ռեզերվուարներից և ջրամատակարարման օբյեկտներից ջրային պաշարների դուրս մղում:՝ o մարզերին և տարածաշրջանի հարևան պետություններին օգնությամբ դիմում:՝ <ul style="list-style-type: none"> o օգնության կարգով մարզերից և տարածաշրջանի հարևան պետություններին օգնության ընդունում:՝ 		
աննդի և առևտրի ծառայությանն աղընթեր ԱԱ շտաբ՝	<ul style="list-style-type: none"> o ՄԱԾ ԱԱ շտաբի հիմնում, աշխատակիցների մոբիլիզացում:՝ o համապատասխան գերատեսչական պարենամթերային ընկերությունների ենթակայության տակ գտնվող վնասված պահեստների չափերի պարզաբանում և գնահատում:՝ o պահանջով դիմել գերատեսչությունների ենթակայության տակ գտնվող պարենամթերային ընկերություններին իրականացնել մատակարարումը:՝ <ul style="list-style-type: none"> o գերատեսչությունների ենթակայության տակ գտնվող պարենամթերային ընկերություններից առանց խոհանոցային մշակման պարենային ապրանքների հատկացում:՝ <ul style="list-style-type: none"> o մարզերից և հարևան պետություններից օգնության հայցում:՝ o ստեղծել մարզերում լայնամասշտաբ պարենամթերային բազաներ:՝ o օգնության կարգով մարզերից պարենամթերային ապրանքների ընդունում:՝ o պարենամթերային ընկերությունների կողմից պարենային ապրանքների հատկացում, որոնք կարիք ունեն խոհանոցային մշակման, ինչպես նաև առաջին անհրաժեշտության ապրանքների մատակարարում:՝ 		

Գլուխ 324. Ջրամատակարարում

Ջրամատակարարման ծառայությանը կից ստեղծվում է արագ արձագանքման շտաբ, որն իրականացնում է հրատապ ջրամատակարարում այն տարածքներում, որտեղ ջրամատակարարումը դադարեցված է ջրագծերի վնասման հետևանքով, և կազմակերպում ջրի բաշխման ժամանակավոր կետեր: Շտաբի ղեկավարը և ծառայողները հստակ որոշում են ընդունում՝ ելնելով ստեղծված իրավիճակից:

1) ՋԾ ԱԱ շտաբը ստեղծվում է Երևան քաղաքի կառավարման մարմնի կառույցում: ՋԾ ԱԱ շտաբի կազմը բաղկացած է հրատապ տեխնիկական ստուգման և վերանորոգման խմբից, որը պատասխանատու է ջրամատակարարման /ջրամբարների/ և կոյուղագծերի վերականգնման համար, և իրականացնում է հրատապ ջրամատակարարում: Հրատապ վերանորոգման /վերականգնման/ և տեխնիկական ստուգման խումբը համալրվում է «Երևանի Ջրմուղ-Կոյուղի» ՓԲԸ-ի աշխատակիցներից, որոնք առօրյա պայմաններում զբաղվում են անսարքությունների և վնասվածությունների տեխնիկական հետազոտմամբ և ստուգմամբ:

2) Ջրամատակարարման օբյեկտների և ջրամբարների վնասվածության աստիճանի տեխնիկական հետազոտումը կատարվում է հրատապ վերանորոգման և տեխնիկական ստուգման խմբի կողմից: Քաղաքի տարբեր տեղերում տեղաբաշխված ջրային պահեստները հսկվում են «Երևանի Ջրմուղ-Կոյուղի» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ընկերություն) համապատասխան մասնաճյուղերում տեղակայված սպասարկող անձնակազմի կողմից: Եթե ընկերության սպասարկման բաժնի աշխատակիցների կողմից ուսումնասիրությունների արդյունքում պարզվում է, որ վնասի վերականգնման համար անհրաժեշտ է վթարատեխնիկական ծառայության միջամտում, ապա դրա մասին տեղեկացվում է ՋԾ ԱԱ շտաբ:

Եթե վնասվածության աստիճանը միջին է, իսկ դրա հետևանքով վնասի չափը համեմատաբար թեթև, ապա սպասարկող անձնակազմը կարող է այն հրատապ վերանորոգել և անցկացնել տեխնիկական ստուգում:

3) Ջրամատակարարման օբյեկտների հետազոտում իրականացնող սպասարկող անձնակազմը կապ է հաստատում ՋԾ ԱԱ շտաբի հետ, զեկուցում իրավիճակը, ստանում բնակչությանը ջրով մատակարարելու հրահանգում: Ելնելով ստեղծված իրավիճակից սպասարկող անձնակազմը, որն անցկացնում է ջրամբարների հետազոտություն, ստանում է հաստատում, որը չի խոչընդոտում ջրի ընդունման գործընթացին:

4) Ավտոջրատարների, ջրապոմպերի և այլ սարք-սարքավորումների բացակայության դեպքում, ՋԾ ԱԱ շտաբը, ՀՀ ԱԻՆ միջոցով, օգնության հայտ է ներկայացնում ՀՀ մարզերին և տարածաշրջանի հարևան պետություններին: Մարզերից ժամանող անձնակազմը և օգնության կարգով տրամադրվող նյութատեխնիկական միջոցները կենտրոնացվում են աղետի գոտում: Ավտոջրատարները և այլ անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները, որոնք կարող են անմիջապես օգտագործվել աղետի գոտում, առաքվում են աշխատանքային տեղամասեր:

5) Ի շահ հրատապ ջրամատակարարման և օպերատիվության հստակ իրականացման, ՋԾ ԱԱ շտաբը կենտրոնացված ձևով իրականացնում է տեղեկատվական տվյալների հավաք, վերլուծություն և տեղեկատվության կառավարում, որտեղ և արտացոլվում է ջրամատակարարմանը վերաբերվող տեղեկատվության ապահովում՝ համաձայն աղյուսակի 97:

Աղյուսակ 97 Ջրամատակարարմանն առնչվող տեղեկատվություն

1. Վնասված գոտի, որտեղ դադարեցված է ջրամատակարարումը. ջրամատակարարման օբյեկտների վնասվածության աստիճանի պարզաբանում և այլ անհրաժեշտ տեղեկատվություն.
2. կառավարման կենտրոններից, բուժ. սպասարկման կամ տարահանման կետերից ջրամատակարարումը վերականգնելու կամ մատակարարում իրականացնելու խնդրանքով դիմումները.
3. ջրամատակարարման օբյեկտների վերանորոգման իրավիճակներ՝ այդ աշխատանքների կատարման համար հատկացվող սպասարկող անձնակազմի և նյութատեխնիկական միջոցների վերաբերյալ տվյալների վերլուծում.
4. մարզերից որպես օգնության հատկացվող սպասարկող անձնակազմի, գույքի, տեխնիկայի և նյութական այլ միջոցների վիճակի պարզաբանում:

Գլուխ 325. Պարենի և առաջին անհրաժեշտության ապրանքների մատակարարում

ՍԱԾ ԱԱ շտաբն իրականացնում է պարենային և առաջին անհրաժեշտության ապրանքների մատակարարումն ազգաբնակչությանը:

ՍԱԾ ԱԱ շտաբի պետը և տեղերում պատասխանատու աշխատակիցները որոշում են վնասի չափերը և ձեռնարկվելիք միջոցառումները՝ ելնելով իրավիճակից:

Գլուխ 326. Սննդի և առևտրի ծառայությանն առընթեր արագ արձագանքման շտաբ /ՍԱԾ ԱԱ շտաբ/

ՍԱԾ ԱԱ շտաբը ստեղծվում է քաղաքի արդյունաբերական և ձեռնարկատիրական մարմնի կառուցվածքում: Այն մտնում է սննդի և առևտրի ծառայության կազմի մեջ: ՍԱԾ ԱԱ շտաբը օգնության հայտ է ներկայացնում ձեռնարկատիրական ընկերություններին՝ բնակչությանը պարենով և առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովելու համար: ՍԱԾ ԱԱ շտաբն իրականացնում է նաև պարենամթերքի և այլ անհրաժեշտ ապրանքների մատակարարման կառավարումը:

Գլուխ 327. Գերատեսչությունների ենթակայության տակ գտնվող արտադրական ընկերությունների պահեստների վիճակի վնասի չափի պարզաբանում. Մատակարարման հարցերով օգնության հայտի ներկայացում ձեռնարկատերերին

ՍԱԾ ԱԱ շտաբը հետազոտում և գնահատում է համապատասխան գերատեսչությունների ենթակայության տակ գտնվող առևտրային արտադրական ձեռնարկությունների /ընկերությունների/ և այլ օբյեկտների պահեստների վնասի չափերը: Ընկերությունները զբաղվում են արտադրությամբ, ապրանքագիտությամբ և կենցաղային ապրանքների արտադրությամբ:

Ստուգվում և վերահսկվում է պարենային ապրանքների մատակարարումը բնակչությանը, ինչպես նաև ապրանքատեսակների հատկացման հնարավոր ծավալները:

Գլուխ 328. Գերատեսչությունների ենթակա ընկերությունների կողմից պարենային և այլ անհրաժեշտ ապրանքների մատակարարման իրականացում

ՍԱԾ ԱԱ շտաբի պահանջով պարենամթերք մատակարարող ընկերությունները առաջին անհրաժեշտության ապրանքներ, սննդամթերք այլ պարենային ապրանքատեսակներ են մատակարարում հայտ ներկայացրած կառավարման և տարահանման կետերին ու րուժսպասարկման ծառայություններին:

Գլուխ 329. ՀՀ մարզերից օգնության ակնկալում. Պարենային ապրանքների մատակարարում և օգնության ընդունում

Պարենամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների բավարար չլինելու դեպքում ՍԱԾ ԱԱ շտաբը, ՀՀ ԱԻՆ միջոցով, օգնության կարգով դիմում է ՀՀ մարզերին: Առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների մատակարարման դեպքում, մասնավորապես աղետի գոտում, կարող է արձանագրվել պահանջվող օգնության անհամապատասխանություն, այսինքն՝ ապրանքատեսակների ավելցուկ կամ պակասորդ: Այդ իսկ պատճառով օգնության հայտերը ներկայացնելիս անհրաժեշտ է մանրամասն նշել պահանջվող ապրանքատեսակների ցանկը և քանակը:

Աղյուսակ 98 Պաշտոնական օգնության ստացված հիմնական ապրանքատեսակների ցանկը

Անվանացանկ	Հիմնական ապրանքային տիպերը
Քնելու պարագաներ	Ծածկոց և ներքնակ, անհրաժեշտ քնելու համար
Հագուստ	Ամենօրյա աշխատանքային, մանկական և այլ հագուստ
Ներքնազգեստ	Վերնաշապիկ, վարտիք և այլ ներքնազգեստ
Անհատական օգտագործման ապրանքներ	Սրբիչ, գուլպա, հողաթափ և այլն
Հիգիենայի պարագաներ	Օճառ, զուգարանի թուղթ, ատամի մածուկ, խոզանակ և այլն
Սննդի պատրաստման պարագաներ	Կաթսա, գազօջախ, դանակ և այլն
Ջեռուցման և լուսավորության պարագաներ	Լուցկի, մոմ և այլն
Խոհանոցային պարագաներ	Ափսե, բաժակ, գդալ, պատառաքաղ և այլն

Գլուխ 330. Առաջին անհրաժեշտության պարագաների և սննդամթերքի մատակարարման տեղեկատվության կառավարում

Ի շահ ապրանքատեսակների հատուկ մատակարարման և օպերատիվության ապահովման, ՍԱԾ ԱԱ շտաբը կենտրոնացված ձևով իրականացնում է տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն, ինչպես նաև այդ տեղեկատվության կառավարում:

Աղյուսակ 99 Առաջին անհրաժեշտության պարագաների և սննդամթերքի մատակարարմանն ուղղված տեղեկատվության ապահովում

1. Կառավարման, տարահանման և բուժ. սպասարկման կետերի պահանջագրերի ներկայացումը կառավարման կետեր, և արագ արձագանքման ծառայությունների շտաբի միջոցով սննդամթերքի ու առաջին անհրաժեշտության պարագաների մատակարարում
2. Առևտրային, արտադրական ընկերությունների պահեստների վնասի չափերի հնարավոր իրավիճակի գնահատում, մատակարարմանն ու սպառմանը վերաբերվող հարցերի պարզաբանում, դրանց հնարավոր ծավալների ճշգրտում.
3. Առաջին անհրաժեշտության պարագաների և սննդամթերքի ապրանքների մատակարարման հնարավոր իրավիճակի գնահատում.
4. ՀՀ մարզերից և այլ պետություններից մարդասիրական օգնության ստացման իրավիճակի գնահատում:

Բաժին 33 Կենսաապահովման գծերի, հեռահաղորդակցության և երթևեկության օբյեկտների անհապաղ վերականգնում

Գլուխ 331. Կենսաապահովման գծեր

Երկրաշարժի հետևանքով վնասված կենսաապահովման գծերը, հեռահաղորդակցության և երթևեկության օբյեկտները պետք է հնարավորինս շուտ վերականգնվեն հրատապ գործողությունների՝ հրամանատարության, փրկարարական գործողությունների, տարահանման, բուժօգնության և այլնի նպատակով խոչընդոտները վերացնելու, ինչպես նաև քաղաքացիական կյանքն ու սոցիալական տնտեսությունը կայունացնելու համար:

Այդ իսկ պատճառով, այն կազմակերպությունները, որոնց իրավասության ներքո են գտնվում այդ օբյեկտները, կզբաղվեն անհապաղ վերականգնման աշխատանքներով, ինչպիսիք են համապատասխան արձագանքման շտաբերի ստեղծումը՝ ելնելով աղյուսակ 100-ում նշված նախապատրաստական աշխատանքներից:

Աղյուսակ 100 Նախապատրաստական կետեր՝ կենսաապահովման օբյեկտների և այլնի վերականգնման համար

Նախապատրաստվելիք կետեր	Մանրամասները նկարագրող կետը
1. Չափանիշներ ԱԻՆ ՃԿԿ և տարածքային կետերի ստեղծման համար	Գլուխ 20
2. Վերականգնման կենտրոն	
3. Ստուգման և վնասի գնահատման շրջանակ	
4. Տեղեկատվության հավաքագրման և հաղորդակցության շրջանակ	
5. Վերականգնման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերում	
6. Վերականգնման առաջնահերթություն	
7. Անհապաղ փոխադրումների կենտրոն	
8. Օգնության վերաբերյալ հաստատում և համաձայնեցում	

Անհապաղ վերականգնման համար կենսաապահովման գծերի, հեռահաղորդակցության և երթևեկության օբյեկտների վերաբերյալ շտաբերի հիմնական գործողությունները բերված են աղյուսակ 101-ում:

Աղյուսակ 101 Կենսաապահովման գծերի և այլնի անհապաղ վերականգնման գործողությունների ուրվագիծը

Կազմակերպություն	Աղետի առաջացում		
	1 ժամ	24 ժամ	72 ժամ
	Նախնական արձագանքման փուլ	Ահ արձագանքման փուլ	Վերականգնման/վերակառուցման փուլ
<ul style="list-style-type: none"> • Ջրամատակարարման և կոյուղու օբյեկտների շտաբ • Էլեկտրամատակարարման օբյեկտների շտաբ • Գազամատակարարման օբյեկտների շտաբ • Հեռահաղորդակցության օբյեկտների շտաբ • Տրանսպորտային օբյեկտների շտաբ 	<p>Անհապաղ վերականգնման շտաբերի ստեղծում, անձնակազմի անդամների հավաք</p> <ul style="list-style-type: none"> ○ Օբյեկտների ստուգում և վնասի գնահատում 	<p>Տեղեկատվության հավաքագրում և հաղորդակցություն</p> <p>Անհապաղ վերականգնման գործողություններ</p> <ul style="list-style-type: none"> ○ Լրատվամիջոցների և հասարակայնության հետ կապերի գործունեություններ ○ Այլ տարածքներից օգնության հայտ ○ Սարքավորումների և նյութերի համար պահեստների ստեղծում ○ Այլ տարածքներից օգնության ստացում 	

Գլուխ 332. Անհապաղ վերականգնման շտաբերի ստեղծում, անձնակազմի անդամների հավաք

Անհապաղ վերականգնման շտաբերի ստեղծումը և անձնակազմի անդամների հավաքը պետք է իրականացվի անմիջապես՝ համաձայն նախապատրաստման փուլում սահմանված և տարածված պլանների, օրինակ՝ ԱՇՊ)։

Գլուխ 333. Օբյեկտների ստուգում և վնասի գնահատում

Ստուգումը և վնասի գնահատումը պետք է արվի համաձայն ստուգման և վնասի գնահատման նախապես ստեղծված շրջանակի։ Անհապաղ վերականգնման շտաբերը պետք է հստակեցնեն վնասի իրավիճակը և անձնակազմի հավաքը՝ համաձայն ԱՇՊ-ի, և տան ստուգման հրահանգ վնասի գնահատում կատարելու համար։

Գլուխ 334. Տեղեկատվության հավաքագրման և հաղորդակցության ուղղությամբ գործունեության ծավալում

Տեղեկատվության հավաքագրումը և հաղորդակցությունը շատ կարևոր են վնասի և ընթացիկ միջոցառումների առկա իրավիճակը ընկալման, պատշաճ վերականգնման հերթականության որոշման, անհապաղ վերականգնման շտաբերի և առնչվող

կազմակերպությունների միջև համակարգման համար: Յուրաքանչյուր ԱԻ շտաբ պետք է արագ և սահուն իրականացնի տեղեկատվության հավաքագրում և հաղորդակցություն՝ համաձայն նախապես սահմանված շրջանակի: Քանի որ ջրի/գազի/էլեկտրամատակարարման վերականգնման աշխատանքների ընթացքի և մատակարարման վերսկսման հաշվարկված ժամանակի վերաբերյալ տեղեկատվությունը կարևոր է հրատապ արձագանքման այլ գործողությունների սահուն ընթացքի համար, այն պետք է արագ փոխանցվի ԱԻ այլ շտաբերին:

Գլուխ 335. Անհապաղ վերականգնման գործունեություններ

Անհապաղ վերականգնման գործունեությունները պետք է իրականացվեն շատ արագ և արդյունավետ՝ օգտագործելով գլուխ 198-ում նշված պահեստավորված նյութերը՝ համաձայն գլուխ 199-ում նշված նախապես որոշված առաջնահերթության և հիմնվելով վնասի ու ընթացիկ միջոցառումների վերաբերյալ հավաքագրված տեղեկատվության վրա: Անհապաղ վերականգնման գործունեությունները պետք է իրականացվեն հաշվի առնելով հետևյալ հարցերը՝

- Վերականգնման ենթակա օբյեկտների հերթականությունը սահմանելիս առաջնահերթությունը տալ մարդկային կյանքին առնչվող վնասին:

- Այա, սահմանել առաջնահերթություններ համաձայն օբյեկտներին հասցված վնասի, վերականգնման աշխատանքի դժվարության, հրամանատարության, տարահանման և բժշկական կենտրոնների վրա ունեցած ազդեցության, ինչպես նաև՝ ազդեցության մասշտաբի, ինչպիսին է ազդեցությունը քաղաքացիական կյանքի վրա:

- Չնայած անհապաղ վերականգնման գործողությունները պետք է իրականացվեն հնարավորինս շուտ, պետք է ամեն ինչ անել կանխելու հաջորդող աղետների առաջացումը և մշտական վերականգնման աշխատանքում նույն աշխատանքի կրկնությունը:

Գլուխ 336. Լրատվամիջոցների և հասարակայնության հետ կապերի գործունեությունները

Քաղաքացիների կողմից սեփական ուժերով իրենց կյանքը վերականգնելու և խառնաշփոթն ու անհանգստությունը մեղմացնելու համար անհատական արձագանքման շտաբը ՃԿԿ միջոցով կիրառարակի տեղեկատվություն՝ կապված աղետի հետևանքների և օբյեկտների վերականգնման ընթացքի հետ: Նրանք նաև կբարձրացնեն անհրաժեշտ զգուշության վերաբերյալ իրազեկվածությունը հասարակայնության հետ կապերի գործողությունների միջոցով՝ էլեկտրամատակարարման, գազամատակարարման և այլնի վերականգնման արդյունքում հնարավոր հետագա աղետները կանխելու համար:

Օբյեկտների վերաբերյալ տեղեկատվության հիմնական կետերը, որոնք պետք է տարածվեն անհապաղ վերականգնման շտաբերի կողմից, նշված են աղյուսակ 102-ում:

Աղյուսակ 102 Օբյեկտների վերաբերյալ տեղեկատվության հիմնական կետերը, որոնք պետք է տարածվեն անհապաղ վերականգնման շտաբերի կողմից

Շտաբ	Հիմնական կետեր
Ջրամատակարարման և կոյուղու օբյեկտների շտաբ	<ol style="list-style-type: none"> 1. Ջրամատակարարման և կոյուղու օբյեկտների վնասի իրավիճակը, ինչպես նաև ջրամատակարարման վերականգնման հաշվարկված ժամանակը 2. Իրազեկվածության բարձրացումը ջրամատակարարման վերականգնման ժամանակ արտահոսքը կանխելու համար
Էլեկտրամատակարարման օբյեկտների շտաբ	<ol style="list-style-type: none"> 1. Էլեկտրամատակարարման օբյեկտների վնասի իրավիճակը, ինչպես նաև էլեկտրամատակարարման վերականգնման հաշվարկված ժամանակը 2. Իրազեկվածության բարձրացումը էլեկտրամատակարարման վերականգնման հետևանքով երկրորդային աղետի կանխարգելման վերաբերյալ <ul style="list-style-type: none"> - Էլեկտրամատակարարման վերականգնման հետևանքով առաջացած հրդեհի կանխարգելում (տարահանվելիս հիմնական անջատիչի անջատում) - Էլեկտրական հարվածից առաջացած վթարի կանխարգելում (Արգելել ձեռք տալ կախված էլեկտրական լարին)
Գազամատակարարման օբյեկտների շտաբ	<ol style="list-style-type: none"> 1. Գազամատակարարման օբյեկտների վնասի իրավիճակը, ինչպես նաև էլեկտրամատակարարման վերականգնման հաշվարկված ժամանակը 2. Իրազեկվածության բարձրացումը գազամատակարարման վերականգնման հետևանքով երկրորդային աղետի կանխարգելման վերաբերյալ <ul style="list-style-type: none"> - Գազի փականների փակում, մասնավորապես հիմնական փականները - Գազի սարքերի օգտագործման արգելում, և ահազանգ գազամատակարարման ընկերություն՝ գազի հոտ առնելիս - Գազամատակարարման վերականգնման հետևանքով առաջացած գազի արտահոսքի կանխարգելում (հավաստիանալ, որ գազի փականները փակ են նախքան հիմնական փականները բացելը)
Հեռահաղորդակցության օբյեկտների շտաբ	<ol style="list-style-type: none"> 1. Հեռահաղորդակցության օբյեկտների վնասի իրավիճակը, ինչպես նաև հեռահաղորդակցության վերականգնման հաշվարկված ժամանակը 2. ՃԿԿ հայտարարությունների և տեղեկատվության տարածման համար հատուկ և հրատապ ծրագրերի թողարկում 3. Չանգերի սահմանափակման մասին տեղեկատվության տրամադրում համակարգի ծանրաբեռնվածությունից խուսափելու համար, ինչպես նաև իրազեկվածության բարձրացումը՝ հեռահաղորդակցության անհրաժեշտությունը նվազեցնելու և հետևաբար, գերծանրաբեռնվածությունից խուսափելու համար
Տրանսպորտային օբյեկտների շտաբ	<ol style="list-style-type: none"> 1. Տրանսպորտային օբյեկտների վնասի իրավիճակը, ինչպիսիք են ճանապարհները, կամուրջները, երկաթգծերը, օդանավակայանները և այլն, ինչպես նաև օբյեկտների վերականգնման հաշվարկված ժամանակը 2. Ճանապարհների այն հատվածները, որտեղ երթևեկությունը արգելվում կամ վերահսկվում է

	3. Ծանուցում հրատապ ԱԻ գործողությունների համար մասնավոր մեքենաների օգտագործման կանխարգելման վերաբերյալ 4. Օգնության նյութերի և տարահանվողների փոխադրման իրավիճակը
--	--

Գլուխ 337. Այլ վայրերից օգնության դիմում և ընդունում

1. Երբ կանխատեսվում կամ պարզվում է, որ օբյեկտների վերականգնման համար անհրաժեշտ անձնակազմը կամ սարքավորումներն ու նյութերը բավարար չեն, անհատական արձագանքման շտաբը, ՃԿԿ միջոցով, պետք է փնտրի օգնություն պետության տարբեր մասերում գտնվող առնչվող կողմերից՝ համաձայն նախապես հաստատված և համաձայնեցված օգնությանն առնչվող մանրամասների:

2. Առնչվող կողմերից անձնակազմի կամ սարքավորումների ու նյութերի տեսքով օգնության ստացման նպատակով անհատական արձագանքման շտաբը պետք է նախապես ապահովի տարածք սարքավորումներն ու նյութերը պահեստավորելու և ուղարկված անձնակազմին ընդարձակ տրանսպորտային բազայում տեղավորելու համար:

3. Երբ ժամանի օգնության միավորը, նրանք կտան պատշաճ ցուցումներ իրականացվելիք աշխատանքի մանրամասների և թիրախների վերաբերյալ՝ հաշվի առնելով իրավիճակը տուժած տարածքում, վերականգնողական աշխատանքների ընթացքը, վերականգնման առաջնահերթությունը և այլ կարևոր հարցեր:

Բաժին 34 Կենցաղային և շինարարական աղբի ու մարդկային արտաթորանքի մշակում

Գլուխ 338. Հիմնական նկատառումները

Երկրաշարժ առաջացումից հետո վնասված տարածքում սանիտարական միջավայրի վրա վնասակար ազդեցության վերացման նպատակով պետք է անմիջապես մշակվեն կենցաղային և շինարարական աղբը, մարդկային արտաթորանքն ու նմանատիպ բաները, ինչպես նաև պետք է ապահովվի հետադետային վերականգնման և վերակառուցման ջանքերի սահուն իրականացումը: Կենցաղային և շինարարական աղբի ու մարդկային արտաթորանքի մշակման համար հիմնական փիլիսոփայությունը սահմանում է՝ ելնելով հետևյալից.

- ա) Արագ արձագանքում և մշակում
- բ) Պլանավորված արձագանքում և մշակում
- գ) Շինարարական աղբի դասակարգում և վերաշահագործում
- դ) Մշակումը՝ ելնելով սանիտարական և միջավայրի նկատառումից
- ե) Աշխատանքի անվտանգության ապահովում

Գլուխ 339. Կազմակերպչական կառուցվածքը

Կենցաղային և շինարարական աղբի ու մարդկային արտաթորանքի մշակման համար կհիմնվի “Աղբի հեռացման կենտրոնակայան”, որպես արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողովի ենթակա միավոր: Աղետի առաջացումից հետո աղբի հեռացման կենտրոնակայանը, որպես առնչվող կողմերի աշխատանքային կազմակերպություն, յուրաքանչյուր վարչական շրջանում կհիմնի աղբի հավաքման խումբ և աղբի մշակման խումբ, ինչպես նաև փուլային կարգով կիրականացնի մշակման աշխատանք: Երկու խմբերի աշխատանքային կետերը ներկայացված են աղյուսակ 103-ում:

Աղյուսակ 103 Աղբի հեռացման կենտրոնակայանի՝ աղբի հավաքման խմբի և աղբի մշակման խմբի աշխատանքային կետերը


Խումբ	Աշխատանքային կետ	
Աղբի հավաքման խումբ	Աղբի հավաքման պլանի ձևակերպում	Կենցաղային և շինարարական աղբի ու մարդկային արտաթորանքի քանակի գնահատում Հավաքման պլանի ձևակերպում Ժամանակավոր զուգարանների ձեռքբերում և շահագործման ընթացակարգի պատրաստում Տրանսպորտային միջոցների ձեռքբերում
	Հավաքման աշխատանք	Հավաքման աշխատանքի ենթավարձակալությունը և բաշխումը Ժամանակավոր զուգարանների տեղադրում
Աղբի մշակման խումբ	Աղբի մշակման պլանի ձևակերպում	Կենցաղային և շինարարական աղբի ու մարդկային արտաթորանքի քանակի գնահատման վերաբերյալ տվյալների հավաքում Աղբի մշակման պլանի ձևակերպում
	Մշակման	Մշակման աշխատանքի ենթավարձակալությունը և բաշխումը

աշխատանք	Խոշոր աղբի մշակման ենթավարձակալությունը
Մշակման օբյեկտներ	Աղբի մշակման օբյեկտների ստուգում և վերանորոգում Մշակման օբյեկտների ապահովում և պահպանում
Ժամանակավոր թափման տարածքներ	Ժամանակավոր թափման տարածքների ստեղծում Տեղափոխման աշխատանքների կառավարում Ժամանակավոր թափման տարածքների կառավարում
Ջարդոնի ընդունման տարածքներ	Ջարդոնների ընդունման աշխատանքներ

Գլուխ 340. Աղբի մշակման աշխատանքների գործընթացը

Սեյսմիկ աղետից հետո աղբի մշակման աշխատանքները կիրականացվեն երեք քայլով, ինչպես ցույց է տրված նկար 20-ում:

Նկար 20 Աղբի մշակման աշխատանքների ընդհանուր նկարագիրը



Գլուխ 341. Օգնության հայտ

Մեծ քանակությամբ աղբի արագ և արդյունավետ մշակման ապահովման նպատակով անհրաժեշտ է պահանջել օգնություն առնչվող ընկերություններից և շրջակա տարածքներից: Աղբի հեռացման կենտրոնակայանը կպահանջի այն ձեռնարկությունների և հարևան մարզերի համագործակցությունը, որոնց հետ քաղաքապետարանը կնքել է համաձայնագրեր:

Շրջակա մարզերից պահանջվող կետերը բերված են աղյուսակ 104-ում:

Աղյուսակ 104 Շրջակա մարզերից պահանջվող կետերը

Մարդկային արտաթորանք	- Տրանսպորտային միջոցների ձեռքբերում - Աջակցող անձնակազմի նախապատրաստում
----------------------	---

	- Մշակման օբյեկտների ստուգում և վերանորոգում
Խոշոր աղբ	- Ծանր տեխնիկայի ձեռքբերում - Մշակման օբյեկտների կառավարում
Ժամանակավոր թափման տարածքներ	- Ժամանակավոր թափման տարածքների ստեղծում - Աջակցող անձնակազմի և սարքավորումների/ նյութերի ապահովում

Առնչվող ընկերություններից պահանջվող կետերը բերված են աղյուսակ 105-ում:

Աղյուսակ 105 Առնչվող ընկերություններից պահանջվող կետերը

Պահանջվող կազմակերպություն	Պահանջվող կետ
Ծանր տեխնիկայի վարձակալման ընկերություններ	- Ժամանակավոր զուգարանների տրամադրում - Խոշոր աղբի համար ծանր տեխնիկայի տրամադրում - Ժամանակավոր թափման տարածքներում թափման համար ծանր տեխնիկայի տրամադրում
Մարդկային արտաթորանքի մշակման ընկերություններ	- Մարդկային արտաթորանքի հավաքման մեքենաների տրամադրում - Մարդկային արտաթորանքի հավաքման համար աջակցող անձնակազմի տրամադրում
Արդյունաբերական թափոնի մշակման ընկերություններ	- Խոշոր աղբի հավաքման մեքենաների և դրանց աջակցող անձնակազմի տրամադրում - Ժամանակավոր թափման տարածքներից տրասնպորտային միջոցների և դրանց աջակցող անձնակազմի տրամադրում - Ժամանակավոր թափման տարածքներում ջարդոնահատ տեխնիկայի տրամադրում
Հողի սեփականատերեր	- Ժամանակավոր թափման տարածքների ստեղծման համար հողի թույլտվության ստացում

Գլուխ 342. Կամավորների պահանջ

Սեյսմիկ աղետի ժամանակ աղբի մշակման համար պահանջվում է հսկայական թվով անձնակազմ: Աղբի հեռացման կենտրոնակայանը լրատվամիջոցների միջոցով կպահանջի աղբի մշակման համար աջակցող անձնակազմի տրամադրում ՀԿ-ներից, ՈԱԿ-ներից և այլ կամավորական կազմակերպություններից:

Գլուխ 343. Բնակիչներին տեղեկատվության տրամադրում

Աղբի հեռացման կենտրոնակայանը Ազդարարման և հաղորդակցության մոդուլի ու լրատվամիջոցների միջոցով կտեղեկացնի բնակիչներին, թե ինչպես հավաքել, դասակարգել և մշակել սեյսմիկ աղետ տեղի ունենալուց անմիջապես հետո դրա արդյունքում առաջացած տարատեսակ աղբը, ինչպես ներկայացված է աղյուսակ 106-ում:

Աղյուսակ 106 Բնակիչներին տրվող տեղեկատվությունը

<p>թափոն և շինարարական աղբ</p> <ol style="list-style-type: none"> 1. Հավաքման ճանապարհը 2. Հավաքման ժամանակի սահմանումը, ժամանակահատված, ժամ և ամսաթիվ 3. Հեռացման ոչ-ենթակա աղբի մշակման ճանապարհը 4. Աղբի անօրինական թափման արգելում
<p>մարդկային արտաթորանք</p> <ol style="list-style-type: none"> 1. Մարդկային արտաթորանքի հավաքման շրջանակը 2. Ժամանակավոր զուգարանների տեղադրման իրավիճակը և վայրը 3. Ժամանակավոր զուգարանների օգտագործման և պահպանման նախազգուշական միջոցներ
<p>Այլ</p> <p>Կամավորների գրանցման ճանապարհը</p>

Գլուխ 344. Կենցաղային աղբի մշակում

Սեյսմիկ աղետից անմիջապես հետո մեծ քանակությամբ կենցաղային աղբ է առաջանում, որի մշակումը դառնում է բարդ: Փտումն ու վատ հոտը կանխելու և հասարակական սանիտարական պայմաններն ապահովելու համար պահանջվում է կենցաղային աղբի հրատապ մշակում: Աղբի հեռացման կենտրոնակայանը կսկսի կենցաղային աղբի մշակումն աղետից հետո առնվազն երկու շաբաթվա ընթացքում՝ համաձայն փաստացի իրավիճակի:

Գլուխ 345. Կենցաղային աղբի քանակի գնահատում

Սեյսմիկ աղետից հետո առաջացած կենցաղային աղբը, բացի սովորական աղբից, ներառում է նաև ջարդված ամանեղեն/էլեկտրական սարքավորումներ, հոսանքազրկման պատճառով սառնարանում հոտած սննդամթերք: Մինչև կենցաղային աղբի հավաքման համակարգի ստեղծումը մոտ երկու շաբաթվա ընթացքում կհաշվարկվի կուտակման ենթակա կենցաղային աղբի ընդհանուր քանակը:

ԳԽ2 սցենարային երկրաշարժի հետևանքով առաջացած կենցաղային աղբի քանակը գնահատվել է 715,803 տոննա:

Գլուխ 346. Կենցաղային աղբի հավաքման և մշակման եղանակը

Կենցաղային աղբի հավաքման կետերի վայրերը հիմնականում կլինեն նույնը, ինչ սովորական հավաքման կետերինը, իսկ աղբահավաք մեքենաների՝ դեպի սովորական կետեր հասանելիության անհնարինության դեպքում կստեղծվեն ժամանակավոր հավաքման կետեր: Հաշվվել է, որ ԳԽ2 սցենարային երկրաշարժի համար հաշվարկված 715,803 տոննա աղբի տեղափոխումը Նուբարաշեն վարչական շրջանի աղբավայր 85 աղբահավաք մեքենայով կտևի 211 օր: Կենցաղային աղբի հավաքումը կվերսկսվի սեյսմիկ աղետից հետո երկու շաբաթվա ընթացքում հաշվի առնելով հավաքման համակարգի հիմնման ժամանակահատվածը: Անձնակազմի և սարքավորման/նյութերի պակասության դեպքում Աղբի Հեռացման

Կենտրոնակայանը, Արտակարգ Իրավիճակների հանրապետական հանձնաժողովի միջոցով, կպահանջի օգնություն հարևան մարզերից:

Գլուխ 347. Կենցաղային աղբի հավաքումը տարահանման կետերից

Տարահանման կետերում սանիտարական պայմանների ապահովման նպատակով Աղբի Հեռացման Կենտրոնակայանը պետք է առաջնահերթություն տա տարահանման կետերից կենցաղային աղբի հավաքմանը: Տարահանվողների թվի, տարահանման կետերի թվի և վայրի հաստատումից հետո Աղբի Հեռացման Կենտրոնակայանը կձևակերպի կենցաղային աղբի հավաքման պլան:

Գլուխ 348. Կենցաղային աղբի հավաքման ժամանակը

Կենցաղային աղբի հավաքման ժամանակը հիմնականում նույնը կլինի, ինչ սովորական պայմաններում:

Գլուխ 349. Մարդկային արտաթորանքի մշակումը

Բացի տարահանման կետերում տեղադրված ժամանակավոր զուգարաններում կուտակված մարդկային արտաթորանքի, սեյսմիկ աղետի ժամանակ անհրաժեշտ է մշակել առաջացած մարդկային արտաթորանքն այն տներում, որտեղ ջրամատակարարման և կոյուղու համակարգերը շարքից դուրս են եկել:

Գլուխ 350. Ժամանակավոր զուգարանների ապահովումը

Տարահանվողների առօրյա կյանքի բարդությունից խուսափելու նպատակով տարահանման հանձնաժողովը կտեղադրի ժամանակավոր զուգարաններ տարահանման կետերում: Բացի այդ, տարահանման կետերում կտեղադրվեն շրջակա մարզերի և շինարարական ընկերությունների տրամադրած ժամանակավոր զուգարանները՝ նախնական համաձայնության հիման վրա:

Ժամանակավոր զուգարաններ կտեղադրվեն նաև աջակցման բազաներում, ինչպիսիք են այգիները, իսկ զուգարանները կմաքրվեն և կկառավարվեն տեղի բնակիչների միությունների աջակցությամբ:

Գլուխ 351. Մարդկային արտաթորանքի քանակի գնահատում

Հավաքման ենթակա մարդկային արտաթորանքի քանակը կգնահատվի տարահանվողների թվի և ջրամատակարարման ու կոյուղու օբյեկտների վնասվածության վիճակի հիման վրա:

Գլուխ 352. Սեպտիկ ավտոցիստերնների ձեռքբերում

Առօրյայում Երևան քաղաքում մարդկային արտաթորանքը տեղափոխվում է մշակման օբյեկտներ կոյուղու համակարգի միջոցով: Չնայած քաղաքում կա յոթ սեպտիկ ավտոցիստերն, սակայն ակնհայտ է, որ դրանց քանակը բավարար չէ: Աղբի հեռացման կենտրոնակայանը

պետք է ավելացնի սեպտիկ ավտոցիստերնների թիվը՝ պահանջելով աջակցություն շրջակա մարզերի համապատասխան ընկերություններից:

Գլուխ 353. Շինարարական աղբի մշակումը

Սեյսմիկ աղետի ժամանակ՝ շենքերի և օբյեկտների փլուզման հետևանքով առաջանում է մեծ քանակությամբ շինարարական աղբ: Աղբի հեռացման կենտրոնակայանը կղեկավարի տուժած տարածքներից շինարարական աղբի հեռացման աշխատանքները, ինչպես նաև կվերաօգտագործի/կթափի շինարարական աղբը:

Շինարարական աղբի մշակման ժամանակ պետք է մշակման առաջնահերթություն տրվի վտանգավոր, թունավոր շինարարական աղբին և այն աղբին, որը խոչընդոտում է երթևեկությանը:

Աղբի հեռացման կենտրոնակայանը կհավաքի տեղեկատվություն վնասի վերաբերյալ և կձևակերպի շինարարական աղբի մշակման և հեռացման պլան, որը կներառի շինարարական աղբի գնահատված քանակը, մշակման և հեռացման եղանակը, մշակման տևողությունը և այլն: Ձևակերպման ընթացքում պահանջվում է երկարաժամկետ տեսլական և տարածաշրջանային համագործակցության դիտարկում, քանի որ շինարարական աղբի քանակը շատ մեծ է:

Գլուխ 354. Շինարարական աղբի քանակի գնահատում

Շինարարական աղբի մշակման համակարգի և շինարարական աղբի մշակման պլանի ձևակերպման համար կգնահատվի շինարարական աղբի քանակը: Գնահատման օրինակը բերված է Բաժին 21-ում, ըստ որի ԳԽ2 սցենարային երկրաշարժից առաջացած շինարարական աղբի քանակը կազմում է 5,887,478 տոննա:

Գլուխ 355. Ժամանակավոր թափման վայրերի և տարածքի ընդհանուր պլանի պատրաստում

Առաջացած շինարարական աղբը կտեղափոխվի չորս աղբավայր, ինչպես ներկայացված է Բաժին 21-ում: Քանի որ առաջացած շինարարական աղբի քանակը շատ է (5,887,478 տոննա), դրա տեղափոխման համար կպահանջվի 736 օր (տես Գլուխ 21-ը): Հետևաբար, կպատրաստվեն շինարարական աղբի ժամանակավոր թափման վայրեր:

1) Ժամանակավոր թափման վայրի համար պահանջվող մակերեսը հաշվարկվում է առաջացած շինարարական աղբի քանակի, թափման բարձրության, շինարարական աղբի միավոր զանգված հիման վրա, հետևյալ կերպ.

Ժամանակավոր թափման վայրի մակերես ($մ^2$) = թափման ենթակա շինարարական աղբի քանակ (տոննա) / միավոր զանգված (տոննա / $մ^3$) / թափման բարձրություն (մ) + համապատասխան աշխատանքների մակերես ($մ^2$),

որտեղ՝

- Միավոր զանգված - 0.4 (տոննա/ $մ^3$) դյուրավառ նյութերի համար և 1.1 (տոննա/ $մ^3$) ոչ-դյուրավառ նյութերի համար

- Թափման բարձրությունը - 5 մ

2) Աղբի հեռացման կենտրոնակայանը կընտրի հնարավոր ժամանակավոր թափման վայրերը՝ հաշվի առնելով վնասի մասշտաբը, տարահանման կետերի և ժամանակավոր տեղաբաշխման կետերի (ԺՏԿ) դիրքային հարաբերությունը: Հնարավոր վայրերի հողի սեփականատերերի հետ քննարկումների միջոցով կորոշվեն ժամանակավոր թափման վայրերը:

Ժամանակավոր թափման վայրերն ընտրելու հիմնական պահանջը և դիտարկման ենթակա կետերը բերված են ստորև.

- ա) Շինարարական աղբի ժամանակավոր թափման համար անհրաժեշտ տարածք կարող է ապահովվել:
- բ) Ծանր տեխնիկայի հետ աշխատելու համար տարածք կարող է ապահովվել:
- գ) Շինարարական աղբի տեղափոխման համար ծանր տեխնիկայի և ինքնաթափ բեռնատարների մուտքը դեպի վերոնշյալ վայրեր հնարավոր է:
- դ) Ժամանակավոր թափման վայրերը չեն գտնվում այն օբյեկտներին մոտ, որոնք պահանջում են միջավայրի խնամք, ինչպիսիք են հիվանդանոցները և դպրոցները:
- ե) Ժամանակավոր թափման վայրից մինչև բնակավայրեր կա բավարար հեռավորություն, որպեսզի բնակիչների կենսական միջավայրը ապահովված լինի:

Հնարավոր ժամանակավոր թափման վայրերը ներկայացված են աղյուսակ 107-ում:

Աղյուսակ 107 Հնարավոր ժամանակավոր թափման վայրերը

1. Դպրոցի այգի
2. Ավտոկայանատեղի հասարակական օբյեկտներում և մասնավոր հողում
3. Ամայի տարածք
4. Մարզական այգի
5. Կառավարության կամ անհատների սեփականություն հանդիսացող չօգտագործված հող
6. Առկա աղբավայրերի մերձակայքում գտնվող չօգտագործված տարածքներ

Գլուխ 356. Ժամանակավոր թափման վայրերի շահագործումը

Ժամանակավոր թափման վայրերի շահագործման համար պետք է հաշվի առնել հետևյալ կետերը.

- ա) Թափման ենթակա է այն շինարարական աղբը, որը հավաքել է շինարարական աղբի հավաքման խումբը:
- բ) Շահագործման կառավարիչները պետք է կանգնեն շինարարական աղբի թափման վայրերում հաշվապահական գիրքը ձեռքերին այդ աշխատանքները կառավարելու համար
- գ) Տեղանքում պետք է հատկացված լինեն բավարար քանակությամբ աշխատողներ, ծանր տեխնիկա և մեքենաներ:

- դ) Վերամշակման ենթակա շինարարական աղբը պետք է տեղափոխվի վերամշակման օբյեկտների անմիջապես թույլտվություն ստանալուց հետո:
- ե) Պետք է կանխվի վտանգավոր նյութերի և դյուրավառ նյութերի աղտոտումը:
- զ) Շրջակա տարածքների միջավայրի վրա վնասակար ազդեցությունները, ինչպիսիք են փոշին և աղմուկը, պետք է նվազագույնի հասցվեն ճգման և այլնի միջոցով: Անհրաժեշտության դեպքում կցանվեն օդը թարմացնող և աղտահանող նյութեր:

Գլուխ 357. Շինարարական աղբի հավաքումը և տեղափոխումը

Շինարարական աղբի տեղափոխման համար հիմնականում կօգտագործվեն ռազմավարական ճանապարհները:

Կանխատեսվում է, որ տուժած տարածքներում ճանապարհների վնասման, շենքերի փլուզման հետևանքով առաջացած խոչընդոտների, շտապ օգնության մեքենաների երթևեկության, տուժածների տարահանման պատճառով ռազմավարական ճանապարհները և սովորական ճանապարհները լեփ-լեցուն կլինեն: Շինարարական աղբի տեղափոխման ընթացքում կձեռնարկվեն աղյուսակ 108-ում բերված անհրաժեշտ միջոցառումները՝ Արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողովի հետ քննարկման միջոցով:

Աղյուսակ 108 Շինարարական աղբի տեղափոխմանն առնչվող հնարավոր միջոցառումները

- | |
|---|
| <ol style="list-style-type: none">1. Շինարարական աղբի տեղափոխումը կարելի է իրականացնել գիշերը, երբ երթևեկությունը ծանրաբեռնված չէ:2. Կարող են նշանակվել դեպի ժամանակավոր թափման վայրեր և աղբավայրեր շինարարական աղբի տեղափոխման ճանապարհները:3. 2 և ավելի վազբուլի ունեցող ճանապարհներից կարելի է առանձնացնել վազբուլի: |
|---|

Գլուխ 358. Մշակումը և հեռացումը

1) Աղբավայրերի տարողությունը

Աղբի հեռացման կենտրոնակայանը պետք է ճշգրտի աղբավայրերի հասանելի տարողությունը և, համապատասխանաբար, կառավարի շինարարական աղբի տեղափոխվող քանակը:

2) Մշակման և հեռացման պլանը

Շինարարական աղբի քանակը նվազագույնին հասցնելու և շինարարական աղբի վերաշահագործման/վերամշակման համար պետք է դիտարկել շինարարական աղբի տարանջատում 6 տեսակի (փայտ, այլ դյուրավառ նյութեր, բետոն, մետաղ, այլ ոչ-դյուրավառ նյութեր, խառը նյութեր):

Գլուխ 359. Հեռացման ոչ ենթակա աղբ

1) Հեռացման ոչ ենթակա աղբը ներառում է հեղուկներ, ինչպիսիք են ներկերը և յուղը,

հաստ մետաղական արտադրանքները, ֆրեոն պարունակող սարքավորումներ և վտանգավոր նյութ, օրինակ՝ ազբեստ պարունակող ցանկացած տեսակի աղբ:

- 2) Հեռացման ոչ ենթակա աղբ թափողը պետք է պատասխանատվություն կրի աղբի հեռացման համար՝ հատուկ ուշադրություն դարձնելով շրջակա միջավայրի և աշխատանքային միջավայրի ապահովությանն ու մաքրությանը՝ ներդնելով ադեկվատ կամ հասանելի աղբահավաք մեքենա կամ այլ միջոց:

Աղբի հեռացման կենտրոնակայանը պետք է տեղեկատվություն տարածի հեռացման ոչ ենթակա նյութերի, հատկապես՝ ֆրեոնի մշակման կանոնների մասին: Հեռացման ոչ ենթակա նյութերի ժամանակավոր թափման դեպքում պետք է ապահովվեն հատուկ թափման տարածքներ:

Ազբեստ պարունակող նյութերի քանդման ժամանակ պետք է ձեռնարկվեն Բաժին 21-ում նշված միջոցառումները:

Բաժին 35 Հրատապ միջոցառումներ՝ ուղղված կացարանների ապահովմանը և կենցաղի կազմակերպմանը

Գլուխ 360. Կացարաններով ապահովումը

Ի լրումն տարահանմանը, փրկարարական գործունեությանը, ջրով և սննդամթերքով մատակարարմանը և օգնությունների այլ ձևերին, իրականացվում են նաև միջոցառումներ՝ ուղղված տուժածներին կացարաններով ապահովմանը աղյուսակ 109-ում:

Աղյուսակ 109 Կացարանների ապահովմանը և կենցաղի կազմակերպմանն ուղղված հրատապ միջոցառումների ընդհանուր պատկերը

Կազմակերպում	Աղետի առաջացման	1ժ	24ժ	72ժ
	Առաջնային գործունեության փուլ, ծառայությունների ծավալում	ԱԻ արձագանքման փուլ		Վերականգնողական գործունեության փուլ
Կացարաններով ապահովում		Շենք-շինությունների վնասվածության աստիճանի հրատապ տեխնիկական ուսումնասիրում		-Վնասված կացարանների հրատապ վերանորոգում -Ժամանակավոր կացարանների տրամադրում -Շինարարական նյութերի մատակարարում
Ամենօրյա կացության ապահովում			Խորհրդատվություն և կենցաղային հարցերով	-Աշխատանքի փնտրման համար օժանդակություն -Հարկերի վճարման հետաձգում, հարկերի կրճատում -Սոցիալական ապահովման այլ ձևեր
Հրատապ ֆինանսական միջոցառումներ			-Թղթադրամի կայուն մատակարարում -Բանկային հաստատությունների աշխատանքի ապահովում	
Բանվորական ուժի ապահովում		Օգնության ցուցաբերման համակարգի ծավալում	Արտասահմանից օգնության ստացում	Ժամանակավոր աշխատուժի վարձում
Միջազգային			-Միջազգային	

<p>օգնության հայտի ներկայացում և դրա բաշխում</p>			<p>օգնության ստացման համար հայտի ներկայացման և բաշխման ընթացակարգ -Մաքսային և վիզային ընթացակարգերի պարզեցում</p>	
--	--	--	---	--

Գլուխ 361. Շենքերի և շինությունների վնասվածության աստիճանի հրատապ ուսումնասիրում

Մասնագետների կողմից շենքերի և շինությունների վնասվածության աստիճանի հրատապ ուսումնասիրումը, սեյսմիկ աղետի հետևանքով վնասվածքի աստիճանի պարզաբանումը և գնահատումը (ամբողջությամբ կամ ըստ առանձին շրջանների) կարևոր են երկրաշարժից հետո կացարանների տրամադրման և կենցաղի կազմակերպման հրատապ միջոցառումների մշակման և իրականացման համար:

Չնայած տուժած շենքերի և շինությունների անվտանգության ապահովման համար պատասխանատու են սեփականատերերը, մեծաքանակ շենք-շինությունների վնասվածքների դեպքում սեփականատերերի կամ բնակիչների կողմից հեշտ չի լինի սեփական ուժերով կազմակերպել ուսումնասիրումը՝ վնասվածության աստիճանի որոշման համար:

Եթե շենքերը, որոնք կարող են վնասվել հետցնցումներից, շարունակվում են շահագործվել և ոչ մի միջոց չի ձեռնարկվում, ապա արդյունքում բազմաթիվ բնակիչներ կարող են ենթարկվել երկրորդային բնույթի աղետների ազդեցության հետևանքներին: Որպեսզի խուսափենք նման ռիսկերից, հրատապ արձագանքման շրջանակներում, ԱԻ շտաբը և քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը մասնագետների ուժերով իրականացնում են հրատապ ուսումնասիրումներ՝ շենք-շինությունների վնասվածքների աստիճանները որոշելու համար:

Գլուխ 362. Շենքերի և շինությունների վնասվածության աստիճանի հրատապ ուսումնասիրում

Շենքերի և շինությունների վնասվածության աստիճանի հրատապ ուսումնասիրումը կատարվում է այն կազմակերպությունների միջոցով, որոնց հիմնական անձնակազմը բաղկացած է ճարտարագետ-նախագծողներից, ունեն ճարտարագետի որակավորում կամ այն անձանց միջոցով, ովքեր ունեն համապատասխան կազմակերպությունների կողմից տրված վկայականներ:

Որակավորում - որակավորման վկայական, որն իրավունք է տալիս կատարել շինարարական նախագծում սեյսմավտանգ տարածքներում:

Ում կողմից է տրված – քաղաքաշինության նախարարության կողմից:

Գլուխ 363. Հետազոտման ենթակա շենքեր և շինություններ

Վնասվածության աստիճանի որոշման համար կատարվող հրատապ ուսումնասիրության օբյեկտներ, նախ և առաջ, հանդիսանում են ուսումնական հաստատությունները, հիվանդանոցները, մանկապարտեզները և այլ կոմունալ շենքեր ու շինություններ, ինչպես նաև բազմաբնակարանային շենքերն ու առանձնատներ:

Գլուխ 364. Վնասվածության աստիճանի հրատապ հետազոտման համակարգը

1. Կոմունալ շենք-շինությունների սեփականատերերը և (կամ) կառավարիչները, ինչպես նաև մասնավոր հատվածի բնակիչները, ովքեր վնասվածության դեպքում գտնվում են իրենց անձնական շենք-շինություններում, հետազոտման համար հայտ են ներկայացնում քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությանը:

Քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը ընդհանրացնում է տրված հայտերը և ԱԻ հանձնաժողովի միջոցով դիմում է քաղաքաշինության նախարարությանը՝ սեյսմիկ նախագծման որակավորում ունեցող մասնագետներ գործուղելու համար:

2. Հետազոտությունից առնվազն 1 օր առաջ քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը, ԱԻ հանձնաժողովը և այլ կազմակերպություններ բաշխում են հետազոտման անցկացման գոտիները և կատարում են այլ անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ: Հետազոտումը հարթ ընթանալու համար, ձևավորվում է աջակցման համակարգ:

3. Շենքերի հետազոտման լայնածավալ տեղեկացումը՝ ԱԻ հանձնաժողովը, մեքենաների վրա տեղակայված բարձրախոսների և ՋԼՄ-ների միջոցով, տեղեկացնում է բնակչությանը շենքերի հետազոտում անցկացնելու մասին:

4. Շենքերի հետազոտման արդյունքների նշագրումը՝ Վնասվածության աստիճանի հրատապ հետազոտման արդյունքներով, հետազոտությունը իրականացրած մասնագետները շենքի մուտքի մոտ կամ արտաքին պատի վրա, լավ երևացող տեղում տեղադրում են 3 ցուցանակ՝ «Վտանգավոր է», «Ջգույշ», «Ստուգված է»:

Ցուցանակները նախատեսված են օգտվողներին, բնակիչներին, անցորդներին և այլ անձանց տեղեկացնելու համար: Շինարարական կոնստրուկցիաների վնասվածության աստիճանի դասակարգումը համարյա ճշգրտորեն համաձայնեցված է MSK-64 սանդղակով դասակարգման հետ՝ առանձնացնելով վնասվածության 5 աստիճան.

I-II-«Ստուգված է»

III-«Ջգույշ»

IV-V-«Վտանգավոր է»:

Գլուխ 365. Ստուգման հաշվետվության կազմումը և հանձնումը

Ստուգում իրականացնող կազմակերպության անձնակազմը քաղաքապետարանի

ճարտարապետության և քաղաքաշինության վարչությանը ներկայացնում է հաշվետվություն արդյունքների մասին: Վերջինս, ընդհանրացնելով այդ տվյալները, կազմում է «Սեյսմիկ աղետից հետո շենքերի և շինությունների հրատապ ստուգման հաշվետվություն»՝ ներկայացնելով այն ԱԻ հանձնաժողովը:

Տվյալ շրջանի տարածքում ստուգումն իրականացվում է սեյսմիկ աղետից հետո 7 օրվա ընթացքում, իսկ մնացած բոլոր շրջաններում՝ 14 օրվա ընթացքում:

Գլուխ 366. Վնասված կացարանների հրատապ վերանորոգում

1. Վնասված կացարանների հրատապ վերանորոգման որոշումն ընդունում է կառավարությունը առանձին որոշմամբ: Մինչև նշված վերանորոգումը կատարելը, քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը երկրաշարժից տուժած շենքերի սեփականատերերի և լիազորների դիմումների հիման վրա կազմում է ցանկ, որտեղ նշվում են դիմումատուների ֆինանսական հնարավորությունները և այլ կետեր՝ նյութական վնասի փոխհատուցման համար: Ցանկում արտացոլվում են նաև «Սեյսմիկ աղետից հետո շենքերի և շինությունների հրատապ ստուգման հաշվետվություն»-ում նշված աղետի մասշտաբները:

2. Քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը ԱԻ հանձնաժողովին է տրամադրում «Տեղեկատվություն նյութական կորուստների մասին» : Միաժամանակ այդ տեղեկատվության հիման վրա ԱԻ հանձնաժողովի միջոցով իրականացվում են ընթացակարգեր այն անձանց նկատմամբ, ովքեր չունեն հնարավորություն հրատապ վերանորոգումը սեփական ուժերով կատարելու համար:

3. Հրատապ վերանորոգման ենթակա փակ բնակելի միավորների թիվը հաստատվում է վարչապետի համաձայնությամբ: Հրատապ վերանորոգման իրականացումը կարևոր միջոցառում է, քանի որ դրա արդյունքում կրճատվում են պետության ծախսերը նոր բնակարաններ կառուցելու համար:

Գլուխ 367. Վերանորոգման նպատակները

Սեյսմիկ աղետից բնակարանների միջին՝ 3-րդ աստիճանի վնասվածության դեպքում (ըստ MSK-64 սանդղակի), կատարվում է հրատապ վերանորոգում բնակարանի այն մասում, որտեղ հնարավոր է ապրելու նվազագույն պայմաններ ստեղծել: Այդ միջոցով պահպանվում է աղետից տուժած բնակարանային ֆոնդի պիտանելիությունը, նվազեցվում է տարահանվող բնակչության և հրատապ կառուցվող ժամանակավոր կացարանների թիվը:

Գլուխ 368. Կատարող կազմակերպությունները և նպատակային հավակնորդները

Համաձայն կառավարության՝ հրատապ վերանորոգում անցկացնելու համար նպատակային հավակնորդ են համարվում այն բնակարանների սեփականատերերը, որոնք չունեն հնարավորություն իրենց հաշվին կատարելու հրատապ վերանորոգում: Երկրաշարժից տուժած բնակարանների համար հրատապ վերանորոգում կատարվում է քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության և/կամ նրա կողմից հանձնարարված

շահագրգիռ կազմակերպությունների կողմից:

Գլուխ 369. Հրատապ վերանորոգման մեթոդը

- ա) Շահագրգիռ կազմակերպությունը վերանորոգումը հանձնարարում է այն ընկերություններին, որոնք կատարում են տանիքի, բնակարանների, խոհանոցի, զուգարանների և այլ վերանորոգման աշխատանքներ:
- բ) Քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը վերանորոգման ծախսերը բաշխում է՝ սահմանելով 1 բնակելի միավորի ծախսերի նախահաշվարկը և որոշելով նպատակային բնակելի միավորների թիվը:
- գ) Նպատակային ժամկետները՝ վերանորոգումը պետք է ավարտին հասցվի սեյսմիկ աղետից հետո 1 ամսվա ընթացքում:

Գլուխ 370. Ժամանակավորապես տրվող կացարան

Ժամանակավոր կացարաններով ապահովման համար նորմատիվ փաստաթուղթ է հանդիսանում կառավարության որոշումը: Այն անձիք, ովքեր սեյսմիկ աղետից հետո զրկվել են իրենց բնակարաններից, մեկ շաբաթվա ընթացքում դիմում են քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն, և նրանց տրվում է ժամանակավոր բնակեցման համար կացարան (ժամանակավորապես տրվող կացարան՝ չգբաղեցված բնակելի շենքեր, որոնք չեն տուժել երկրաշարժից և բնակեցումը հնարավոր է): Երկրաշարժից հետո քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը օպերատիվ կերպով պարզում է տուժածներին ժամանակավորապես բնակեցնելու համար բնակելի ֆոնդի չափը:

Ժամանակավոր կացարան անվարձահատույց տրվում է այն տուժածներին, ովքեր, ըստ հետազոտության արդյունքների, չեն կարող ինքնուրույն ապահովել իրենց կացարանով:

Գլուխ 371. Շինարարական տեխնիկայով և սարքավորումներով ապահովումը

1. Կախված վնասվածության վիճակից՝ ԱԻ հանձնաժողովը դիմում է կառավարությանը վնասված շենքերի հրատապ վերանորոգման և ժամանակավոր կացարանների հրատապ կառուցման համար նյութատեխնիկական միջոցների ապահովման խնդրանքով:

2. ԱԻ հանձնաժողովը բաշխում է կառավարությունից ստացված վնասված շենքերի հրատապ վերանորոգման և ժամանակավոր կացարանների հրատապ կառուցման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները՝ ըստ քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության ցուցումներով ներկայացված պլանի:

3. Ներկայումս չկան նյութատեխնիկական կուտակված ռեսուրսներ ժամանակավոր կացարաններ կառուցելու համար, եթե սեյսմիկ վտանգը տեղի ունենա ձմռանը: Դրա համար քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը ձևավորում է այդպիսի նյութերի անհրաժեշտ քանակով պահուստ:

Գլուխ 372. Կենցաղի ապահովում

Ի լրումն կացարաններով ապահովելու միջոցառումների՝ իրականացվում է նաև հրատապ գործունեություն՝ բնակչության կենցաղի ապահովման համար.

- կենցաղային հարցերով խորհրդատվություն
- օժանդակություն աշխատանք փնտրելիս
- հարկերի հետաձգում/նվազեցում/դրանցից ազատում:

Գլուխ 373. Կենցաղային հարցերով խորհրդատվություն՝

Տարահանման շտաբը տարահանման կայաններում ստեղծում է ժամանակավոր խորհրդատվական կետեր տուժած բնակչության կենցաղային հարցերի խորհրդատվության համար,։ Բնակչության կողմից ներկայացվող այն բողոքները և ցանկությունները, որոնք չեն բավարարվում տվյալ խորհրդատվության կետում, ուղևում են շրջանների մակարդակով ստեղծված ժամանակավոր խորհրդատվական կենտրոններ:

Գլուխ 374. Օժանդակություն աշխատանքի փնտրման գործընթացում

Որպեսզի պարզվի աղետի հետևանքով առաջացած գործազրկության ամբողջական պատկերի վերաբերյալ իրավիճակը, քաղաքային զբաղվածության և սոցիալական ծրագրերի կենտրոնը, տարահանման կայաններում տեղակայված աղքատության դեմ պայքարի հենակետային կետերի ղեկավարման հանձնաժողովի օգնությամբ, համակարգում է «Նյութական վնասի մասին տեղեկատվություն»-ը, վեր է հանում վնասի որակական պարամետրերը, և այդ մասին գեկուցում է ԱԻ հանձնաժողովի քարտուղարություն: Բացի դրանից, ԱԻ հանձնաժողովի քարտուղարությունը օպերատիվ կերպով տեղեկատվություն է հավաքում վերականգնողական ծրագրերի համար ժամանակավոր աշխատանքի ընդունման, մասնավոր ձեռնարկությունների կողմից ժամանակավոր անձնակազմի հավաքման մասին և աշխատում է օժանդակություն ցուցաբերել աշխատանքի տեղավորման գործընթացին:

Գլուխ 375. Հարկերի վճարման հետաձգում, հարկերի նվազեցում և հարկերից ազատում

Սեյսմիկ աղետից տուժած հարկատուների հարկային բեռը թեթևացնելու համար իրականացվում են հետևյալ միջոցառումները. հարկերի վճարման սահմանային ժամկետի երկարացում, հարկի վճարման հետաձգում, հարկերի նվազեցում, հարկերից ազատում և այլն: Աղետի հետևանքով ստեղծված իրավիճակին համապատասխան ԱԻ հանձնաժողովի քարտուղարությունը կառավարության հետ համատեղ իրականացնում են անհրաժեշտ միջոցառումներ:

Գլուխ 376. Կենցաղի ապահովման այլ միջոցառումներ

Կառավարության հետ համագործակցելով, ԱԻ հանձնաժողովը օպերատիվ իրականացնում է կենցաղի ապահովման այլ միջոցառումներ.

- ա) աղետի հետևանքով տուժածներին անվճար բաժանում է փոստային քարտեր,

տուժածները ազատվում են փոստային առաքումների համար կատարվող վճարումներից

բ) աղետի գոտի ուղակվող փոստային առքումների համար վճարումներ չեն կատարվում

գ) հանրությանը տեղեկատվություն է տալիս անհայտ կորածների վերաբերյալ, տուժածներին ապահովում են հեռուստացույցներով և այլ ընդունիչ սարքերով:

Գլուխ 377. Հրատապ ֆինանսական միջոցառումներ

1. Բանկոմատների կայուն ապահովում՝ սեյսմիկ աղետի դեպքում, տների փլուզման և հրդեհների հետևանքով, կարելի է կանխատեսել մեծաթիվ բանկոմատների խափանում: Հավանականության կա նաև, որ անմիջապես, սեյսմիկ աղետից հետո, ավանդատուները իրենց հաշիվներից հանում են մեծ գումարներ: Նման պայմաններում, կայուն վիճակի ապահովման համար, ԱԻ հանձնաժողովի քարտուղարությունը, կառավարության միջոցով, դիմում է բանկային հաստատություններին՝ շաբաթ, կիրակի և տոն օրերին ևս աշխատելու խնդրանքով:

2. Բանկային հաստատությունների աշխատանքի ապահովումը՝ անմիջապես երկրաշարժից հետո, կարելի է կանխատեսել, որ իրենց դրամական խնայողությունները կենցաղային նպատակներով օգտագործելու համար շատ քաղաքացիներ կօգտվեն բանկային համակարգից: Այդ կապակցությամբ ԱԻ հանձնաժողովի քարտուղարությունը, կառավարության միջոցով, դիմում է բանկային հաստատություններին՝ շաբաթ, կիրակի և տոն օրերին ևս աշխատելու խնդրանքով:

Գլուխ 378. Աշխատուժի ապահովումը

1. Երկրաշարժի ժամանակ Երևան քաղաքի 12 վարչական շրջաններից և Հայաստանի բոլոր մարզերից վերականգնողական աշխատանքների համար կմոբիլիզացվեն ոստիկանության անձնակազմեր, կամավորներ՝ ինչպես նաև ավտոտրանսպորտ:

2. ԱԻ հանձնաժողովը դիմում է կառավարությանը արտերկրից օգնություն ստանալու խնդրանքով: Աշխատուժը չբավարարելու դեպքում ԱԻ հանձնաժողովը խնդրում է, որ տեխնիկական օգնության հետ միաժամանակ հատկացվի նաև աշխատուժ:

3. Եթե վնասվածքների վերականգնման ժամանակ դժվարություններ են առաջանում, ապա կամավոր գործունեության ավարտից հետո, «Նյութական կորուստների մասին տեղեկատվության» միջոցով տեղեկատվություն է ստացվում այն բնակչության վերաբերյալ, ովքեր մնացել են առանց աշխատանքի: Նրանք հաշվառվում են քաղաքապետարանի կողմից և ներգրավվում են վերականգնողական աշխատանքներում: Նման գործընթացը նպաստում է աշխատանքը կորցրած քաղաքացիների սոցիալ-վերականգնման համար:

Գլուխ 379. Ֆինանսական և նյութական նվիրատվությունների բաշխումը

«Նյութական վնասի վերաբերյալ տեղեկատվության» հիման վրա ԱԻ հանձնաժողովի քարտուղարությունը կազմում և կառավարությանն է ներկայացնում հանրապետությունից և արտերկրից ստացված նյութական և ֆինանսական օգնության բաշխման պլանի տարբերակը: Կառավարությունը ուսումնասիրում և հաստատում է պլանի նախագիծը: Դրանից հետո ԱԻ

հանձնաժողովի քարտուղարությունը շահագրգիռ կառուցվածքների համագործակցությամբ բաշխում է նվիրատվությունները՝ հաստատված պլանով:

Գլուխ 380. Միջազգային օգնության ստացման և բաշխման համար դիմելու ընթացակարգը

Կառավարությունը հաստատում է ստացված միջազգային օգնության բաշխումը՝ ԱԻ շտաբի մշակած բաշխման պլանի նախագծային տարբերակի հիման վրա՝ համաձայն նորմատիվ իրավական ակտերի:

Գլուխ 381. Մաքսային և վիզային ընթացակարգերի պարզեցում

Միջազգային օգնության արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ է իրականացնել օգնության բեռների արագ ընդունումը, ներգրավել անձնակազմ և նյութատեխնիկական միջոցներ: Այդ կապակցությամբ ձեռք են առնվում մաքսային, սահմանային ստուգումների և վիզայի պարզեցված ընթացակարգեր:

Ապահովվում է հետևյալ ապրանքատեսակների ներմուծման սահմանափակման արգելումը.

- ա) սննդամթերք, հագուստ, ծածկոցներ, վրաններ, հավաքովի տնակներ և կենսաապահովման այլ ապրանքներ
- բ) հումանիտար օգնություն ցուցաբերող անձնակազմի իրերը, որոնք կապված են երկրաշարժի հետևանքների վերացման հետ:

Իրականացվում են միջոցառումներ՝ ուղղված պետությունների և դոնոր կազմակերպությունների կողմից օգնության եկած անձնակազմի գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների մաքսազերծմանը և հարկերից ազատմանը:

Աղյուսակ 110 Ապրանքների նմենկլատուրային նմուշներ, որոնք ազատված են մաքսազերծումից և հարկերից

- | |
|--|
| <ol style="list-style-type: none">1. Տվյալների և կապի փոխանցման սարքավորումներ2. Բժիշկների, ինժեներների, սպասարկման պատասխանատու աշխատողների, պետական ծառայության համակարգի պատասխանատու աշխատողների և այլ տեխնիկական մասնագետների կողմից իրականացվող աշխատանքների համար անհրաժեշտ հատուկ սարքավորումներ, տեխնիկա, գործիքներ և էլեկտրոնային սարքավորումներ3. Հրատապ օգնություն ցուցաբերող անձնակազմի գործունեության համար անհրաժեշտ նյութեր և միջոցներ4. Օգնող անձնակազմի համար նախատեսված ջրի մաքրման սարքեր, պահածոյացման սարքավորումներ, դեղորայք և այլ սան-հիգիենիկ և բժշկական սարքավորումներ, նյութեր, միջոցներ5. Օգնող անձնակազմի համար նախատեսված վրաններ, հավաքովի տնակներ, կենցաղային նշանակության նյութեր (սննդի պատրաստման համար, ճաշարանների համար, սան-հիգիենիկ միջոցներ և այլն): |
|--|

Հրատապ օգնության բեռների մաքսային ձևակերպումը իրականացվում է շուրջօրյա ռեժիմով դրա համար հատուկ առանձնացված մաքսային միջանցքների միջոցով: Բեռների ստացումը կատարվում է հնարավորինս արագ, ընտրովի ստուգման տարբերակով:

Ժամանած օգնող անձնակազմի սահմանամերձ ստուգումը կատարվում է հնարավորինս արագ: Ժամանակի առավելագույն կրճատման համար հասարակական կարգի պահպանման

ճառայության հրատապ արձագանքման շտաբը տալիս է ժամանակավոր անցաթղթեր, անձնակազմին տրամադրում է տրանսպորտ և նյութատեխնիկական միջոցներ, ուղղաթիռներ և այլ տրանսպորտային միջոցներ:

Մաս 5 Վերականգնման/ վերակառուցման պլան

Բաժին 36 Վերականգնման/վերակառուցման հիմնական գաղափարները

Գլուխ 382. Վերականգնում/վերակառուցում

Երբ Երևան քաղաքում տեղի ունենա ուժեղ երկրաշարժ, կիրականացվեն ԱԻ արագ և համապատասխան արձագանքման գործողություններ և զուգահեռաբար, կձևակերպվեն վերականգնման/վերակառուցման քաղաքականություններ՝ միջոցառումներ մշակելու համար: Վերականգնման միջոցառումների նպատակն է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքի արագ վերականգնումն ու գործառույթների/գործողությունների, ներառյալ՝ քաղաքականության, տնտեսության, բանկային համակարգի և միջազգային գործառույթների վերսկսումը: Վերակառուցման միջոցառումները կիրականացվեն համակողմանիորեն և սիստեմատիկորեն Երևանը ճկուն և բարենպաստ քաղաք դարձնելու համար, ներառյալ՝ զբաղվածությանը, առողջապահությանը/բուժօգնությանը, բարեկեցությանը, ինչպես նաև բնակարանային ապահովմանն ու կենսաապահովման գծերին ուղղված միջոցառումները՝ բոլոր քաղաքացիների համար ավելի հարմարավետ միջավայր ստեղծելու նպատակով: Աղետից Երևանի վերականգնումը կմիավորի կյանքի վերականգնումն ու քաղաքի վերակառուցումը «ավելի հարմարավետ, կենսունակ համայնքի կառուցման» հիմնական գաղափարի ներքո՝ դերերի բաշխման և համակարգման միջոցով:

Գլուխ 383. Մարդկանց կյանքի վերականգնում/վերակառուցում

- 1) Մարդկանց կյանքի վերականգնման/վերակառուցման թիրախներն են՝
 - ա) Բարձրացնել տուժածների կյանքի կայունությունը և վերականգնել կյանքն առանց հապաղելու
 - բ) Հնարավոր դարձնել հոգեկանին, մարմնին և ունեցվածքին հասցված անվերականգնելի վնասի հետևանքով նախկին կենսաոճին վերադառնալ չկարողացող տուժածների համար այնպիսի կենսաոճի ստեղծումը, որը համապատասխանի ստեղծված իրավիճակին
- 2) Մարդկանց կյանքի վերականգնման/վերակառուցման խթանումն է՝
 - ա) Բնակիչներն ու բիզնեսի ոլորտի գործիչները կշարունակեն վերականգնումը/վերակառուցումն իրենց սեփական պատասխանատվությամբ/ուժերով կամ փոխադարձ օգնությամբ: Կառավարական կազմակերպությունները կշտկեն շրջակա միջավայրը ինքնաապահովման նպատակով՝ տրամադրելով ֆինանսական օգնություն, տեղեկատվություն, ցուցումներ, խորհրդատվություն տուժածների վերականգնման/վերակառուցման սահուն ընթացքի համար
 - բ) Կառավարական կազմակերպությունները կտրամադրեն անմիջական օգնություն այն բնակիչներին, ովքեր իրենց ուժերով չեն կարող վերականգնել/վերակառուցել իրենց կյանքը, ներառյալ՝ բուժօգնության, կրթության, բարեկեցության և այլ միջոցառումներ:

Գլուխ 384. Քաղաքի վերականգնում/վերակառուցում

Քաղաքի վերականգնումը/վերակառուցումը կարվի ավելի կենսունակ և օգտակար Երևան քաղաք ստեղծելու համար, որտեղ մարդիկ կարող են ապրել ավելի հարմարավետ՝ ուշադրություն դարձնելով հետևյալին՝

ա) Սեյսմակայուն քաղաքի ստեղծում՝ կատարելագործելով քաղաքային ենթակառուցվածքներն ու ուրբանիզացված տարածքները, որի նպատակն է մեծացնել աղետների ռիսկերի նվազեցման ունակությունը, որը չի սահմանափակվում միայն լրջորեն վնասված տարածքների վերակառուցմամբ

բ) Վերականգնման/վերակառուցման ժամանակ ստեղծվող օբյեկտների և ծառայությունների մակարդակը պետք է սահմանվի բարձրորակ քաղաք ստեղծելու հեռանկարով՝ բավարարելով նոր սերնդի կարիքները

գ) Քաղաքի ստեղծում՝ քաղաքապետարանի և պետական կառավարման մարմինների ու ԹՄ (բնակիչների միավորումներ, դպրոցներ և ընկերություններ) միջև խնդիրների բաշխման և համագործակցության միջոցով:

Բաժին 37 Վերականգնման/վերակառուցման շտաբեր

Գլուխ 385. Վերականգնման/վերակառուցման շտաբերի ստեղծումը և դրանց դերը

Վերականգնման/վերակառուցման շտաբերը կստեղծվեն որպես ժամանակավոր կազմակերպություններ, որոնք կտարբերվեն սովորական պայմաններում գործող մնացած վարչական կազմակերպություններից՝ երկարաժամկետ տեսանկյունից համակողմանիորեն և սիստեմատիկորեն վերականգնման/վերակառուցման ծրագրեր իրականացնելու համար:

Վերականգնման/վերակառուցման շտաբերի կառուցվածքը և գործունեությունը հիմնված կլինի ստորև նշված շրջանակի վրա, իսկ գործունեության մանրամասն ձևերը կսահմանվեն համաձայն վնասի առկա իրավիճակին:

Գլուխ 386. Վերականգնման/վերակառուցման շտաբերի ստեղծում

Վերականգնման/վերակառուցման շտաբեր կստեղծվեն ավելի վաղ փուլում (օրինակ՝ աղետից մեկ շաբաթ հետո), եթե Երևանում վնասը լինի հսկայական և կանխատեսվի բավականին շատ ժամանակ վերականգնման/վերակառուցման համար:

Գլուխ 387. Վերականգնման/վերակառուցման շտաբերի դերը

Վերականգնման/վերակառուցման շտաբերի դերը հետևյալն է՝

ա) Վերականգնման/վերակառուցման հիմնական քաղաքականության ձևակերպում

բ) Վերականգնման/վերակառուցման պլանների ձևակերպում

գ) Վերականգնման/վերակառուցման համար իրականացվող միջոցառումների ընդհանուր կառավարում

դ) Մի քանի առնչվող կազմակերպությունների միջև հարցերի կարգավորում

ե) Իրականացվող միջոցառումների վերահսկում և խթանում

զ) Անհատական վերակառուցման պլանների մշակում կոնկրետ տարածքների համար՝ ըստ անհրաժեշտության (տես Բաժին 40.3)

է) Իրականացված միջոցառումների արդյունքների գնահատում

Գլուխ 388. Վերականգնման/վերակառուցման շտաբերի անձնակազմը

Վերականգնման/վերակառուցման կազմված է քաղաքապետից, ով հանդիսանում է վերականգնման/վերակառուցման շտաբի տնօրենը, և իր անձնակազմից:

Անձնակազմը բաղկացած է քաղաքապետարանի վարչությունների պետերից, որոնք ցույց են տրված կազմակերպության կառուցվածքային սխեմայում, որպես քաղաքի վարչական կազմակերպություններ, ինչպես նաև պետական կազմակերպությունների/ ընկերությունների

պետերից, որոնք հիմնվում են քաղաքում՝ որպես գլխամասեր կամ մասնաճյուղային գրասենյակներ և տնօրենի կողմից հայտարարվում են որպես կարևոր կազմակերպություններ:

Գլուխ 389. Համագործակցություն ԱԻ հանրապետական հանձնաժողովի հետ

Քանի որ ԱԻ արձագանքման և սեյսմիկ աղետից վերականգնման միջոցառումները պետք է իրականացվեն ըստ հերթականության, ԱԻ հանրապետական հանձնաժողովի հսկողության տակ գտնվող ցանկացած հրատապ վարչական խնդիր և ծրագիր, որն առնչվում է աղետներից վերակառուցմանը կամ դիտվում դրա շարունակություն և համարվում կարևոր ԱԻ կամ վերակառուցման միջոցառումների տեսանկյունից, կիրականացվի երկու շտաբերի միջև սերտ համակարգման միջոցով:

Բաժին 38 Վերականգնման/վերակառուցման պլանի ձևակերպում

Գլուխ 390. Վերականգնման/վերակառուցման հիմնական քաղաքականության ձևակերպում

Վերականգնման/վերակառուցման շտաբի տնօրենը պատասխանատու է վերականգնման/վերակառուցմանը վերաբերող հիմնական քաղաքականության ձևակերպման, պլանի ձևակերպումից հետո մեկ տարվա ընթացքում ինտենսիվորեն իրականացվող առաջնային միջոցառումները մատնանշող վերականգնման/վերակառուցման պլանի ձևակերպման/իրականացման և որոշակի ոլորտներում հարաբերականորեն երկարաժամկետ թիրախային ուղղվածությամբ սեկտորային վերականգնման/վերակառուցման պլանների ձևակերպման/իրականացման համար: Վերականգնման/վերակառուցման շտաբի տնօրենը պետք է հրապարակի վերականգնման/վերակառուցման հիմնական քաղաքականությունը վերականգնման/վերակառուցման շտաբի անդամների հետ քննարկելուց հետո, որպեսզի հստակեցվի քաղաքացիական կյանքի համար կատարյալ ապագան, իսկ ուրբանիզացվող տարածքը ձևավորվի վերակառուցումից հետո, ինչպես նաև հրահանգներ այդ ապագան իրագործելու համար:

Գլուխ 391. Վնասի իրավիճակների հստակեցումը

Որպես վերականգնման/վերակառուցման պլանի ձևակերպման համար հիմնական տեղեկատվություն, պետք է հստակեցվեն վնասի հետևյալ իրավիճակները.

- ա) Զոհերի քանակը (մահացածներ, կորածներ և վիրավորներ) և ապրելու պայմանները,
- բ) Ենթակառուցվածքների վնասի իրավիճակները, ինչպիսիք են գազի, ջրի մատակարարումը, կոյուղին, էլեկտրականությունը, կապը և այլն,
- գ) Տրանսպորտի միջոցների (մեքենաներ, օդանավ, և այլն) և այնպիսի տրանսպորտային օբյեկտների վնասի իրավիճակները, ինչպիսիք են օդանավակայանները, կամուրջները, ճանապարհները, երկաթուղային կայանները, ավտոբուսային կայանները և այլն, ներառյալ վերանորոգման ենթակա գործարանները, վառելիքի լցակայանները և այլն),
- դ) Վնասի իրավիճակներ՝ կապված գետի օբյեկտների հետ, ինչպիսիք են գետի պատնեշները, ջրաբաշխիչ կայանները և այլն,
- ե) Հասարակական օբյեկտների հետ կապված վնասի իրավիճակներ՝ մասնավորապես հիվանդանոցներ, դպրոցներ,
- զ) Շենքերի վնասի իրավիճակները (ծանր վնաս կրած և փլուզված շենքերի քանակ, տեղադրություն և գործառույթները),
- է) Այլ:

Գլուխ 392. Վերականգնման/վերակառուցման քաղաքականության ձևակերպումը

հիմնական

Քաղաքականությունը ձևակերպվելու է հաշվի առնելով հետևյալ հարցերը՝

- ա) Վերակառուցման և նորմալ կյանքի վերականգնման արագ իրականացում
- բ) Ավելի ապահով և առավել հարմարավետ կենսապայմանների ձևավորում
- գ) Աշխատանքի անվտանգություն, գործի վերականգնում և արդյունաբերության ստեղծում, որոնք համապատասխանում են նոր ժամանակաշրջանին
- դ) Պետության հիմնական ֆինանսական և տնտեսական գործառույթների անհապաղ վերականգնում և դրանց հետագա աճի համար ամուր հիմքերի ձևավորում

Գլուխ 393. Վերականգնման/վերակառուցման պլանի ձևակերպում

Վերականգնման/վերակառուցման հիմնական ռազմավարությունների հիման վրա վերականգնման/վերակառուցման շտաբի տնօրենը կձևակերպի վերականգնման/վերակառուցման բազմակողմանի պլան՝ որպես քաղաքի ամենաբարձր մակարդակի պլան, որտեղ վերականգնման/վերակառուցման թիրախները և վերականգնման/վերակառուցման իրականացվելիք ծրագրերի սխեման պետք է հստակեցվեն:

Գլուխ 394. Ձևակերպման ընթացակարգը

Վերականգնման/վերակառուցման պլանի ձևակերպման ընթացակարգը հետևյալն է.

- 1) Վերականգնման/վերակառուցման շտաբի տնօրենը պետք է հրավիրի վերականգնման/վերակառուցման խորհուրդ՝ պլանի հայեցակարգը քննարկելու համար, և պահանջի խորհրդից կազմել առաջարկներ:
- 2) Ելնելով խորհրդի կողմից ներկայացված առաջարկներից և շտաբի անդամների հետ քննարկման արդյունքում՝ վերականգնման/վերակառուցման շտաբի տնօրենը կձևակերպի և կհրապարակի վերականգնման/վերակառուցման պլանը՝ աղետից հետո վեց ամսվա ընթացքում:
- 3) Ինչ վերաբերում է որոշ ոլորտների, որոնք պահանջում են կոնկրետ ծրագրերի գլխավոր պլաններ, ինչպիսիք են քաղաքային վերակառուցումը, շենքերի վերակառուցումը և այլն, ապա այդ որոշակի ոլորտների վերաբերյալ վերականգնման/վերակառուցման պլանները կձևակերպվեն առանձին՝ վերականգնման/վերակառուցման պլանի ձևակերպմանը զուգահեռ (տես Բաժին 40):

Գլուխ 395. Թիրախի սահմանում

Թիրախի սահմանման համար պետք է հաշվի առնել հետևյալ նկատառումները.

- 1) Վերականգնման/վերակառուցման պլանով նախատեսված նպատակներին պետք է հասնել պլանի հրապարակումից հետո մեկ տարվա ընթացքում:

- 2) Պետք է հստակեցվեն հիմնական ռազմավարությունները:
- 3) Ապագա բնակչության/քաղաքային տարածքի չափը պետք է սահմանվի որպես վերակառուցման ապագա շրջանակ:
- 4) Ներառյալ քաղաքային ենթակառուցվածքների վերակառուցումը, արդյունաբերության վերականգնումը, շենքային վերակառուցումը և առևտրային շրջանների վերակառուցումը՝ պետք է ներկայացվեն այն տարածքները, որոնց համար պետք է ձևակերպվեն հատուկ վերակառուցման պլաններ, և կոնկրետ տարածքի վերակառուցման պլաններից յուրաքանչյուրի շրջանակը պետք է հստակեցվի:
- 5) Հաշվի առնելով այսօրի տարածքները, ինչպիսիք են ենթակառուցվածքները և բնակելի տարածքները, հատուկ տարածքների վերակառուցման պլանների թիրախներին հասնելու համար պահանջվող ժամանակահատվածը պետք է սահմանվի 2 տարի, 5 տարի կամ 10 տարի և այլն:
- 6) Ընդհանուր նպատակները և ուրվագծային նպատակները պլանավորված ոլորտների և կետերի համար՝ ներառյալ հատուկ տարածքները, պետք է քանակապես որոշվեն դրանց ժամկետների ավարտին՝ արդյունավետ գնահատման համար:

Գլուխ 396. Իրականացման պլանի ձևակերպումը

Կոնկրետ իրականացման պլանները կձևակերպվեն վերականգնման/վերակառուցման պլանի սահուն իրականացման համար: Իրականացման պլաններում պետք է նշվեն իրականացնող վարչություններն ու կազմակերպությունները, և պետք է պարզաբանվի բյուջեն՝ հաշվի առնելով ֆինանսական աղբյուրները՝ ներառյալ օտարերկրյա աջակցությունը:

Գլուխ 397. Իրականացման միջոցառումների մոնիտորինգ և արդյունքների գնահատում

Պլանների իրականացման ընթացքում պետք է կատարել իրադրության մոնիտորինգ և հաստատում անհրաժեշտության դեպքում մեթոդները համապատասխանեցնելու/ փոփոխելու համար: Ինչպես նաև, իրականացման ժամկետի ավարտին արդյունքները կգնահատվեն՝ պլանավորման ընթացքում քանակապես սահմանված թիրախների և դրանց ձեռքբերումների մակարդակի միջև համեմատության միջոցով: Եթե անհրաժեշտ է, վերակառուցման լրացուցիչ պլանները և հատուկ տարածքների ընդլայնված պլանները կձևակերպվեն վերակառուցման լրացուցիչ միջոցառումների իրականացման համար:

Բաժին 39 Քաղաքացիական կյանքի կայունությունը

Գլուխ 398. Ընդհանուր դրույթներ

Սեյսմիկ աղետից հետո Երևանի քաղաքապետարանը պետք է ստեղծի այնպիսի միջավայր, որտեղ քաղաքացիները կարող են ակտիվորեն ներգրավվել վերակառուցման աշխատանքներում որպես վերակառուցման հիմնական դերակատարներ՝ առանց անհանգստանալու իրենց սեփական կյանքի մասին: Այս նպատակով պետք է իրականացվեն բավարար միջոցառումներ հետևյալ կետերի ուղղությամբ՝

- 1) Աղետից տուժածների բարեկեցությունը (կյանքի համար անհրաժեշտ գործունեություններ, օրինակ՝ առողջապահությունը, բուժօգնությունը, զբաղվածությունը, կրթությունը, սպառումը և այլն)
- 2) Արտոնություններ/ փոխառություններ կենսապահովման համար (ապրելու ծախսեր, տան գնում, տան վերակառուցում և այլն)
- 3) Բնակարանով ապահովում (ապրելու տարածքի ապահովում, տեխնիկական օգնություն վերանորոգման համար, վերանորոգում և վերակառուցում)
- 4) Վնասված բնակելի շենքերի մանրամասն հետազոտություն և վերականգնում
- 5) Թափոնի մշակում

Գլուխ 399. Աղետից տուժածների բարեկեցությունը

Վտանգավոր տարածքներում գտնվող կամ անտուն մնացած բնակիչները տարահանվում են Փրկարար Ծառայության կողմից նախատեսված և պատրաստված տարահանման վայրեր: Տարահանման հանձնաժողովը տարահանվողներին կտրամադրի հանրային բարեկեցության հետևյալ օժանդակությունը՝ մինչև մշտական բնակարանների տրամադրելը:

Գլուխ 400. Առողջապահություն և բժշկական օգնություն

Բուժօգնության և տարահանման շտաբերը կիրականացնեն ստերիլիզացիա և առողջական վիճակի ստուգում տարահանման և հասարակական վայրերում, ինչպես նաև տներում՝ սանիտարական պայմանների վատթարացումը և վարակի տարածումը կանխելու նպատակով (տես գլուխ 28-ը): Նախատեսված հիվանդանոցներում կտրվեն ցուցումներ սանիտարական պայմանների, վերքերի և հիվանդությունների շարունակական բուժօգնության հարցերով: Բուժօգնության բավարար հնարավորություններ ապահովելու համար վերականգնման/վերակառուցման շտաբերը հաշվի կառնեն հիվանդների հոգսերի նվազեցմանն ուղղված միջոցառումները, օրինակ՝ բուժզննման և դեղորայքի արժեքի նվազեցումը:

Գլուխ 401. Զբաղվածությունը

Պահանջվում է երկար ժամանակ և մեծ ծախսեր վնասված ընկերություններում աշխատանքը վերսկսելու համար: Ընկերությունները կարող են սնանկանալ, եթե չկարողանան վճարել գործարանների և տեխնիկայի վերականգնման արժեքը: Դա կհանգեցնի շատ մարդկանց գործազրկության: Վերականգնման/վերակառուցման շտաբերը պետք է խթանեն տուժած ընկերությունների մասնակցությունը վերականգնման/վերակառուցման ծրագրերին, ինչպիսիք են շինարարական աշխատանքները, ինչպես նաև օրավճարով ծրագրերը՝ աշխատունակ տուժածների կանխիկ եկամուտ ապահովելու համար: Վերականգնման/վերակառուցման շտաբերը կտրամադրեն ֆինանսական միջոցներ ցածր տոկոսներով որպես օգնություն գործարանների վնասված օբյեկտների և տեխնիկայի վերականգնման համար:

Գլուխ 402. Կրթությունը

« Կրթության և գիտության նախարարությունը կտրամադրի հետևյալ օգնությունը՝ համաձայն կրթության ուղղությամբ հրատապ միջոցառումների (տես Բաժին 31-ը)»:

- 1) Ուսումնական պարագաների (օրինակ՝ դասագրքեր և գրենական պիտույքներ) տրամադրում տուժած ուսանողներին, ովքեր կորցրել են դրանք,
- 2) Բյուջեի ապահովում և հատկացում այնպիսի միջոցառումների համար, ինչպիսիք են կրթաթոշակ ստացող ուսանողների թվի աճը՝ դպրոցից նրանց դուրս մնալը կանխելու համար,
- 3) Դպրոցի շենքերի վնասի հետազոտության իրականացում, բյուջեի ապահովում և դպրոցի շենքերի վերանորոգման ծրագրի կառավարում:

Գլուխ 403. Սպառողների կյանքը

Վերականգնման/վերակառուցման շտաբերը և Երևանի քաղաքապետարանի կոմունալ տնտեսության վարչությունը կաջակցեն առաջին անհրաժեշտության պարագաների կայուն մատակարարմանը և կուժեղացնեն ստուգումն այդ պարագաների գնի կայունության ուղղությամբ: Բացի այդ, շտաբերը և վարչությունը կօժանդակեն Երևան քաղաքում շուկաների վերականգնմանը/վերակառուցմանը և առաջին անհրաժեշտության պարագաների բաշխման համակարգի վերակառուցմանը: Սննդի և նյութերի հոսքի սահմանափակման դեպքում կուսումնասիրվի ժամանակավոր շուկաների ստեղծման հարցը՝ հարակից տարածքներից սննդի և նյութերի սահուն բաշխման նպատակով:

Գլուխ 404. Արտոնություններ/ փոխառություններ կենսապահովման համար

Վերականգնման/վերակառուցման շտաբերը կտրամադրեն հետևյալ արտոնություններն ու փոխառությունները այն տուժածների կենսապահովման համար, ովքեր գործազրկության, տների վնասի և կանխիկ գումարի կորստի և այլնի պատճառով չեն կարող շարունակել ապրել առօրյա կյանքով:

Գլուխ 405. Գումարի և նյութերի տրամադրում

Գումար և նյութեր կտրամադրվեն համաձայն վնասի իրավիճակի, տուժածների գույքի, ընտանիքի կազմի և եկամուտի: Տրամադրվելիք հնարավոր աջակցության ցուցակը բերված է աղյուսակ 111-ում:

Աղյուսակ 111 Հնարավոր աջակցության ցուցակը

- | |
|--|
| <ol style="list-style-type: none">1. Սնունդ, ջուր, հագուստ, անկողնային պարագաներ և այլն2. Կահույքի և ունեցվածքի՝ նոր հասցե փոխադրման միջոցներ3. Բավական լայնածավալ վերանորոգման, օրինակ՝ բնակարանի վերանորոգման ծախսեր4. Վառելիք տուժածների տաքանալու և մեքենաների համար5. Բուժօգնության խթանում6. Պահանջվող այլ օժանդակություն |
|--|

Գլուխ 406. Փոխառություն կենսաապահովման համար

Դրամաշնորհի բավականին փոքր անհրաժեշտության դեպքում կենսաապահովման համար փոխառություն կտրամադրվի հետևյալ կերպ.

- 1) Նպաստի տրամադրում այն տուժածներին, ովքեր կարող են վերականգնել առօրյա կյանքը հիմնականում իրենց հաշվին,
- 2) Նպաստի տրամադրում այնպիսի բաների ծախսերի համար, որոնք ներառված չեն արտոնությունների ցուցակի մեջ, ինչպիսիք են
- 3) Նպաստի տրամադրում այնպիսի բաների ծախսերի համար, որոնք չեն համարվում այդքան հրատապ, այն դեպքում, երբ արտոնությունների համար հաշվարկված արժեքը գերազանցում է վերականգնման/կառուցման համար նախատեսված ընդհանուր բյուջեն:

Գլուխ 407. Բնակարանով ապահովում

Մշտական բնակարանները կտրամադրվեն ըստ հետևյալ միջոցառումների՝

- 1) Մշտական բնակեցում ժամանակավոր տներում (Երևանի քաղաքապետարանը կտրամադրի ժամանակավոր տներ այն տուժածներին, ովքեր կորցրել են իրենց տները՝ համաձայն ՀՀ Կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի թիվ 919 որոշման և տարահանման պլանի): Այն դեպքում, երբ ժամանակավոր բնակարանում ապրող տարահանվողները ցանկանում են մնալ իրենց ժամանակավոր տներում որպես մշտական բնակարաններ, Երևանի քաղաքապետարանը ձեռք կբերի ժամանակավոր բնակարանը, որպես մշտական բնակարան՝ տան սեփականատիրոջ համաձայնությամբ:
- (2) Մշտական տների կառուցումը (Վերակառուցման արժեքը հաշվարկելու նպատակով Երևանի քաղաքապետարանը կիրականացնի հետազոտություն վնասված այն տների համար, որոնց վերանորոգում չի ակնկալվում ծանր վնասվելու կամ փլուզման պատճառով:

Վերակառուցման ծրագրերը կիրականացվեն Արտակարգ իրավիճակների և Ֆինանսների նախարարություններ արդյունքները ներկայացնելուց և հավանություն ստանալուց հետո):

Գլուխ 408. Վնասված շենքերի մանրամասն հետազոտություն և վերականգնում

1. Ելնելով վնասի դասակարգումից՝ անհրաժեշտ է վերականգնել վնասված շենքերը շարունակական օգտագործման համար՝ վերանորոգելով հնարավորինս շատ: Սա նույնպես նպաստավոր է ԹՄ պահպանման տեսանկյունից:

2. Վնասված շենքերի հրատապ հետազոտությունն իրականացվում է բնակարանով ապահովման և առօրյա կյանքի հրատապ միջոցառումների ուսումնասիրման նպատակով տվյալների պատրաստման, ինչպես նաև հետցնցումներից շենքերի անվտանգության գնահատման միջոցով շենքերի փլուզման երկրորդային աղետի կանխարգելման համար:

3. Մյուս կողմից, սույն փաստաթղթում նշված վերականգնման/վերակառուցման փուլում վնասված տների մանրամասն հետազոտությունը պլանի ձևակերպման և վերականգնման/վերակառուցման միջոցառումների իրականացման համար է, որպեսզի հնարավոր լինի երկարաժամկետ օգտագործումը՝ ըստ վնասի աստիճանի:

4-րդ և 5-րդ աստիճանի վթարային շենքերը հիմնականում կքանդվեն և կվերակառուցվեն:

Գլուխ 409. Վնասված շենքերի մանրամասն հետազոտությունը

Հրատապ հետազոտությունից հետո կիրականացվի մանրամասն հետազոտություն հիմնականում կառուցվածքային նախագծման որակավորված ինժեներներից բաղկացած հետազոտական խմբի կողմից, ովքեր իրականացրել են հրատապ հետազոտությունը:

Երևանի քաղաքապետարանի Ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը, Քաղաքաշինության նախարարությունը և ՍՊԾ-ը կստեղծեն օժանդակման շրջանակ հետազոտության սահուն իրականացման համար:

Գլուխ 410. Վնասի մանրամասն հետազոտության վերաբերյալ հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Հետազոտական խմբերը կպատրաստեն հաշվետվություններ վնասված շենքերի մանրամասն հետազոտության վերաբերյալ՝ ամփոփելով դպրոցների, հիվանդանոցների, բազմահարկ բնակելի շենքերի և այլնի վնասի իրավիճակը, վերականգնման/վերակառուցման նպատակն ու մեթոդաբանությունը, նախահաշիվը (միավոր արժեքը յուրաքանչյուր մ² համար) և այլն ու կներկայացնի հաշվետվությունները վերականգնման/վերակառուցման շտաբեր: Շտաբերը կներկայացնեն հաշվետվության բովանդակությունը բյուջետային հայտով: Կառավարության հաստատումից հետո շտաբերը կուղարկեն դրանք Երևանի քաղաքապետարանի Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն և Քաղաքաշինության նախարարություն վերականգնման/վերակառուցման ծրագրերի իրականացման համար:

Վնասված շենքերի վերականգնման/վերակառուցման միջոցառումների կետերն ըստ փուլերի բերված են աղյուսակ 112-ում:

Աղյուսակ 112 Վնասված շենքերի վերականգնման/վերակառուցման միջոցառումների կետերն ըստ փուլերի

Փուլ (ժամանակի սահմանում)	Միջոցառումների կետեր
1-ին փուլ (անմիջապես աղետից հետո)	Հրատապ հետազոտություն (հետազոտություն վնասի իրավիճակը և հետցնցումներից անվտանգության աստիճանը պարզելու համար)
2-րդ փուլ (խառնաշփոթի կարգավորման ժամանակ)	Մանրամասն հետազոտություն (հետազոտություն մանրամասն վնասի իրավիճակի և վերականգնման/վերակառուցման օբյեկտը պարզելու համար)
3-րդ փուլ (կայուն ժամանակահատվածներ)	Վերականգնման/վերակառուցման աշխատանքների նախագծում և իրականացում

Գլուխ 411. Շինարարական աղբի մշակում

Շենքերի փլուզումից առաջացած շինարարական աղբի մշակումը կիրականացվի ըստ Բաժին 34-ում նշված ընթացակարգի: Աշխատանքների հատուկ կետերն են շինարարական աղբի ընդհանուր ծավալի հաշվարկը, փոխադրումը և թափելը: Աշխատանքների արժեքի կիսումը կսահմանվի վերականգնման/վերակառուցման շտաբերի կողմից: Քանդման ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձվի ստորև բերված հարցերին՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու համար:

ա) Պետք է հաշվի առնել աղմուկի մակարդակի կարգավորումը (տես աղյուսակ 113):

բ) Փոշու առաջացումը կանխելու համար անհրաժեշտ միջոցառումներ, օրինակ՝ ջրցանում, պետք է իրականացվեն քանդման ժամանակ:

Փոշու չափանիշն ըստ Բնապահպանության նախարարության՝ 24 ժամում միջինը 0.15 մգ/մ³:

գ) Ազբեստ պարունակող շենքերի քանդման դեպքում պետք է իրականացվի հետազոտություն նախքան քանդելը և պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցառումներ՝ համաձայն հետազոտման արդյունքի:

Աղյուսակ 113 Աղմուկի մակարդակի չափանիշները

Հ/Հ	Շենքերի և տարածքների նշանակությունը	Օրվա ժամը	Ձայնի աստիճաններ, LA, և ձայնի հավասարազոր աստիճաններ, LA հավասարազոր է	Ձայնի առավելագույն մակարդակները դԲ

			դԲ-ի	
1	Առողջական կենտրոնների և հիվանդանոցների բաժանմունքները, վիրաբուժարանները	22 ⁰⁰ - 6 ⁰⁰	35	50
		6 ⁰⁰ - 22 ⁰⁰	25	40
2	Կլինիկաներում, բուժարաններում դիսպանսերներում, հիվանդանոցներում, առողջապահական կենտրոններում բժիշկների կաբինետները		35	50
3	Կրթական հաստատությունների և դպրոցների դասասենյակներ, ուսուցչանոցներ, լսարաններ, կոնֆերանս-սրահներ, գրադարանների ընթերցասրահներ		40	55
4	Բնակարաններ, հանգստյան տներ, ծերանոցներ, հաշմանդամների համար կացարաններ, բնակավայրեր, մանկապարտեզների և գիշերօթիկ դպրոցների հանրակացարաններ	22 ⁰⁰ - 6 ⁰⁰	40	55
		6 ⁰⁰ - 22 ⁰⁰	30	45
5	Հանրակացարանների և հյուրանոցների սենյակներ	22 ⁰⁰ - 6 ⁰⁰	45	60
		6 ⁰⁰ - 22 ⁰⁰	35	50
6	Սրճարանների, ռեստորանների, ճաշարանների սրահներ		35	70
7	Խանութներ, առևտրի կենտրոններ, օդանավակայանի և կայարանների սպասասրահներ, կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների ընդունման կետեր		60	75
8	Հիվանդանոցների և առողջական կենտրոններին կից տարածքներ	22 ⁰⁰ - 6 ⁰⁰	45	60
		6 ⁰⁰ - 22 ⁰⁰	35	50
9	Բնակելի շենքերին, կլինիկաներին, դիսպանսերներին, հանգստյան տներին, ծերանոցներին, հաշմանդամների համար կացարաններին, մանկապարտեզներին, դպրոցներին և կրթական հաստատություններին, գրադարանների շենքերին անմիջապես կից տարածքներ	22 ⁰⁰ - 6 ⁰⁰	55	70
		6 ⁰⁰ - 22 ⁰⁰	45	60
10	Հյուրանոցներին, հանրակացարաններին կից տարածքներ	22 ⁰⁰ - 6 ⁰⁰	60	75
		6 ⁰⁰ - 22 ⁰⁰	50	65
11	Ազատ տարածքներ՝ նախատեսված հանգստի համար առողջական կենտրոնների,		35	50

	հիվանդանոցների տարածքում			
12	Ազատ տարածքներ՝ նախատեսված հանգստի համար միկրոշրջանների, բնակելի շենքերի խմբերի, ամառանոցների, հաշմանդամների համար կացարանների, ծերանոցների, մանկապարտեզների, դպրոցների և այլ կրթական հաստատությունների տարածքում		45	60

Բաժին 40 Քաղաքի վերակառուցումը

Գլուխ 412. աղաքի վերակառուցման հիմնական նկատառումները

Քաղաքի վերակառուցումը հիմնված է հետևյալի վրա.

- ա) Անհապաղ ձևակերպել վերականգնման/վերակառուցման պլան, ներառյալ քաղաքի պլանավորումը, ինչպես նաև ապահովել պլանի կայուն իրականացումը:
- բ) Հողօգտագործումը և շինարարական գործունեությունները պետք է հսկվեն հավուր պատշաճի՝ հիմնվելով պլանի վրա:
- գ) Առաջարկել ֆինանսական պլան, որը կմիավորի արտաքին օգնությունը և Հայաստանի Հանրապետության վերականգնման/վերակառուցման բյուջեն:
- դ) Կազմել քաղաքի վերակառուցման սցենար՝ առաջնահերթությունների որոշման նպատակով:
- ե) Գնահատել վերականգնման/վերակառուցման պլանի առաջընթացը (ազդեցություններ, բնակչությունը և քաղաքացիների եկամուտը) և պլանում ճկունորեն կատարել ուղղումներ և փոփոխություններ:

Գլուխ 413. Տարածաշրջանային տնտեսության վերականգնում

Եթե Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք և տնտեսական կենտրոն հանդիսացող Երևան քաղաքը վնասվի սեյսմիկ աղետից և կորցնի տնտեսական կենտրոնի գործառույթը, ապա շրջակա տարածքների և ամբողջ Հայաստանի տնտեսությունը նույնպես լուրջ վնաս կկրի: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ արագ և արդյունավետ ձեռնարկել տնտեսության վերականգնման միջոցներ, ինչպես նշված է ստորև:

Գլուխ 414. Առևտուր

Վերակառուցման առևտուրը պարտադիր է բնակիչների կայուն առօրյայի համար: Ավելին, այն հանդիսանում է տարածաշրջանային տնտեսության վերականգնման բանալի: Սննդի, ապրանքների և այլնի հետ առնչվող առևտրային օբյեկտները պետք է վերակառուցվեն որպես բարձր առաջնահերթություն ունեցող հարց՝ տարածաշրջանային տնտեսության և Երևան քաղաքի տեսանկյունից:

Գլուխ 415. Ֆինանսներ

Ֆինանսական կենտրոնի գործառույթի վերակառուցումը պետք է իրականացվի բարձր առաջնահերթությամբ, ինչպես օրինակ՝ կառուցման ենթակա ֆինանսական կենտրոնի տարածքի նշանակումը և այդ տարածքում շենքերի և ենթակառուցվածքների գերադասելի վերակառուցումը:

Գլուխ 416. Շինարարություն

Շինարարական արդյունաբերությունը կարևոր է քաղաքի վերակառուցման համար, ներառյալ վնասված շենքերի վերականգնումը: Ակնկալվում է, որ ամբողջ տնտեսությունը կակտիվանա շինարարական արդյունաբերության ակտիվացման միջոցով: Բացի այդ, շինարարության գնի իջեցումը և վերակառուցման արագացումը կարող են իրականացվել շինարարական արդյունաբերության ակտիվացման միջոցով:

Բնակիչները, ովքեր դադարել են աշխատել, կարող են ապահովել եկամուտների առաջացում՝ ունենալով բիզնեսի հնարավորություն: Հետևաբար, ակնկալվում է ավելացնել սպառումը, որը վերակառուցման ցիկլի համար կարևոր գործոն է:

Գլուխ 417. Արտադրություն

Վերակառուցման հնարավորության դեպքում կիրականացվի արտադրության (արդյունաբերական համալիրների) խթանում: Ներքին արդյունաբերության՝ արդյունաբերական համալիրների և այլնի հավաքման և օպտիմալ կազմակերպմանը զուգընթաց արդյունաբերական համալիրներին կավելացվի արտաքին ներդրման արտադրական բազաների գործառույթ, խթանելով արտասահմանյան գործարանների շարժը:

Գլուխ 418. Հատուկ սեկտորների վերակառուցում

Հատուկ սեկտորների վերակառուցման պլաններ կձևակերպվեն այն սեկտորների համար, որոնք ունեն կոնկրետ նախագծային ծրագրեր և պահանջում են մեծ ֆինանսներ, ինչպիսիք են ենթակառուցվածքների, բնակարանային ֆոնդի և այլնի սեկտորները:

Գլուխ 419. Հատուկ սեկտորների համար վերակառուցման պլանների ձևակերպում: Վնասի վիճակի հստակեցումը

Հատուկ սեկտորի վերակառուցման պլանի պատրաստման համար մանրամասն կհստակեցվեն առնչվող սեկտորի վերաբերյալ փաստացի վնասի վիճակը՝ վերականգնման/վերակառուցման պլանի առնչությամբ նկարագրված վնասի վիճակի վերաբերյալ տվյալների հաստատմանը զուգահեռ:

Գլուխ 420. Նպատակների սահմանում

Հատուկ սեկտորների վերակառուցման պլանի վերաբերյալ նպատակները կսահմանվեն վերականգնման/վերակառուցման պլանում ներկայացված յուրաքանչյուր սեկտորի ուղղվածության հիման վրա, հաշվի առնելով հետևյալ կետերը՝

- 1) Հատուկ սեկտորի վերակառուցման պլանի թիրախային տարվա սահմանում որպես առաջին փուլ (2 տարի հետո), երկրորդ փուլ (5 տարի հետո) և երրորդ փուլ (10 տարի հետո և ավելի ուշ)
- 2) Հատուկ սեկտորի վերակառուցման համար շրջանակի (սեկտորի հիմնական քաղաքականությունը, ապագայի տեսլականը, կարևոր հարցերը և այլն) սահմանում

- 3) Առնչվող սեկտորում յուրաքանչյուր կարևոր հարցի համար կոնկրետ թիրախի սահմանում
- 4) Թիրախային տարվա յուրաքանչյուր փուլի համար որակավորված թիրախի սահմանում, որպեսզի հնարավոր լինի արդյունքների իրականացման և գնահատման ընթացքում հեշտությամբ իրականացնել մոնիտորինգ
- 5) Վերականգնման/վերակառուցման պլանի և հատուկ սեկտորի վերակառուցման պլանի միջև համատեղելիության ապահովում

Գլուխ 421. Իրականացման պլանների ձևակերպում

Առաջին փուլում (2 տարի հետո) կձևակերպվի մանրամասն իրականացման պլանը, ներառյալ իրականացման կազմակերպումը, բյուջեն և այլն: Երկրորդ փուլի (5 տարի հետո) և երրորդ փուլի (10 տարի հետո և ավելի ուշ) համար կձևակերպվի նախագծային իրականացման պլան՝ հաշվի առնելով ճկունությունը:

Գլուխ 422. Իրականացման առաջընթացի մոնիտորինգ և ձեռքբերման աստիճանի գնահատում

Հատուկ սեկտորի վերակառուցման պլանի իրականացման ընթացքում՝ յուրաքանչյուր 6 ամիսը մեկ կկատարվի իրականացման առաջընթացի մոնիտորինգ և անհրաժեշտության դեպքում՝ իրականացման մեթոդի կարգավորում/ձևափոխություն: Առաջին փուլի վերջում կիրականացվի միջանկյալ արդյունքների գնահատում՝ համեմատելով քանակականացված թիրախը և փաստացի առաջընթացը, իսկ արդյունքները կօգտագործվեն երկրորդ փուլի մանրամասն պլանավորման համար: Երկրորդ փուլի վերջում նույն կերպ կիրականացվի գնահատում, որի արդյունքները կարտացոլվեն երրորդ փուլի մանրամասն պլանում: Երրորդ փուլի վերջում պլանում առկա բոլոր հարցերի համար կիրականացվի ձեռքբերման աստիճանի գնահատում, որի արդյունքը կօգտագործվի ազգային զարգացման պլանի և սեկտորային զարգացման պլանի համար, որոնք կպատրաստվեն հաջորդ քայլում:

Գլուխ 423. Ենթակառուցվածքների վերակառուցում

Ինչ վերաբերում է քաղաքային ենթակառուցվածքներին, գլուխ 7-ում (Սեյսմակայուն քաղաքաշինություն) բերված հարցերը հաղթահարելու համար կիրականացվի վերականգնում/վերակառուցում: Բացի այդ, կարևորվում են հետևյալ հարցերը.

- 1) Ջրամատակարարման օբյեկտների վերակառուցում և կոյուղու օբյեկտների կառուցում (ապահով և մաքուր քաղաք ստեղծելու համար)
- 2) Էլեկտրականության և գազամատակարարման վերականգնում (առօրյա կյանքի վերականգնման համար, տես գլուխ 424-ը)
- 3) Ճանապարհային ցանցի, կամուրջների և հասարակական տրանսպորտի վերականգնում (տնտեսական և քաղաքացիական գործունեությունների ակտիվացման համար)

Գլուխ 424. Առօրյա կյանքի վերակառուցում

Ինչ վերաբերում է բնակիչների առօրյա կյանքի համար անհրաժեշտ քաղաքային գործառույթին, վերակառուցման վերաբերյալ առաջնահերթ հարցերը բերված են ստորև.

- 1) Կենսապահովման օբյեկտների և գործառույթների վերականգնում, ինչպիսիք են ջրամատակարարումը, կոյուղին, էլեկտրամատակարարումը և գազամատակարարումը (հարմարավետ և առողջ առօրյայի համար անհրաժեշտ քաղաքային գործառույթ)
- 2) Առողջապահական/բժշկական, կրթական և բարեկեցության ծառայությունների օբյեկտների և գործառույթների վերականգնում (առաջ և ապահով կյանքի համար անհրաժեշտ քաղաքային գործառույթ)
- 3) Տնտեսական գործունեություններին աջակցելու նպատակով օբյեկտների և գործառույթների վերականգնում (առօրյա կյանքի եկամուտների ապահովման համար անհրաժեշտ քաղաքային գործառույթ)

Գլուխ 425. Տների վերակառուցում

Տների վերակառուցումը կիրականացվի վերականգնման/վերակառուցման պլանի համաձայն, որը պատրաստվել է փաստացի վնասի վիճակի հիման վրա և հստակեցվել վնասված շենքերի մանրամասն ուսումնասիրության միջոցով:

Տների վերակառուցման հետ կապված պետք է հաշվի առնել հետևյալ կետերը.

- 1) Առավել լավ կենսական պայմաններ ստեղծելու համար պետք է ուսումնասիրվեն հետևյալ կետերը.
 - ա. Անհրաժեշտության դեպքում ազգային ստանդարտների վերանայում և կարգավորում, ինչպիսին է շինարարական նորմը,
 - բ. Երևանի կանոնակարգի/կանոնի վերանայում և կարգավորում, հաշվի առնելով քաղաքի և հողօգտագործման փաստացի վիճակը
 - գ. Բազմաբնակարան տների և հասարակական օբյեկտների բակերում կայանատեղերի ստեղծումը դարձնել պարտադիր
- 2) Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը կվերանայվի և կկարգավորվի փաստացի վնասի վիճակին համաձայն, ինչպես օրինակ՝ նոր կառուցվող տների, կանաչապատ տարածքների և նոր կառուցվող ճանապարհների թվի թիրախի ավելացում:
- 3) Հասարակական շենքերի կառուցման կամ ժամանակավոր տների սեփականատերերի համաձայնության հիման վրա ժամանակավոր տների՝ մշտական տների վերակառուցման միջոցով տների տրամադրում այն տուժածներին, ովքեր չեն կարող վերակառուցել իրենց տները:

Մաս 6 Օգնության պլան

Բաժին 41 Օգնության ցուցաբերման պլան

Գլուխ 426. ԱԻ-ում ցուցաբերվող օգնության հիմնական սկզբունքները

Այլ քաղաքներում և շրջաններում սեյսմիկ աղետի հետևանքով մեծամասշտաբ կորուստների դեպքում ԱԻ հանձնաժողովը և երկրաշարժի հետևանքների վերացման կազմակերպությունները օգնություն են ցուցաբերում տուժած բնակավայրին՝ գործելով համաձայն առկա պլանների:

Գլուխ 427. Սեյսմիկ աղետի դեպքում քաղաքային շտաբի կազմակերպությունները

Կառավարության հանձնարարությամբ և (կամ) տուժած քաղաքի շրջանի օգնության խնդրանքով, ինչպես նաև հանձնարարության կամ դիմումի բացակայության դեպքերում ծավալվում և իր գործունեությունն է սկսում Երևան քաղաքի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը՝ համաձայն քաղաքապետի 2010 թվականի մարտի 3-ի «Երևան քաղաքի արտակարգ իրավիճակների հանձնաժողով ստեղծելու մասին» որոշման.

1) երբ ՀՀ տարածքում, Երևան քաղաքի սահմաններից դուրս տեղի է ունեցել 5 բալ և ավելի ուժգնությամբ երկրաշարժ՝ մեծաքանակ կորուստներով և աղետներով,

2) երբ կա մեծամասշտաբ սեյսմիկ աղետի վտանգ՝ Երևան քաղաքի սահմաններից դուրս:

Գլուխ 428. Երևանի ԱԻ հանձնաժողովի կազմը

Երևանի ԱԻ հանձնաժողովը ունի հետևյալ կազմը՝

1) հանձնաժողովի նախագահ հանդիսանում է քաղաքապետը,

2) նախագահի տեղակալներ են հանդիսանում ինչպես քաղաքապետի տեղակալները, այնպես էլ ԵՓՎ պետը,

3) հանձնաժողովի կազմում ընդգրկված են քաղաքապետարանի աշխատակազմի վարչությունների պետերը, վարչական շրջանների ղեկավարները, պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների, հիգիենիկ-հակահամաճարակային և կոմունալ-էներգետիկ ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների ղեկավարները,

1) հանձնաժողովի աշխատանքներին, կախված իրավիճակից, կարող են ներգրավվել նաև այլ մարմինների և կազմակերպությունների ղեկավարներ,

2) հանձնաժողովը հավաքվում է նախագահի որոշմամբ, Երևանի ԱԻԿԿ հերթապահի կամ կապի և ազդարարման ծառայության կողմից ազդանշան ստանալուց հետո 1,5 ժամվա ընթացքում,

3) հանձնաժողովի որոշումները ենթակա են պարտադիր կատարման քաղաքում գործող բոլոր կազմակերպությունների համար՝ անկախ կազմակերպաիրավական ձևից,

4) հանձնաժողովի որոշումների մասին տեղյակ են պահվում բոլոր պատասխանատու մարմինները, իսկ անհրաժեշտության դեպքում, նաև բնակչությանը՝ ՋԼՄ-ների միջոցով:

Գլուխ 429. Երևանի ԱԻ հանձնաժողովի գործունեության դադարեցումը

Քաղաքապետը Երևանի ԱԻ հանձնաժողովի գործունեությունը դադարեցնում է հետևյալ դեպքերում.

- 1) Երևան քաղաքի սահմաններից դուրս մեծամասշտաբ սեյսմիկ աղետի հետևանքների վերացման աշխատանքների ավարտի ժամանակ.
- 2) երբ այլևս անհրաժեշտություն չկա ԱԻ-ում օգնության ցուցաբերման համար:

Գլուխ 430. Երևանի ԱԻ հանձնաժողովի գործունեության կազմակերպումը և աշխատանքը

Երևանի ԱԻ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպվում և աշխատանքը կարգավորվում է գործող իրավական ակտերով:

Գլուխ 431. Փոխօգնության համաձայնեցումը

Հանրապետության այլ քաղաքներում և շրջաններում սեյսմիկ աղետի ժամանակ կորուստները կարող են ընդունել լայն մասշտաբներ, և կարող է առաջանալ հրատապ արձագանքման անհրաժեշտություն: Ընդ որում՝ տուժած քաղաքը կամ շրջանը հրատապ արձագանքման միջոցներ է ձեռնարկում՝ օգնություն ստանալով նաև Հանրապետության այլ շրջաններից: Երևանը, սեյսմիկ վտանգին դիմակայելու նախապատրաստական աշխատանքներից բացի, պետք է պատրաստ լինի նաև այլ շրջաններում ավերիչ երկրաշարժի դեպքում արագ արձագանքմանը օգնություն ցուցաբերելուն: Գոյություն ունեն պլաններ, որոնցով նախատեսում է մարզերի և Երևանի օգնությունը ուժեղ երկրաշարժի ժամանակ տուժած քաղաքներին ու շրջաններին: Այդ պլաններով Երևանը, առանց սպասելու համապատասխան խնդրանքի, գնահատելով իրավիճակը, իր տրամադրության տակ եղած տեղեկատվության հիման վրա, անցնում է հրատապ օգնության ցուցաբերմանը: Քաղաքապետարանի կողմից ԱԻ դեպքում ապահովման համաձայնագրեր են կնքվում նաև զանազան շահագրգիռ կազմակերպությունների, ձեռնարկությունների և անհատ քաղաքացիների հետ: Քաղաքապետարանը այդ գործընկերների հետ պարբերաբար խորհրդատվություններ է անցկացնում, որպեսզի ընդլայնի նախատեսված համագործակցության շրջանակները և այլ մարզերին օգնելու ժամանակ հնարավորություն ունենա դիմելու իր գործընկերներին՝ համագործակցելու համար:

Գլուխ 432. Սեյսմիկ աղետի ժամանակ օգնություն ցուցաբերելու գործունեությունը

1. Մեծամասշտաբ սեյսմիկ աղետի ժամանակ, ինչպես նաև այդպիսի աղետի վտանգի դեպքում ԵՓՎ-ն աղետի իրավիճակի մասին տեղեկատվություն է հավաքում՝ օգնություն ցուցաբերելու գործունեությունը կազմակերպելու համար:

2. ԱԻ-ներում օպերատիվ օգնություն ցուցաբերելու համար կազմակերպությունները, նախապատրաստվում են նախօրոք՝ սովորական պայմաններում: Քաղաքապետը անհրաժեշտության դեպքում կարող է ԱԻ-ներում օգնություն ցուցաբերելուն

նախապատրաստվելու հանձնարարություն տալ:

3. Հրշեջ-փրկարարական ջոկատների հատկացումը իրականացվում է տուժած շրջանի կողմից օգնության համար խնդրանքի հիման վրա, և (կամ) ԱԻՆ համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի որոշմամբ անմիջապես աղետի վայր են ուղարկվում հրշեջ խմբերը:

4. Աղետի վայրում հրատապ բժշկական օգնություն ցուցաբերելու անհրաժեշտություն առաջանալիս, ՀՀ կառավարության հանձնարարությամբ, ինչպես նաև տուժած շրջանի ղեկավարի խնդրանքով, քաղաքային առողջապահության վարչության անձնակազմից և քաղաքի բժշկական հաստատություններից օպերատիվ կերպով ձևավորվում են բժշկական կազմավորումներ և գործուղվում են աղետի վայր:

5. Աղետի գոտում հրատապ արձագանքման միջոցառումների համար նյութատեխնիկական միջոցների և ամենօրյա անհրաժեշտ ապրանքների անբավարարության դեպքում ԱԻ հանձնաժողովի նախագահը, ՀՀ կառավարության որոշումով և (կամ) տուժած շրջանի ղեկավարի խնդրանքով, անհրաժեշտ ապրանքներ է հատկացնում և դրանք հասցնում աղետի գոտի:

6. ԱԻ-ներում օգնության հատկացման գործունեության վերաբերյալ հասարակությանը տեղեկատվություն հաղորդելը

ԱԻ հանձնաժողովի քարտուղարը քաղաքի բնակչությանը ՁԼՄ-երով տեղեկատվություն է տալիս օգնության ցուցաբերման, աղետի գոտու վերականգնման, ինչպես նաև իրականացրած գործունեության վերաբերյալ:

7. Երկրաշարժի հետևանքով տուժածներին օգնելու և կենցաղը վերականգնելու համար ԱԻ հանձնաժողովի քարտուղարը, շահագրգիռ կազմակերպությունների հետ համագործակցելով, իրականացնում է ֆինանսական նվիրատվությունների հավաք և փոխանցում է դրանք տուժած քաղաքին, շրջանին:

8. ԱԻ հանձնաժողովի քարտուղարը հասարակությանը տեղյակ է պահում ֆինանսական հաշիվների մասին և հարկ եղած դեպքում հաշվետվություն է ներկայացնում քաղաքային խորհրդին:

9. Անձնակազմ հատկացնելու վերաբերյալ ՀՀ կառավարության հանձնարարությամբ և/կամ տուժած քաղաքի/շրջանի վարչակազմի խնդրանքով, քաղաքային «Սեյսմիկ աղետի ժամանակ օգնության շտաբ»-ի պետը դեպի աղետի գոտի անձնակազմ է գործուղում՝ հրատապ արձագանքման և ԱԻ-ում վերականգնման գործունեության համար:

Ի տարբերություն սխեմայով հատկացված օգնող անձնակազմի, գործուղված անձնակազմը անցնում է ժամանակավոր ծառայության՝ քաղաքապետարանների/ շրջկենտրոնների օգնության կետերում: Այդ իսկ պատճառով վերականգնողական ծրագրերում նախատեսված այդպիսի գործուղումները կարող են լինել երկարատև:

Հավելված 1 Հետևանքների Սցենար

Հետևանքների սցենար (1) Արտակարգ իրավիճակների կառավարման կենտրոն (ԱԻՆ ՃԿԿ)

	0 - 1 ժամ	1 - 24 ժամ	1 - 3 օր	3 - 7 օր	7 և ավելի օրեր
Վատթաժամանակ	<p>Ճգնաժամային կառավարման կենտրոնի (ՃԿԿ) շենքը չի կրել լուրջ վնասներ, քանի որ այն կառուցվել է սեյսմիկ նախագծման նորմերին համապատասխան:</p> <p>ՃԿԿ անմիջապես ճշտում է երկրաշարժի պարամետրերը: Կապ է հաստատվում ԱԻՆ ստորաբաժանումների հետ, և ճշգրտվում է իրենց ստորաբաժանման և շրջակա տարածքում տիրող իրավիճակը: Հնարավոր իրավիճակի կանխատեսումը իրականացվում է էլեկտրոնային հաղորդակցության միջոցով:</p> <p>Նախնական իրավիճակի ճշգրտման հիման վրա տեղի ունեցածի մասին զեկուցվում է ԱԻ նախարարին, որի կարգադրությամբ ազդարարվում է ԱԻ ամբողջ համակարգը և Շիրակի ՄՓՎ:</p> <p>Քանի որ վնասի վերաբերյալ տեղեկատվության հավաքման և մշակման համար անհրաժեշտ է ժամանակ, վնասի վերաբերյալ իրավիճակը չի զեկուցվել ԱԻ նախարարին: Հաղորդակցության միջոցները (հեռախոս, բջջային կապ, ռադիո կապ) չեն գործում, քանի որ էլեկտրամատակարարման ռեզերվային համակարգեր տեղադրված չեն: Բացի այդ, հաղորդակցության որոշ սարքեր կոտրվել են, քանի որ դրանք պատշաճ ձևով ամրացված չեն եղել երկրաշարժի ժամանակ աշխատելու համար և շրջվել են: Հետևաբար, հաղորդակցությունը կազմակերպվում է սահմանափակ միջոցներով, ինչպես նաև սուրհանդակների միջոցով, որն էլ հանգեցնում է տեղեկատվության փոխանակման ուշացման:</p>	<p>Կազմակերպվում է նախնական հետախուզություն ինչպես նշված է ստորև: Վնասի իրավիճակը ճշտելու համար պահանջվում է ժամանակ, քանի որ բնակիչներից վնասի վերաբերյալ տեղեկատվության հավաքման մեխանիզմը ստեղծված չէ:</p> <ol style="list-style-type: none"> 1. Էպիկենտրոնային գոտում հայտնված ԱԻՆ տարածքային ստորաբաժանումների ուժերով, ստորաբաժանման հարակից տարածքի՝ համաձայն նախապես մշակված հետախուզության պլանների: 2. Լայն տարածքներում օդային հետախուզության միջոցով՝ համաձայն պաշտպանության նախարարության (ՊՆ) հետ փոխգործողությունների պլանի: <p>Վնասի իրավիճակի նախնական վերլուծության հիման վրա ԱԻ նախարարը զեկուցում է ՀՀ վարչապետին, առաջարկություններ է ներկայացնում Հանրապետական պլանի ամբողջությամբ կամ մասամբ ուժի մեջ դնելու վերաբերյալ, կազմակերպում է ՀՀ պետական կառավարման մարմինների ազդարարում:</p> <p>Հիմնվելով արտակարգ իրավիճակների նախարարի զեկուցման վրա՝ վարչապետը հայտարարում է արտակարգ դրություն, և արտակարգ իրավիճակների ճգնաժամային կառավարման կենտրոնը (ՃԿԿ) սկսում է գործել ազգային մակարդակում:</p> <p>Շիրակի ՄՓՎ իրականացնում է Շիրակի մարզի ղեկավար կազմի ազդարարում, մշտական կապ է հաստատվում ՃԿԿ-ի հետ:</p> <p>Կազմակերպվում է անդամների/անձնակազմի ժամանումը ՃԿԿ, բայց որոշ անդամների/անձնակազմի անվտանգության վերաբերյալ հաստատումը կամ նրանց ժամանումը ՃԿԿ ձգձգվում է, քանի որ կապը բջջային հեռախոսներով հասանելի չէ հեռախոսային ցանցի խցանման պատճառով, իսկ հաղորդակցության այլ ձևեր նախապես պատրաստված չեն եղել: Հետևաբար, կառավարման գործընթացը չի քննարկվել, ուստի տեղեկատվության հավաքը, ՃԿԿ-ի կողմից որոշումների ընդունումը և կարգադրություններ տալը չի կարող արվել անմիջապես:</p> <p>Քանի որ չկա խմելու ջրի, սննդի, շարժական գույքարանների և այլնի պաշար, ծախսվել է բավական ժամանակ և աշխատուժ ձեռքբերման համար:</p>	<p>ՀՀ պետական կառավարման մարմինների ազդարարման արդյունքները գնահատելով քննարկվում է աղետի հետևանքների վերացման գործընթացի ղեկավարումը: Նախնական հետախուզության տվյալների հավաքումից հետո ԱԻՆ պատրաստում է ՀՀ կառավարության որոշումների հետևյալ նախագծերը և ներկայացնում դրանք արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողովի հաստատմանը.</p> <ol style="list-style-type: none"> 1. «Աղետի գոտի հայտարարելու, աղետի գոտու տարածքը սահմանելու և ԱԻ հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների մասին» 2. «Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումն ու անցկացման կարգը սահմանելու մասին» <p>Առաջանում է շփոթություն պատասխանատու կազմակերպությունների փրկարարական և օժանդակող գործողությունների կառավարման գործում, քանի որ վնասի վերաբերյալ տեղեկատվության հավաքումը դեռևս արդյունավետ չի արվում և ուղղությունը չի համապատասխանում վնասի ռեալ իրավիճակին:</p>	<p>ՃԿԿ ծախսում է շատ ժամանակ իրավիճակը շտկելու և հիվանդանոցներում, տարահանման վայրերում և վնասված տներում ապրելու համար անտանելի պայմանների վերաբերյալ բնակիչների բողոքները բավարարելու վրա: Հետևաբար, կարևոր աշխատանքը՝ ինչպես օրինակ վերականգնման/վերակառուցման ուղեցույցների մշակումը և առնչվող գործակալություններին ուղղված կարգադրությունները սեյսմակայուն, ավելի ապահով Երևան քաղաք կառուցելու համար, դեռևս հարկ եղած ձևով չի ընթանում:</p>	

Բարելավված դեպք

Ճգնաժամային կառավարման կենտրոնի (ՃԿԿ) շենքը չի կրել լուրջ վնասներ, քանի որ այն կառուցվել է սեյսմիկ նախագծման նորմերին համապատասխան:

ՃԿԿ անմիջապես ճշտում է երկրաշարժի պարամետրերը:

Կապ է հաստատվում ԱԻՆ ստորաբաժանումների հետ, և ճշգրտվում է իրենց ստորաբաժանման և շրջակա տարածքում տիրող իրավիճակը: Հնարավոր իրավիճակի կանխատեսումը իրականացվում է՝ ելնելով հստակեցված իրավիճակից:

Նախնական իրավիճակի ճշգրտման հիման վրա տեղի ունեցածի մասին գեկուցվում է ԱԻ նախարարին, որի կարգադրությամբ ազդարարվում է ԱԻ համակարգը և Շիրակի ՄՓՎ:

Չնայած վնասի վերաբերյալ տեղեկատվությունը սահմանափակ է, վնասի իրավիճակը գնահատվում է՝ ելնելով երկրաշարժի պարամետրերից՝ օգտագործելով վնասի գնահատման համակարգը: ԱԻ նախարարը գեկուցում է ՀՀ վարչապետին ամենահնարավոր գնահատված իրավիճակի վերաբերյալ, առաջարկություններ է ներկայացնում Հանրապետական պլանի ամբողջությամբ կամ մասամբ ուժի մեջ դնելու վերաբերյալ և կազմակերպում ՀՀ պետական կառավարման մարմինների ազդարարում:

Վարչապետը հայտարարում է արտակարգ դրություն, և արտակարգ իրավիճակների կառավարման ՃԿԿ սկսում է գործել ազգային մակարդակում:

Յուրաքանչյուր առնչվող կազմակերպություն ստեղծում է արտակարգ իրավիճակներում բջջային կապ որպես ՃԿԿ և կազմակերպությանն առընթեր մասնաճյուղերի ու վարչությունների հետ հաղորդակցության կիզակետ՝ համաձայն նախապես պատրաստած ԱՇՊ: Շիրակի ՄՓՎ իրականացնում է Շիրակի մարզի ղեկավար կազմի ազդարարում, մշտական կապ է հաստատվում ՃԿԿ-ի հետ ՃԿԿ-ի միջոցով:

Առնչվող կազմակերպությունների ներկայացուցիչները և ՃԿԿ անձնակազմը տեղյակ են MSK 6 կամ ավել ուժգնությամբ երկրաշարժի մասին և անմիջապես գնում են ՃԿԿ ավտոնոմ հիմունքներով, ինչպես նախատեսված է պլանում: Որոշ ներկայացուցիչների և անձնակազմի, ովքեր չեն կարող ներկա լինել, անվտանգության վերաբերյալ ճշգրտումը կատարվում է այդ նպատակի համար նախատեսված անլար գծերով կամ այն կազմակերպությունների բջջային հեռախոսների առաջնահերթ գծերով, որոնք նախնական համաձայնության են եկել ՓՕ հետ:

Ապահովված են հաղորդակցության միջոցներ ՃԿԿ գործունեությունը երաշխավորելու համար, քանի որ տեղադրված է էլեկտրամատակարարման պահուստային համակարգ և հաղորդակցության միջոցներն ու էլեկտրական սարքավորումները պատշաճ ձևով հարմարացված են երկրաշարժի դեպքում աշխատելու համար:

Նախնական հետախուզություն կազմակերպվում է ինչպես նշված է ստորև: Նախնական հետախուզությունը հիմնականում կյանքը փրկելու համար է, և այն ընթանում է սահուն ձևով, քանի որ բնակիչներից վնասի վերաբերյալ տեղեկատվության հավաքման մեխանիզմը ստեղծված է նախապես:

1. Էպիկենտրոնային գոտում հայտնված ԱԻՆ տարածքային ստորաբաժանումների ուժերով, ստորաբաժանման հարակից տարածքի՝ համաձայն նախապես մշակված հետախուզության պլանների:
2. Լայն տարածքներում օդային հետախուզության միջոցով՝ համաձայն պաշտպանության նախարարության (ՊՆ) հետ փոխգործողությունների պլանի:

Նախնական հետախուզության տվյալների հավաքումից հետո ԱԻՆ պատրաստում է ՀՀ կառավարության որոշումների հետևյալ նախագծերը և ներկայացնում դրանք արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողովի հաստատմանը.

1. «Աղետի գոտի հայտարարելու, աղետի գոտու տարածքը սահմանելու և ԱԻ հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների մասին»
2. «Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումն ու անցկացման կարգը սահմանելու մասին»

ՃԿԿ իրականացնում է որոնողափրկարարական գործողություններ որպես առաջնահերթություն, հատուկ հետախուզություն անհապաղ ՓԱՎԱ իրականացման համար և այլն, ինչպես նաև միջազգային օգնության հայցում:

Քանի որ կա խմելու ջրի, սննդի, շարժական զուգարանների և այլնի պաշարների բավարար քանակություն, ՃԿԿ գործողությունները չեն խափանվում:

Ելնելով վնասի վերաբերյալ հավաքված տեղեկատվությունից՝ ՃԿԿ սահուն ձևով դեկավարում է որոնողափրկարարական, ինչպես նաև անհապաղ վերանորոգման ու վերականգնման լայնամասշտաբ գործողությունները՝ համաձայն ԱԻ արձագանքման ձեռնարկի, որը պատրաստվել է նախապես:

ՃԿԿ կազմակերպում է միջազգային օգնության ժամանումը և ներգրավումը: Քանի որ ՃԿԿ անձնակազմը սպառում է իր ուժերը 24 ժամյա գործունեության ընթացքում, ԱԻՆ ստորաբաժանումներից ուղարկվում է փոխարինող անձնակազմ: Ուղարկված անձնակազմը կարող է սահուն ձևով շարունակել օժանդակող աշխատանքները՝ հիմնվելով աղետների կառավարման ուղեցույցների վրա, որոնք պատրաստվել է որպես աղետների կառավարման պլանի մի մաս:

ՃԿԿ-ում ծավալվում են հետևյալ աշխատանքային խմբերը՝ սահուն գործունեությունը ապահովելու համար:

- Նյութատեխնիկական միջոցներով և սննդամթերքով ապահովման խումբ
- Միջազգային մարդասիրական օգնության ընդունման-բաշխման խումբ և այլն:

Ուղղորդվելով աղետների կառավարման պլանում նախատեսված ուղեցույցով՝ ձևավորվում է հատուկ կազմակերպություն վերականգնման և վերակառուցման համար և պլանի մշակումը սկսվում է համաձայն վնասի ընթացիկ իրավիճակի:

Հայտարարվում է արտակարգ իրավիճակների կարգավորում, և որոշակի պատասխանատվությունը և վարչարարական իշխանությունը բաշխվում է ներգրավված կազմակերպությունների միջև մարդկային և նյութական ռեսուրսները հաստատելուց հետո որպես ՃԿԿ լուծարման գործընթաց:

<p>Միջոցառումներ</p>	<p><u>ՃԿԿ անդամների և անձնակազմի հաճախման ձևը պետք է նախատեսված լինի պլանում՝ «բոլոր անդամները և անձնակազմը պետք է ներկայանան ՃԿԿ ավտոնոմ հիմունքներով, երբ նրանք գիտեն, որ տեղի է ունեցել 6 կամ ավել բալանոց երկրաշարժ ըստ MSK սանդղակի:</u></p> <p><u>ՃԿԿ և ԱԻՆ պետք է գրասենյակներում տեղադրեն էլեկտրամատակարարման պահուստային համակարգեր:</u></p> <p><u>Հաղորդակցության միջոցները և էլեկտրական սարքավորումները, ինչպես օրինակ համակարգիչները, պետք է պատշաճ ձևով հարմարացված լինեն երկրաշարժի դեպքում աշխատելու համար</u> աղետների կառավարման ՃԿԿ անհրաժեշտ ֆունկցիան ապահովելու նպատակով:</p>	<p><u>Ցուրաքանչյուր համայնք պետք է մշակի աղետների կառավարման ձեռնարկ՝ ներառյալ բնակիչներից տեղեկատվության հավաքման/ նրանց զեկուցման համակարգ, ինչպես նաև անցկացնի վարժանքներ/ուսուցում՝ հիմնվելով ձեռնարկի վրա:</u></p> <p><u>Վնասի վերաբերյալ տեղեկատվության հավաքման և զեկուցման անհրաժեշտ կետերը պետք է ամրագրված լինեն</u> պլանում և բաշխվի պատասխանատու կազմակերպությունների միջև՝ ներառյալ թաղապետարանները:</p> <p>ՃԿԿ և ՃԿԿ պետք է պահեստավորեն խմելու ջուր, սնունդ, շարժական գույքարաններ և այլն ԱԻ դեպքում գործողություններ կատարելու համար:</p>	<p>Աղետների կառավարման պլանում <u>պետք է պատրաստված լինեն ՃԿԿ գործողությունների ձեռնարկը</u>, որը նույնպես օգտակար է այլ գրասենյակներից ուղարկվող փոխարինող անձնակազմի համար:</p>	<p><u>Վերականգնման և վերակառուցման կազմակերպման և պլանավորման վերաբերյալ ուղեցույցը պետք է նախատեսված լինի աղետների կառավարման պլանում՝ հաշվի առնելով աղետների կառավարման բազմակողմանի հնարավորությունների երկարաժամկետ ամրապնդումը: ՃԿԿ-ի լուծարումից հետո շարունակվելիք առաջադրանքները և յուրաքանչյուր առաջադրանքի համար պատասխանատու կազմակերպությունները</u> պետք է հստակեցվեն նախապես պատրաստված ուղեցույցում:</p>
----------------------	---	---	---	---

Հետևանքների սցենար (2) Տարահանում և ժամանակավոր կացարաններով ապահովում

	0 - 1 ժամ	1 - 24 ժամ	1 - 3 օր	3 - 7 օր	7 և ավելի օրեր
Վատթարագույն դեպք	Ավելի քան տասը հազար շենք փլուզվել կամ ծանր վնասներ են ստացել: Հարյուր հազարավոր մարդիկ կորցրել են իրենց բնակարանները, շատերը մնում են դրսում՝ վախենալով հետցնցումներից: Անհրաժեշտ է տարահանել մոտ չորս հարյուր հազար (400.000) մարդ:	Տուժած ընտանիքները մնում են փլուզված շենքերի մոտ, քանի որ ոչ մի տարահանման վայր որոշված չէ: Մարդիկ փնտրում են ընտանիքի կորած անդամներին, բայց նրանց չի հաջողվում ստանալ տեղեկատվություն և այդ իրավիճակը առաջացնում է լրացուցիչ լարվածություն:	Քանի որ տուժած շատ ընտանիքներ շտապում են ընդունման կետեր՝ գրանցման համար հերթեր են գոյացել, այդ իսկ պատճառով շատ ընտանիքներ չեն կարողանում տեղափոխվել հատկացված կացարաններ: Շատ մարդիկ, որոնց տները չեն վնասվել, ցանկանում են տեղափոխվել կացարաններ, քանի որ տներում չկա ոչ էլեկտրականություն, ոչ ջուր: Կացարաններում տեղերը չեն բավարարում և շատերը մնում են դրսում: Որոշ վնասված շենքեր փլուզվում են հետցնցումների պատճառով: Շենքերի վթարայնության որոշման ձգձգման պատճառով վնասված տների բնակիչները վախենում են վերադառնալ իրենց տները:	Շատ տուժածներ հակված են մնալ իրենց տների հարևանությամբ, իսկ կացարանները խիտ կառուցապատված տարածքներում չեն բավարարում բոլոր տուժածներին ընդունելու համար: Մարդիկ վախենում են հետցնցումներից և մնում են իրենց տների մոտ մեքենաների, կրպակների, ավտոտնակների մեջ և այլ տարածքներում՝ օգտագործելով դրանք որպես ժամանակավոր կացարաններ:	Չնայած որ ժամանակավոր կացարանների կառուցումը սկսվել է, որոշ տարահանվողներ բողոքում են կացարանների տեղաբաշխման վայրերից և տեղափոխվելու կարգից:
Բարելավված դեպք	Վնասված շենքերի թիվը նվազել է՝ պայմանավորված խոցելի շենքերի ամրացմամբ: Տարահանվողների թիվը ևս կրճատվել է խոցելի շենքերի ամրացման և այլ միջոցառումների շնորհիվ:	Անտուն մարդկանց թիվը նվազում է այլ անվնաս կամ թեթև վնասված տներ՝ նրանց տեղափոխվելու հետևանքով: Աղետների ժամանակ հանդիպման վայրը ընտանիքում որոշվում է նախապես: Հետևաբար, ընտանիքի անդամները կարող են անմիջապես հավաքվել և պարզել կորած մարդկանց թիվը և կոնկրետ օգնության խնդրանքով դիմել պաշտոնական մարմիններին: Բնակիչները տեղեկանում են, որ Երևանի տարահանման հանձնաժողովը հանդիսանում է տարահանման ղեկավար մարմին և այդ հարցերով կարելի է դիմել նաև վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերին: Այդտեղ նրանք կարող են ներկայացնել իրենց հարցերն ու պահանջները: Տարահանման մարմինները պարզաբանում են անհրաժեշտ օգնության ծավալները:	Չնայած տարահանվողների քանակը շատ ավելի է, քան հաշվարկված է պլանում՝ ԱԻՆ-ի կողմից պահեստավորված կամ դոնորների կողմից տրամադրվող վրանների տեղակայումը անմիջապես իրականացվում է պատասխանատու կամավորների օգնությամբ: Քանի որ բնակիչները ծանոթացել են գրանցման ընթացակարգին և կացարաններ գործունեության կանոններին, տուժածները կարող են տեղաշարժվել դեպի կացարաններ իրենց ընտանիքների հետ՝ ունենալով նվազագույն և կենսական կարևորության միջոցներ: Քանի որ ստեղծվել է շենքերի արագ գնահատման համար ճարտարապետների և ինժեներների ուսուցման և գրանցման համակարգը, շատ արագ իրականացվում է վնասված շենքերի գնահատում: Տուժածներն իրենք էլ կարող են որոշել արդյոք կարող են մնալ իրենց տներում, թե պետք է տեղափոխվեն կացարաններ: Ելնելով գնահատմանման արդյունքներից՝ յուրաքանչյուր դեպքում ընդունվում է առանձին որոշում:	Տուժածները հակված են մնալ իրենց տների հարևանությամբ, իսկ կացարանները խիտ կառուցապատված տարածքներում չեն բավարարում բոլոր տուժածներին ընդունելու համար: Մարդիկ վախենում են հետցնցումներից և մնում են իրենց տների մոտ մեքենաների, կրպակների, ավտոտնակների մեջ և այլ տարածքներում՝ օգտագործելով դրանք որպես ժամանակավոր կացարաններ:	Տուժածների տեղափոխումը կացարաններից դեպի ԵԲՎ լավ ղեկավարվում է համաձայն աղետների կառավարման պլանի: Աշխատանքները շարունակվում են մինչև վերջին տուժածի տեղավորումը և ապահովումը: Հետևաբար, իրավիճակը մնում է վերահսկելի:
Միջոցառումներ	Պահանջվում է խթանել շենքերի ախտորոշումը սեյսմիկ կայունության տեսանկյունից և իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ խոցելի շենքերի ամրացման համար, ինչպես օրինակ վերակառուցում և ամրացում համաձայն շինարարական նորմերի : Անհրաժեշտ է նաև խթանել խիտ կառուցապատված տարածքներում անբավարար վիճակում գտնվող շենքերի փոխարինումը նոր պահանջներին բավարարող շենքերով:	Ընտանիքում հանդիպման վայրի վերաբերյալ նախապես որոշում կայացնելը պետք է ճիշտ ընկալվի բնակիչների կողմից տեղեկատվության տարածման և կրթության միջոցով: Թաղապետարանները պետք է ամրացվեն աղետի ժամանակ որպես ընդունման/օգնության բազա օգտագործվելու համար: Բնակիչները պետք է նախօրոք տեղեկացվեն աղետների ժամանակ օգնության հայտերի ընդունման կետի վայրի մասին:	Ապաստարանները ստեղծելու նյութերն ու սարքավորումները պետք է պահեստավորվեն, իսկ դոնորների կողմից տրամադրված նյութերը պետք է նախօրոք պարզաբանվեն: Ապաստարանների շուրջը պետք է լինեն բաց կամ դատարկ տարածքներ անհրաժեշտության դեպքում որպես վրանային քաղաք օգտագործելու համար: Բոլոր բնակիչները պետք է նախօրոք տեղեկացվեն ապաստարանների տարածքների գրանցման գործընթացի և դիրքի/ֆունկցիաների վերաբերյալ: Կամավորների կատարելագործումը և պարտավորեցումը պետք է արվի ուսուցման և աղետների վերաբերյալ վարժությունների միջոցով, ներառյալ՝ ապաստարանների տարածքների ստեղծումը: Քաղաքաշինության նախարարությունը պետք է սահմանի վնասված շենքերի արագ ախտորոշման մեթոդաբանությունը և գործընթացը : Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության ղեկարտամենտը պետք է հիմնի ախտորոշման համար ուսուցման, լիազորման և գրանցման համակարգ, որը պետք է արվի փորձագետների՝ ճարտարապետների և ինժեներների միջոցով:	Տուժածները հակված են մնալ իրենց տների հարևանությամբ, իսկ կացարանները խիտ կառուցապատված տարածքներում չեն բավարարում բոլոր տուժածներին ընդունելու համար: Մարդիկ վախենում են հետցնցումներից և մնում են իրենց տների մոտ մեքենաների, կրպակների, ավտոտնակների մեջ և այլ տարածքներում՝ օգտագործելով դրանք որպես ժամանակավոր կացարաններ:	Տուժածների համար ժամանակավոր կացարանների կառուցման և տրամադրման ստանդարտն ու ուրվագիծը պետք է նախատեսված լինեն աղետների կառավարման պլանում: Բոլոր բնակիչները պետք է տեղեկացված լինեն ուրվագծի և ստանդարտի մասին:

Հետևանքների սցենար (3) Փրկարարություն և հրդեհաշիջում

	0 - 1 ժամ	1 - 24 ժամ	1 - 3 օր	3 - 7 օր	7 և ավելի օրեր
Վատթարագույն դեպք	<p>Քանի որ հրդեհավտանգ նյութեր օգտագործող ընկերությունները նախապատրաստել են կրակը մարող սարքավորումներ և ուսուցանել իրենց անձնակազմին այդ ուղղությամբ, հնարավոր է եղել խուսափել հրդեհի տարածումից նախնական հրդեհաշիջմամբ:</p> <p>Երևան քաղաքում հրդեհի բռնկում տեղի է ունեցել մոտ 1,500 վայրերում, քանի որ որոշ մարդիկ մոռացել են անջատել գազօջախները և այլն:</p> <p>Կրակը տարածվում է, քանի որ սովորական տներում չկան նոր բռնկվող կրակը մարող սարքեր և բնակիչներին չեն սովորեցրել իրականացնել նախնական հրդեհաշիջում:</p> <p>ՓՕ հրդեհաշիջման խմբերի և փրկարարական ուժերի անձնակազմի մոտ 20% հավաքվում են իրենց գրասենյակներում մեկ ժամվա ընթացքում, ինչպես նախատեսված է աղետի կառավարման պլանում:</p>	<p>Հրդեհաշիջման խմբերը և փրկարարական ուժերը սկսում են գործողությունները, որոնք այնքան էլ օգտակար չեն, քանի որ հրդեհը բռնկվել է մի քանի վայրերում, որոնք հասանելի չեն փլուզված շենքերից առաջացած շինարարական աղբի կուտակման հետևանքով:</p> <p>Ուղարկվում է ՓՕ անձնակազմ հրդեհի բռնկման իրավիճակը և փլուզված շենքերի տակ մնացած մարդկանց պարզելու համար, բայց պահանջվում է երկար ժամանակ հրդեհի վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու համար, քանի որ բնակիչներից տեղեկատվության հավաքման ընթացակարգը նախապես հստակ սահմանված չի եղել:</p> <p>Բնակիչներն իրենք են սկսում փրկարարական աշխատանքներն առանց պաշտոնական օժանդակության, բայց գործողություններն արդյունավետ չեն, որովհետև փրկարարության համար կան քիչ միջոցներ:</p>	<p>Վնասների ընդհանուր իրավիճակը հստակեցվում է այլ մարզերի օգնությամբ, բայց գործողությունները սահուն կերպով չեն ընթանում աշխատուժի, ծանր սարքավորումների և այլնի սակավության, ինչպես նաև լրացուցիչ ուժերի և միջոցների նախապատրաստման և ուղարկման ձգձգման պատճառով:</p> <p>Չնայած արտերկրի օժանդակող խմբերը ժամանում են Երևան, փրկարարական գործողությունները չեն դառնում ոչ լավ կազմակերպված, ոչ էլ արդյունավետ, քանի որ պատշաճ ձևով չի կազմակերպվել ընդունման և տուժած տարածք ուղարկման, ինչպես նաև առաջադրանքների հստակ բաշխման գործընթացը:</p> <p>Բացի նրանից, որ հրդեհը տարածվում է այն վայրերում, որտեղ հրդեհաշիջումը ձախողվել է, ևս մեկ հրդեհ է բռնկվել փլուզված շենքերում էլեկտրամատակարարման վերականգնումից հետո առաջացած կարճ միացման և էլեկտրական սարքավորումների տաքացման հետևանքով: Հրդեհը խոչընդոտում է փրկարարական գործողությունները:</p>	<p>Միջազգային փրկարարական ուժերը ունենում են քիչ ձեռքբերումներ այստեղ անցկացրած ժամանակահատվածում և հեռանում են Երևանից:</p> <p>Չնայած մատնանշված են մի քանի խնդիրներ, դրանք ի մի չեն բերված հետազայում բարելավելու համար:</p>	
Բարելավված դեպք	<p>Քանի որ հրդեհի պատճառ հանդիսացող արտադրանքներ օգտագործող ընկերությունները նախապատրաստել են կրակը մարող սարքավորումներ և ուսուցանել իրենց անձնակազմին այդ ուղղությամբ, հնարավոր է եղել խուսափել հրդեհի տարածումից նախնական հրդեհաշիջմամբ:</p> <p>Հրդեհներ բռնկվում են մի քանի վայրերում, չնայած շատ բնակիչներ փակել են գազի փականները մինչև տարահանվելը: Հրդեհը մարվել է բնակիչների և հարևանների կողմից տեղական ղեկավարների ուղղորդմամբ, ովքեր սովորել են կատարել նախնական հրդեհաշիջում:</p> <p>Քանի որ ՓՕ հրդեհաշիջման խմբերի և փրկարարական ուժերի անձնակազմերը գիտեն ԱՇՊ-ում բերված հավաքի չափանիշները, նրանց մոտ 40% հավաքվում են իրենց գրասենյակներում մեկ ժամվա ընթացքում:</p>	<p>Հրդեհաշիջման խմբերը և փրկարարական ուժերը սկսում են աշխատանքները այն տարածքներում, որտեղ ճանապարհը փակված չէ շինարարական աղբի պատճառով: Ճանապարհի փակման պատճառով մեկուսացված տարածքներում բնակիչները սկսում են հրդեհաշիջման աշխատանքներ, բայց որոշ մասեր դեռևս վառվում են:</p> <p>ՓՕ անձնակազմի կողմից վնասի վերաբերյալ տեղեկատվության հավաքումը, ինչպես օրինակ հրդեհի բռնկումը և շենքերի փլատակների տակ մնացած մարդիկ, լավ է ընթանում բնակիչների օգնությամբ: Հավաքագրված տեղեկատվության հիման վրա ուղարկվում են փրկարարական խմբեր:</p> <p>Բնակիչները, ովքեր գտնվում են այնպիսի վայրերում, որտեղ հնարավոր չէ ստանալ պաշտոնական օժանդակություն, նախաձեռնում են փրկարարական գործողություններ՝ օգտագործելով իրենց տներում և բնակավայրերում եղած միջոցները:</p>	<p>Հրդեհաշիջման գործողությունները լավ են իրականացվում խիտ կառուցապատված տարածքներում՝ ճանապարհների մաքրման առաջընթացի շնորհիվ, հետևաբար, հրդեհը գրեթե ամբողջությամբ մարվում է Երևան քաղաքի ամբողջ տարածքում:</p> <p>Ելնելով արտակարգ իրավիճակների կառավարման ՃԿԿ-ի կողմից վնասի վերաբերյալ հավաքագրված և գնահատված տեղեկատվությունից՝ ՓՕ փրկարարական խմբերը իրականացնում են փրկարարական և օգնության ցուցաբերման գործողություններ՝ համագործակցելով աղետի կառավարման պլանում նախատեսված ընթացակարգերի շրջանակներում այլ մարզերից ու պետություններից եկած օժանդակող խմբի հետ:</p> <p>Հրդեհ չի բռնկվում էլեկտրամատակարարման վերականգնումից անմիջապես հետո, որովհետև բնակիչները գիտեն էլեկտրամատակարարման վերականգնումից հետո հրդեհների բռնկման հնարավորության մասին և տարահանվելիս անջատել էին էլեկտրականությունը:</p>	<p>Բնակիչները բարձր գնահատեցին ՓՕ փրկարարական խմբերի ջանքերը և ներգործուն արդյունքները:</p> <p>Գործողությունների մանրամասները ամփոփվում, գնահատվում, գրանցվում և պաշտոնապես հայտարարվում են հանրությանը: Գործողություններում ի հայտ եկած թերությունները օգտագործվում են վերանայված պլանում հետագա գործողությունները բարելավելու համար:</p> <p>Միջազգային փրկարարական խմբերի հետ համագործակցությունը ընթանում է սահուն: Օգտվելով այս հնարավորությունից՝ արտերկրի տարբեր գործակալությունների հետ կնքվում են պաշտոնական համաձայնագրեր հետագա համագործակցության վերաբերյալ:</p>	

Միջոցառումներ	<p><u>Հավաքի չափանիշները պետք է նախատեսված լինեն ԱՇՊ-ում</u> որպես աղետի կառավարման պլանի մի մաս, և չափանիշները պետք է ընկալվեն անձնակազմի բոլոր անդամների կողմից:</p> <p>Բնակիչները պետք է շատ լավ հասկանան երկրաշարժի ժամանակ հրդեհը անմիջապես մարելու անհրաժեշտությունը և հրդեհի բռնկման ժամանակ նախնական հրդեհաշիջման ընթացակարգը <u>աղետների կառավարման վերաբերյալ կրթության և ուսուցման, ներառյալ՝ բնակիչների կողմից նախնական հրդեհաշիջման միջոցով:</u></p>	<p><u>Վնասների վերաբերյալ տեղեկատվության կարգավորման և կառավարման համար ընթացակարգը և համակարգը պետք է ստեղծվեն նախօրոք ՓՕ անձնակազմի և բնակիչների կողմից հավաքված տեղեկատվությունը համակցելու համար:</u></p> <p><u>Բնակիչների խմբերի կողմից աղետների դեպքում փրկարարական գործողությունների համար միջոցների պահեստավորման և պահպանման, ինչպես նաև արագ արձագանքման ժամանակ այդ միջոցների օգտագործման վերաբերյալ ուսուցման</u> խթանում:</p>	<p>ՓՕ պետք է <u>ձևակերպի շրջանակ և ընթացակարգ մարզերից և արտերկրից նախօրոք ուղարկված փրկարարական խմբերի կառավարման վերաբերյալ:</u> Ապա ՓՕ պետք է <u>պատրաստի մանրամասն գործողությունների պլան՝</u> ելնելով վնասի առկա իրավիճակից, ուղարկված խմբերի բնութագրից և խմբերի միջև համագործակցությունից: ՓՕ պետք է անցկացնի ուսուցում՝ համագործակցելով առնվող կազմակերպությունների (Պաշտպանության նախարարություն և ոստիկանություն, Երևանի քաղաքապետարան և այլն) և բնակիչների հետ:</p> <p>ՓՕ պետք է <u>անցկացնի ուսուցում աղետների ժամանակ փրկարարության վերաբերյալ</u> առնչվող գործակալությունների և բնակիչների հետ համագործակցության միջոցով:</p> <p>Աղետների կառավարման վերաբերյալ կրթության մեջ <u>պետք է բացատրվի հրդեհի բռնկման հավանականությունը էլեկտրականության վերականգնման ժամանակ,</u> և բնակիչները պետք է հասկանան տարահանման ժամանակ անհրաժեշտ գործողությունները՝ էլեկտրականության և գազի անջատումը:</p>	<p><u>Փրկարարական գործողությունները գնահատող հաշվետվությունը, ներառյալ՝ հետագա բարելավմանն ուղղված առաջարկությունները պետք է պատրաստվեն և հասանելի լինեն հասարակությանը՝ հաշվի առնելով բնակիչների կարծիքը:</u></p> <p>Օգտվելով այս հնարավորությունից՝ առաջարկվում է <u>կնքել համաձայնագրեր միջազգային գործակալությունների հետ հետագա համագործակցության համար:</u></p>
---------------	---	--	--	---

Հետևանքների սցենար (4) Հասարակական անվտանգություն և խուճապ (ՓՄ, ՀՀ ԿԱ ոստիկանություն, լրատվական հաստատություններ)

	0 - 1 ժամ	1 - 24 ժամ	1 - 3 օր	3 - 7 օր	7 և ավելի օրեր
Փողն ցրվածություն	<p>Ոստիկանության մի քանի սպաներ վիրավորվել են, իսկ ոստիկանության մի քանի շենքեր/օբյեկտներ վնասվել են, և, հետևաբար, ոստիկանության գործառույթները նվազել են:</p> <p>Վիրավորներին խնամելու և շենքերն ու օբյեկտները վերանորոգելու համար օգտագործվում է շատ աշխատուժ:</p> <p>Չնայած տեղադրված է աղետների ժամանակ էլեկտրամատակարարման պահուստային համակարգ, հաղորդակցության միջոցները և էլեկտրական սարքավորումները, ինչպես օրինակ համակարգիչները, պատշաճ ձևով ամրացված չեն երկրաշարժի դեպքում աշխատելու համար: Հետևաբար, հրամանատարության համար անհրաժեշտ տվյալները ոչնչացվել են, իսկ հաղորդակցությունը անհասանելի է համակարգիչների և միջոցների անջատման պատճառով:</p>	<p>Հասարակական անվտանգության համար անհրաժեշտ գորքերի վերակազմակերպումն ու տեղակայումը ձգձգվում է, որովհետև երկրաշարժի անասելի ծավալի պատճառով կան շատ տուժածներ ոստիկանության գրասենյակներում, բազմաթիվ վնասված շենքեր ու միջոցներ, որոնց թիվը գերազանցում է առկա պլաններում նշված թիվը:</p> <p>Չնայած ոստիկանությունը ծավալում է հսկիչ անցագրային կետեր անձնակազմի և երթևեկության համար դեպի աղետի գոտի և հետ օգնության տրամադրման և տարահանման համար, գործընթացը սահուն չի ընթանում, քանի որ այն կատարվում է միայն առկա ուժերի հաշվին, որովհետև լրացուցիչ ուժերի գործուղումը ուշանում է: ՓԱՎՎԱ կատարող ուժերի ու միջոցների մուտքը երկրաշարժի գոտի ապահովվում է, բայց ուշացումով, մինչդեռ արգելում է այդ աշխատանքների հետ կապ չունեցող անձանց և տրանսպորտային միջոցների մուտքը:</p> <p>Չնայած երկրաշարժի գոտում սկսում են իրականացնել հասարակական անվտանգության ապահովման աշխատանքներ, ներառյալ պահակային ծառայություն, ուղղված խուճապի կանխման, սուտ ու կանխամտածված լուրերի տարածման, ինչպես նաև հնարավոր զանգվածային անկարգությունների խափանման միջոցառումների անցկացմանը, բայց դժվար է սահուն ձևով կատարել գործողությունները հաղորդակցության միջոցների պակասի պատճառով:</p>	<p>ՀՀ ոստիկանությունը սկսում է համագործակցել ՀՀ ԱԻՆ, զինվորական հրամանատարության հետ փրկարարական աշխատանքների կազմակերպման հարցերով:</p> <p>ՀՀ ոստիկանության կողմից երկրաշարժի հետևանքից չտուժած ավտոտրանսպորտային միջոցների և ինժեներական տեխնիկայի հասանելի քանակի, գտնվելու վայրի վերաբերյալ ճշգրտումները ուշանում են, քանի որ ճշգրտման գործընթացը և կապի կետը հստակ նախատեսված չեն նախապես: Խառնաշփոթ է առաջանում պատասխանատու կազմակերպությունների փրկարարական և օժանդակող գործողություններում, քանի որ վնասի վերաբերյալ տեղեկատվության հավաքը դեռևս անկանոն է և հրահանգները չեն համապատասխանում վնասի ռեալ իրավիճակին: Բնակիչները ևս խառնաշփոթի մեջ են, որովհետև նրանց պահանջները սահուն ձևով չեն փոխանցվում ՀՀ կառավարությանը այնպես, ինչպես ՀՀ կառավարության հայտարարությունները սահուն ձևով չեն փոխանցվում բնակիչներին: Իրականացվում են տարահանման հավաքակետերում և տարահանվող բնակչության տեղավորման վայրերում հասարակական կարգի պահպանման աշխատանքներ:</p> <p>Մակայն կողոպուտը/աննդի/արժեքավոր իրերի/դրամի գողությունը տեղի է ունենում մի շարք վայրերում, իսկ անվտանգությունը ապահովող մարդիկ և զիշերային լուսավորությունը բավարար չեն, և կողոպուտն ու գողությունը տարածվում են:</p> <p>Որոշ բնակիչներ, ովքեր տեղեկացված չեն արտակարգ իրավիճակներում արգելված բաների մասին, քանի որ դրանց վերաբերյալ տեղեկատվությունը պատշաճ ձևով չի տարածվել, կարող են ձեռքբերվել անվտանգության ուժերի կողմից:</p> <p>Կողոպուտը և մարդկանց գողանալը տեղի են ունենում այն տարածքներում, որտեղ անվտանգության ուժերը շատ նոսր են տեղակայված:</p> <p>Ուժեղացվում է աղետի գոտում տրանսպորտային մայրուղիներում հասարակական կարգի ապահովումը, ինչպես նաև տարահանված բնակավայրերում և</p>	<p>Հասարակական անվտանգության մարմինները իրականացնում են բնակչության տարահանման ժամանակ ճանապարհային երթևեկության անվտանգություն և հասարակական կարգի ապահովում, տարահանված բնակչության գրանցում և մերձքաղաքային գոտում և հասցեների ճշտման աշխատանքներ: Տարահանման վայրերում և վնասված տներում ապրելու համար անտանելի պայմանների վերաբերյալ բնակիչների բողոքները բավարարելու վրա շատ ժամանակ է ծախսվում, իսկ անկարգությունները շարունակվում են:</p> <p>Մարդկանց խմբերը, որոնք բավարարված չեն արտակարգ իրավիճակները վերացնելու ուղղությամբ կառավարության արձագանքից, բարձրացնում են խռովություն կամ ոչ խաղաղարար փորձեր:</p>	
		<p>Աղետի գոտում (որտեղ հեռախոսային կապը, էլեկտրամատակարարումը խափանված չէ) ԱԻՆ համապատասխան բաժինը ստեղծում է շարժական լրատվական կենտրոն, որն աղետի գոտում լրագրողների համար կազմակերպում է մամուլի ասուլիսներ՝ իրականացվող փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների ցույց տրվող մարդասիրական օգնության և այլնի վերաբերյալ. նրանց տրամադրվում են լրատվական համառոտ տեղեկանքներ:</p>	<p>Պահպանվող օբյեկտներում մնացած գույքի պահպանության իրականացումը:</p> <p>Ոստիկանությունը բախվում է դժվարության հետ բնակչության կորուստների հաշվառման հասցեների ճշտման աշխատանքների իրականացման մեջ, և մասնակցում է գոհվածների հուղարկավորման հանձնաժողովի աշխատանքներին անձնակազմի անբավարար քանակության և հանձնաժողովի ոչ պատշաճ կարգավորման պատճառով:</p>		

<p style="writing-mode: vertical-rl; transform: rotate(180deg);">Բարելավված դեպք</p>	<p>Շենքերի և կառույցների վնասները սահմանափակ են, քանի որ ուժեղացվել են երկրաշարժերին դիմակայելու համար:</p> <p>Տեղադրված է աղետների ժամանակ էլեկտրամատակարարման պահուստային համակարգ և էլեկտրական սարքերը, ինչպես օրինակ համակարգիչները և հաղորդակցության միջոցները ամրացված են երկրաշարժի դեպքում աշխատելու համար: Հետևաբար, համակարգչում տվյալները չեն ոչնչացել և տեղի չի ունեցել հաղորդակցության խափանում:</p> <p>Կարևոր հաստատությունների և ցանցային հաբերի անվտանգությունը ապահովելու համար ոստիկանության կենտրոնակայանը տվել է հրահանգներ ոստիկանության սպաների տեղակայման վերաբերյալ:</p>	<p>Հասարակության անվտանգության գործողությունները ամրապնդվում են սահուն վերակազմակերպմամբ և ոստիկանության սպաներ ավելացնելով՝ համաձայն սեյսմիկ աղետի վատթարագույն սցենարի համար նախատեսված ընթացակարգի:</p> <p>Ոստիկանությունը ծավալում է հսկիչ անցագրային կետեր անձնակազմի և երթևեկության համար դեպի աղետի գոտի և հետ օգնության տրամադրման ու տարահանման համար, և գործողությունները իրականացվում են սահուն ձևով այլ մարզերից եկած լրացուցիչ ուժերի հետ միասին: Ապահովվում է ՓԱՎՎԱ կատարող ուժերի ու միջոցների անարգել մուտքը երկրաշարժի գոտի, մինչդեռ արգելում է այդ աշխատանքների հետ կապ չունեցող անձանց և տրանսպորտային միջոցների մուտքը:</p> <p>Երկրաշարժի գոտում սկսում են իրականացվել հասարակական անվտանգության ապահովման աշխատանքներ պատշաճ հաղորդակցության միջոցներով՝ ուղղված խուճապի կանխման, սուտ ու կանխամտածված լուրերի տարածման, ինչպես նաև հնարավոր զանգվածային անկարգությունների խափանման միջոցառումների անցկացմանը:</p> <p>Ուժեղացվում է բնակչության կենսագործունեությունն ապահովող և այլ կարևորագույն օբյեկտների պահպանությունը:</p> <p>Աղետի գոտում (որտեղ հեռախոսային կապը, էլեկտրամատակարարումը խափանված չէ) ԱԻՆ համապատասխան բաժինը ստեղծում է շարժական լրատվական կենտրոն, որն աղետի գոտում լրագրողների համար կազմակերպում է մամուլի ասուլիսներ՝ իրականացվող փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքներին ցույց տրվող մարդասիրական օգնության և այլնի վերաբերյալ նրանց տրամադրվում են լրատվական համառոտ տեղեկանքներ:</p>	<p>ՀՀ ոստիկանությունը համագործակցում է ՀՀ ԱԻՆ, զինվորական հրամանատարության հետ, ինչպես նաև փրկարարական աշխատանքների կազմակերպման հարցերով:</p> <p>ՀՀ ոստիկանության կողմից ճշգրտվում է երկրաշարժի հետևանքից չտուժած ավտոտրանսպորտային միջոցների և ինժեներական տեխնիկայի քանակը, գտնվելու վայրը, և կազմակերպում դրանց ներգրավումը փրկարարական աշխատանքների մեջ՝ համաձայն նախապես պատրաստված պլանի:</p> <p>Պատասխանատու կազմակերպությունների փրկարարական և օժանդակող գործողություններում չկա խառնաշփոթ, քանի որ վնասների վերաբերյալ տեղեկատվության հավաքումը կատարվում է սահուն ձևով՝ համաձայն նախապես պատրաստված պլանի:</p> <p>Իրականացվում են տարահանման հավաքակետերում և տարահանվող բնակչության տեղավորման վայրերում հասարակական կարգի պահպանման աշխատանքներ:</p> <p>Կողոպուտը/սննդի/արժեքավոր իրերի/դրամի գողությունը կանխարգելվում է անվտանգության ուժերի անմիջապես տեղակայմամբ՝ համաձայն նախատեսված պլանի, և գիշերային բավարար լուսավորությամբ:</p> <p>Անհարկի ձերբակալություններից կարելի է խուսափել, որովհետև արտակարգ իրավիճակներում արգելված բաների մասին տեղեկատվությունը նախապես տարածված է բնակչության շրջանակում:</p> <p>Անվտանգությունը ապահովելու համար շրջակայքում հերթապահություն անող խմբերը, որոնք համալրված են բնակիչներով, իրականացնում են գիշերային հերթապահություն՝ ոստիկանության և բանակի ուժերի հետ համագործակցելով:</p> <p>Ուժեղացվում է աղետի գոտում տրանսպորտային մայրուղիներում հասարակական կարգի ապահովումը, ինչպես նաև տարահանված բնակավայրերում և պահպանվող օբյեկտներում մնացած գույքի պահպանության իրականացումը:</p> <p>Ոստիկանությունը կատարում է բնակչության կորուստների հաշվառում, հասցեների ճշտման աշխատանքների իրականացում, ինչպես նաև մասնակցում է գոհվածների հուղարկավորման հանձնաժողովի աշխատանքներին, քանի որ այլ մարզերից գործուղվել է օժանդակող անձնակազմ՝ համաձայն նախապես պատրաստված պլանի:</p> <p>Հասարակության անվտանգությանն ուղղված բազմակողմանի գործողությունները իրականացվում են լայն տարածքներում և, հետևաբար, սպառնացող փորձերը ճնշվել են:</p>	<p>Բնակիչները միշտ տեղեկացվում են աղետների արձագանքմանը և հասարակության անվտանգությանն ուղղված կառավարության գործողությունների մանրամասների և անհրաժեշտության մասին, իսկ խոտվարար և ոչ խաղաղարար փորձերը կանխվում են բնակիչների հետ համագործակցության միջոցով:</p>
<p style="writing-mode: vertical-rl; transform: rotate(180deg);">Միջոցառումներ</p>	<p><u>Հասարակության անվտանգությանն ուղղված հրամանատարության և գործողությունների համար նախատեսված կարևոր շենքերը և կառույցները պետք է ամրացվեն</u> երկրաշարժերին դիմակայելու համար:</p> <p>Աղետների ժամանակ էլեկտրամատակարարման պահուստային համակարգերի և ջրամատակարարման համակարգերի հետ միասին <u>պետք է իրականացվեն նաև այլ միջոցառումներ երկրաշարժի դեմ, ինչպես օրինակ էլեկտրական և հաղորդակցության սարքերի ամրացումը:</u></p>	<p><u>Հասարակության անվտանգությանն ուղղված գործողությունների պլանը պետք է պատրաստվի նախապես</u>՝ ելնելով ենթադրվող վատթարագույն սցենարից, իսկ <u>աղետների ժամանակ գործողությունների վերաբերյալ ուսուցումը պետք է իրականացվի</u> համաձայն պատրաստված գործողությունների պլանի:</p>	<p>Ոստիկանությունը, համագործակցելով առնչվող գործակալությունների հետ, ինչպես օրինակ Քաղաքաշինության նախարարությունը, <u>պետք է պահեստավորի բավարար քանակությամբ շարժական լուսավորող միջոցներ, որոնք պետք է արագ տեղադրվեն հասարակության անվտանգությունն ապահովելու համար:</u></p> <p><u>Ոստիկանությունը պետք է հստակ ծանուցի հասարակությանը արգելված բաների վերաբերյալ</u>՝ օգտագործելով հայտարարությունների ցուցանակ, բարձրախոսներ, լրատվամիջոց և <u>պետք է իրականացնի հասարակության անվտանգության գործողություններ լայն տարածքներում</u>, ներառյալ՝ վնասված տարածքների շրջակայքերը:</p> <p>Լայնամասշտաբ աղետների դեպքում հասարակական անվտանգությունը բարձրացնելու համար պետք է նախատեսվի շրջակայքում պահակություն իրականացնող խմբեր ստեղծելու և գործողություններին պաշտոնական օժանդակություն ցուցաբերելու ընթացակարգ՝ անվտանգության սպաների անհրաժեշտ քանակի բացը լրացնելու համար:</p>	<p>Հասարակությունը պետք է միշտ տեղեկացված լինի աղետների արձագանքմանը և հասարակության անվտանգությանն ուղղված գործողությունների մանրամասների և անհրաժեշտության մասին բնակիչների հետ լավ համագործակցության համար:</p>

Հետևանքների սցենար (5) վիրավորներ և բժշկական օգնություն (ՓԾ, առողջապահության նախարարություն)

	0 - 1 ժամ հետո	1 - 24 ժամ հետո	1 - 3 օր հետո	3 - 7 օր հետո	7 օր հետո և ավելի
<p>Վնասումներ</p>	<p>Մոտ երկու հարյուր հազար (200,000) մարդ ստացել է այնպիսի վնասվածքներ, ինչպիսիք են տրավմատիկ վնասվածքը, ոսկորների կոտրվածքները և ներքին օրգանների վնասվածքները, որոնց պատճառ են հանդիսացել հիմնականում շենքերի փլուզումը և կահույքի շրջվելը:</p> <p>Երևան քաղաքում 66 խոշոր բժշկական հաստատություններից (42 հիվանդանոց և 24 պոլիկլինիկա) 29-ը միջինից լուրջ վնասվածք ունեն: ԱՌ-ում գործող բժշկական հաստատությունների ցանկում ընդգրկված 23 կլինիկաների շենքերից շատերը նույնպես ստացել են լուրջ վնաս, քանի որ երկրաշարժի դեմ շենքերի ամրացում չի կատարվել:</p> <p>Ջրա- և էլեկտրամատակարարումը դեպի 89 բժշկական հաստատություններ դադարեցված են, քանի որ ջրա- և էլեկտրամատակարարման ցանցերը վնասվել են: Բացի այդ, արտակարգ իրավիճակներում մատակարարման համար ջրի բաքեր և գեներատորներ տեղադրված չեն բժշկական հաստատություններում:</p> <p>Միալ ամրացման պատճառով բժշկական սարքավորումներն ու պիտույքներն ընկել և կոտրվել են ցնցման հետևանքով:</p> <p>Արդյունքում, բժշկական հաստատությունների մեծ մասը կորցնում է բժշկական սպասարկում, մասնավորապես՝ լուրջ վիրավորների բուժում իրականացնելու ֆունկցիան: Վիրավորները մնացել են բժշկական հաստատությունների վնասված շենքերից դուրս և ստանում են միայն առաջին բժշկական օգնություն:</p> <p>Նախօրոք պատրաստված ցուցակի հիման վրա ՓԾ և առողջապահության նախարարությունը հավաքում են բժշկական հաստատությունների վնասների վերաբերյալ տեղեկություն: Տեղեկության հավաքումը հանդիպում է դժվարությունների, քանի որ ցուցակի միայն ֆիքսված հեռախոսահամարներն են հասանելի:</p>	<p>Բազմաթիվ բժշկական հաստատություններում բժշկական սպասարկման վերսկսումն ուշանում է, քանի որ շենքերի ապահովությունը հաստատող հրատապ դիագնոստիկական դանդաղ է ընթանում:</p> <p>Թեև բժշկական սպասարկումը վերսկսվել է վնաս չստացած բժշկական հաստատություններում այնպես, ինչպես ուսուցանվել է արտակարգ իրավիճակներում բժշկական սպասարկում իրականացնելու ձեռնարկի համաձայն, հասանելի բժշկական խմբերի թիվը սահմանափակ է՝ 300 հրատապ նախաբժշկական խմբերի և 200 հրատապ բժշկական խմբերի մոտավորապես կեսը: Բացի այդ, բազմաթիվ թեթև վնասվածք ստացածները շտապում են հիվանդանոցներ, որի արդյունքում լուրջ վիրավորների բժշկական սպասարկումը խոչընդոտվում է:</p> <p>ՓԾ-ի և պաշտպանության նախարարության հետ համագործակցելով առողջապահության նախարարությունը սկսում է հիմնել վրաններում գործող դաշտային բժշկական հաստատություններ: Քանի որ հաստատությունների գտնվելու վայրերը ճիշտ չեն տեղեկացվել բնակիչներին, բոլոր վիրավորները, ներառյալ թեթև վնասվածք ստացածները, տեղափոխվում են հիվանդանոցներ: Թեև առաջին բժշկական օգնության պայուսակներ կան պահված թաղապետարաններում, սակայն բնակիչները տեղյակ չեն դրանց մասին և շատ վիրավորներ շտապում են հիվանդանոցներ: Արդյունքում, հիվանդանոցները հայտնվում են խառնաշփոթ իրավիճակում և բազմաթիվ վիրավորներ երկար ժամանակ չեն կարողանում բժշկական օգնություն ստանալ:</p>	<p>Քանի որ մի քանի անգամ տեղի են ունենում հետցնցումներ և շատերը անհանգստանում են բժշկական հաստատությունների շենքերի կայունության հարցում, ապա բժշկական սպասարկումն իրականացվում է շենքերից դուրս գտնվող ազատ տարածքներում:</p> <p>Վրանների, բժշկական սարքավորումների և պիտույքների պակասի պատճառով բժշկական սպասարկումն արդյունավետ չի կատարվում:</p> <p>Այլ մարզերից գործուղված բժշկական խմբերը սկսում են սպասարկում իրականացնել Երևանի հրատապ բժշկական խմբերի հետ միասին: Այնուամենայնիվ, արտասահմանից եկած բժշկական խմբերը արդյունավետ չեն գործում, քանի որ նրանց ընդունման և հայկական խմբերի հետ նրանց համագործակցության ընթացակարգերը և համակարգը նախապես լավ չեն հիմնվել աղետի կառավարման պլանում:</p>		<p>Որոշ բժշկական պիտույքներ և սարքավորումներ վերջացել են և շատ ժամանակ է ծախսվում պիտույքներ և սարքավորումներ հավաքելու համար: Բժշկական պիտույքների պակասը բերում է անբավարար բժշկական սպասարկման, որի արդյունքում որոշ հիվանդանոցների վիճակն ավելի է վատանում:</p> <p>Արտասահմանյան երկրների տրամադրած դեղերի որոշ մասի բաղադրությունը չի համապատասխանում հայկական նորմերին, որի արդյունքում դրանք պահեստավորվում են և պիտանիության ժամկետն անցնում է:</p>

Համեմատարար մեղմ դեպք

Վիրավորների թիվը կիսով չափ կրճատվել է, քանի որ շենքերն ամրացվել են, իսկ կահույքները՝ ֆիքսվել:

66 խոշոր բժշկական հաստատությունների շենքերի միջինից լուրջ վնաս ստանալու թիվը կիսով չափ կրճատվել է, քանի որ շենքերն ամրացվել: 23 կլինիկաների շենքերի մի մասը լուրջ վնաս են ստացել:

Թեև ջրա- և էլեկտրամատակարարման ցանցերը վնասվել են, բժշկական սպասարկման համար ջուրն ու էլեկտրականությունը ապահովվում են, քանի որ բժշկական հաստատություններում արտակարգ իրավիճակներում մատակարարման համար տեղադրվել են ջրի բաքեր և գեներատորներ:

Քանի որ բժշկական սարքավորումները և պիտույքները ֆիքսված են երկրաշարժի դեմ, ապա նրանք լուրջ վնաս չեն ստանում:

Կլինիկաներում այնպիսի գործողությունները, ինչպիսիք են՝ թեթև վնասվածք ստացածների շտապ օգնությունը և լուրջ վնասվածք ստացածների տեղափոխումը խոշոր բժշկական հաստատություններ սահուն են իրականացվում, քանի որ կլինիկաների և խոշոր բժշկական հաստատությունների միջև նախօրոք պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջադրանքների բաշխման և համագործակցության վերաբերյալ: Վիրավորների բժշկական սպասարկում իրականացվում է այն հիվանդանոցներում, որոնց շենքերը վնաս չեն ստացել: Այն բժշկական հաստատություններում, որոնց շենքերը վնաս են ստացել, իրականացվում է առաջին բժշկական օգնություն, իսկ լուրջ վնասվածք ստացածները տեղափոխվում են այլ բժշկական հաստատություններ՝ հետագա բուժում ստանալու համար:

Նախօրոք պատրաստված ցուցակի հիման վրա ՓԾ և առողջապահության նախարարությունը հավաքում են բժշկական հաստատությունների վնասների վերաբերյալ տեղեկություն: Տեղեկության հավաքումն ընթանում է հարթ, քանի որ ցուցակում հասանելի են այլընտրանքային կապի միջոցներ:

Հիվանդանոցների մեծ մասում բժշկական սպասարկումը հասանելի է: Վնասված բժշկական հաստատություններում բժշկական սպասարկումը վերսկսվում է շենքերի ապահովությունը հաստատող հրատապ դիագնոստիկա կատարելուց հետո, որն իրականացվում է աղետի կառավարման պլանում սահմանված ընթացակարգի համաձայն:

200 հրատապ բժշկական խմբերի մեծ մասը գործում են հիմնականում հիվանդանոցներում և իրականացնում են բժշկական սպասարկում լուրջ վնասվածք ստացածների համար՝ հերթականություն հաստատելուց հետո: Լուրջ վնասվածք ստացածների մի մասը բուժվում են աղետի կառավարման պլանում նախապես նշված վայրերում գործող դաշտային բժշկական հաստատություններում, որոնք հիմնվել են առողջապահության նախարարության կողմից՝ ՓԾ-ի և պաշտպանության նախարարության հետ համագործակցելով: 300 հրատապ նախաբժշկական խմբերի մեծ մասը նույնպես գործում է բժշկական հաստատություններում կամ հաստատություններից դուրս և իրականացնում է բժշկական սպասարկում հիմնականում թեթև վնասվածք ստացածների համար: Նախաբժշկական խմբերի մոտ բերված լուրջ վիրավորները տեղափոխվում են խոշոր բժշկական հաստատություններ՝ նախնական բժշկական սպասարկումից հետո: Խոշոր բժշկական հաստատություններում բժշկական սպասարկման հնարավորությունների և լուրջ վնասվածք ստացածների թվի վերաբերյալ տեղեկատվության հիման վրա սիստեմատիկորեն իրականացվում է լուրջ վնասվածք ստացածների տեղափոխում, որը ղեկավարվում է առողջապահության նախարարության և ՓԾ-ի կողմից:

Թեթև վնասվածք ստացածների մի մասը բուժում են ստանում տանը, քանի որ առաջին բժշկական օգնության պայուսակ են պահում տանը կամ ստացել են թաղապետարանից: Յուրաքանչյուր ընտանիքի համար թաղապետարանի և ՓԾ-ի կողմից կատարվել է արտակարգ իրավիճակում բժշկական օգնության ուսուցում: Արդյունքում, թեթև վնասվածք ստացածներին բուժելու համար պահանջվող ժամանակը կրճատվել է, որը բերում է բժշկական հաստատություններում ամբոխների կուտակման նվազեցման:

Բժշկական հաստատություններին բժշկական սարքավորումների և պիտույքների մատակարարումը հարթ է ղեկավարվում, քանզի դրանք պահվում են խոշոր բժշկական հաստատություններում և պետական ռեզերվի գործակալությունում, և տրամադրվում են մարզերից և արտասահմանից: Կառավարման համար առողջապահության նախարարությունը և ՓԾ օգտագործում են տվյալների բազան, որը ներառում է տվյալներ հասանելի մահճակալների, հրատապ բժշկական խմբերի, անհրաժեշտ բժշկական պիտույքների և այլնի վերաբերյալ:

Այլ մարզերից և արտասահմանից գործուղված բժշկական խմբերը սկսում են սպասարկում իրականացնել Երևանի հրատապ բժշկական խմբերի հետ միասին: Դրսից եկած բժշկական խմբերի ընդունումն ու տեղաբաշխումը կառավարվում են առողջապահության նախարարության և ՓԾ-ի կողմից՝ աղետի կառավարման պլանում սահմանված ընթացակարգի համաձայն, որի արդյունքում բժշկական սպասարկման աջակցությունը արդյունավետ է կատարվում:

Բժշկական հաստատություններին բժշկական սարքավորումների և պիտույքների մատակարարումը հարթ է ընթանում, օգտագործելով առողջապահության կողմից կառավարվող տվյալների բազան և սերտ համագործակցելով բժշկական հաստատությունների հետ:

Թեև պահեստավորված բժշկական պիտույքների մի մասը սպառված է, սակայն արտաքին գործերի նախարարության միջոցով առողջապահության նախարարության պահանջի հիման վրա անհրաժեշտ բժշկական պիտույքներ են տրամադրվում արտասահմանյան երկրների կողմից: Հիվանդների վիճակը լավանում է, իսկ բժշկական սպասարկման համակարգը արտակարգից անցնում է սովորականի:

Բժշկական աջակցության վերաբերյալ ձեռք է բերվել նախնական համաձայնություն այլ երկրների և դոնորների հետ: Քանզի համաձայնագրի մեջ նշված են դեղերի բաղադրության վերաբերյալ հայկական նորմերը, ապա արտասահմանյան երկրների տրամադրած դեղերի որակի հարցում շփոթություն չկա:

Միջոցառումներ	<p><u>Բժշկական հաստատությունների շենքերի ամրացման միջոցառումներ պետք է կատարվեն բարձր առաջնահերթությամբ:</u></p> <p><u>Բժշկական հաստատություններում պետք է տեղադրվեն ջրի քարեր և գեներատորներ,</u> որպես ջրա- և էլեկտրամատակարարման վթարային աղբյուր:</p> <p><u>Բժշկական հաստատություններում բժշկական սարքավորումները և պիտույքները պետք է ամրացվեն երկրաշարժի դեմ:</u></p> <p><u>Գլխիկակաների և խոշոր բժշկական հաստատությունների միջև նախօրոք պետք է պայմանավորվածություն ձևոր բերվի առաջադրանքների բաշխման և համագործակցության մեխանիզմի վերաբերյալ,</u> որը պետք է նկարագրվի աղետի կառավարման պլանում:</p> <p>Բժշկական հաստատությունների վնասի, վիրավորների ընդունման հնարավորությունների և այլնի վերաբերյալ տեղեկության հավաքման համար <u>պետք է նախօրոք պատրաստվի տեղեկության հավաքման և խոշոր բժշկական հաստատությունների տվյալների բազայի ընթացակարգ, ներառյալ կապի սխեման:</u></p>	<p><u>Պետք է նախօրոք նորմավորվեն բժշկական հաստատությունների շենքերի հրատապ դիագնոստիկա կատարելու չափանիշները և ընթացակարգը:</u> Բացի այդ, պետք է նպաստել դիագնոստիկա իրականացնող ճարտարապետների ուսուցմանը և որակավորման բարձրացմանը:</p> <p>Վիրավորների արդյունավետ բուժման համար <u>պետք է պահպանվի կապ խոշոր բժշկական հաստատությունների և կլինիկաների միջև:</u></p> <p>Պետք է նպաստել յուրաքանչյուր տանը և թաղապետարանում <u>առաջին բժշկական օգնության պայուսակ պահելուն,</u> և այդ պայուսակներից <u>ճիշտ օգտվելու դասընթացներ անցկացվեն:</u></p> <p>Աղետի կառավարման պլանում որոշված <u>դաշտային բժշկական հաստատությունների գտնվելու վայրերը պետք է նախօրոք տեղեկացվեն բնակչությանը</u>՝ խոշոր հիվանդանոցների վիրավորներով հեղեղվելուց խուսափելու համար:</p>	<p>Յուրաքանչյուր հաստատության և առողջապահության նախարարության կողմից <u>նախօրոք պետք է պատրաստվի և բաժանվի խոշոր բժշկական հաստատությունների տվյալների բազա,</u> որը կներառի տվյալներ մահճակալների, հասանելի բժշկական սարքավորումների, պահեստավորված բժշկական պիտույքների և այլնի վերաբերյալ: Այն պետք է թարմացվի արտակարգ իրավիճակներում արձագանքման ընթացքում:</p> <p>Աղետի կառավարման պլանում <u>պետք է սահմանվի դրսից եկած աջակցող խմբերի ընդունման և տեղաբաշխման ընթացակարգը:</u></p>	<p><u>խոշոր բժշկական հաստատությունների տվյալների բազան պետք է թարմացվի և օգտագործվի անհրաժեշտ բժշկական պիտույքներ տրամադրելու համար:</u></p> <p><u>Այլ երկրների և դոնորների հետ պետք է ձևոր բերվի նախնական համաձայնություն բժշկական աջակցության համար:</u></p> <p>Համաձայնագիրը պետք է ներառի բժշկական պիտույքների որակի վրա դրված նորմերը:</p>
---------------	--	---	---	---

Հետևանքների սցենար (6) սանիտարական վերահսկողություն

	0 - 1 ժամ	1 - 24 ժամ	1 - 3 օր	3 - 7 օր	7 և ավելի օր
<p>Վատթարագույն դեպք</p>	<p>Ինչ վերաբերում է կոյուղու ցանցին 865կմ երկարությամբ կեղտաջրի խողովակների 714 կետ և 182կմ երկարությամբ անձրևաջրի խողովակների 95 կետ վնասվել են: Կոյուղու հետ առնչվող այլ շինություններ, ինչպես օրինակ՝ «Աերացիա» մշակման գործարանը և պոմպակայանները նույնպես վնասվել են և չեն աշխատում էլեկտրամատակարարման անջատման պատճառով:</p> <p>Ջրամատակարարման համակարգի խափանումը նույնպես առաջացնում է բարդություններ սանիտարական պայմանները պահպանելու գործում:</p> <p>Երևան քաղաքի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի (ԱԻՀ) կոմունալ տեխնիկական ծառայության շատ անդամներ չեն հավաքվում արտակարգ իրավիճակները կառավարելու համար, քանի որ անդամների նախնական արձագանքման կանոնը սահմանված չէ աղետների կառավարման պլանում:</p> <p>Շենքերի վնասվելու պատճառով վնասվել են նաև գույքարանները:</p> <p>Երևան Ջուր ընկերությունում սկսվում է աղետների արձագանքման խմբի և վնասի հետախուզման խմբերի անդամների հավաքը, բայց հավաքվում են ընդամենը մի քանի անդամներ, քանի որ չկա հստակ կանոն արտակարգ իրավիճակներում հավաքվելու վերաբերյալ:</p>	<p>Մարդկային արտաթորանքը տարածվել էր շատ վայրերում, քանի որ շատ քիչ մարդիկ են ուշադրություն դարձնում սանիտարական պայմանների պահպանմանը:</p> <p>Չնայած Երևան Ջուր ընկերության վնասի հետախուզման խմբերը շարունակում են իրենց աշխատանքը, վնասի վերաբերյալ տեղեկատվությունը չի փոխանցվում Երևան քաղաքի ԱԻՀ կոմունալ տեխնիկական ծառայություն, որովհետև Երևան Ջուր ընկերության և հանձնաժողովի միջև տեղեկատվության հոսքը նախապես սահմանված չէր աղետների կառավարման պլանում, և, հետևաբար, արդյունավետ վերանորոգման աշխատանքների կարգավորումը և ուղղորդումը սահուն ձևով չեն ընթանում:</p>	<p>Մնունդը փչացել է, ջրամաքրման համակարգը չի աշխատում, կոյուղու մշակման գործարանները չեն աշխատում, աղբը կուտակվում է, մարդկային արտաթորանքը տարածվում է և, հետևաբար, սանիտարական պայմանները գնալով վատանում են: Քիչ միջոցառումներ են ձեռնարկվում վերոնշյալ իրավիճակները բարելավելու ուղղությամբ, քանի որ անհրաժեշտ միջոցառումները և դրանց համար պատասխանատու կազմակերպությունները սահմանված չեն աղետների կառավարման պլանում:</p> <p>Քանի որ գույքարանների թիվը սահմանափակ է, տարեցները և կանայք ձգտում են քիչ ջուր խմել և նրանցից ոմանք ջրագրկվել են:</p> <p>Կոյուղու վերանորոգման աշխատանքները սկսվել են: Աշխատանքները լավ առաջ չեն գնում վերանորոգման համար անհրաժեշտ աշխատուժի, նյութերի, մասերի և սարքավորումների պակասի պատճառով:</p> <p>Չնայած ցանկալի է ուղարկել վերանորոգող խմբեր մարզերից, խմբերի կազմակերպումը և տեղակայումը ձգձգվում է, քանի որ չի եղել նախնական համաձայնություն ուղարկման վերաբերյալ:</p>	<p>Վատ սանիտարական պայմանների պատճառով շատ տարահանվողներ, հատկապես մանուկները և մեծահասակները տառապում են փորլուծությունից և վարակիչ հիվանդություններից: Շատերը սպասում են պատվաստման բժշկական հաստատություններում, քանի որ պահեստավորված պատվաստանյութերի քանակը սահմանափակ է:</p> <p>Վերանորոգման աշխատանքները իրականացվում են 24 ժամյա ռեժիմով երեքական հերթափոխով 15 թիմերի ներգրավմամբ: 7 օր հետո կոյուղու ցանցի 800 վնասված կետերից 60 վերանորոգվել են (առաջընթացը կազմում է 7.5%):</p>	<p>Որոշ տարածքներում վատ սանիտարական պայմանները դեռևս չեն բարելավվել, քանի որ սանիտարական պայմաններով զբաղվող անձնակազմը զբաղված է վարակների տարածվելը կանխելու ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելով և ժամանակ չունի կանխարգելելու համար:</p> <p>Կոյուղու ցանցը վերանորոգելու համար անհրաժեշտ մասերի և նյութերի պակասի պատճառով մեկ ամիս հետո վերանորոգման աշխատանքները կատարվել են մոտ 30%-ով:</p>

<p style="text-align: center;">Համեմատաբար մեղմ դեպք</p>	<p>Կոյուղու խողովակաշարերի ամրացումը, հատկապես խոցելի կերամիկական խողովակների փոխարինումը երկաթբետոնե խողովակներով նպաստում է կոյուղու ցանցին հասցված վնասի կրճատմանը՝ մոտ վատագույն դեպքի 1/5-ով: Կոյուղու համակարգի ամրացումը ևս նպաստում է վնասների նվազեցմանը:</p> <p>Ջրամատակարարման համակարգը քիչ է խափանված շնորհիվ ջրամատակարարման միջոցների ամրացման:</p> <p>Վնասված զուգարանների քանակը նվազել է, որովհետև ձեռնարկվել են միջոցներ շենքերի ամրացման ուղղությամբ:</p> <p>ԱԻՀ կոմունալ տեխնիկական ծառայության անդամները հավաքվում են ավտոնոմ հիմունքներով արտակարգ իրավիճակների կառավարման համար, քանի որ անդամների նախնական արձագանքման կանոնը սահմանված է աղետների կառավարման պլանում:</p> <p>Երևան Ջուր ընկերությունում սկսվում է աղետների արձագանքման խմբի և վնասի հետախուզման խմբերի անդամների հավաքը, անդամներից շատերը գնում են իրենց կենտրոնակայան, քանի որ արտակարգ իրավիճակներում հավաքվելու կանոնը նշված է Երևան Ջուր ընկերության աշխատանքների շարունակականության պլանում:</p>	<p>Տարահանվողները կանխում են մարդկային արտաթորանքի տարածումը՝ պատրաստելով ժամանակավոր զուգարան՝ փորելով հողը ընտանիքի կամ համայնքի անդամների հետ: Երևան Ջուր ընկերության վնասի հետախուզման խմբերը շարունակում են իրենց աշխատանքը, և վնասի վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցվում է Երևան քաղաքի ԱԻՀ կոմունալ տեխնիկական ծառայություն՝ համաձայն աղետների կառավարման պլանում ամրագրված ընթացակարգի: Հիմնվելով վնասի վերաբերյալ տեղեկատվության վրա՝ ԱԻՀ կոմունալ տեխնիկական ծառայությունը հրահանգում է Երևան Ջուր ընկերությանը իրականացնել արդյունավետ վերականգնողական աշխատանքներ: Կոմունալ տեխնիկական ծառայությունը տեղեկացնում է ՃԿԿ հետախուզված վնասի իրավիճակի վերաբերյալ սանիտարական միջոցների արդյունավետ մատակարարման համար, ինչպես օրինակ՝ պահեստավորված շարժական զուգարաններ, պատվաստանյութեր և ախտահանող նյութեր: Երևան Ջուր ընկերությունը հաշվարկում է վերանորոգման համար անհրաժեշտ պահեստամասերը դրանք ներմուծելու նպատակով:</p>	<p>Սանիտարական միջոցառումները, ինչպես օրինակ՝ փչացած սննդի մշակումը, ջրի մաքրումը, կոյուղու մշակումը, աղբի հավաքումը և մարդկային արտաթորանքի մաքրումը, իրականացվել են պատասխանատու կազմակերպությունների կողմից՝ համաձայն աղետների կառավարման պլանում նշված միջոցառումների ուրվագծի: Փորլուծության և վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու համար բնակիչների շրջանում տարածում են գտել ձեռնարկվելիք սանիտարական միջոցառումները և նրանց են բաժանվել սանիտարական նյութեր, ինչպես օրինակ՝ շարժական զուգարանները և ախտահանող նյութերը: Պատվաստանյութերը բաժանվում են բժշկական հաստատություններին ժամանակին պատվաստում կատարելու համար: Այն տարածքներում, որտեղ շարժական զուգարանների քանակը բավարար չէ, տեղադրվում է խրամատանման ժամանակավոր զուգարաններ: Սկսվում են կոյուղու վերանորոգման աշխատանքները: Չնայած որոշ պահեստամասերի ձեռքբերման համար պահանջվում է ժամանակ, վերանորոգման աշխատանքները լավ են ընթանում, որովհետև վերանորոգման աշխատանքների համար անհրաժեշտ աշխատուժը, նյութերը, պահեստավորված մասերը և սարքավորումները նախապատրաստվել են՝ համաձայն աղետների կառավարման պլանի: Մարզերից եկած վերանորոգող խմբերը կազմակերպված և տեղակայված են՝ համաձայն այլ մարզերում գործող կոյուղու ընկերությունների հետ նախնական համաձայնության:</p>	<p>Փորլուծության և վարակիչ հիվանդությունների տարածումը կանխվում է, քանի որ բնակիչների շրջանում տարածում են ձեռնարկվելիք սանիտարական միջոցառումները և նրանց են բաժանվել սանիտարական նյութեր, ինչպես օրինակ՝ շարժական զուգարանները և ախտահանող նյութերը: Պատվաստանյութերը բաժանվում են բժշկական հաստատություններին ժամանակին պատվաստում կատարելու համար: Ժամանակավոր տարահանման վայրերում տեղադրված են ժամանակավոր լոգարանային հարմարություններ: Վերանորոգման աշխատանքները իրականացվում են 24 ժամյա ռեժիմով երեքական հերթափոխով 40 թիմերի ներգրավմամբ: 7 օր հետո կոյուղու ցանցի 800 վնասված կետերից 200 վերանորոգվել են (առաջընթացը կազմում է 25%):</p>	<p>Առողջապահության նախարարությունը վերահսկում և ղեկավարում է սանիտարական վիճակի ուղղությամբ պատշաճ կանխարգելիչ միջոցառումները: Քանի որ կանխարգելիչ միջոցառումները, ինչպես օրինակ՝ պատվաստումը և ախտահանումը, իրականացվում են սահուն ձևով՝ համագործակցելով բնակիչների հետ, հետևաբար չկա համաճարակի բռնկում: Նախքան պահեստավորված մասերը և նյութերը օգտագործելը, անհրաժեշտ մասերը արդեն ներմուծվել են և, հետևաբար, վերանորոգման աշխատանքները լավ են ընթանում (1 ամիս հետո առաջընթացը կազմում է 90%):</p>
<p style="text-align: center;">Միջոցառումներ</p>	<p>Տարածքային կառավարման նախարարությունը, Երևանի քաղաքապետարանը և Երևան Ջուր ընկերությունը պետք է շարունակեն ամրացնել կոյուղու հարմարանքները երկրաշարժին դիմակայելու համար: Հատկապես պետք է խթանել հին կերամիկական խողովակների փոխարինմանը: Ռեզերվային էլեկտրամատակարարման համար պետք է վերամշակման գործարաններում տեղադրվեն գեներատորներ՝ էլեկտրաէներգիան կտրելու դեպքում գործառույթները շարունակելու համար:</p> <p>ԱԻ դեպքում նախնական արձագանքման կանոնը, ինչպես օրինակ՝ ներգրավված կազմակերպությունների անձնակազմի հավաքը ավտոնոմ հիմունքներով, պետք է ամրագրվի աղետների կառավարման պլանում:</p>	<p>Նախապես պետք է պատրաստել ԱԻ դեպքում սանիտարական պայմանների վերաբերյալ ձեռնարկ, ինչպես օրինակ՝ փորված զուգարանների տեղադրումը ընտանիքի և համայնքի համար, և պետք է անցկացվի ուսուցում բնակիչների հետ՝ օգտագործելով ձեռնարկը: Պետք է պահեստավորել շարժական զուգարաններ՝ էլնելով վնասի գնահատման արդյունքներից: Հաղորդակցության ընթացքը և կոյուղու համար պատասխանատու կազմակերպություններին վնասի իրավիճակի վերաբերյալ զեկուցման ձևը պետք է նշված լինեն աղետների կառավարման պլանում:</p>	<p>Աղետների կառավարման պլանում նախապես պետք է սահմանվեն սանիտարական պայմանների վերաբերյալ անհրաժեշտ միջոցառումների ուրվագիծը և այդ միջոցառումների համար պատասխանատու կազմակերպությունները: Պահեստավորման վերաբերյալ ուղեցույցը և շարժական զուգարանների բաշխումը, ինչպես նաև ժամանակավոր խրամատանման զուգարանների տեղադրումը պետք է նախապես հստակ նշվի աղետների կառավարման պլանում:</p>	<p>Բնակիչների կողմից ձեռնարկվելիք սանիտարական միջոցառումները պետք է նախապես ցուցակով նշված լինեն աղետների կառավարման պլանում, և պետք է պահեստավորվեն միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ նյութերն ու սարքավորումները դրանց սահուն իրականացման համար՝ համագործակցելով բնակիչների հետ:</p>	<p>Առողջապահության նախարարությունը պետք է վերահսկի սանիտարական պայմանները և, համապատասխանաբար, ձեռնարկի անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումներ:</p>

Հետևանքների սցենար (7) Դիակների մշակում

	0 - 1 ժամ	1 - 24 ժամ	1 - 3 օր	3 - 7 օր	7 և ավել օրեր
Վատթարագույն դեպք	Մոտ հարյուր հազար (100,000) մարդ մահացել է հիմնականում շենքերի փլուզման հետևանքով:	Մինչև փրկարարական ուժեր ուղարկելը բնակիչները որոնում են հարևաններին, ովքեր տաղված են մնացել շենքերի փլատակների տակ: Բնակիչները գտնում են դիակներ և տեղափոխում դրանք բժշկական հաստատություններ: Հիվանդանոցներում դիակների համար նախատեսված տարածքը սահմանափակ է, և մի քանի հարյուր դիակները զբաղեցնում են մեծ տարածք բժշկական հաստատություններում:	Փրկարարական գործողությունները իրականացվում են պետական մարմինների կողմից, և հայտնաբերվում են շատ դիակներ: Չնայած դիակները տեղափոխվում են դիահերձարաններ, որտեղ որոշվում են թաղման ծառայությունները՝ դիահերձումը լավ չի ընթանում բժշկական դատաքննիչների պակասի պատճառով, և, հետևաբար, դիակները դիահերձարաններում կուտակվում են:	Դիակները դիահերձարաններում փտում են, և մարդիկ վախենում են համաճարակից ու ուղարկում են մարմինները թաղման վայրեր առանց դիակների ինքնությունը պարզելու:	Քանի որ շատ դիակները թաղվել են առանց ինքնությունը պարզելու, կան շատ կորած համարվող մարդիկ, ում կենդանի կամ մահացած լինելը անհայտ է, և, հետևաբար, կորած մարդկանց ընտանիքները բարձրացնում են աղմուկ և բողոք:
Համեմատաբար մեղմ դեպք	Երկրաշարժերի դեմ շենքերի ամրացման և վերակառուցման շնորհիվ նվազել է փլուզված շենքերի քանակը, հետևաբար նաև մահացածների թիվը:	Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովի հատուկ ծառայությունների միավորումը, համագործակցելով Առողջապահության և Արդարադատության նախարարությունների հետ, սկսում է հիմնել տարածքներ դիակների համար բժշկական հաստատությունների ներսում կամ դրանց շուրջը: Դիակները շարվում են այդ տարածքում, և բժշկական դատաքննիչների ժամանումից հետո սկսվում է դիահերձումը:	Դիակները տեղափոխվում են դիահերձարաններ, որտեղ դիահերձումը շարունակվում է համաձայն աղետների կառավարման պլանում նախապես սահմանված ընթացակարգի: Դիակների ինքնությունը պարզելուց հետո, դիակները տրվում են ընտանիքի անդամներին:	Դիակները, որոնց ինքնությունը չի պարզվել փտում են և թաղվում նախապես որոշված վայրերում իրերի գրանցումից հետո (ինչպես օրինակ լուսանկարները, անձը հաստատող փաստաթուղթը, մատնահետքը, ատամի պրոֆիլը, մազը ԴՆԹ անալիզի համար և այլն) հետագայում ինքնությունը պարզելու համար, ինչպես նախատեսված է աղետների կառավարման պլանում:	Հուղարկավորման ծառայություններ իրականացվում են բոլոր զոհերի համար, որոնք կազմակերպվում են ԱԻ հանձնաժողովի հատուկ ծառայությունների միավորման կողմից: Չոհերը ճշտվում են գրանցված իրերից, որոնք մնացել էին, ընտանիքները ստանում են փոխհատուցում համաձայն աղետների կառավարման պլանում նախատեսված չափանիշի, և, հետևաբար, ընտանիքները չեն բարձրացնում մեծ աղմուկ կամ բողոք:
Միջոցառումներ	Պետք է նպաստել <u>շենքերի ամրացմանը և վերակառուցմանը</u> ՝ համաձայն շինարարական նորմերի:	<u>Դիակների համար տարածքները պետք է նախապես սահմանված լինեն աղետների կառավարման պլանում, որոնց մասին բնակիչները պետք է տեղեկացված լինեն</u> դիակների դիահերձումը առանց քաջքշուկների իրականացնելու համար:	ԱԻ հանձնաժողովի հատուկ ծառայությունների միավորումը պետք է պատրաստի <u>աղետների կառավարման պլան աղետների ժամանակ դիահերձման ընթացակարգի վերաբերյալ</u> ՝ համագործակցելով առնչվող կազմակերպությունների, ինչպես օրինակ՝ Առողջապահության, Արդարադատության նախարարությունների, ՓԾ-ի և Ոստիկանության հետ: ԱԻ հանձնաժողովի հատուկ ծառայությունների միավորումը պետք է <u>անցկացնի ուսուցում</u> ՝ ելնելով պլանից, որպեսզի աղետի ժամանակ այն ճիշտ կիրառվի:	ԱԻ հանձնաժողովի հատուկ ծառայությունների միավորումը պետք է պատրաստի աղետների կառավարման պլան՝ սահմանելով <u>թաղման վայրերը, թաղման ընթացակարգերը և ձևերը ու դիակների փոխադրման պլանը</u> ՝ համագործակցելով տրանսպորտային ծառայությունների հետ:	Հասարակությունը պետք է պատրաստված և տեղեկացված լինի <u>փոխհատուցման համակարգի և ընթացակարգերի վերաբերյալ</u> բնակիչների բողոքներից ու քաջքշուկներից խուսափելու համար:

Հետևանքների սցենար (8) Հոգեբանական օգնություն (Առողջապահության նախարարություն)

	0 - 1 ժամ	1 - 24 ժամ	1 - 3 օր	3 - 7 օր	7 և ավել օրեր
Վատթարագույն դեպք	Բնակիչները ընկնում են խուճապի մեջ և չեն կարողանում ընդունել ստեղծված իրավիճակը կործանարար երկրաշարժի պատճառով, որպիսին նախկինում տեղի չէր ունեցել (օրինակ՝ շենքերի և կահույքի փլուզում, տարահանում փլատակների տակից, տարանջատում ընտանիքից):	Շարունակելով ընկալել ստողծված իրավիճակը (ինչպես օրինակ իրենց ծնողների և երեխաների կորուստը)՝ բնակիչները զգում են խորը միայնություն ու վախ: Միայնության և վախի զգացումը աճում է տեղեկատվության պակասի պատճառով, ինչպես օրինակ՝ կորած մարդիկ, աղետի իրավիճակը, ջրի/սննդի ապահովումը և այլն: Քանի որ չկան հոգեբանական օգնություն տրամադրող մասնագետներ, բնակիչների հոգեկան տրավմաները ավելի լրջանում են:	Վախի զգացումը մեծանում է ամեն մի հետցնցման հետ, բնակիչները չեն կարողանում լավ քնել, և նախանշանները գնալով վատանում են: Փլատակների տակից փրկված շատ բնակիչներ տառապում են տրավմատիկ տոկսիկոզից: Մեքենայում մնացող տարահանվածները ունեն էկոնոմ-կլաս սինդրոմը (հողացավեր նույն վիճակում երկար գտնվելուց): Այն ավելի վատանում է այն մասնագետների պակասի պատճառով, ովքեր կարող է ցուցաբերել օգնություն նման սինդրոմի դեպքում:	Բացի հոգեբանական տրավմայից բնակիչների մոտ առաջանում է քնկոտություն և հոգնածություն, իսկ սթրեսը վերածվում է նյարդայնության: Աղետների արձագանքմամբ զբաղվող անձնակազմը աշխատում է առանց քնելու և ավելի շատ հոգնում, որն էլ հանգեցնում է մահի գերաշխատելու հետևանքով:	Տարահանման կյանքից հոգնելու և անկայուն ապագայի վախի պատճառով որոշ բնակիչներ գործում են ինքնասպանություն: Տուժածները, ովքեր չեն կարողանում փրկել իրենց ընտանիքները տանջվում են շարունակական ներոզից: Արտակարգ իրավիճակների ծառայությունների անձնակազմի մի մասը տառապում է ՀՏՄԻ--ից (հետտրավմատիկ սթրեսային խանգարում):
Համեմատաբար մեղմ դեպք	Չնայած բնակիչները ունեն միայնակության զգացում և վախ՝ մի կերպ կարողանում են հանգստանալ, որովհետև նրանց սովորեցրել են, թե ինչ կարող է պատահել ուժեղ երկրաշարժերի ժամանակ: Այդ իսկ պատճառով բնակիչները կարող են մտածել, թե ինչ պետք է անեն և պատշաճ արձագանքեն:	Տարահանման վայրերում տրամադրվող շտապ բուժօգնության հետ մեկտեղ ուղարկվում են նաև հոգեբանական օգնություն տրամադրող մասնագետներ առաջնային օգնության համար: Տեղեկատվությունը փոխանցվում է պատշաճ ձևով, և բնակիչները ինչ-որ չափով զգում են իրենց ապահովված հետագա իրավիճակներում:	Առողջապահության նախարարության նախաձեռնությամբ տարահանման վայրերում և բժշկական հաստատություններում ստեղծվում են խորհրդատվական կենտրոններ բնակիչներին հոգեբանական օգնություն ցուցաբերելու համար: Առողջապահության նախարարությունը ստեղծում է նաև թեժ գիծ հոգեբանական օգնության համար:	Հոգեբանական օգնություն է ցուցաբերվում աղետների արձագանքմամբ զբաղվող անձնակազմին, ինչպես նաև բնակիչներին հոգեբանական լարվածությունը թուլացնելու համար:	Ելնելով բնակիչների և արտակարգ իրավիճակների ծառայությունների անձնակազմի ցուցակից՝ ցուցաբերվում է երկարաժամկետ հոգեբանական օգնություն, որն օգնում է խուսափել ինքնասպանությունից, ներոզից և ՀՏՄԻ:
Միջոցառումներ	<u>Պետք է նպաստել աղետների կրթությանը և ուսուցմանը</u> , որպեսզի բնակիչները կարողանան իրենց պահել պատշաճ ձևով ուժեղ երկրաշարժերի ժամանակ:	<u>Պետք է ստեղծվի ԱԻ դեպքում հոգեբանական օգնություն տրամադրող կազմակերպություն կամ ասոցիացիա, և կազմակերպությունը պետք է ուսուցանի հոգեբաններին ԱԻ դեպքում հոգեբանական օգնություն ցուցաբերելու ուղղությամբ:</u>	Առողջապահության նախարարությունը պետք է աղետների կառավարման պլանում <u>մշակի պլան ԱԻ դեպքում հոգեբանական օգնություն ցուցաբերելու համար:</u> Պլանում պետք է նշվի հոգեբանական կենտրոնների ստեղծման և թեժ գծի մասին: Անհրաժեշտ է ունենալ հոգեբաններ ճգնաժամային կառավարման կենտրոնում հոգեբանական հարցերով զբաղվելու համար:	Առողջապահության նախարարությունը պետք է ցուցաբերի հոգեբանական օգնություն աղետների արձագանքմամբ զբաղվող անձնակազմին, ինչպես նաև բնակչությանը:	Առողջապահության նախարարությունը պետք է պատրաստի <u>բնակիչների/անձնակազմի ցուցակը հոգեբանական օգնություն ցուցաբերելու համար՝ հատկապես ուշադրություն դարձնելով այն երեխաներին, ովքեր կորցրել են իրենց ծնողներին:</u>

	0 - 1 ժամ	1 - 24 ժամ	1 - 3 օր	3 - 7 օր	7 և ավել օրեր
Վատթափանքներ	<p>Դպրոցական շենքերի գրեթե %-ը ավերվել է (Սպիտակի երկրաշարժի ժամանակ ավերվել է 84 դպրոց) կամ ստացել լուրջ վնասվածքներ:</p> <p>Պատճառներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - շենքերի սեյսմակայունության ցածր մակարդակը. - թույլ տրված թերությունները շենքերի նախագծման փուլում. - շինարարական աշխատանքների ցածր որակը և այլն: <p>Զոհվածների մեծ թիվը պայմանավորված է նաև դպրոցների անձնակազմի և աշակերտների անվտանգության կուլտուրայի բացակայությամբ, այն է՝ երկրաշարժի և այլ աղետների մասին գիտելիքների բացակայությամբ, դրանց ժամանակ ցուցաբերվող վարքի կանոնների և հմտությունների չիմացությամբ:</p>	<p>Երկրաշարժի պատճառով դպրոցները թեթևակի վնասվել են, և դրանց բակերը օգտագործվում են որպես տարահանման ժամանակավոր վայրեր, Բայց դրանք կարող են չհամապատասխանել տարածքների և ժամանակավոր կացարանների համար նախատեսված պահանջներին, որոնք ենթադրվում է, որ պետք է լինեն տարահանման վայրեր, քանի որ դպրոցները հնարավոր է ապահովված չլինեն ջրի, սննդի, դեղորայքի և նյութատեխնիկական միջոցների անհրաժեշտ քանակությամբ:</p>		<p>Դպրոցի շենքերի վերականգնման աշխատանքների պլանը չի կարող մշակվել առանց դպրոցի շենքերի տեխնիկական ախտորոշման:</p> <p>Կարևոր է օգտագործել դպրոցները որպես տարահանման տարածքներ երկրաշարժից տուժածների համար և ապահովել նրանց երկարաժամկետ ջրով և սննդով:</p>	<p>Որոշ վարչական շրջաններում դպրոցի դասերը անցկացվում են բարաքներում կամ վրաններում: Քանի որ ուսուցիչների քանակը բավարար չէ, նրանք փոխարինվում են կամավորներով, ովքեր ի վիճակի չեն կազմակերպել ուսումնական պրոցեսը պատշաճ ձևով: Կա դասագրքերի և ուսումնական նյութերի պակաս:</p>
Համատարաբար մտադրվածքներ	<p>Դպրոցների շենքերի սեյսմակայունության բարձրացման և գործող շինարարական նորմերին և կանոններին համապատասխանեցման դեպքում ավերված դպրոցների թիվը զգալիորեն կնվազի: Դպրոցների անձնակազմի և աշակերտների շրջանում գոհվածների թիվը նույնպես կնվազի, հաշվի առնելով Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի կողմից իրականացվող դպրոցների տնօրենների, փոխտնօրենների, ուսուցիչների, այդ թվում զինղեկների, “ԱԻ և ՔՊ հիմնահարցերով” ուսուցումը՝ համաձայն ՀՀ կառավարության 2003 թ. թիվ 134 որոշման, իսկ դպրոցներում, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ համաձայն ՀՀ կառավարության 1996 թ. թիվ 320 որոշման:</p> <p>Հյոգոյի գործողությունների Ծրագրի 3-րդ գերակայության շրջանակներում, որը հռչակում է “գիտելիքի, նորարարության և կրթության օգտագործումը բոլոր մակարդակներում անվտանգության և աղետներին դիմակայման կուլտուրա /մշակույթ/ ձևավորելու գործում”, ՄԱԿ-ի “Կրթությունը հանուն կայուն զարգացման” 2005-2015 թթ. տասնամյակի Ծրագրի, Հայաստան-Էստոնիա-Շվեդիա եռակողմ համագործակցության և այլ միջազգային ծրագրերի շրջանակներում (UNICEF, UNDP, Հայկական կարմիր խաչի ընկերություն), հրատարակվել են աղետների ռիսկերի նվազեցման թեմաներով բազմաթիվ մեթոդական, ուսումնական, դիդակտիկ և այլ նյութեր, որոնք երաշխավորվել են գործածության ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից:</p> <p>UNICEF-ի աջակցությամբ ՀՀ-ի մի շարք մարզերում անց են կացվել աղետների ռիսկերի նվազեցման /ԱՌՆ/ թեմաներով փոխտնօրենների և ուսուցիչների վերապատրաստման 3-օրյա դասընթացներ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում և տեղերում /մարզկենտրոններում/: Վերապատրաստման ընթացքում առաջարկվել են ուսուցման ընթացքում կիրառել ժամանակակից ինտերակտիվ /փոխներգործում/ մեթոդներ: Դպրոցներում ստեղծվել են ԱՌՆ թիմեր, անց են կացվել մրցույթներ, վիկտորինաներ, բանավեճեր և այլ միջոցառումներ: Մշակվել են ընտանիքների աղետների / երկրաշարժերին/ պատրաստվածության պլաններ, դպրոցների և համայնքների վտանգների գնահատման թերթիկներ:</p> <p>ԱՌՆ բնագավառում կրթությունը նպատակաուղղված է երկրաշարժի և այլ աղետների ժամանակ ցուցաբերվող վարքի կանոնների ուսուցմանը, ԱՌՆ մտածողության և անվտանգ հասարակության ձևավորմանը, ԱԻ-ում կողմնորոշվելու, որոշումներ ընդունելու, դրանք իրագործելու ունակությունների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը և զարգացմանը: Դպրոցներում մշակվել են տարահանման պլաններ և համապատասխան տեղերում փակցված են տարահանման և հրդեհային անվտանգության պայմանական նշանները: Համաձայն ՀՀ հրդեհային անվտանգության կանոնների՝ դպրոցներում տարեկան 2 անգամ անց է կացվում տարահանման պլանի փորձարկում /ուսումնական տարահանում/:</p>	<p>Որոշ դպրոցների բակերում նախատեսված է ծավալել տարահանման ժամանակավոր տեղամասեր այն մարդկանց համար, որոնք մնացել են անտուն, քանի որ այդ դպրոցներում ստեղծված են ջրի, սննդի, դեղորայքի, նյութատեխնիկական միջոցների անհրաժեշտ պահուստներ:</p> <p>Այդ դպրոցների այն ուսուցիչները և աշխատակիցներն, որոնք երկրաշարժի հետևանքով չեն տուժել, կարող են դպրոցում տեղաբաշխված մարդկանց, հատկապես երեխաներին, տարբեր բնույթի օգնություն ցույց տալ:</p>	<p>Համապատասխան մարմինը (ՄՊԱԾ-ը) շտապ իրականացնում է դպրոցների շենքերի տեխնիկական ախտորոշում (դիագնոստիկա): Դպրոցների շենքերը, որոնք համարվում են անվտանգ, օգտագործվում են որպես տարահանվողների համար ժամանակավոր կացարաններ և ապահովվում են ԱԻ-ում անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով այնքան ժամանակ, քանի դեռ տուժածները չեն տեղափոխվել ժամանակավոր վերաբնակեցման վայրեր:</p> <p>Հետագայում դպրոցների շենքերը համարվում են վտանգավոր և չեն գործում մինչև վերանորոգվելը:</p>	<p>Առավել տուժած վարչական շրջաններում պարապմունքներ անցկացվում են ժամանակավոր դասասենյակներում: Դպրոցական ուսումնական պլանում ներգրավվում են հատուկ ծրագրեր, ուղղված երկրաշարժի և այլ աղետների ժամանակ վարքի կանոնների և գործելակերպի ուսուցմանը, հմտությունների և կարողությունների ձևավորմանը:</p> <p>Այդ դպրոցների այն ուսուցիչները և աշխատակիցներն, որոնք երկրաշարժի հետևանքով չեն տուժել, կարող են դպրոցում տեղաբաշխված մարդկանց, հատկապես երեխաներին, տարբեր բնույթի օգնություն ցույց տալ:</p>	

Միջոցառումներ	<p>ՀՀ ԱԻՆ սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունն Երևանի քաղաքապետարանի կրթության վարչության պատվերով պետք է անցկացնի Երևան քաղաքի բոլոր դպրոցների սեյսմակայունության մակարդակի տեխնիկական ախտորոշում: Ըստ ստացված արդյունքների` ուժեղացման կարիք ունեցող շենքերը պետք է ուժեղացվեն:</p> <p>Աղետների ռիսկերի նվազեցման կրթությունը պետք է պարտադիր ընդգրկվի դպրոցական ուսումնական ծրագրերում` որպես առանձին կրթական բնագավառ և պետք է ներկայացված լինի առանձին առարկայով:</p> <p>ՀՀ կրթության և գիտության, արտակարգ իրավիճակների նախարարությունները, Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան հայտարարել են “Դպրոցների աղետներին պատրաստվածության պլանի մշակման” մրցույթ, որին կարող են մասնակցել ՀՀ բոլոր դպրոցները /UNICEF/: Հայտերը ընդունվում են մինչև 2011թ. նոյեմբերի 21-ը: Պլանների մշակումը կնպաստի դպրոցների անձնակազմի և աշակերտների անվտանգության ապահովման բնագավառում կուլտուրայի /մշակույթի/ մակարդակի բարձրացմանը, անվտանգ գործելակերպի կանոնների, հմտությունների և կարողությունների ձևավորմանը:</p>	<p>Հայաստանի փրկարար ծառայությունը պետք է տեղեկացնի դպրոցների ղեկավարությանը այն մասին, թե որ դպրոցները արտակարգ իրավիճակներում պետք է ծառայեն որպես տարահանման ժամանակավոր տեղամասեր, ինչի մասին պետք է նշվի դպրոցի արտակարգ իրավիճակներում գործելու պլանում:</p> <p>Երևանի քաղաքապետարանի կրթության վարչությունը պետք է մշակի ուսուցիչների և աշխատակիցների արտակարգ իրավիճակներին արձագանքելու պլան, ստեղծի ջրի, սննդի, դեղորայքի, նյութատեխնիկական միջոցների անհրաժեշտ պահուստներ: Քաղաքացիները, համատիրությունները պետք է տեղեկացված լինեն այդ պահուստների մասին:</p>	<p>Երևանի քաղաքապետարանի ինժեներական ծառայությունը պետք է մշակի շենքերի շտապ տեխնիկական ախտորոշման կամ զննման (դիագնոստիկայի) ուղեցույց, պատրաստի համապատասխան ճարտարագետ-մասնագետների և սահմանեն տեխնիկական ախտորոշման ենթարկվելու կարիք ունեցող դպրոցների հաջորդականությունն` ըստ շենքերի վիճակի և դրա անհրաժեշտության:</p>	<p>Երևան քաղաքի կրթության վարչությունը համապատասխան կառույցների հետ պետք է մշակի դպրոցների շտապ վերականգնման պլան և կարգը:</p>	<p>Հայաստանի փրկարար ծառայությունը պետք է տեղեկացնի դպրոցների ղեկավարությանը այն մասին, թե որ դպրոցները արտակարգ իրավիճակներում պետք է ծառայեն որպես տարահանման ժամանակավոր տեղամասեր, ինչի մասին պետք է նշվի դպրոցի արտակարգ իրավիճակներում գործելու պլանում:</p> <p>Երևանի քաղաքապետարանի կրթության վարչությունը պետք է մշակի ուսուցիչների և աշխատակիցների արտակարգ իրավիճակներին արձագանքելու պլան, ստեղծի ջրի, սննդի, դեղորայքի, նյութատեխնիկական միջոցների անհրաժեշտ պահուստներ: Քաղաքացիները, համատիրությունները պետք է տեղեկացված լինեն այդ պահուստների մասին:</p>
---------------	---	---	---	--	---

Հետևանքների սցենար (10) Օգնության ստացումը

	0 - 1 ժամ	1 - 24 ժամ	1 - 3 օր	3 - 7 օր	7 և ավելի օրեր
<p>Վատագույն ցուցանիշներ</p>	<p>Օգնության ստացումը բաղկացած է երեք մասից 1) ներքին օգնության ստացումը ՀՀ մարզերից, 2) օգնության ստացումը արտերկրից և 3) կամավորներից օգնության ստացումը: Դրանք իրենց հերթին բաղկացած են 2 մասից՝ փրկարարական ուժերի և նյութական միջոցների ընդունումից: Ընդունման ընթացակարգերը կանոնակարգվում է ՀՀ կառավարության 919 որոշմամբ, բայց ընդունման մանրամասն մեթոդները չեն սահմանվել առնչվող կազմակերպությունների աղետների արձագանքման պլաններում: Այդ իսկ պատճառով առնչվող կազմակերպությունները սպասում են պատասխանատու կազմակերպությունների հրահանգներին առանց ձեռնարկելու նախնական արձագանքում, օրինակ՝ անձնակազմի և նյութերի հատկացումը օգնության ստացման համար: Օգնություն տրամադրող կազմակերպությունները չեն ձեռնարկում նախնական արձագանքում, օրինակ՝ անձնակազմի և նյութերի նախապատրաստումը օգնություն տրամադրելու համար, քանի որ ձեռք չի բերվել նախնական համաձայնություն օգնության ստացման համար պատասխանատու կազմակերպությունների հետ:</p>	<p>Արտակարգ դրություն հայտարարելուց հետո պատասխանատու և առնչվող կազմակերպությունները սկսում են ստեղծել ընդունման կետեր և միջազգային, և ՀՀ մարզերից օգնության ստացման համար: Պահանջվում է ժամանակ մանրամասները սահմանելու համար, օրինակ՝ ընդունման կետերի վայրերը, անձնակազմը և նյութերը, այդ իսկ պատճառով կետերի տեղակայումը չի ավարտվել, քանի որ աղետների արձագանքման պլանը, որում նշված են մանրամասները չի պատրաստվել նախօրոք: Հայտարարելուց հետո սկսվում է նաև ՀՀ մարզային օգնության գործերի առաջին էջերում պատրաստումը: Չնայած պատրաստումը ավարտվել է՝ համաձայն մարզերի բնակչության պաշտպանության առկա պլանների, տեղակայումը ուշանում է, քանի որ մի քանի ընդունման կետեր դեռևս ստեղծված չեն: ՀՀ Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերի կողմից իրականացվում է վրանային ավանների ծավալումը Երևան քաղաքի՝ նախապես որոշված հարակից տարածքներում: Երկրորդ էջերում պատրաստումը ընթացքի մեջ է: Ծայրամասերում ապրող շատ մարդիկ, ովքեր չեն տուժել և չունեն հարազատներ տուժած վայրերում, չեն ձգտում մասնակցել օգնության գործողություններին, քանի որ նրանց ոչ տեղեկացրել են, ոչ էլ սովորեցրել կամավորների օգնության անհրաժեշտության ու կարևորության մասին: Չնայած տուժած տարածքների շուրջը հավաքվում է կամավորների փոքր խումբ, չկա պաշտոնական ուղղորդում/աջակցություն կամավորների ընդունելությունը կազմակերպելու համար և, հետևաբար, կամավորների գործողությունները անկազմակերպ և անարդյունավետ են: Միջազգային ուժերի օգնության հայցումը իրականացվում է ՀՀ ԱԲՆ կողմից նախապես կնքված պայմանագրերի/համաձայնագրերի հիման վրա և ՄԱԿ “Վիրտուալ ՕՍՕՔՔ”-ից և ՆԱՏՕ ԵԱԱՀԿ-ից: Չնայած նյութական միջազգային օգնության հայցի ընթացակարգը նշված է ՀՀ կառավարության 919 որոշման մեջ, միջազգային օգնության համար դիմելը ձգձգվում է, քանի որ անհրաժեշտ է ժամանակ անհրաժեշտ պարագաները և քանակները որոշելու համար:</p>	<p>Չնայած ստեղծվել են ընդունման կետեր, և շատ օժանդակող ուժեր ժամանել են ընդունման կետեր, օժանդակող ուժերի և միջոցների բաշխումը դեռևս առաջացնում է խառնաշփոթ ընդունման որոշ կետերում տուժած տարածքների կարիքների և տրամադրվող օգնության միջև անհամապատասխանության պատճառով: Զվարթնոց միջազգային օդանավակայանի վերանորոգման ձգձգման պատճառով միջազգային օգնությունը իջնում է Գյումրիի Շիրակ օդանավակայան: Քանի որ Շիրակ օդանավակայանում ընդունման նախապատրաստությունը լավ պլանավորված չէ, առաջանում է խառնաշփոթ և ընդունման ձգձգում: Օժանդակող ուժերը սկսում են իրենց գործողությունները առանց ընդունող խմբերի կողմից պատշաճ նախապատրաստման, առանց գործողությունների համար անհրաժեշտ քարտեզների և տեղեկատվության, և, հետևաբար, գործողությունները այնքան էլ արդյունավետ չեն:</p>	<p>Ընդունման կետերի և ՃԿԿ անձնակազմին տրամադրվում է օգնություն նվազեցնելու կարիքների և օգնության միջև անհամապատասխանությունը, և, հետևաբար, ընդունման կետերում խառնաշփոթը վերացվում է: ՀԿ-ից, մասնավոր ընկերություններից և անհատներից շատ օգնություն և նյութեր են ստացվում ընդունման կետեր: Քանի որ հաշվի չի առնվել/պլանավորվել այսքան մեծ քանակությամբ օգնության ստացումը, այն առաջացնում է խառնաշփոթ և ուշացում: Չնայած ընդունող անձնակազմն ապահովվում է սննդով, ջրով և անհրաժեշտ պարագաներով նրանք շարունակում են աշխատել առանց հանգստի և, հետևաբար, սպառում ուժերը, իսկ ոմանք էլ տեղափոխվում հիվանդանոց:</p>	<p>Օժանդակող ուժերը և անձինք բավարարված չեն իրենց արդյունքներով, զգում են հոգնածություն, ջղաձգություն, ավարտում են իրենց աշխատանքը և վերադառնում իրենց քաղաքները, քանի որ չկա տեղեկատվության հետագա օգնության կարիքի վերաբերյալ, օրինակ՝ տարահանվածների խնամքը, սեփական տներում շինարարական աղբի մաքրումը, երեխաների կրթությունը և այլն:</p>

<p style="text-align: center;">Համեմատաբար մեղմ դեպք</p>	<p>Օգնության ստացումը բաղկացած է երկու մասից</p> <p>1) ներքին օգնության ստացումը ՀՀ մարզերից և</p> <p>2) օգնության ստացումը արտերկրից: Դրանք իրենց հերթին բաղկացած են 2 մասից՝ փրկարարական ուժերի և նյութական միջոցների ընդունումից: Ընդունման ընթացակարգերը կանոնակարգվում է ՀՀ կառավարության 919 որոշմամբ, և ընդունման մանրամասն մեթոդները սահմանված են առնչվող կազմակերպությունների աղետների արձագանքման պլաններում: Այդ իսկ պատճառով առնչվող կազմակերպությունները ձեռնարկում են նախնական արձագանքում, օրինակ՝ անձնակազմի և նյութերի նախապատրաստումը օգնության ստացման համար: Օգնություն տրամադրող կազմակերպությունները ձեռնարկում են նախնական արձագանքում, օրինակ՝ անձնակազմի և նյութերի նախապատրաստումը օգնություն տրամադրելու համար, քանի որ ձեռք է բերվել նախնական համաձայնություն օգնության ստացման համար պատասխանատու կազմակերպությունների հետ, և համաձայնագրում նշված են տրամադրվելիք պարագաները և դրանց քանակները:</p>	<p>Արտակարգ դրություն հայտարարելուց հետո պատասխանատու և առնչվող կազմակերպությունները սկսում են ստեղծել ընդունման կետեր միջազգային, ՀՀ մարզերից և կամավորներից օգնություն ստանալու համար: Հնարավոր ընդունման կետերի վայրերը, անձնակազմը և նյութերը նախապես որոշված են աղետների կառավարման պլանում, այդ իսկ պատճառով կետերի ընտրությունն ու տեղակայումը ավարտվել է կարճ ժամանակահատվածում: Հայտարարելուց հետո սկսվում է նաև ՀՀ մարզային օգնության գործերի առաջին էշելոնի պատրաստումը: Պատրաստումը ավարտվել է՝ համաձայն մարզերի բնակչության պաշտպանության առկա պլանների. առաջին էշելոնը ժամանում է աղետների կառավարման պլանի համաձայն ստեղծված ընդունման կետեր և սկսում փրկարարական գործողությունները: ՀՀ Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերի կողմից իրականացվում է վրանային ավանների ծավալումը Երևան քաղաքի՝ նախապես որոշված հարակից տարածքներում: Երկրորդ էշելոնի պատրաստումը ընթացքի մեջ է: Ծայրամասերում ապրող շատ մարդիկ, ովքեր չեն տուժել և չունեն հարազատներ տուժած վայրերում, մասնակցում են օգնության գործողություններին, քանի որ նրանց տեղեկացրել և սովորեցրել են կամավորների օգնության անհրաժեշտության ու կարևորության մասին: Կամավորները հավաքվում են տուժած տարածքների շուրջը ընդունման կետերում, և կամավորների կազմակերպումը պաշտոնական ուղղորդմամբ և աջակցությամբ ընթացքի մեջ է: Միջազգային ուժերի օգնության հայցումը իրականացվում է ՀՀ ԱԲՆ կողմից նախապես կնքված պայմանագրերի/համաձայնագրերի հիման վրա և ՄԱԿ-ի “Վիրտուալ ՕՍՕՔՔ”-ից և ՆԱՏՕ ԵԱԱՀԿ-ից: Միջազգային նյութական օգնության հայցի ընթացակարգը նշված է ՀՀ կառավարության 919 որոշման մեջ, և միջազգային օգնության համար դիմումը ուղարկվում է՝ ելնելով վնասի գնահատման համակարգի, ինչպես նաև վնասի վերաբերյալ հավաքված տեղեկատվության հիման վրա հաշվարկված վնասից:</p>	<p>ՀՀ սահմանին, սահմանահատման կետերում և օդանավակայանում միջազգային ուժերին օգնություն տրամադրող խմբերը վերջիններիս տալիս են անհրաժեշտ տեղեկատվություն քարտեզների, ճանապարհների պայմանների, վնասի իրավիճակի, վառելիքաքսուկային նյութերի ձեռքբերման վայրերի, սննդի և ջրի, ՕՍՕՔՔ-ի դաշտային գրասենյակի տեղի վերաբերյալ: Տրամադրվում են նաև թարգմանիչներ և տեղեկանք առանձնահատկությունների վերաբերյալ: Օգնության եկած ուժերի և նյութերի բաշխումը իրականացվում է սահուն ձևով՝ ելնելով տուժած տարածքների կարիքների վերաբերյալ տեղեկատվությունից, իսկ ՃԿԿ-ից ստացվող հրահանգները լավ կանոնակարգված են: Երկրորդ և երրորդ էշելոնների մարզային ուժերը ժամանում են ընդունման կետեր և սկսում օգնության գործողությունները:</p>	<p>Չնայած շատ օգնություն և նյութեր են ստացվում ընդունման կետեր, գործողությունները ընդունման կետերում ընթանում են սահուն ձևով պաշտոնական անձնակազմի կողմից հերթափոխով և առնչվող կազմակերպությունների կողմից ուղարկված լրացուցիչ անձնակազմի օգնությամբ: Ընդունման գործողությունները սահուն կատարելու համար ընդգրկվում են ՀԿ անձնակազմերը և մասնավոր սեկտորը՝ համաձայն նախապես ձեռք բերված համաձայնության:</p>	<p>Ժամանող օգնության նվազմանը համընթաց նվազում է նաև անձնակազմի քանակը ընդունման կետում, քանի որ գործողությունները կարող են բաշխվել տեղական ուժերի միջև: Ընդունման ուղղությամբ գործողությունները վերանայվում և գնահատվում են, և պատասխանատու կազմակերպությունների կողմից պատրաստվում է հաշվետվություն, որը ներառում է առաջարկություններ հետագա բարելավման համար: Ելնելով այդ առաջարկություններից՝ վերանայվում են ընդունման կետերի ստեղծման և գործարկման ընթացակարգերը և նախապես ձեռք է բերվում համագործակցության համաձայնության ՀԿ-ների ու մասնավոր սեկտորի հետ հետագա գործողությունների համար:</p>
<p style="text-align: center;">Միջոցառումներ</p>	<p><u>Պատասխանատու և առնչվող կազմակերպություններում պետք է պատրաստվեն աղետների արձագանքման մանրամասն պլաններ օգնության ստացման համար</u>՝ ելնելով վնասի գնահատման արդյունքներից, իսկ դրսից ակնկալվող օգնության պարագաները և քանակությունը պետք է սահմանված լինեն պլաններում: <u>Պետք է ձեռք բերվի համաձայնություն</u> այլ պետությունների, դոնորների, հարակից տարածքների առնչվող կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր ընկերությունների հետ <u>Արդեպքում օգնության վերաբերյալ:</u></p>	<p><u>Հնարավոր ընդունման կետերի ստեղծման և շահագործման վերաբերյալ մանրամասները, օրինակ՝ վայրերը, անձնակազմը և նյութերը, պետք է նախապես որոշված լինեն</u> աղետների կառավարման պլանում: <u>Պետք է նպաստել սովորական պայմաններում կամավորների գործողությունների ընդլայնման միջոցառումներին, և պետք է պատրաստվի կամավորների ներգրավման պլան</u> որպես աղետների կառավարման պլանի մի մաս: <u>Միջազգային օգնության պարագաները և քանակները որոշելու համար անհրաժեշտ տվյալները և ընթացակարգերը պետք է պատրաստվեն նախապես:</u> Տվյալները կպարունակեն ազգային ռեզերվի և ՄԱԿ-ի գործողությունների պլանի շրջանակներում միջազգային կազմակերպությունների պատրաստած նյութերի ցուցակները: Միջազգային հանրությունից հայցվող օգնության պարագաները և քանակը հաշվարկվում է “Հայցվող միջազգային օգնության նյութեր = պահեստավորված նյութեր – պահանջվող նյութեր”: Պահանջվող նյութերը կհաշվարկվեն վնասի գնահատման համակարգի միջոցով:</p>	<p><u>Տեղեկատվության հոսքը և այն կանոնակարգելու ընթացակարգը պետք է նախապես սահմանվեն</u> աղետների կառավարման պլանում՝ կարիքների և օգնության միջև անհամապատասխանությունից խուսափելու համար: <u>Օգնության եկած ուժերին տրամադրվելիք տեղեկատվության կետերը պետք է նախապես պարզաբանվեն</u> աղետների կառավարման պլանում:</p>	<p>Հաշվի առնելով հսկայական քանակությամբ օգնության և նյութերի ժամանումը ընդունման կետեր՝ <u>սահուն ընդունման գործողություններին ուղղված միջոցառումները, ինչպես օրինակ՝ հերթափոխը լրացուցիչ անձնակազմով և համագործակցությունը ՀԿ-երի ու մասնավոր սեկտորի հետ, պետք է նկարագրվեն</u> աղետների կառավարման պլանում:</p>	<p>Ընդունման հետ կապված գործողությունները պետք է վերանայվեն և գնահատվեն, և պետք է պատրաստվի հաշվետվություն, որը ներառում է առաջարկություններ հետագա բարելավման համար:</p>

Հետևանքների սցենար (11) Մնունդ

	0-ից` 1 ժամ անց	1-ից` 24 ժամ անց	1-ից` 3 օր անց	3-ից` 7 օր անց	7 և ավելի օր
Վատագույն դեպք	<p>Ընտանիքների մեծ մասը տանը պահում են երկարաժամկետ օգտագործման սննդի փոքր պաշար: Շատ շենքերի փլուզման հետևանքով սնունդը խանութներում և շենքերում ոչնչացվել է:</p> <p>Մնունդ արտադրող կազմակերպությունների մեծ մասը դադարեցրել է արտադրությունը` սարքավորումների վնասման, ինչպես նաև հրդեհների, պայթյունների, թունավոր նյութերի արտահոսքի և այլնի, ինչպես նաև ջրի, էլեկտրաէներգիայի և գազի մատակարարման դադարեցման պատճառով:</p> <p>Պետեզերվների գործակալությունը պահում է սննդի փոքր քանակություն արտակարգ իրավիճակների համար` համեմատած 200 հազար տարահանվածների առավելագույն քանակի հետ:</p>	<p>Որոշ ընտանիքներ դժվարություն ունեն սննդի հայթայթման հարցում: Մասնավորապես, կաթի պակասը նորածինների համար լուրջ խնդիր է:</p> <p>Մննդի պաշտոնական պահուստը սահմանափակ է: Մննդի որոշ քանակություն տրամադրվում է այլ մարզերի կողմից: Մննդի պատշաճ բաշխում հնարավոր չէ իրականացնել, քանի որ աղետի կառավարման պլանում նախապես սահմանված չէ բաշխման կարգը: Ուստի, սննդի հայթայթման դժվարություններն առկա են բազմաթիվ վայրերում:</p> <p>Թեև Երևան քաղաքի քաղաքապետը որոշել է ներկայացնել սննդի տրամադրման կտրոնային համակարգ և սահմանում է սննդի բաշխման կետեր, այնուամենայնիվ, սննդի հետ կապված քաշքշուկն անխուսափելի է, քանի որ շատ բնակիչներ տեղյակ չեն քաղաքապետի որոշման մասին: Տաք կերակրի բավարար չափով ապահովում հնարավոր է միայն փրկարար ուժերի համար, ինչն առաջացնում է դժգոհություն բնակիչների շրջանում:</p> <p>Մննդի արդյունաբերության սարքավորումների վերականգնման աշխատանքները հետաձգվում են, քանի որ վերականգնման նախապատրաստական աշխատանքներ չեն իրականացվում:</p>	<p>Թեև սնունդ է տրամադրվում այլ մարզերից և օտար երկրներից` որպես հումանիտար օգնություն, այնուամենայնիվ, տեղափոխման ընթացակարգ սահմանված չէ: Հետևաբար, տեղափոխումը հարթ չի ընթանում, սնունդը մնում է և փտում:</p> <p>Քանի որ սննդի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպիսին է սննդատեսակների և բաշխման կետերի տեղադրության վերաբերյալ տեղեկատվությունը, չի հայտարարվել բնակիչներին, նրանք վազում են բաշխման կետերի կողքով:</p> <p>Մննդի պակասն առաջացնում է շուկայում սննդի գների կտրուկ բարձրացում, սննդի պարտադրված վաճառքի և գողության դեպքեր:</p> <p>Անբավարար սննդի պատճառով շատ մարդիկ մրսում/հիվանդանում են: Մննդի արտադրության սարքավորումների վերականգնումն առաջ չի ընթանում` աշխատուժի և նյութերի պակասության պատճառով:</p>		<p>Մարզերի և օտար երկրների կողմից տրամադրված սնունդը պատշաճ կերպով չի բաշխվել և մնացել է պահեստներում, քանի որ տեղափոխման և բաշխման կառավարման համար անհրաժեշտ աշխատակիցների քանակը բավարար չէ:</p>
Բարելավված դեպք	<p>Ընտանիքների մեծ մասը տանը պահում են երկարաժամկետ օգտագործման սննդի պաշար` երեք օր գոյատևելու համար` ինչպես նախատեսված է աղետի կառավարման պլանում:</p> <p>Մնունդ արտադրող կազմակերպությունների մեծ մասը դադարեցրել է արտադրությունը` սարքավորումների վնասման, ինչպես նաև հրդեհների, պայթյունների, թունավոր նյութերի արտահոսքի և այլնի, ինչպես նաև ջրի, էլեկտրաէներգիայի և գազի մատակարարման դադարեցման պատճառով:</p> <p>Կազմակերպությունները սկսել են նախնական ճշտումներ` աշխատուժի և նյութերի առկայության` համաձայն Բիզնեսի շարունակականության պլանի (Business Continuation Plan).</p> <p>Պետեզերվների գործակալությունը պահում է սննդի որոշ քանակ` ընտանիքներին տրամադրելու համար:</p>	<p>Թեև շատ ընտանիքներ ունեն սննդի պաշար, այնուամենայնիվ, կան ընտանիքներ, որոնք չունեն պաշարներ` շենքերի փլուզման պատճառով:</p> <p>Ելնելով վնասի աստիճանից` պահուստային սնունդը տրամադրվում է տուժած ընտանիքներին տարահանման կետերում` նախատեսված աղետի կառավարման պլանով: Մննդի բաշխման կարգը` սննդատեսակներն ու բաշխման կետերը, սահմանված է աղետի կառավարման պլանով: Թեև տարահանման վայրերում սննդի բաշխման կետերում առաջանում են երկար հերթեր, սննդի տրամադրման կառավարումն իրականացվում է Երևանի քաղաքապետարանի Առևտրի և Օտարությունների վարչության կողմից, ինչպես նախատեսված է քաղաքապետի որոշմամբ, և այդ է պատճառը, որ լուրջ դժվարություններ և քաշքշուկներ չկան:</p> <p>Բավարար սննդի մատակարարումը փրկարար ուժերին ապահովվում է ՓՕ կողմից` իր պահուստային նյութերի հաշվին:</p> <p>Արտակարգ իրավիճակների համար լրացուցիչ սնունդը հասնում է այլ մարզերից:</p> <p>Մննդի արդյունաբերության սարքավորումների վերականգնման աշխատանքներն ընթացքի մեջ են` համաձայն յուրաքանչյուր արտադրական կազմակերպությունում նախապես մշակված Բիզնեսի շարունակականության պլանի:</p>	<p>ՓՕ-ը, Երևանի քաղաքապետարանի Առևտրի և Օտարությունների վարչությունը և Էկոնոմիկայի նախարարությունը տեղափոխում են մարզերից և օտար երկրներից ստացված սնունդը: Տեղափոխման գործողություններին աջակցում են Արտակարգ իրավիճակների, Գյուղատնտեսության, Աշխատանքի և Սոցիալական հարցեր, Առողջապահության, Տրանսպորտի և կապի նախարարությունները, ՀՀ Ոստիկանությունը, կամավորներ և այլոք: Քանի որ տեղափոխման ընդհանուր ընթացակարգը նախապես սահմանվել է աղետի կառավարման պլանով, տեղափոխումը շատ հարթ է անցել:</p> <p>Մննդի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպիսին է սննդատեսակների և բաշխման կետերի տեղադրության վերաբերյալ տեղեկատվությունը հայտարարվել է լայն շրջանակներում, ուստի շատ քիչ են բարդություններն ու բողոքները սննդի մատակարարման հետ կապված:</p> <p>Երևանի քաղաքապետը որոշում է կայացրել սննդի գնի, պարտադրված վաճառքի և գնի կտրուկ աճի վերահսկման վերաբերյալ: Որոշումը հրապարակվում է լայն զանգվածների համար, և սննդի գները պատշաճ կերպով վերահսկվում են:</p> <p>Մննդի արդյունաբերության սարքավորումների վերականգնման</p>	<p>Օտար երկրներից ստացված սննդի բաշխումը սկսվել է: Ելնելով տարահանվողների համար սննդի անհրաժեշտությունից` տաք կերակուր է պատրաստվել տարահանման ժամանակավոր վայրերում` կամավորների հետ համագործակցության արդյունքում: Մնուցման բալանսավորման նպատակով բաժանվել են վիտամինների հաբեր:</p>	<p>Թեև սննդի բաշխման աշխատողների քանակը սահմանափակ է, տարահանվածները մասնակցում են բաշխման աշխատանքներին, ինչպիսիք են կերակուրների պատրաստումը կամավորների հետ` պաշտոնական կազմի վերահսկողության ներքո:</p>

			<p>աշխատանքներն ընթացքի մեջ են՝ համաձայն յուրաքանչյուր արտադրական կազմակերպությունում նախապես մշակված Բիզնեսի շարունակականության պլանի: Այնպիսի սարքավորումներ, ինչպիսիք են աղացող սարքերը արդեն վերանորոգվել են, և սննդի արտադրությունը մասամբ վերսկսվել է:</p>		
<p>Միջոցառումներ</p>	<p>ՓԾ-ը և Էկոնոմիկայի նախարարությունը պետք է խթանեն յուրաքանչյուր ընտանիքի ինքնօգնությանը՝ մասնավորապես երկարաժամկետ օգտագործման սննդի պահուստավորման վերաբերյալ, որպես աղետին պատրաստվելու միջոց:</p> <p>Յուրաքանչյուր սննդի արդյունաբերության կազմակերպություն պետք է նախապես մշակի ԱՇՊ արտադրական գործունեության արագ վերականգնման նպատակով:</p> <p>Պետոճերվների գործակալությունը պետք է պահուստավորի որոշակի քանակությամբ սնունդ:</p>	<p>ՓԾ-ը և Էկոնոմիկայի նախարարությունը պետք է սահմանեն սննդի բաշխման կարգ արտակարգ իրավիճակների դեպքում՝ սննդատեսակների և բաշխման կետերի տեղադրության վերաբերյալ (195 կետ)՝ նախապես՝ աղետի կառավարման պլանում:</p> <p>ՓԾ-ը, Երևանի քաղաքապետարանի Առևտրի և Ծառայությունների վարչությունը և Էկոնոմիկայի նախարարությունը պետք է նախապես պայմանագիր կնքեն մարզերի և սննդի արտադրության/մատակարարման կազմակերպությունների հետ, և առկա սննդի պահուստների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է տրամադրվի համապատասխան կազմակերպություններին:</p>	<p>Մարզերի և օտար երկրների կողմից տրամադրված սննդի տեղափոխման հիմնական կարգը պետք է սահմանվի նախապես՝ աղետի կառավարման պլանում: Պլանը պետք է ներառի տեղափոխման հարցում այլ նախարարությունների հետ համագործակցելու եղանակը, կամավորների վերաբերյալ տեղեկատվություն և այլն:</p> <p>Էկոնոմիկայի նախարարության կողմից սննդի բաշխման կառավարման մասին տեղեկատվությունը պետք է հայտարարվի հասարակության լայն շերտերին:</p> <p>Գների վերահսկման ուղեցույցը արտակարգ իրավիճակներում պետք է նախօրոք պատրաստվի և ծանուցվի հասարակությանը:</p>	<p>Տարահանվածներին անհրաժեշտ հետադարձ կապի համակարգը պետք է նախապես ծանուցվի և տարահանման վայրերը պետք է կառավարվեն՝ էլնելով պահանջարկից:</p>	<p>Տարահանվածների ինքնակամ գործողությունները, ինչպիսիք են սննդի բաշխումը, պատրաստումը, պետք է խթանվի հարթ ընթացքի համար՝ սահմանափակ քանակությամբ աշխատակիցների կողմից:</p>

Հետևանքների սցենար (12) Խմելու ջուր

Վատթարագույն դեպք	0 - 1 ժամ հետո	1 - 24 ժամ հետո	1 - 3 օր հետո	3 - 7 օր հետո	7 օր հետո և ավելի
	<p>Ինչ վերաբերվում է ջրամատակարարման ցանցին, մոտ 1300կմ ջրամատակարարման խողովակներում 274 կետ վնասվել է: Վնասվել և շարքից դուրս են եկել նաև 3 ջրամբարներ, ջրընդունիչներ, մաքրման կայաններ և 2 խոշոր պոմպակայաններ: Վնասվել են նաև բազմաթիվ ջրի բաքեր և տեղի է ունենում արտահոսք: Արդյունքում՝ Երևան քաղաքում խմելու ջուր չի մատակարարվում 380,000 մարդու:</p> <p>Քանի որ վնասվել են նաև կոյուղագծերը, առաջացել է խմելու ջրի և կեղտաջրերի խառնվելու վտանգ, անգամ այն տարածքներում, որտեղ խողովակով ջրամատակարարումը նվազեցված է արտահոսքի պատճառով:</p> <p>Երևանի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի (ԱԻՀ) կոմունալ տեխնիկական ծառայության անդամների մեծ մասը չի հավաքվել արտակարգ իրավիճակները կառավարելու համար, քանի որ աղետի կառավարման պլանում որոշված չէ անդամների նախնական արձագանքման կարգը:</p> <p>“Երևան Ջուր”-ում սկսվել է արտակարգ իրավիճակներում արձագանքման խմբի և վնասի հետախուզման խմբերի անդամների հավաքը, սակայն ընդամենը մի քանի անդամ են հավաքվել, քանի որ արտակարգ իրավիճակներում հավաքման որոշակի կարգ չկա:</p>	<p>Ավտոցիստերններով ջրամատակարարումը դեպի տարահանման տարածք և մատակարարման կետեր պատշաճ կերպով չի կառավարվում, քանի որ աղետի կառավարման պլանում սահմանված չէ արտակարգ իրավիճակներում ջրամատակարարման մանրամասն ընթացակարգ: Մարդկանց խորհուրդ չի տրվում խմել ծորակի ջուր, քանի որ վարակվածության վտանգ կա: Հետևաբար, մարդիկ չեն կարողանում խմելու ջուր հայթայթել և որոշ մարդիկ ջարդում են խանութները և սուպերմարկետները՝ խմելու ջրի համար:</p> <p>Չնայած, “Երևան Ջուր”-ի խմբի կողմից իրականացվում է վնասի հետախուզում, սակայն վնասի վերաբերյալ տեղեկությունը չի փոխանցվում Երևան քաղաքի ԱԻՀ-ի կոմունալ տեխնիկական ծառայությանը, քանի որ “Երևան Ջուր”-ի և Հանձնաժողովի միջև հաղորդակցությունը նախապես սահմանված չէ աղետի կառավարման պլանում, և հետևաբար արդյունավետ վերականգնողական աշխատանքների կարգավորումը և ուղղորդումը հարթ չեն ընթանում:</p>	<p>Չնայած ջրային տնտեսության վերանորոգումը սկսվել է, ընթացքը դանդաղ է, քանի որ վերանորոգման աշխատանքների համար ուժերի, նյութերի, մասերի և սարքավորման պակաս կա, իսկ ճանապարհները շրջափակված են շինարարական աղբով:</p> <p>Չնայած պահանջվում է վերանորոգող խմբերի գործուղում մարզերից, սակայն խմբերի կազմակերպումը և տեղակայումը ուշանում է, քանի որ գործուղման վերաբերյալ նախնական համաձայնություն չի եղել: Հետևաբար, Երևանի շատ տարածքներում դեռ ջուր չի մատակարարվում:</p> <p>Որոշ ընտանիքներ, որոնք ջրի ապահովման հետ կապված բարդություններ ունեն, պահանջներ են ներկայացնում թաղապետարաններ, սակայն խմելու ջրի բաշխումը լավ չի ընթանում, որովհետև ավտոցիստերնների քանակը սահմանափակ է:</p>	<p>Վերանորոգման աշխատանքներն իրականացվում են 24 ժամ՝ հերթափոխով աշխատող 10 խմբերի միջոցով: 7-րդ օրվա դրությամբ 274 վնասված կետերից 130-ը վերանորոգվել են (առաջընթացը 50%): Ծանր վնասի պատճառով քաղաքի կենտրոնական մասում ջրամատակարարման գծերի վերանորոգումը դանդաղ է ընթանում:</p> <p>Ավտոցիստերնների պակասի և ճանապարհի շրջափակման պատճառով ավտոցիստերներով ջրի բաշխումը դժվարությունների է հանդիպում: Մարզերից և արտասահմանից շտաբով ջրերով խմելու ջրի բաշխումը հազիվ է ապահովվում:</p> <p>Տարահանվածները բողոքում են խմելու ջրի պակասի վերաբերյալ, իսկ որոշ մարդիկ ունենում են ջերմության խանգարում և ջրազրկում:</p>	<p>Ներմուծվող պահեստամասերի պակասի պատճառով որոշ տարածքներում վերականգնման աշխատանքներն ավարտված չեն, և այդ աշխատանքներն ավարտվում են մեկ ամիս հետո:</p> <p>Ժամանակավոր մատակարարման գծերի տեղակայում հիմնականում քաղաքի կենտրոնական մասում, բայց դեռ շարունակվում է ջրամատակարարման ընդհատումը: Դեպի տարահանման տարածքներ ջրամատակարարումը դեռ իրականացվում է ավտոցիստերներով, և հետևաբար, հասանելի ջրի ծավալը սահմանափակ է:</p>

<p style="text-align: center;">Համեմատաբար մեղմ դեպք</p>	<p>Ասբեստաբեռնոնից, կերամիկայից, չուգունից պատրաստված հին խողովակները փոխարինվել են պոլիէթիլենային և պողպատե խողովակներով, որը նպաստում է ջրամատակարարման ցանցին հասցվող վնասի կրճատմանը: Արդյունքում, ցանցում վնասված կետերի թիվը կիսով չափ նվազեցվել է: Ջրային տնտեսության ամրացումը նույնպես նպաստում է վնասի նվազեցմանը, սակայն հոսանքի անջատման պատճառով չեն աշխատում 2 խոշոր պոմպակայաններ: Երկրաշարժի նկատմամբ ջրի բաքերի ամրացում նույնպես բերում է ջրազրկված տարածքների կրճատմանը:</p> <p>Քանզի կոյուղագծերը նույնպես վնասված են, ապա կոյուղու և խմելու ջրի խառնվելու վտանգ կա, անգամ այն տարածքներում, որտեղ խողովակով ջրամատակարարումը նվազեցված է արտահոսքի պատճառով:</p> <p>Քանզի բնակիչները լավ տեղեկացված են և հասկանում են, որ 3 օր գոյատևելու համար անհրաժեշտ է օրական 9լ ջուր ապահովել մեկ անձի համար, ապա շատ ընտանիքներ պահում են խմելու ջուրը իրենց տանը գտնվող փոքր բաքերում կամ շշերում:</p> <p>ԱԻՀ-ի կոմունալ տեխնիկական ծառայության անդամներն ինքնուրույն հավաքվում են՝ արտակարգ իրավիճակները կառավարելու համար, քանի որ աղետի կառավարման պլանում որոշված է անդամների նախնական արձագանքման կարգը:</p> <p>“Երևան Ջուր”-ում արտակարգ իրավիճակներում արձագանքման խմբի և վնասի հետախուզման խմբերի անդամներն ուղևորվում են դեպի կենտրոնական գրասենյակ և այլ հավաքման կետեր, քանի որ “Երևան Ջուր”-ի ԱՇՊ-ի մեջ ցույց է տրված արտակարգ իրավիճակներում հավաքման կարգը:</p>	<p>Համաձայն աղետի կառավարման պլանի՝ ԱԻՀ-ի կոմունալ տեխնիկական ծառայությունը համակարգում է ավտոցիստերնների հարցը՝ դեպի տարահանման տարածքներ ջուր մատակարարելու համար: Այն տարածքներում, որտեղ անհնար է ջրի առաքումը, մարդիկ օգտվում են իրենց տանը պահած ջրերից: Մարդիկ կիսում են խմելու ջուրը ամենը կորցրած տարահանվածների հետ: Խանութներն ու սուպերմարկետներն ինքնակամ առաքում են շշացված ջրեր ժողովրդին, և խանութներում ու սուպերմարկետներում անկարգություններ և թալան տեղի չի ունենում:</p> <p>“Երևան Ջուր”-ի խմբերի կողմից իրականացվում է վնասի հետախուզում, իսկ վնասի վերաբերյալ տեղեկությունը փոխանցվում է Երևան քաղաքի ԱԻՀ-ի կոմունալ տեխնիկական ծառայությանը՝ ըստ աղետի կառավարման պլանում նախատեսված հրատապ հետախուզման ընթացակարգի: Հետախուզման արդյունքների հիման վրա ԱԻՀ-ի կոմունալ տեխնիկական ծառայությունը համակարգում և ղեկավարում է արդյունավետ վերանորոգման աշխատանքները:</p>	<p>Ջրամատակարարումը դեռ ընդհատված է շատ տարածքներում, բայց խմելու ջրի վերաբերյալ մեծ խնդիր չի առաջացել, որովհետև շատ ընտանիքներ պահել են ջրեր, իսկ խանութներն առաքել են շշացված ջրեր:</p> <p>Այն բնակելի և տարահանման տարածքներում, որտեղ ջրամատակարարումը երկար ժամանակով է ընդհատված, ընթանում է արտակարգ ջրամատակարարում ավտոցիստերններով:</p> <p>Վնասի հետախուզման արդյունքների հիման վրա սկսվել են օբյեկտների վերականգնման աշխատանքները՝ օգտագործելով պահեստացված նյութերը և սարքավորումները, որոնք համակարգվում են ԱԻՀ-ի կոմունալ տեխնիկական ծառայության կողմից: Սկսվել է նաև ժամանակավոր ջրագծերի տեղակայումը տարահանման տարածքներում:</p>	<p>Վերանորոգման աշխատանքներն իրականացվում են 24 ժամ՝ հերթափոխով աշխատող 15 խմբերի միջոցով: 7-րդ օրվա դրությամբ բոլոր վնասված կետերը վերանորոգվել են (առաջընթացը 100%): Տարահանման տարածքներում ժամանակավոր ջրագծերի տեղակայումը ևս ավարտվել է: Մահմանափակ տարածքներում, որտեղ խողովակով ջրամատակարարումն անհասանելի է, խմելու ջուրը մատակարարվում է ավտոցիստերններով և դրսից բերվող շշացված ջրերով համագործակցելով կամավորների հետ:</p>	<p>Խողովակով ջրամատակարարում հասանելի է Երևան քաղաքի ամբողջ տարածքում: Ջրամատակարարման օբյեկտների ամրացման հետագա աշխատանքները պլանավորվել են և սկսվել ըստ վերականգնման/վերակառուցման ուղեցույցի, որը ներառված է նախօրոք պատրաստված աղետների կառավարման պլանում:</p>
<p style="text-align: center;">Միջոցառումներ</p>	<p>Տարածքային կառավարման նախարարությունը, Երևանի քաղաքապետարանը և Երևան Ջուրը պետք է սկսեն ջրամատակարարման օբյեկտների ամրացում երկրաշարժի դեմ: Հատկապես, պետք է արագացնել հին կերամիկական խողովակների փոխարինումը: Պետք է տեղակայվեն գեներատորներ էլեկտրամատակարարման համար՝ հոսանքի բացակայության ժամանակ էլեկտրակայանների աշխատունակության պահպանման համար:</p> <p>Տարածքային կառավարման նախարարությունը, Երևանի քաղաքապետարանը և Երևան Ջուրը երկրաշարժի դեմ պետք է ամրացնեն այնպիսի ջրային օբյեկտներ, ինչպիսիք են ջրամբարները, պոմպակայանները և ջրի բաքերը: Բնակիչների իրազեկվածության բարձրացման համար ՓԾ-ն պետք է նպաստի այնպիսի միջոցառումներին և ուսուցումներին, ինչպիսին է խմելու ջրի պահպանումը իրենց տներում:</p> <p>Արտակարգ իրավիճակներում նախնական արձագանքման կարգը, ինչպիսին է շահագրգիռ կազմակերպությունների անձնակազմի հավաքը, պետք է ամրագրվի աղետի կառավարման պլանում:</p>	<p>Ավտոցիստերններով ջրամատակարարման ընթացակարգը պետք է ամրագրվի աղետի կառավարման պլանում:</p> <p>ՓԾ և Երևանի քաղաքապետարանը պետք է խթանեն փոխադարձ աջակցությանը, ինչպիսին է բնակիչների միջև ջրի կիսելը և խանութների շշացված ջրերի կամավոր առաքումը:</p> <p>Ջրամատակարարման համակարգի վնասվածության իրավիճակի վերաբերյալ առնչվող կազմակերպություններին գեկուցման ձևը և կապի հոսքը պետք է ամրագրվի աղետի կառավարման պլանում:</p>	<p>ՓԾ և Երևանի քաղաքապետարանը պետք է արտակարգ իրավիճակների համար պահեստավորեն ջրամատակարարման օբյեկտներ, ինչպիսին է ավտոցիստերնը:</p> <p>ՓԾ և Երևանի քաղաքապետարանը պետք է պատրաստեն արտակարգ իրավիճակներում մատակարարման պլան, որպես աղետի կառավարման պլանի մի մաս: Պլանը պետք է ներառի ջրամատակարարման կետերի դիրքը (195 կետ), ջրի բաշխման չափանիշը (այսինքն 10լ/անձ/օր), կամավորների հետ համագործակցության ուղին և այլն:</p> <p>Երևան Ջուրը և Երևանի քաղաքապետարանը ջրամատակարարման օբյեկտների վերանորոգման համար պետք է պահեստավորեն նյութեր և սարքավորումներ, ինչպես նաև՝ իրականացնեն անձնակազմի ուսուցում:</p>	<p>Ջրամատակարարման օբյեկտների հետագա ամրացման համար ՓԾ և Երևանի քաղաքապետարանը պետք է պատրաստեն վերականգնման/վերակառուցման ուղեցույց, որը նախապես ցույց է տալիս պլանի ձևավորման ընթացակարգը աղետի կառավարման պլանում:</p>	<p>Ջրամատակարարման օբյեկտների հետագա ամրացման համար ՓԾ և Երևանի քաղաքապետարանը պետք է պատրաստեն վերականգնման/վերակառուցման ուղեցույց, որը նախապես ցույց է տալիս պլանի ձևավորման ընթացակարգը աղետի կառավարման պլանում:</p>

Հետևանքների սցենար (13) Էլեկտրամատակարարում (Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն)

	0 - 1 ժամ	1 - 24 ժամ	1 - 3 օր	3 - 7 օր	7 և ավելի օրեր
<p>Վատթարագույն դեպք</p>	<p>1, 950կմ օդային հոսանքագծերից վնասված է 22,4կմ-ը, իսկ 3,517կմ ստորգետնյա հոսանքագծերից՝ 305կմ-ը: Շատ էլեկտրակայանների և ենթակայանների աշխատանքը դադարեցված է ուժեղ ցնցման պատճառով: Անմիջապես երկրաշարժից հետո Երևան քաղաքի ամբողջ տարածքը հոսանքազրկվում է:</p> <p>Չնայած Երևան քաղաքի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի (ԱԻՀ) և էներգետիկայի և լուսաքողարկման ծառայության շատ անդամներ հավաքվում են արտակարգ իրավիճակների կառավարման համար, նախնական արձագանքումը, օրինակ՝ վնասի վերաբերյալ տեղեկատվության հավաքումը և անձնակազմի անվտանգության վերաբերյալ հաստատումները, ուշանում են, քանի որ ծառայության և ԱԻՀ խնդիրները ուժեղ երկրաշարժերի ժամանակ հստակ սահմանված չեն:</p> <p>“Երևան Լույս” ընկերությունում և Հայաստանի էլեկտրական ցանցերում աղետների արձագանքման խմբերը ստեղծվում են վնասի հետախուզության և նախնական այլ արձագանքման համար: Բայց հնարավոր չի հաստատել որոշ մարդկանց անվտանգությունը, քանի որ չկա որոշակի կանոն աղետների ժամանակ անձնակազմի անվտանգության հաստատման վերաբերյալ:</p>	<p>Էլեկտրամատակարարման օբյեկտների վնասի հետախուզությունը սկսվել է, բայց լավ չի ընթանում, քանի որ վնասված կետերի թիվը և աստիճանը շատ մեծ է:</p> <p>Վնասի վերաբերյալ տեղեկատվությունը լավ մշակված չէ էլեկտրամատակարարման համակարգի վերականգնման համար, որովհետև վնասի վերլուծության ընթացակարգը և մեթոդաբանությունը, ինչպես նաև խոշոր աղետների դեպքում վերականգնման խմբերի պատրաստումը լավ հաստատված չէ նախապես:</p> <p>Քանի որ Երևան քաղաքի ԱԻՀ և պետական մակարդակում ԱԻՀ միջև խնդիրները/պարտականությունները/հաղորդակցության միջոցները հստակ սահմանված չեն, որոշումների և հրահանգների մեջ բացթողումները առաջացնում են նախնական արձագանքման և վերականգնման գործողությունների ուշացում կամ խառնաշփոթ:</p> <p>Չնայած կարևորագույն օբյեկտների էլեկտրամատակարարումը աղետի ժամանակ ապահովվել է գեներատորների միջոցով, էլեկտրականությունը կմատակարարվի կարճ ժամանակով, որովհետև վառելիքը սահմանափակ է:</p>	<p>Այլ մարզերից ժամանել են օգնող խմբեր օբյեկտների վերականգնման համար: Չնայած խմբերը բաղկացած են փորձառու տեխնիկական անձնակազմից, վերականգնման աշխատանքները լավ չեն ընթանում պահեստամասերի պակասի, ինչպես նաև Երևան քաղաքի ԱԻՀ և էներգետիկայի ու լուսաքողարկման ծառայության կողմից վերականգնման ենթակա առաջնային կետերի վերաբերյալ տեղեկատվության բացակայության պատճառով: Էլեկտրակայանների վերականգնումը ուշանում է, քանի որ պահանջվում է հատուկ մասերի փոխարինում, իսկ նախապես մատակարարման ոչ մի շղթա չի հստակեցվել:</p> <p>Բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի վերականգնումը արվում է 40%-ով:</p> <p>Տներում էլեկտրամատակարարումը չի վերականգնվել, քանի որ բաշխման գծերը դեռևս չեն վերանորոգվել: Չնայած մարդիկ տեսնում են վերականգնման աշխատանքները մի քանի վայրերում, ծագում են շատ բողոքներ, քանի որ իրենց տներում էլեկտրամատակարարումը վերականգնված չէ, և չկա տեղեկատվություն վերականգնման մասին:</p>	<p>Որոշ տարածքներում տներում էլեկտրամատակարարումը վերականգնվում է: Չնայած էլեկտրական ընկերությունների անձնակազմը հաստատում է, որ իրենց ամեն ինչ նորմալ է մինչև վերականգնումը, էլեկտրականության վերականգնումից հետո բռնկվում են հրդեհներ կարճ միացման կամ էլեկտրական սարքերի գերտաքացման պատճառով, քանի որ որոշ տարահանվածներ չեն անջատել էլեկտրական սարքերը տարահանվելուց առաջ: Ծանր վնասված էլեկտրակայանների և հաղորդման գծերի վերականգնումը ձգձգվում է հատուկ մասերի բացակայության պատճառով: Ինչ վերաբերում է վերականգնված բաշխման ցանցին, ապա վերականգնված հոսանքի արտադրության ծավալը փոքր է, և կիրառվում են պլանավորված հովհարային անջատումներ: Մարդիկ բողոքում են հոսանքի անջատումներից:</p>	<p>Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովը, էներգետիկայի և լուսաքողարկման ծառայությունը և առնչվող կազմակերպությունները պետք է կենտրոնացնեն իրենց ուշադրությունը փորձնական կարճաժամկետ էլեկտրամատակարարման վրա նվազագույն կարիքները բավարարելու համար: Չի կարելի հաշվի առնել երկարաժամկետ պլանը և էլեկտրամատակարարման օբյեկտների վերականգնման հեռանկարը:</p>

<p>Բարելավված դեպք</p>	<p>Քանի որ էլեկտրամատակարարման օբյեկտները ամրացվել են սեյսմիկ անվտանգության տեսանկյունից, օբյեկտներին հասցված վնասը նվազել է համեմատած վատագույն դեպքի հետ: Չնայած վնասը նվազել է, հոսանքի անջատումներ տեղի են ունենում Երևան քաղաքի ամբողջ տարածքով ուժեղ ցնցման պատճառով:</p> <p>Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովի և էներգետիկայի ու լուսաքողարկման ծառայության անդամները հավաքվում են ավտոնոմ հիմունքով արտակարգ իրավիճակը կառավարելու համար, քանի որ անդամների նախնական արձագանքման կանոնը սահմանված է աղետների կառավարման պլանում, և նրանք անմիջապես սկսում են հավաքել տեղեկատվություն վնասների, անդամների և էլեկտրական ընկերությունների անձնակազմի անվտանգ լինելու վերաբերյալ:</p> <p>“Երևան Լույս” ընկերությունում և Հայաստանի էլեկտրական ցանցերում սկսվում է Աի արձագանքման խմբերի և վնասի հետախուզությամբ զբաղվող թիմերի անդամների հավաքը. Անդամների մեծ մասը գնում է հավաքակայան ավտոնոմ հիմունքով, քանի որ “Երևան Լույս” ընկերության և Հայաստանի էլեկտրական ցանցերի ԱՇՊ-ներում նշված է ԱԻ ժամանակ հավաքի կանոնը:</p>	<p>Էլեկտրամատակարարման օբյեկտների վնասի հետախուզությունը սկսվել է և ընթանում է սահուն կերպով, քանի որ վնասված կետերի թիվը և աստիճանը նվազում է, իսկ հետախուզության աշխատանքի ընթացակարգը և պատասխանատվությունը լավ է ընկալվել համապատասխան անձնակազմի՝ ներառյալ ղեկավար կազմի և տեղում աշխատող անձնակազմի կողմից:</p> <p>Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովը և էներգետիկայի ու լուսաքողարկման ծառայությունը հավաքում/վերլուծում են վնասի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը՝ համագործակցելով ճգնաժամային կառավարման կենտրոնի և այլ առնչվող ընկերությունների հետ: Հիմնվելով վերլուծված տեղեկատվության վրա՝ որոշվում է վերականգնման գրաֆիկը և առաջնահերթությունը, որը տրամադրվում է համապատասխան ընկերություններին ու հայտարարվում բնակչությանը:</p> <p>Իրականացվում է գեներատորների միջոցով կարևորագույն օբյեկտներին էլեկտրամատակարարում, և անհրաժեշտ նվազագույն էլեկտրամատակարարումը կարող է ապահովվել պահեստավորված վառելիքի միջոցով:</p>	<p>Այլ մարզերից ժամանել են օգնող խմբեր օբյեկտների վերականգնման համար: Քանի որ խմբերը բաղկացած են փորձառու տեխնիկական անձնակազմից, ովքեր ունեն բավարար քանակությամբ պահեստամասեր և ստանում են հստակ ցուցումներ Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովի և էներգետիկայի ու լուսաքողարկման ծառայության կողմից իրենց աշխատավայրերի մասին, վերականգնման աշխատանքները լավ են ընթանում:</p> <p>Բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի վերականգնումը առաջ է ընտանում մոտ 60%-ով:</p> <p>Էլեկտրական ընկերությունների անձնակազմերից իրենց անվտանգության վերաբերյալ հաստատում ստանալուց հետո էլեկտրամատակարարումը վերականգնվել է այն տներում, որտեղ վնասը լուրջ չէ:</p> <p>Ծանր վնասված տարածքներում ժամանակավոր էլեկտրաբաշխման ցանցը և շարժական գեներատորները տեղադրված են տարահանման վայրերում, որպեսզի ապահովվի նվազագույն էլեկտրամատակարարում:</p>	<p>Էլեկտրամատակարարումը տներ և տարահանման վայրեր վերականգնվել է 90%-ով: Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովը և էներգետիկայի ու լուսաքողարկման ծառայությունը ձևակերպում են վերակառուցման պլան հատկապես ծանր վնասված վայրերում, և վերակառուցման աշխատանքները հաջող սկիզբ են ունենում:</p>
-------------------------------	--	---	--	---

Միջոցառումներ	<p>Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովը և էներգետիկայի ու լուսաքողարկման ծառայությունը, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը, Երևան Լույսը և Հայաստանի էլեկտրական ցանցերը պետք է <u>շարունակեն էլեկտրամատակարարման օբյեկտների սեյսմիկ ամրացումը:</u></p> <p><u>Աի դեպքում նախնական արձագանքման կանոնները և խնդիրները</u>, ինչպես օրինակ՝ ավտոնոմ հիմունքով հավաքը և անձնակազմի կողմից իրենց անվտանգության վերաբերյալ հաստատումը, <u>պետք է նշված և հստակեցված լինեն աղետների կառավարման պլանում կամ առնչվող կազմակերպությունների ԱՇՊ-ներում:</u></p>	<p>Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովը և էներգետիկայի ու լուսաքողարկման ծառայությունը և առնչվող կազմակերպությունները <u>նախապես հստակեցնում են խոշոր աղետների դեպքում վնասի հետախուզության կարգը և կազմակերպչական կառուցվածքը</u> աղետների կառավարման պլանում և <u>անցկացնում ուսուցում հետախուզության վերաբերյալ:</u></p> <p>Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովը և էներգետիկայի ու լուսաքողարկման ծառայությունը պետք է նախապես աղետների կառավարման պլանում <u>հստակեցնի վնասի իրավիճակի, վերլուծության և վերականգնման աշխատանքների ուղղության վերաբերյալ տեղեկատվության հոսքը:</u></p> <p>Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովը և էներգետիկայի ու լուսաքողարկման ծառայությունը պետք է <u>խթանի ԱԻ դեպքում կարևորագույն օբյեկտներին էլեկտրամատակարարման պահուստային համակարգի տեղադրմանը վառելիքի պահուստի հետ միասին՝</u> հաշվի առնելով ուժեղ երկրաշարժերի ժամանակ վերականգնման տևողությունը:</p>	<p>Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովը և էներգետիկայի ու լուսաքողարկման ծառայությունը պետք է <u>խթանի նյութերի պահեստավորմանը կամ ապահովի նյութերի մատակարարման շղթա</u> էլեկտրամատակարարման օբյեկտների վերականգնման համար:</p> <p>Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովը և էներգետիկայի ու լուսաքողարկման ծառայությունը պետք է <u>խթանի անվտանգության հաստատման կանոնների ստեղծմանը էլեկտրականության վերականգնման ժամանակ երկրորդային հրդեհներից խուսափելու համար:</u></p>	<p>Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովը և էներգետիկայի ու լուսաքողարկման ծառայությունը պետք է <u>խթանի սարքերի պահեստավորմանը կամ ապահովի սարքերի մատակարարման շղթա</u> ծանր վնասված տարածքներում ժամանակավոր էլեկտրական գեներատորների և մատակարարման համակարգի ներդրման համար:</p> <p>Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովը և էներգետիկայի ու լուսաքողարկման ծառայությունը պետք է <u>խթանի մարդկանց մտադրությունը կամ իրազեկվածությունը տարահանման ժամանակ էլեկտրական սարքերի անջատման անհրաժեշտության վերաբերյալ</u> էլեկտրականության վերականգնման ժամանակ կարճ միացումների և գերտաքացման հետևանքով երկրորդային հրդեհների բռնկումից խուսափելու համար:</p>	<p>Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովը և էներգետիկայի ու լուսաքողարկման ծառայությունը պետք է <u>պատրաստի կառուցվածքը (պատասխանատու կազմակերպությունները և խնդիրները) և կարգը վերակառուցման պլանի սահման ձևակերպման համար:</u></p>
---------------	---	---	--	--	---

Հետևանքների սցենար (14) Գազամատակարարում

	0 - 1 ժամ	1 - 24 ժամ	1 - 3 օր	3 - 7 օր	7 և ավելի օրեր
<p>Վատթարագույն դեպք</p>	<p>67.6կմ ստորգետնյա գազի խողովակաշարերի վրա 2.9 կետ վնասված է, իսկ 1.027կմ վերգետնյա գազի խողովակաշարերից վնասված է 221.1կմ: Գազի բոլոր օբյեկտների աշխատանքը դադարեցված է ուժեղ ցնցման պատճառով: Գազի պայթյուն տեղի չի ունենում, քանի որ վթարային անջատման սարքերը և գազի բացթողնման սարքերը աշխատում են պատշաճ ձևով:</p> <p>Չնայած Երևան քաղաքի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի (ԱԻՀ) և կոմունալ տեխնիկական ծառայության շատ անդամներ հավաքվում են արտակարգ իրավիճակների կառավարման համար, նախնական արձագանքում, օրինակ՝ վնասի վերաբերյալ տեղեկատվության հավաքումը և անձնակազմի անվտանգության վերաբերյալ հաստատումները, ուշանում են, քանի որ ծառայության և ԱԻՀ խնդիրները ուժեղ երկրաշարժերի ժամանակ հստակ սահմանված չեն:</p> <p>ՀայՌուսԳազԱրդ-ում աղետների արձագանքման խմբերը ստեղծվում են վնասի հետախուզության (անվտանգության մասին հաստատման) և նախնական այլ արձագանքման համար: Բայց հնարավոր չի հաստատել որոշ մարդկանց անվտանգությունը, քանի որ չկա որոշակի կանոն աղետների ժամանակ անձնակազմի անվտանգության հաստատման վերաբերյալ:</p>	<p>Գազամատակարարման օբյեկտների վնասի հետախուզությունը (անվտանգության մասին հաստատման) սկսվել է, բայց լավ չի ընթանում, քանի որ վնասված կետերի թիվը և աստիճանը շատ մեծ է:</p> <p>Վնասի վերաբերյալ տեղեկատվությունը լավ մշակված չէ գազամատակարարման համակարգի վերականգնման համար, որովհետև վնասի վերլուծության կարգը և մեթոդաբանությունը, ինչպես նաև խոշոր աղետների դեպքում վերականգնման խմբերի պատրաստումը լավ հաստատված չէ նախապես:</p> <p>Քանի որ Երևան քաղաքի ԱԻՀ և պետական մակարդակում ԱԻՀ միջև խնդիրները/ պարտականությունները/ հաղորդակցության միջոցները հստակ սահմանված չեն, որոշումների և հրահանգների մեջ բացթողումները առաջացնում են նախնական արձագանքման և վերականգնման գործողությունների ուշացում կամ խառնաշփոթ: Չնայած բնակիչները հասկանում են գազի արտահոսքի պատճառով պայթյունի ռիսկը, որոշ բնակիչներ տարահանվում են առանց փակելու գազի փականները, և գազից պայթյուններ տեղի են ունենում մի քանի տեղերում:</p> <p>Ապահովության համար գազի բացթողնման և արտահոսքի պատճառով գազի հոտը տարածվում է որոշ տարածքներում, և բնակիչները ընկնում են խուճապի մեջ՝ վախենալով պայթյուններից:</p>	<p>Վնասի հետախուզությունը (անվտանգության մասին հաստատման) ընթացքի մեջ է: Քանի որ գազի հայտնաբերման սարքերի քանակը սահմանափակ է, գազամատակարարման ցանցի վնասված մասերի պարզաբանումը դանդաղ է կատարվում:</p> <p>Չնայած այլ մարզերից ժամանած օգնող խմբերը միանում են վնասի հետախուզությանը (անվտանգության մասին հաստատմանը), հետախուզման աշխատանքները սահուն ձևով չեն արվում, քանի որ հետախուզական աշխատանքների ղեկավարումը, օրինակ՝ թիրախային տարածքների բաշխումը, գազի ցանցի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը և այլն լավ չի կատարվում:</p> <p>Գազամատակարարումը չի կարող վերականգնվել երկրաշարժից հետո երեք օրվա ընթացքում:</p>	<p>Չնայած որոշ տարածքներում ստացվել են հաստատումներ անվտանգության վերաբերյալ, գազամատակարարումը չի կարող վերականգնվել, քանի որ հիմնական խողովակների ապահովության վերաբերյալ հաստատումը չի ավարտվել: Հետևաբար, գազամատակարարումը Երևան քաղաքում չի վերականգնվել:</p>	<p>Հիմնական խողովակների ապահովության վերաբերյալ հաստատումը ավարտվել է երկրաշարժից երկու շաբաթ հետո: Չնայած բաշխման խողովակների ապահովության վերաբերյալ հաստատումը ավարտվել է թեթև վնասված տարածքներում, գազամատակարարումը չի կարող վերականգնվել, քանի որ որոշ բնակիչներ տարահանվել են առանց փակելու գազի փականները և բաց փականներից տեղի է ունենում գազի արտահոսք:</p> <p>Չնայած գազի խողովակաշարերի վերանորոգման աշխատանքները սկսվել են, աշխատանքները դադարեցվել են պահեստամասերի բացակայության պատճառով: Հետևաբար, վերանորոգման աշխատանքները չեն ավարտվել երկրաշարժից հետո մեկ ամսվա ընթացքում:</p> <p>Քանի որ վերանորոգման աշխատանքները կատարվել են միայն գազամատակարարման վերականգնման համար, գազամատակարարման համակարգի ամրացման տեսանկյունից չկա բարելավում՝ համեմատած նախկին պայմանների հետ:</p>

<p style="text-align: center;">Քարեկավված դեպք</p>	<p>Քանի որ գազամատակարարման օբյեկտները ամրացվել են սեյսմիկ կայունության տեսանկյունից, օբյեկտներին հասցված վնասը նվազել է՝ համեմատած վատագույն դեպքի հետ: Չնայած վնասը նվազել է, գազամատակարարման անջատումներ տեղի են ունենում Երևան քաղաքի ամբողջ տարածքով ուժեղ ցնցման պատճառով:</p> <p>Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովի և կոմունալ տեխնիկական ծառայության անդամները հավաքվում են ավտոնոմ հիմունքով արտակարգ իրավիճակը կառավարելու համար, քանի որ անդամների նախնական արձագանքման կանոնները սահմանված են աղետների կառավարման պլանում, և նրանք անմիջապես սկսում են հավաքել տեղեկատվություն վնասների, անդամների և գազի ընկերությունների անձնակազմի անվտանգ լինելու վերաբերյալ:</p> <p>ՀայՌուսԳազԱրդ-ում սկսվում է ԱԻ արձագանքման խմբերի և վնասի հետախուզությամբ զբաղվող (անվտանգության մասին հաստատման) թիմերի անդամների հավաքը. անդամների մեծ մասը գնում է հավաքակայան ավտոնոմ հիմունքով, քանի որ ՀայՌուսԳազԱրդ-ի ԱՇՊ-ում նշված է ԱԻ ժամանակ հավաքի կանոնը:</p>	<p>Գազամատակարարման օբյեկտների վնասի հետախուզությունը (անվտանգության մասին հաստատման) սկսվել է և ընթանում է սահուն կերպով, քանի որ վնասված կետերի թիվը և աստիճանը նվազում է, իսկ հետախուզության աշխատանքի կարգը և պատասխանատվությունը լավ է ընկալվել համապատասխան անձնակազմի ներառյալ դեկավար կազմի և տեղում աշխատող անձնակազմի կողմից:</p> <p>Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովը և կոմունալ տեխնիկական ծառայությունը հավաքում/վերլուծում են վնասի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը՝ համագործակցելով ճգնաժամային կառավարման կենտրոնի և այլ առնչվող ընկերությունների հետ: Հիմնվելով վերլուծված տեղեկատվության վրա՝ որոշվում է վերականգնման գրաֆիկը և առաջնահերթությունը, որը տրամադրվում է համապատասխան ընկերություններին ու հայտարարվում բնակչությանը:</p> <p>Բնակիչները հասկանում են գազի արտահոսքի պատճառով պայթյունի ռիսկը և զիտեն, թե ինչ պետք է անել ուժեղ երկրաշարժերի ժամանակ. նրանք փակում են գազի փականները մինչև տարահանվելը:</p> <p>Քանի որ բնակիչներին տեղեկացրել են, որ գազի բացթողնման սարքերը աշխատում են ուժեղ երկրաշարժերի ժամանակ, նրանք հանգիստ տարահանվում են և հնարավորության սահմաններում առանց վնասվելու մարում կրակը:</p>	<p>Վնասի հետախուզությունը (անվտանգության մասին հաստատման) ընթացքի մեջ է: Այլ մարզերից ժամանել են օգնող խմբեր, որոնք ունեն գազը հայտնաբերող սարքեր և իրականացնում են վնասի հետախուզություն (անվտանգության մասին հաստատում)՝ կիսելով թիրախային տարածքները Երևանի թիմերի հետ:</p> <p>Չնայած վնասի հետախուզությունը (անվտանգության մասին հաստատումը) լավ է ընթանում, գազամատակարարումը չի կարող վերականգնվել երկրաշարժից հետ երեք օրվա ընթացքում:</p> <p>Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովը և կոմունալ տեխնիկական ծառայությունը հրահանգում են ՀայՌուսԳազԱրդ-ին իրականացնել մեծ առաջնահերթություն ունեցող հիմնական խողովակաշարերի վնասի հետախուզություն (անվտանգության մասին հաստատում):</p>	<p>Հիմնական խողովակների անվտանգության մասին հաստատումը ավարտվել է: Գազամատակարարումը աստիճանաբար սկսում է վերականգնվել այն տարածքներից, որտեղ բաշխման խողովակների անվտանգության մասին հաստատումը ավարտվել է:</p>	<p>Գազամատակարարումը աստիճանաբար վերականգնվում է այն տարածքներում, որտեղ բաշխման խողովակների անվտանգության մասին հաստատումը ավարտվել է, և դրա հետ մեկտեղ վերականգնողական աշխատանքներ են ընթանում վնասված վայրերում: Չնայած խողովակների պաշարը սահմանափակ է, բայց արտերկրից ներմուծվել են նոր խողովակներ շատ վնասված խողովակները փոխելու համար, և, հետևաբար, վերականգնողական աշխատանքները լավ են ընթանում և համարյա ավարտվել են երկրաշարժից մեկ ամիս հետո: Վերականգնման աշխատանքները կատարվել են ոչ միայն գազամատակարարման վերականգնման համար, այլև սեյսմիկ կայունության տեսանկյունից գազամատակարարման համակարգի բարելավման համար՝ ելնելով ապագա տեսլականից և համակարգի սեյսմիկ ամրացման ռազմավարությունից:</p>
<p style="text-align: center;">Միջոցառումներ</p>	<p>Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովը և կոմունալ տեխնիկական ծառայությունը, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը, ՀայՌուսԳազԱրդ-ը պետք է <u>շարունակեն գազամատակարարման օբյեկտների սեյսմիկ ամրացումը:</u></p> <p><u>Աի դեպքում նախնական արձագանքման կանոնները և խնդիրները</u>, ինչպես օրինակ՝ ավտոնոմ հիմունքով հավաքը և անձնակազմի կողմից իրենց անվտանգության վերաբերյալ հաստատումը, <u>պետք է նշված և հստակեցված լինեն աղետների կառավարման պլանում կամ առնչվող կազմակերպությունների ԱՇՊ-ներում:</u></p>	<p>Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովը և կոմունալ տեխնիկական ծառայությունը և ՀայՌուսԳազԱրդ-ը պետք է <u>պատրաստեն ուժեղ երկրաշարժերի ժամանակ վնասի վերլուծության և հաղորդակցության հոսքի կարգը</u>, բացի այն կարգից, որը գործում է սովորական պայմաններում:</p> <p>Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովը և կոմունալ տեխնիկական ծառայությունը և ՀայՌուսԳազԱրդ-ը պետք է <u>տեղեկացնեն բնակիչներին տարահանման ժամանակ գազի փականների փակման անհրաժեշտության և ուժեղ երկրաշարժերի ժամանակ գազի բացթողնման ընդհանուր կարգի վերաբերյալ</u> բնակիչների պատշաճ և հանգիստ վարվեցողության համար:</p>	<p>Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովը և կոմունալ տեխնիկական ծառայությունը և ՀայՌուսԳազԱրդ-ը պետք է աղետների կառավարման պլանում նախապես <u>պատրաստեն այլ մարզերի օգնող խմբերի հետ առաջադրանքների բաշխման և համագործակցության ծրագիր:</u></p>	<p>Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովը և կոմունալ տեխնիկական ծառայությունը և ՀայՌուսԳազԱրդ-ը պետք է աղետների կառավարման պլանում նախապես <u>պատրաստեն վնասի հետախուզության (անվտանգության մասին հաստատման) թիրախները:</u></p>	<p>Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովը և կոմունալ տեխնիկական ծառայությունը և ՀայՌուսԳազԱրդ-ը պետք է <u>պահեստավորեն խողովակներ և այլ նյութեր ու ապահովեն պակասող նյութերի մատակարարման շղթան</u> լայնամասշտաբ վերանորոգում կատարելու համար:</p> <p>Երևան քաղաքի ԱԻ հանձնաժողովը և կոմունալ տեխնիկական ծառայությունը և ՀայՌուսԳազԱրդ-ը պետք է <u>իրականացնեն վերականգնման աշխատանքներ՝ ելնելով ապագա տեսլականից և գազամատակարարման համակարգի սեյսմիկ ամրացման ռազմավարությունից:</u></p>

	0 - 1 ժամ հետո	1 - 24 ժամ հետո	1 - 3 օր հետո	3 - 7 օր հետո	7 և ավել օր հետո
<p>Վատագույն դեպք</p>	<p>Չնայած հաղորդակցության հիմնական գծերը սահմանափակ են, տուն մտնող գծերը վնասվել են շենքերի փլուզման պատճառով:</p> <p>Քանի որ բջջային հեռախոսների ակտիվացումները տեղադրված են սեյսմակայուն շենքերի վրա, ակտիվացումներին պատճառված վնասը սահմանափակ է:</p> <p>Վերահեռարձակման կայաններում հեռահաղորդակցության որոշ սարքեր շրջվել են և որոշ տարածքներում հեռահաղորդակցությունը հասանելի չէ:</p> <p>Չնայած առնչվող կազմակերպությունների համար նախատեսված կարճալիք հաղորդակցության համակարգերը (N1 - N9) վնասված չեն, որոշ կայաններում էլեկտրամատակարարման պահուստային համակարգերը լավ չեն աշխատում: Այդ իսկ պատճառով որոշ առնչվող կազմակերպությունների միջև հաղորդակցությունը նախնական արձագանքման համար ուշանում է:</p>	<p>Քանի որ շատ մարդիկ փորձում են հաստատել, որ իրենց ընտանիքների հետ ամեն ինչ նորմալ է, բջջային ցանցում խցանումներ են առաջանում, և հաղորդակցությունը բջջային հեռախոսներով հասանելի չէ:</p> <p>Չնայած հեռախոսային ընկերությունների թիմերը սկսում են վնասի հետախուզությունը, հետախուզության աշխատանքները լավ չեն ընթանում, քանի որ թիմերի քանակը բավարար չէ:</p>	<p>Չնայած պաշտոնական հաղորդակցություն ապահովելու ուղղությամբ վերականգնողական աշխատանքները շարունակվում են, աշխատանքները, ընդհանուր առմամբ, լավ չեն ընթանում պահեստամասերի պակասի պատճառով:</p> <p>Չնայած կարճալիք ալիքները հատկացված են նախարարությունների համար վերականգնման աշխատանքների ղեկավարման նպատակով, որոշ խոչընդոտներ են առաջանում, որովհետև անձնակազմը ծանոթ չէ վթարային հաղորդակցության սարքերի կիրառման հետ:</p> <p>Քանի որ հանրային գծերի վնասի հետախուզման աշխատանքները լավ չեն ընթանում, վերականգնման աշխատանքները արդյունավետ չեն կատարվում:</p> <p>Պահեստամասերի պակասը հանգեցնում է վերականգնման աշխատանքների ուշացման:</p>	<p>Պաշտոնական հաղորդակցությունը կարճալիք համակարգերի միջոցով վերականգնված չէ:</p> <p>Հանրային քաղաքային և բջջային հեռախոսները շարունակում են չափատել:</p> <p>Տեղադրվում են անլար հեռախոսների բջջային միավորներ, բայց միավորների քանակը սահմանափակ է և շատ տարահանվածներ շտապում են միավորներ՝ առաջացնելով խառնաշփոթ:</p>	<p>Օգտագործելով տարահանման վայրերում ժամանակավոր տեղադրված անլար հեռախոսների բջջային միավորները՝ տարահանման վայրերում ապահովվում է հեռահաղորդակցությունը:</p>
<p>Բարելավված դեպք</p>	<p>Քանի որ իրականացվել են հեռահաղորդակցության համակարգի ամրացման մի քանի միջոցառումներ, հեռահաղորդակցության օբյեկտների վնասը և կտրված տարածքը նվազել են:</p> <p>Իրականացված միջոցառումները հետևյալն են՝ հեռախոսագծերի պահեստավորումը, հեռախոսային ընկերությունների շենքերի ամրացումը, հեռահաղորդակցության սարքերի ամրացումը և հեռախոսի սյուների ու ակտիվացումների ամրացումը:</p> <p>Առնչվող կազմակերպությունների համար նախատեսված կարճալիք հաղորդակցության համակարգերը (N1 - N9) վնասված չեն, և պահուստային էլեկտրամատակարարման համակարգերը պատշաճ ձևով տեղադրված են, ու, հետևաբար, առնչվող կազմակերպությունների միջև հաղորդակցությունը կարճալիք սարքերով հասանելի է:</p>	<p>Չնայած բջջային հեռախոսի ցանցում առաջանում են խցանումներ, նախապես գրանցված անդամների միջև հաղորդակցությունը հասանելի է՝ օգտագործելով հեռախոսային ընկերությունների կողմից ներդրված առաջնահերթության համակարգը:</p> <p>Հեռախոսային ընկերությունների թիմերը սկսում են վնասների հետախուզությունը այլ վայրերից եկած օգնող թիմերի հետ միասին: Օգնության մեխանիզմները նախապես համաձայնեցված են հեռախոսային ընկերությունների մասնաճյուղերի միջև:</p>	<p>Պաշտոնական հաղորդակցություն ապահովելու ուղղությամբ վերականգնողական աշխատանքները շարունակվում են: Եթե անհրաժեշտ պահեստամասերը և նյութերը բավարար չեն, յուրաքանչյուր պաշտոնական կազմակերպությունում հաղորդակցության համար պատասխանատու վարչությունը ԱԻՀ հաղորդակցության և ազդարարման ծառայությանն ու տրանսպորտի և կապի նախարարությանն է ներկայացնում վերականգնման ենթակա մասերի և նյութերի ցուցակը:</p> <p>Կարճալիք ալիքները հատկացված են նախարարությունների համար վերականգնման աշխատանքների ղեկավարման նպատակով՝ համաձայն նախապես պատրաստված աղետների կառավարման պլանի:</p> <p>Այլ մարզերի մասնաճյուղերում աշխատող օգնության խմբերի հետ միասին հեռախոսային ընկերությունները հստակեցնում են վնասի մաշստաբը, և վերականգնողական աշխատանքները ընթանում են համաձայն վնասի իրավիճակի: Անհրաժեշտ պահեստամասերի պատրաստման և ձեռքբերման գործընթացը ևս ընթացքի մեջ է՝ համաձայն հեռախոսային ընկերությունների ԱՇՊ-ում նախատեսված ընթացակարգի:</p>	<p>Պաշտոնական հաղորդակցությունը կարճալիք համակարգերի միջոցով վերականգնված է:</p> <p>Հաղորդակցությունը քաղաքային և բջջային հեռախոսներով համարյա վերականգնված է, բացառությամբ ծանր վնասված տարածքների:</p> <p>Անլար հեռախոսների բջջային միավորների բավարար քանակություն է տեղադրված ժամանակավոր տարահանման վայրերում և ապահովված է տարահանվողների հաղորդակցության միջոցները:</p>	<p>Պատրաստվում է վերականգնման պլանը, ներառյալ՝ ժամանակավորապես վերանորոգված օբյեկտների փոխարինումը, ծանր վնասված համակարգերի թարմացումը, և պլանում նշվում են առաջնահերթ աշխատանքները:</p>

<p style="writing-mode: vertical-rl; transform: rotate(180deg);">Միջոցառումներ</p>	<p><u>Հեռահաղորդակցության ընկերությունները պետք է իրականացնեն միջոցառումներ հեռահաղորդակցության օբյեկտները ամրացնելու համար</u> Երևան քաղաքի ԱԻՀ հաղորդակցության և ազդարարման ծառայության ուղղորդմամբ: Միջոցառումները ներառում են հեռախոսագծերի պահեստավորումը, հեռախոսային ընկերությունների շենքերի ամրացումը, հեռահաղորդակցության սարքերի ամրացումը և հեռախոսի սյուների ու ալեհավաքների ամրացումը:</p> <p><u>Պատասխանատու կազմակերպությունները պետք է պատշաճ ձևով պահպանեն կարճալիք հաղորդակցության համակարգերը</u> (N1 to N9), էլեկտրամատակարարման պահուստային համակարգերի պահպանման հետ միասին:</p>	<p>Հեռախոսային ընկերությունները պետք է <u>տեղադրեն համակարգ, որը ապահովում է հրատապ հաղորդակցությունը ըստ առաջնահերթության</u> ԱԻՀ հաղորդակցության և ազդարարման ծառայության ուղղորդմամբ:</p> <p>Հեռախոսային ընկերությունները պետք է պատրաստեն <u>վնասի հետախուզության պլան աղետների կառավարման պլանում նշված այլ մասնաճյուղերի հետ համագործակցության համար, ինչպես նաև անձնակազմի ուսուցման պլան</u> ԱԻՀ հաղորդակցության և ազդարարման ծառայության ուղղորդմամբ:</p>	<p><u>Հաղորդակցության և ազդարարման ծառայությունը ու տրանսպորտի և կապի նախարարությունը պետք է պատրաստեն պաշտոնական հաղորդակցության համակարգերի անհապաղ վերականգնման աշխատանքների համար անհրաժեշտ պահեստամասերի ապահովման կարգը և ձեռքբերման ուղին</u> աղետների կառավարման պլանում:</p> <p><u>Հեռախոսային ընկերությունները պետք է պատրաստեն հանրային հաղորդակցության համակարգերի անհապաղ վերականգնման աշխատանքների համար անհրաժեշտ պահեստամասերի ապահովման կարգը և ձեռքբերման ուղին:</u></p>	<p><u>Հեռախոսային ընկերությունները պետք է պահեստավորեն ժամանակավոր ալեհավաքներ և անլար հեռախոսների շարժական միավորներ, որոնք կարող են տեղադրվել տարահանման վայրերում և այլն</u> ԱԻՀ հաղորդակցության և ազդարարման ծառայության ուղղորդմամբ:</p>	<p>Հաղորդակցության և ազդարարման ծառայությունը ու տրանսպորտի և կապի նախարարությունը հեռախոսային ընկերությունների հետ միասին պետք է <u>աղետների կառավարման պլանում նշեն վերականգնման պլանի սահուն ձևակերպման ընթացակարգի մասին:</u></p>
--	---	--	--	---	---

	0 - 1 ժամ	1 - 24 ժամ	1 - 3 օր	3 - 7 օր	7 և ավելի օրեր
Վատթարագույն դեպք	<p>ԶԼՄ-ների կառույցները, հեռուստա-ռադիո ապահովման և տպագրման սարքավորումները էապես վնասվել են:</p> <p>Որոշ տպագրման սարքեր վնասված չեն, դեռևս մնացել են մի քնի տպագրման գործընթացներ:</p>	<p>Քանի որ ԶԼՄ-ների միջոցով բնակիչներին տրամադրվող աղետների կրթությունը եղել է թերի, ապա արտակարգ իրավիճակների ժամանակ քաղաքացիները հայտնվում են խուճապի մեջ՝ հետագա գործողությունների և իրավիճակի վերաբերյալ անբավարար տեղեկատվության հետևանքով:</p> <p>Երկրորդային ցնցումների մասին կեղծ լուրերի հետևանքով շատ քաղաքացիներ սկսում են փախչել տարահանման գոտիներից, որը հանգեցնում է խառնաշփոթի, որից էլ տուժում են մի քանիսը:</p>	<p>Որոշ ԶԼՄ-ներ դադարեցնում են իրենց աշխատանքները, իսկ մնացածը կենտրոնացնում են իրենց ուշադրությունը վատթարագույն իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության փոխանցմանը առանց հավաստ աղբյուրների: Արդյունքում, վատատեսական տրամադրվածությունը տարածվում է քաղաքացիների միջև, դրսից օգնությունը տարածվում է անհավասարաչափ, որովհետև լրատվամիջոցները կենտրոնացնում են իրենց ուշադրությունը պահեստներում օգնության պարագաների կուտակման վրա՝ առանց բաժանելու: Առանց հուսալի աղբյուրի հետցնցումների ու այլ վատ բաների վերաբերյալ տեղեկատվություն տարածելու հետևանքով բնակիչների մոտ առաջանում է խառնաշփոթ ու խուճապ:</p> <p>Կեղծ լուրերը, օրինակ, որ գողերը մտնում են դատարկ տներ, տարահանվողների շրջանում առաջացնում են խուճապ: Որոշ տարահանվողներ հրաժարվում են մնալ տարահանման կետերում:</p> <p>Տարածվում են կեղծ լուրեր այն մասին, որ միջազգային օգնությունը ուղարկվում է սև շուկա, որի հետևանքով բնակիչները ցույցեր են կազմակերպում թաղապետարանների առաջ:</p>		
Բարելավված դեպք	<p>Կատարվել է ԶԼՄ-ների շենքերի ամրացում և սարքավորումների ամրացում որպես հակասեյսմիկ միջոցառումների, և, հետևաբար, շենքերն ու սարքավորումները քիչ են վնասվել:</p> <p>Անձնակազմի ապահովության վերաբերյալ նախնական արձագանքը լրատվական ընկերություններում կատարվել է անմիջապես՝ համաձայն նախապես պատրաստված ԱՇՊ-ի: Այդ իսկ պատճառով լրատվամիջոցների գործառույթները կարող են ապահովվել:</p>	<p>Բնակչությունը տեղեկացվել է երկրաշարժի հիմնական հատկությունների մասին, ինչպես օրինակ այն փաստը, որ ուժեղ հետցնցումները պատահում են շատ հազվադեպ, և նրանք գիտեն՝ ինչպես վարվել տարերային աղետների ժամանակ: Հետևաբար, փրկարարական աշխատանքներում չկա խառնաշփոթ և բնակչության շրջանում կեղծ լուրեր չեն տարածվում:</p> <p>Քանի որ լրատվամիջոցները պատշաճ ձևով քաղաքացիներին փոխանցում են ԱԻՆ հաղորդագրությունները իրավիճակի և ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ, ինչպես նախապես սահմանված է պլանում, տուժածները կարող են մնալ իրենց տարահանման վայրերում առանց անհանգստանալու իրենց ունեցվածքի մասին:</p>	<p>ԶԼՄ-ները տարածում են վստահելի տեղեկատվություն վնասի և օգնության վերաբերյալ, միաժամանակ դիմելով բնակչությանը խուճապի չմատնվել և պահպանել խաղաղություն: Բնակչությունը ԶԼՄ-ների միջոցով կարող է ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, ներառյալ անվտանգության մասին:</p> <p>Օգնության բաշխման վերաբերյալ տեղեկատվությունը ևս պատշաճ ձևով փոխանցվում է բնակիչներին, որոնք, արդյունքում, չեն բողոքում և վստահում են կառավարությանը:</p> <p>Պաշտոնական հաղորդագրություններից ստացված տեղեկատվությունը ԶԼՄ-ների միջոցով օպերատիվ փոխանցվում են բնակչությանը՝ համաձայն ԱԻՆ-ի հետ նախապես ձեռքբերված համաձայնության:</p> <p>Տարահանման վայրերում բնակչությունը տեղեկացվում են բարձրախոսների միջոցով Երևան քաղաքի տարահանման հանձնաժողովի կողմից:</p> <p>Համագործակցելով ՓԾ հետ՝ քաղաքացիների շրջանում ձևավորվում են կամավորների խմբեր՝ Ոստիկանության մարմինների հետ համատեղ տարահանվողներին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու նպատակով, ինչպես օրինակ՝ կորած մարդիկ, սննդի/ջրի/անհրաժեշտ պարագաների տրամադրում, փրկարարական աշխատանքներ:</p> <p>ԶԼՄ-ների միջոցով բնակիչներին տրամադրվում է տեղեկատվություն անվտանգության, ինչպես նաև այդ ուղղությամբ ոստիկանության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ, օրինակ՝ գողության դեպքերը: Այդ տեղեկատվությունը նպաստում է հասարակական կարգի պահպանությանը՝ համագործակցելով բնակիչների հետ:</p>		

Միջոցառումներ	<p>ԶԼՄ-ների շենքերում/օբյեկտներում պետք է <u>նախապես պլանավորվեն և իրականացվեն հակասեյսմիկ միջոցառումներ</u>, ինչպիսիք են շենքերի ամրացումը և սարքավորումների ամրացումը:</p> <p><u>Բնակչությանը անհրաժեշտ է սովորեցնել և տեղեկացնել ու լուսարանել պաշտոնական հայտարարությունների մասին</u>, որպեսզի երկրաշարժի դեպքում պահպանեն հանգստություն:</p>	<p>ԶԼՄ-ները, համագործակցելով ՀՀ ԱԻՆ հետ, <u>պետք է պատրաստեն սեփական պլանը և ուղեցույցը տեղեկատվության պատշաճ տարածման համար աղետների կառավարման վերաբերյալ բնակչության պատրաստվածությունը և իրազեկվածության բարձրացումը խթանելու նպատակով</u>:</p> <p><u>ԶԼՄ-ները պետք է ունենան համակարգ աղետների կառավարման վերաբերյալ իրենց ծրագրերի (օրինակ էթիկայի հարցերով հանձնաժողով) համապատասխանելիությունը վերահսկելու համար</u>:</p> <p>Պաշտոնական մարմիններից աղետների վերաբերյալ տեղեկատվության հավաքման ուրվագիծը (ինչպես օրինակ կապի կետը, պատասխանատու անձնակազմը և այլն) պետք է նախապես սահմանվի աղետների կառավարման պլանում՝ աղետների և իրականացվող միջոցառումների վերաբերյալ անհապաղ և ճիշտ տեղեկատվություն ձեռք բերելու համար:</p>	<p><u>ԶԼՄ-ները պետք է պատրաստեն պլան բնակիչների շրջանում աղետների վերաբերյալ տեղեկատվության անհապաղ և ճիշտ տարածման համար</u>:</p> <p>ՓԾ պետք է մշակի կամավորների աջակցության պլան վերջիններիս գրանցման, խմբերի ստեղծման, առաջադրանքների կիսման, տարահանվողներին տրամադրվելիք տեղեկատվության ստացման և այլնի ուղղությամբ:</p> <p>ՓԾ և Երևանի քաղաքապետարանը պետք է <u>պատրաստեն բարձրախոսներ և հանրության հետ հաղորդակցության այլ միջոցներ</u>, որպեսզի վնասի և օգնության վերաբերյալ պաշտոնական հայտարարությունները անմիջապես փոխանցվեն այն վայրեր, որտեղ տեղեկատվության փոխանցման ոչ մի ֆիքսված հարմարանք չկա:</p>
---------------	--	--	---

Հետևանքների սցենար (17) Օդային փոխադրում (ՓԾ, ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն, «Զվարթնոց միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ)

	0 - 1 ժամ	1 - 24 ժամ	1 - 3 օր	3 - 7 օր	7 և ավելի օրեր
Վատթափագույն դեպք	<p>Օդանավակայանի տերմինալներից մեկը վնասվել է, նավավարական կառույցի սարքավորումները չեն գործում, և արդյունքում օդանավակայանը չի աշխատում:</p> <p>Թռիչքային գոտու վնասման պատճառով ինքնաթիռների թռիչքները և վայրէջքները հնարավոր չէ իրականացնել:</p> <p>Վառելիքի պահեստարանը վնասված է՝ տեղի է ունեցել արտահոսք:</p>	<p>Դադարեցվում են թռիչքներն ու վայրէջքները, իրականացվում է թռիչքային գոտու անհետաձգելի ստուգում:</p> <p>Հնարավոր չէ վերականգնել նավավարման գործընթացը, քանի որ կան շատ վնասված մասեր, իսկ վերանորագման համար անհրաժեշտ պահեստավորված նյութերը բավարար չեն:</p> <p>Վառելիքի պահպանման համար լցանավերի վնասվածքի պատճառով օդանավերը չեն կարող աշխատել:</p>	<p>Պատրաստված անձնակազմի պակասի, ինչպես նաև պահեստավորված նյութերի ու սարքավորումների անբավարարության հետևանքով նավավարական սարքավորումների և թռիչքային գոտու վերանորագումը հետաձգվում է:</p> <p>Այդ իսկ պատճառով միջազգային կամ այլ պետություններից օգնությունները օդային ճանապարհով դառնում են անհնարին:</p>	<p>Չնայած նրան, որ թռիչքի գոտին վերանորոգված է, նավավարական սարքավորումները նորոգված չեն՝ պահեստամասերի բացակայության պատճառով հանգեցնելով օդանավակայանի աշխատանքների սահմանափակման:</p> <p>Միջազգային օգնությունը ընդունվում է Շիրակի օդանավակայանից, սակայն փոխադրման համար ծախսվում է ավելի շատ էներգիա և ժամանակ:</p>	<p>Օդանավակայանի գործընթացների մեծամասնությունը վերականգնված է, վերակազմակերպվել են աշխատանքները:</p> <p>Քանի որ բեռնաթափման տարածքը սահմանափակ է և բեռնաթափումը լավ չի վերահսկվում, տարածքը զբաղեցված է պատահական բեռնաթափված արտերկրից ստացված օգնության նյութերով, և, հետևաբար, նյութերի մատակարարումը խոչընդոտվում է:</p>
Բարելավված դեպք	<p>Քանի որ հակասեյսմիկ միջոցառումները, ինչպիսիք են նավավարական սարքավորումների ամրացումը, նախապես իրականացվել են, այդ իսկ պատճառով լուրջ վնասվածքներ տեղի չեն ունեցել:</p> <p>Թռիչքային գոտու վնասվածքի արդյունքում թռիչքներն ու վայրէջքները հետաձգվում են:</p> <p>Քանի որ նախապես իրականացրել են հակասեյսմիկ միջոցառումների ուժեղացում վառելիքի պահեստարանում չնչին վնասվածքներ են տեղի ունեցել:</p>	<p>Դադարեցվում են թռիչքներն ու վայրէջքները, իրականացվում է թռիչքի գոտու անհետաձգելի ստուգում: Ելնելով ստուգման արդյունքներից՝ օդանավակայանի պատրաստված աշխատակիցները սկսում են իրականացնել թռիչքի գոտու վերանորոգման աշխատանքներ՝ օգտագործելով նախապես պահեստավորված նյութերը և սարքավորումները:</p> <p>Իրականացվում է նավավարական կառույցների մանրամասն ստուգում նավավարական ֆունկցիան ապահովելու համար: Օդանավակայանում և Երևան քաղաքի որոշ վայրերում ստեղծվում են տարածքներ վնասի հետազոտության նպատակով ուղղաթիռների վայրէջքի և թռիչքի համար:</p>	<p>Թռիչքային գոտու օպերատիվ վերանորոգման և պահուստից նավավարական սարքերի փոխարինման շնորհիվ օդանավակայանի գործընթացների մեծ մասը վերսկսում են այլ պետություններից օգնություն ստանալու համար:</p>	<p>Իրականացնում են ժամանակավոր վերանորոգված սարքավորումների և սարքերի փոխարինում նորերով՝ չխափանելով օդանավակայանի աշխատանքները:</p> <p>Քանի որ նախապես որոշվել են արտակարգ իրավիճակներում օգնության բեռնաթափման լրացուցիչ վայրերը, բեռնաթափումը, ինչպես նաև տուժածներին նյութերի մատակարարումը խառնաշփոթ չեն առաջացնում:</p>	
Միջոցառումներ	<p>Օդանավակայանի ավտոտրանսպորտային տնտեսությունը և ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը պետք է իրականացնեն հակասեյսմիկ միջոցառումներ, ինչպիսիք են նավավարական սարքավորումների ամրացում և վառելիքի պահեստարանի սեյսմակայունության ուժեղացում:</p>	<p>Օդանավակայանի ավտոտրանսպորտային տնտեսությունը և ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը պետք է ԱԻ գործողությունների պլանում ներառեն վերականգնման աշխատանքների համար ստուգման, պահպանման և նյութերով օպերատիվ ապահովման գործընթացները:</p>	<p>Օդանավակայանի ավտոտրանսպորտային տնտեսությունը և ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը պետք է ներդնեն նյութերի տրամադրման և վերանորոգման գործընթացներ ուժեղ երկրաշարժի դեպքում օդանավակայանի պատշաճ աշխատունակությունը ապահովելու համար, երբ ավիացիան կարող է լուրջ վնասներ կրել տարբեր մասերում:</p>		

Հետևանքների սցենար (18) Ճանապարհներ և կամուրջներ

	0 - 1 ժամ հետո	1 - 24 ժամ հետո	1 - 3 օր հետո	3 - 7 օր հետո	7 և ավել օր հետո
<p>Վատթարագույն դեպք</p>	<p>Երևան քաղաքում փլուզվել է 4 կամուրջ (ARB-3, ARB-5, MLS-3, and SHN-5) և ճանապարհների որոշ հատվածներ խցանված են փլուզված շենքերից առաջացած շինարարական աղբի հետևանքով:</p> <p>Չնայած հիմնական ճանապարհները անցանելի են, մի քանի փողոցներ խցանված և անանցանելի են:</p> <p>Հանրապետության հյուսիսային մասը կենտրոնական մասին կապող երկաթգծի աշխատանքը խաթարված է վնասված երկաթուղու կամուրջի փլուզման հետևանքով:</p> <p>Երևան քաղաքի հարավ-արևելյան մասում ճանապարհները փակված են սողանքի պատճառով:</p>	<p>Հիմնվելով արտակարգ իրավիճակների նախարարի զեկույցի վրա՝ վարչապետը հայտարարում է արտակարգ դրություն և ԱԻՆ ՃԿԿ սկսում է գործել ազգային մակարդակում: ՀՀ ԱԻ հանրապետական հանձնաժողովի նախագահ (ՀՀ վարչապետը) հանձնարարում է ինժեներական ստորաբաժանումներին և Երևան քաղաքի ԱԻՀ ինժեներական ծառայությանը գնահատել իրավիճակը, հաշվարկել վնասված կամուրջների/ճանապարհների վերականգնման համար անհրաժեշտ տեխնիկան և սկսել վերականգնողական աշխատանքները ոչ ուշ, քան երկրաշարժից 4 ժամ հետո: Գնահատում է ժամանակ է խլում, քանի որ վնասի վերաբերյալ տեղեկատվության հավաքման համակարգը նախապես հաստատված չէ:</p> <p>ՀՀ ոստիկանությանը հանձնարարվել է վերահսկել երթևեկությունը, որը կատարվում է դժվար, որովհետև աղետների կառավարման համար երթևեկության վերահսկման առաջնահերթ ճանապարհները նախատեսված չեն:</p> <p>Անցանելի ճանապարհները զբաղեցված են տարահանման և փրկարարական մեքենաներով ու առաջանում են երթևեկության ուժեղ խցանումներ: Բացի այդ շատ անտիրական մեքենաներ խոչընդոտում են երթևեկությունը: Հետևաբար, ճանապարհների մեծ մասը դառնում է անանցանելի:</p>	<p>Ինժեներական ստորաբաժանումներին և Երևան քաղաքի ԱԻՀ ինժեներական ծառայությանը սկսում են վնասված կամուրջների վերանորոգման աշխատանքները, որոնք, սակայն, լավ չեն ընթանում, քանի որ սարքավորումներն ու նյութերը բավարար չեն:</p> <p>Քանի որ չի սահմանվել փրկարարության և շտապ վթարավերականգնողական գործողությունների տեսանկյունից առաջնահերթ ճանապարհների մաքրման ընթացակարգը, աշխատանքները ուշանում են:</p> <p>Տափականավ կամուրջները տեղադրված են ՀՀ պաշտպանության նախարարության կողմից:</p> <p>Ինժեներական ստորաբաժանումները իրականացնում են սողանքից փակված ճանապարհների բացումը:</p>	<p>Շարունակվում են վնասված կամուրջների վերականգնման աշխատանքները, և երթևեկության ուժեղ խցանումները շարունակվում են վերանորոգման մեջ գտնվող կամուրջների վրա:</p> <p>Չնայած երթևեկությունը ապահովվում է հիմնական ճանապարհների մի մասի վրա, շատ ճանապարհեր դեռևս մնում են անանցանելի:</p> <p>Ինժեներական ստորաբաժանումները վերականգնել են վնասված կամուրջները, որոնք ենթակա են երթևեկության: Փրկարարական և շտապ վթարավերականգնողական գործողություններ իրականացնող կազմավորումների համար ճանապարհների խոչընդոտները հիմնականում վերացած են:</p>	<p>Չնայած շտապ վերանորոգման աշխատանքները ավարտված են, փլուզված կամուրջների վերակառուցումը դեռ չի սկսվել, իսկ երթևեկության վերահսկումը դեռ շարունակվում է:</p> <p>Սարքավորումների պակասի և աշխատողների հոգնածության պատճառով մաքրման աշխատանքները դանդաղ են առաջ գնում, և դեռևս մնում են անանցանելի ճանապարհներ:</p> <p>Քանի որ առնչվող կազմակերպությունը պետք է կենտրոնացնի ուշադրությունը վերականգնման աշխատանքների վրա, երկարաժամկետ վերակառուցման պլանը դեռ պատրաստված չէ:</p>

Բարելավված դեպք	<p>Կամուրջների փլուզման դեմ կանխարգելիչ միջոցառումների շնորհիվ հնարավոր է լինում խուսափել կամուրջների փլուզումից:</p> <p>Փոքր ճանապարհներից մի քանիսը փակ են շենքերի փլուզումից առաջացած շինարարական աղբի հետևանքով:</p> <p>Երկաթուղու աշխատանքը խաթարված չէ:</p> <p>Նախապես իրականացրած կանխարգելիչ միջոցառումների, օրինակ՝ ստորգետնյա ջրի նվազեցման շնորհիվ սողանքները չեն ակտիվացել:</p>	<p>Հիմնվելով արտակարգ իրավիճակների նախարարի զեկույցի վրա՝ վարչապետը հայտարարում է արտակարգ դրություն և ԱԻՆ ՃԿԿ սկսում է գործել ազգային մակարդակում: ՀՀ ԱԻ հանրապետական հանձնաժողովի նախագահ (ՀՀ վարչապետը) հանձնարարում է ինժեներական տեխնիկա ունեցող ստորաբաժանումներին և Երևան քաղաքի ԱԻՀ ինժեներական ծառայությանը գնահատել իրավիճակը, հաշվարկել վնասված կամուրջների/ճանապարհների վերականգնման համար անհրաժեշտ տեխնիկան և սկսել վերականգնողական աշխատանքները ոչ ուշ, քան երկրաշարժից 4 ժամ հետո: Գնահատում ավարտվել է ժամանակին, քանի որ վնասի վերաբերյալ տեղեկատվությունը հավաքվում, իսկ գնահատումը իրականացվում է համաձայն աղետների կառավարման պլանում նշված եղանակի:</p> <p>ՀՀ ոստիկանությանը հանձնարարվել է վերահսկել երթևեկությունը, որն արվում է սահուն ձևով, քանի որ երթևեկության վերահսկման առաջնահերթ ճանապարհները նախատեսված են աղետների կառավարման պլանում:</p> <p>Քանի որ քաղաքացիները տեղյակ են, որ արգելված է օգտագործել տարահանման համար նախատեսված մեքենաները, երթևեկության խցանումները հիմնական ճանապարհների վրա վերացված են: Ոստիկանության կողմից երթևեկության վերահսկումը նշանակված ռազմավարական ճանապարհների վրա նպաստում է ԱԻ դեպքում աշխատող մեքենաների փոխադրմանը: Հետևում մնացած մեքենաները բացվում և հեշտ հեռացվում են:</p>	<p>Վթարված կամուրջների վերականգնման աշխատանքները լավ են ընթանում, քանի որ ԱԻՀ ինժեներական ծառայությանը համաձայնության է եկել առնչվող ընկերությունների հետ վերականգնման թիմերի տեղակայման վերաբերյալ սարքավորումների և նյութերի հետ միասին:</p> <p>Քանի որ առաջնահերթ ճանապարհները և մաքրման կարգը սահմանվել են նախապես, աշխատանքները լավ են ընթանում:</p> <p>Տափականավ կամուրջները տեղադրված են ՀՀ պաշտպանության նախարարության կողմից: Ինժեներական ստորաբաժանումները իրականացնում են սողանքից փակված ճանապարհների բացումը:</p>	<p>Վնասված կամուրջների վերականգնման աշխատանքների մեծ մասը ավարտված են: Այն մասերում, որտեղ վերականգնումը հնարավոր չի եղել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տեղադրվել են տափականավ կամուրջներ: Հիմնական ճանապարհների մաքրումը համարյա ավարտված է, իսկ հիմնական ճանապարհների մաքրման աշխատանքները ընթացքի մեջ են ըստ աղետների կառավարման պլանում նախապես սահմանված ճանապարհների մաքրման առաջնահերթության:</p>	<p>Աղետի գոտի տանող ճանապարհների վերականգնման աշխատանքները հիմնականում ավարտված են:</p> <p>Որոշ օժանդակ աշխատանքներ, օրինակ՝ մայրերի, ճանապարհի եզրի օբյեկտների, երթևեկության լույսերի վերանորոգում սկսվել են:</p> <p>Ձևակերպվել է կամուրջների և ճանապարհների համար ամբողջական վերականգնման պլան ավելի ուժեղ պայմաններ ստեղծելու նպատակով:</p>
Միջոցառումներ	<p>ԱԻՀ ինժեներական ծառայությանը և տարածքային կառավարման նախարարությունը պետք է <u>իրականացնեն կամուրջների սեյսմիկ կայունության դիագնոստիկա և անհրաժեշտ ամրացում</u>՝ ներառյալ կամրջի հեծանի տեղաշարժման դեմ կանխարգելիչ միջոցառումների մշակումը:</p> <p>ԱԻՀ ինժեներական ծառայությանը և տարածքային կառավարման նախարարությունը պետք է իրականացնեն Երևան քաղաքի հարավ-արևելյան մասում տեղաբաշխված <u>սողանքների կայունացման միջոցառումներ</u>:</p>	<p>Ինժեներական ստորաբաժանումները և Երևան քաղաքի ԱԻՀ ինժեներական ծառայությունը պետք է նախապես աղետների կառավարման պլանում <u>պատրաստեն վնասի վերաբերյալ տեղեկատվության հավաքման և վնասի գնահատման կարգ և մեթոդ</u>:</p> <p>Ինժեներական ստորաբաժանումները և Երևան քաղաքի ԱԻՀ ինժեներական ծառայությունը պետք է նախապես աղետների կառավարման պլանում <u>նշանակեն առաջնահերթ ճանապարհներ աղետների կառավարման համար և պատրաստեն ճանապարհների մաքրման ու երթևեկության վերահսկման պլան</u>:</p> <p>Ինժեներական ստորաբաժանումները և Երևան քաղաքի ԱԻՀ ինժեներական ծառայությունը պետք է <u>տեղեկացնեն քաղաքացիներին մեքենաներով տարահանվելու արգելման մասին և իրականացնեն տարահանման վարժություններ առանց մեքենաների կիրառման</u>:</p>	<p>Երևան քաղաքի ԱԻՀ ինժեներական ծառայությանը <u>պետք է աղետների կառավարման պլանում պատրաստ ճանապարհների հրատապ մաքրման պլան՝ ներառյալ համաձայնությունը մասնավոր կապալառուների հետ սարքավորումների ձեռքբերման և նյութերի ու սարքավորումների պահեստավորման մասին</u>:</p>		<p>ԱԻՀ ինժեներական ծառայությանը պետք է <u>աղետների կառավարման պլանում նշի ամբողջական վերականգնման պլանի ձևակերպման կարգը</u> ուժեղ երկրաշարժերի դեպքում երթևեկության ավելի հուսալի համակարգ ստեղծելու համար:</p>

Հետևանքների սցենար (19) Շինարարական աղբի մաքրում

	0 - 1 ժամ հետո	1 - 24 ժամ հետո	1 - 3 օր հետո	3 - 7 օր հետո	7 և ավել օր հետո
Վատագույն դեպք	<p>Մեկ րոպեում կուտակվում է 5 միլիոն տոննա շինարարական աղբ (7 միլիոն մ³) հիմնականում շենքերի փլուզման պատճառով:</p> <p>Շինարարական աղբից դուրս, պահանջվում է հեռացնել 150 հազար տոննա հիմնական ճանապարհները մաքրելու համար:</p>	<p>Ինժեներական ստորաբաժանումներին և Երևան քաղաքի ԱԻՀ ինժեներական ծառայությանը սկսում են շինարարական աղբի մաքրման աշխատանքները հիմնականում կորած մարդկանց որոնողափրկարարության համար: Բայց սարքավորումները և աշխատուժը բավարար չեն, քանի որ շինարարական աղբը շատ է:</p> <p>Տուժածների փլվածքների տակից հանելու համար քաղաքացիները սկսում են շինարարական աղբի հեռացումը: Բայց հեռացումը առաջ չի գնում, քանի որ համայնքներում չկան հասանելի սարքավորումներ, և չկան ուսուցանված անձինք շինարարական աղբը հեռացնելու համար:</p>	<p>Շինարարական աղբի հեռացման աշխատանքները հիմնական ճանապարհների վրա ընթացքի մեջ են, իսկ հեռացված աղբը թափվում է տարբեր տեղեր առանց վերահսկման, քանի որ շինարարական աղբի պահեստավորման տարածքները որոշված չեն:</p> <p>Բնակիչները հեռացնում են շինարարական աղբը և թափում բնակելի տարածքների մոտ գտնվող ճանապարհների վրա: Առանց վերահսկման թափելու պատճառով ճանապարհների անանցանելի հատվածները մեծանում են, իսկ փրկարարական և այլ գործողությունները խոչընդոտվում:</p>	<p>Մասնավոր ընկերությունները, որոնք ուղարկվել են շինարարական աղբի մաքրման աշխատանքներին միանալու համար, չեն իրականացնում ամբողջական մաքրում, քանի որ դրա համար բյուջե հատկացված չէ, օրինակ՝ վառելիքը, սպառումը, սեպը և այլն:</p> <p>Քանի որ շինարարական աղբի հեռացման պլանը լավ ձևակերպված չէ, հեռացված աղբը թափվում է սարերում առանց տեսակավորման և վերահսկման:</p>	<p>Գոյություն չունի պլան բնակելի տարածքներում թափված շինարարական աղբի հեռացման համար, և բնակելի տարածքներում շինարարական աղբը չի մշակվում:</p> <p>Շինարարական աղբի հեռացման ուշացումը ազդում է վերականգնման և վերակառուցման մի քանի գործողությունների վրա: Ժամանակավոր կացարանների կառուցումը ձգձգվում է, քանի որ տարածքները ծածկված են շինարարական աղբով:</p>
Բարելավված դեպք	<p>Շենքերի ամրացման շնորհիվ շենքերի փլուզումը, որը հանդիսանում է շինարարական աղբի աղբյուր, նվազում է, հետևաբար նվազում է նաև շինարարական աղբի ծավալը:</p>	<p>Ինժեներական ստորաբաժանումները սկսում են առաջնահերթ ճանապարհների վրա շինարարական աղբի մաքրման աշխատանքները՝ համաձայն աղետների կառավարման պլանի:</p> <p>Շինարարական ընկերությունները, որոնք ունեն ծանր տեխնիկա և աշխատուժ, միանում են շինարարական աղբի մաքրման աշխատանքներին Երևան քաղաքի ԱԻՀ ինժեներական ծառայության ղեկավարման ներքո:</p> <p>Բնակելի տարածքներում շինարարական աղբը հեռացվում է առանց սարքավորման և ժամանակավորապես կուտակվում ճանապարհների վրա:</p>	<p>Շինարարական աղբի հեռացումը հիմնական ճանապարհների վրա ընթացքի մեջ է: Ինժեներական ստորաբաժանումներին և Երևան քաղաքի ԱԻՀ ինժեներական ծառայությանը սահմանում են հիմնական պահեստավորման տարածքները՝ համաձայն հնարավոր պահեստավորման տարածքների առկա ցուցակի, որպեսզի շինարարական աղբի թափելը չխոչընդոտի այլ գործողությունները:</p>	<p>Հիմնական պահեստավորման տարածքներից շինարարական աղբի տեղափոխվում է երկրորդային պահեստավորման տարածքներ տարանջատման համար:</p> <p>Շինարարական աղբը բաժանվում է մի քանի տեսակների, օրինակ՝ վառելու, հողի տակ թաղելու, վերամշակման և այլնի համար:</p> <p>Վերամշակման ընթացակարգը սահմանված է շինարարական աղբի ծավալը նվազեցնելու, ինչպես նաև շրջակա միջավայրի նկատառումներից:</p>	<p>Բնակելի տարածքներում թափված շինարարական աղբը բնակիչների խնդրանքով տեղափոխվում է երկրորդային պահեստավորման տարածքներ: ԱԻ հանրապետական հանձնաժողովը որոշել է, որ տեղափոխման արժեքը վերցվում է կառավարության բյուջեից: Տարանջատված շինարարական աղբը անցնում է պատշաճ մշակում՝ ուղարկվում վառելու տարածքներ, թաղվում հողի տակ և այլն: Խթանվում է վերակառուցման մեջ պողպատի և քարերի կրկին օգտագործումը:</p>
Միջոցառումներ	<p>Պետք է իրականացվի <u>շենքերի ամրացում:</u></p>	<p>Երևան քաղաքի ԱԻՀ ինժեներական ծառայությանը պետք է աղետների կառավարման պլանում <u>նախատեսի շինարարական աղբի հեռացման ընթացակարգը, ներառյալ՝ ծանր տեխնիկա ունեցող մասնավոր ընկերությունների հետ համաձայնագրերը աղետների ժամանակ դրանք պահանջելու և սեփական սարքավորումները պահեստավորելու համար:</u></p>	<p>Երևան քաղաքի ԱԻՀ ինժեներական ծառայությանը պետք է <u>աղետների կառավարման պլանում նախապես պատրաստի շինարարական աղբի հնարավոր հիմնական պահեստավորման տարածքների ցուցակը</u>, որպեսզի հիմնական պահեստավորման տարածքների նշանակումը կատարվի սահուն ձևով:</p>	<p>Երևան քաղաքի ԱԻՀ ինժեներական ծառայությանը պետք է աղետների կառավարման պլանում նախապես <u>պատրաստի շինարարական աղբի հնարավոր երկրորդային պահեստավորման տարածքների ցուցակը և տարանջատման բնութագիրը (ներառյալ՝ պատասխանատու կազմակերպությունը) հատկապես վերամշակման համար:</u></p>	

Հավելված 2 Մեղմացման պլան

Մեղմացում – ներկայիս իրավիճակը և պլանավորման հիմնական կետերը

	Անվանում	Ներկայիս իրավիճակը	Ստորաբաժան	Կարգավորված	Ստացման հնարավորությունը	Հիմնական կետերը
1	Իրագրվածության բարձրացում/ Աղետների կառավարման վերաբերյալ տեղեկատվության տարածում	<p>ՓՕ ստանում է իրականացման պլաններ և քաղաքացիական պաշտպանության պլաններով նախատեսված վարժանքների վերաբերյալ հաշվետվություններ քաղաքապետարաններից, շրջաններից, ընկերություններից և այլն:</p> <p>Իրականացվում են հետևյալ միջոցառումները.</p> <ul style="list-style-type: none"> - Տեղեկատվության և գիտելիքի տրամադրում արտակարգ ալիքի միջոցով շաբաթական երկու կամ երեք անգամ հեռարձակվող հեռուստատեսային ծրագրերի միջոցով և այլն: - Տեղեկատվության և գիտելիքի տրամադրում ՓՕ ինտերնետային կայքի միջոցով: - Լսարանային և դաշտային վարժանքներ, որոնք կազմակերպվում են ՓՕ և այլոց կողմից: - Տարահանման վարժանքներ քաղաքապետարաններում և շրջաններում՝ կապված տարերային և տեխնաժին վթարների հետ: - Ներգրավված կազմակերպությունների անձնակազմի համար կրթության կազմակերպում ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում, ինչպես օրինակ՝ նախարարությունները, քաղաքապետարանները, շրջանները, - Արտակարգ իրավիճակների դասաժամեր բարձրագույն ուսումնական հաստատությունների հիմնական դասացուցակում (համալսարաններ, քոլեջներ և այլն): - Կրթություն մանկապարտեզներում և դպրոցներում՝ կազմակերպված ՓՕ, ՄՊՕ, ՄԱԿ և այլնի կողմից: 	B	2	I	<ul style="list-style-type: none"> - Մեծացնել ՓՕ խթանման գործառույթը (ինչպես օրինակ հիմնական գաղափարը և թիրախը սահմանելը, պլանավորումը իրականացման համար, մոնիթորինգի գործողությունները և արդյունքների վերաբերյալ արձագանքը հաջորդ քայլին անցնելու համար) արդյունավետության բարձրացման նպատակով: - Հատկապես մեծացնել մարդկանց խմբերի կամավոր գործողություններին նպաստելու գործառույթը (շենքի, թաղամասի և այլնի մակարդակով) իրագրվածության բարձրացման և տեղեկատվության տարածման համար իրենց ուղորտների բնորոշ գծերը պարզաբանելուց հետո: - Հստակեցնել կետերը, որոնք պետք է ներառվեն կրթական նյութերի և փաստաթղթերի մեջ և հաստատել/ ապահովել կոնկրետ քայլեր նյութերը և փաստաթղթերը տարածելու համար՝ տարածման հետ կապված հարցերին լուծումներ տալով:

2	<p>Կազմակերպչական համակարգի ամրապնդում և աղետների կառավարմանն ուղղված մարդկանց խմբերի կամավոր գործողությունների ընդլայնում</p>	<p>ԱԻ-ում բնակչության պաշտպանության պատրաստվում են քաղաքապետարաններում և այլուր, իսկ ՓՕ տարածքային ստորաբաժանումներն օժանդակում են պլաններում նախատեսված գործողություններին, որոնցից է հրդեհաշիջման վերաբերյալ ուսուցումը:</p> <p>ՓՕ տարածքային ստորաբաժանումները Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության հետ համատեղ տրամադրում են օժանդակություն հիմնականում տեղական ինքնակառավարման մարմիններին փրկարարական հնարավորությունները զարգացնելու, բժշկական միավորումներ հաստատելու, հրշեջներին օժանդակելու գործում:</p> <p>Շատ աշխատանք չի արվել աղետների կառավարման ոլորտում կամավորական գործողություններ ծավալող մարդկանց խմբերին օժանդակելու գործում, ինչպես օրինակ՝ խմբերի ստեղծումը, գործողությունների պլանավորումը, կազմակերպության համակարգի բարելավումը, գործողություններին խթանելը և այլն:</p> <p>Յուրաքանչյուր ընկերությունում նշանակվել է ԱԻ գծով պատասխանատու անձնակազմ, և իրականացվել են որոշ աշխատանքներ:</p>	D	2	III	<p>ՓՕ խթանման գործառույթի հստակեցում՝ կապված մարդկանց խմբերի և նրանց գործողությունների ընդլայնման հետ: Զուգահեռաբար, ՓՕ և այլ կազմակերպությունների կողմից օժանդակության բովանդակության տրամադրում:</p> <p>Խթանման պլանների տրամադրում աղետների կառավարմամբ զբաղվող մարդկանց խմբեր ստեղծելու համար՝ ուսումնասիրելով քաղաքաշտպանությամբ զբաղվող մարդկանց խմբերի ներկա վիճակը, բոլոր բնակիչներին տեղեկատվությունը տարածելու համար, ինչպես նաև կամավորական գործողություններին և համակարգին նպաստելը բնակիչների պահանջները և կարիքներն իմանալու համար:</p>
3	<p>Համագործակցություն և համատեղ աշխատանք կամավորների հետ</p>	<p>Գոյություն ունեն հասարակական կազմակերպություններ (ՀԿ), որոնք ակտիվ են աղետների կառավարման ոլորտում, բայց նրանց քանակը մեծ չէ: ՓՕ ունի ՀԿ-ների տվյալները:</p> <p>ՓՕ և ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան համագործակցում են ՀԿ-ների հետ կրթության, ուսուցման բնագավառում և այլն:</p> <p>Պետք է լուծվի կամավորներին օժանդակման, նրանց հետ համագործակցության և համատեղ աշխատանքի հարցը:</p>	C	3	II	<p>Պատասխանատու, իրականացնող և առնչվող կազմակերպությունների հստակեցում և ապա կամավորների հետ համագործակցելու և համատեղ աշխատելու հիմնական գաղափարի և ընդհանուր տեսակետի ապահովում:</p> <p>ՀԿ-ների/կամավորների գրանցման խթանման պլանների և կրթության ու ուսուցման ոլորտում համագործակցության ապահովում՝ համատեղ գործողությունների միջոցով:</p> <p>Վերոնշյալ խթանման պլանների վերաբերյալ հարցերի հստակեցում:</p>
4	<p>Հրդեհների բռնկման</p>	<p>Ամբողջ հանրապետությունով իրականացվում են գործողություններ</p>	B	3	II	<p>ՓՕ խթանման գործառույթի մեծացում՝ գազի, էլեկտրականության</p>

	կանխարգելում և վտանգավոր նյութերի անվտանգության բարձրացում	հրդեհների բռնկումները կանխելու ուղղությամբ, որոնք ղեկավարում են ՓՕ հակահրդեհային տեսչությունը: Կառավարությունը որոշել է տեղադրել գազի ազդարարման համակարգեր յուրաքանչյուր տանը, որն ընթացքի մեջ է: Վտանգավոր նյութերով զբաղվող ընկերությունները ձեռնարկում են անվտանգության միջոցներ, իսկ ՓՕ և ՀՀ ԱԻՆ ստորաբաժանումները վերահսկում են այդ գործողությունները:				<p>ընկերությունների և այլնի հետ համատեղ գործողություններին նպաստելու համար:</p> <p>- Հրդեհների բռնկման կանխարգելմանն ուղղված արդյունավետ քայլերի ապահովում, ինչպես օրինակ ստուգումների անցկացում, անվտանգ միջոցների տեղադրում, գազի ազդարարման համակարգի տեղադրում և ապա գործողությունների իրականացման հետ կապված հարցերի հստակեցում:</p> <p>- Իրական և կոնկրետ պլանների ապահովում, ինչպես օրինակ ավտոմատ անջատիչներ և ապա գործողությունների իրականացման հետ կապված հարցերի հստակեցում:</p>
5	Աղետներից խոցելի մարդկանց օժանդակելու քայլեր	Տարահանման վարժություններ իրականացվում են դպրոցներում՝ համաձայն քաղաքապետարանի պլանի, իսկ ՓՕ վերահսկում է այդ գործողությունները: Պետք է լուծվի տարիքով և անաշխատունակ մարդկանց տարահանման հարցը, և այս ծրագրի շրջանակներում կուսումնասիրվեն այդ հարցերի հետ կապված քայլերը:	D	3	III	<p>- Պատասխանատու, իրականացնող և առնչվող կազմակերպությունների հստակեցում, խոցելի մարդկանց օժանդակություն ցուցաբերելու հիմնական գաղափարի և թիրախների սահմանում և ապա կոնկրետ քայլերի իրականացման համար կազմակերպչական շրջանակի մշակում:</p> <p>- Կոնկրետ քայլերի ապահովում, ինչպես օրինակ բազմաբնակարան շենքերում խոցելի մարդկանց օժանդակություն ցուցաբերելը:</p>
6	Նախապատրաստում տնտեսական և արդյունաբերական վերականգնման համար	Արձագանքման առկա պլանը չի պարունակում շատ տեղեկատվություն տնտեսական և արդյունաբերական վերականգնման նախապատրաստման մասին. այդ հարցը կքննարկվի այս ծրագրի շրջանակներում:	E	3	IV	<p>- Վերականգնման պլանի նախապես պատրաստման անհրաժեշտության հաստատում:</p> <p>- Հիմնական պլանի պատրաստում, պատասխանատու կազմակերպության և վերականգնման շրջանակի նախապես սահմանում ու նախապատրաստման համար անհրաժեշտ կազմակերպչական շրջանակի ապահովում՝ համագործակցելով առնչվող կազմակերպությունների հետ:</p>
7	Վերամշակման և քաղաքային տարածքներում բաց տարածությունների ապահովման խթանում	Պետք է լուծվի բնակության վայրերի շրջակայքում տարահանման տարածքների նախատեսումը և ապահովումը. այդ հարցը կքննարկվի այս ծրագրի շրջանակներում տարահանման պլանի նախապատրաստման ժամանակ: Կարծես թե քիչ է հաշվի առնվում աղետների կառավարումը քաղաքային պլանավորման և բաց տարածությունների ապահովման գործում, չնայած դա պետք է հստակեցվի քաղաքաշինության	C	2	I	<p>- Կազմակերպչական շրջանակի ստեղծում, ՓՕ, Քաղաքաշինության նախարարության և Երևանի քաղաքապետարանի միջև խորհրդատվության միջոցով խթանման գործառնությունների աղետների կառավարման տեսանկյունից վերապլանավորումն ու բաց տարածությունների ապահովումը խթանելու համար:</p> <p>- Աղետների կառավարման տեսակետի ապահովում, որը պետք է քննարկվի վերապլանավորման փուլում:</p>

		նախարարության և Երևանի քաղաքապետարանի հետ: Աղետների կառավարման տեսանկյունից բաց տարածությունների և ճանապարհների ապահովումը, ինչպես նաև քաղաքային գործառույթը բավարարմակարողակով ուսումնասիրված չեն:				- Աղետների կառավարման տեսանկյունից բաց տարածության և փողոցների ապահովման, ինչպես նաև քաղաքային գործառույթի զարգացման խթանման հստակ նկարագրում աղետների կառավարման պլանում՝ քաղաքաշինության գլխավոր հատակագծի մեջ տվյալ կետերը արտացոլելու համար:
8	Ճանապարհների բարելավում	Ճանապարհների բարելավման ոլորտում կարծես թե բավարարմակարողակով ուսումնասիրված չէ երկրաշարժի ժամանակ արտակարգ ռեժիմով աշխատող տրանսպորտի կիրառումը, չնայած այդ հարցը պետք է հստակեցվի տրանսպորտի և կապի նախարարության հետ: Մտահոգություն կա, որ երկրաշարժի ժամանակ շենքերի և կամուրջների փլուզվելու պատճառով փողոցները կփակվեն, որը կհանգեցնի ճանապարհային տրանսպորտի անաշխատունակության:	C	2	I	- Կազմակերպչական շրջանակի ստեղծում, որը տրանսպորտի և կապի նախարարությունը, Երևանի քաղաքապետարանն ու ՓԾ քննարկում են կապված երկրաշարժի կառավարման տեսանկյունից ճանապարհների բարելավման հետ: - Երկրաշարժի կառավարման տեսանկյունից ճանապարհների բարելավման անհրաժեշտության մասին հստակ նկարագիր: - Աղետների կառավարման պլանում աղետների կառավարման նպատակով ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհների նախատեսման և բարելավման պլանի ապահովում:
9	Հողօգտագործում աղետի ժամանակ	Կարծես թե գոյություն չունի աղետի ժամանակ հողօգտագործման վերաբերյալ ոչ կանոնակարգ, ոչ էլ պլան, չնայած սա պետք է հստակեցնել քաղաքաշինության նախարարության հետ:	E	2	IV	- Աղետի ժամանակ հողօգտագործման պլանի ձևակերպում, ներառյալ պլան, որով կապահովվի տարահանման (երկրորդային կամ տարածաշրջանային), նյութատեխնիկական, ավերակների կույտերի և դիակների կուտակման համար նախատեսված տարածքներ: - Տարածքի ապահովման խթանման համար անհրաժեշտ շրջանակի առաջարկում, որը ՓԾ կարող է իրականացնել՝ առնչվող կազմակերպությունների հետ համագործակցելով:
10	Շենքերի սեյսմիկ ամրացում	Քաղաքաշինության նախարարությունը հանդիսանում է այս հարցի պատասխանատուն, ներառյալ՝ բյուջետային կարգավորումները: Քաղաքաշինության նախարարությունը կառավարությանն է ներկայացրել ամրացման ենթակա կարևոր շենքերի ցուցակը՝ ելնելով առողջապահության նախարարության կողմից տրամադրված ցուցակից և այլն:	C	1	I	- Շենքերի ամրացմանն ուղղած ընթացիկ գործողությունների արտացոլման համար շրջանակի ներմուծում այս ծրագրի շրջանակներում պատրաստվելիք երկրաշարժի աղետի կառավարման պլանի մեջ: - Ներգրավված պաշտոնական կազմակերպությունների, շինարարական ընկերությունների ասոցիացիայի և այլնի միջև քննարկումների խթանում սեյսմիկ ամրացման ընդունելի մեթոդի

		<ul style="list-style-type: none"> - Չնայած Հայաստանում գոյություն ունի ֆինանսական օժանդակություն, բայց սեյսմիկ մեկուսացման միջոցները տեղադրված են 36 շենքերում, և հայթայթվում է պաշտոնական ֆինանսական օժանդակություն տեղադրման աշխատանքները խթանելու համար: - Շինարարական ստանդարտներն ընդունվել են 1973թ. և բարելավվել վերանայման միջոցով 1994 և 2007թթ: 				<ul style="list-style-type: none"> - տարածման համար՝ հաշվի առնելով արժեքն ու տեխնոլոգիան: - Կարևոր շենքերի ամրացման խթանում՝ վարկի տրամադրմամբ: - Կոլեկտիվ և սեփական տների ամրացման համար անհրաժեշտ վարկերի տրամադրման և սուբսիդավորման ընդունման վերաբերյալ քննարկումներ: - Շինարարական թույլտվության համակարգի հաստատում, որակի վերահսկում շինարարության ժամանակ և նախագծման, կառուցման և իրենց գործողությունների ընդլայնման լիցենզիա:
11	Առարկաների ընկնելու և կահույքի շրջվելու կանխում	<ul style="list-style-type: none"> - Կարծես թե այդ ուղղությամբ ոչ մի քայլ չի ձեռնարկվել, և այդ հարցը պետք է քննարկվի այս ծրագրի շրջանակներում: 	D	3	III	<ul style="list-style-type: none"> - Պատասխանատու, իրականացնող և ներգրավված կազմակերպությունների հստակեցում, նրանց միջև խնդիրների բաշխում և համագործակցություն՝ քայլերը խթանելու համար: - Վերոնշյալ կազմակերպությունների գործողությունների ընդլայնում, ինչպես օրինակ վտանգի վերաբերյալ տեղեկատվության տարածում և կանխարգելման պարզագույն քայլերի ուսուցանում կրթական նյութերի միջոցով, ինչպես նաև վերահսկման գործառույթ մարդկանց խմբերում և ընտանիքներում՝ կանխարգելման միջոցառումներին նպաստելու համար:
12	Վերելակները հետ կապված քայլեր	<ul style="list-style-type: none"> - Երևանի քաղաքապետարանը և արտակարգ իրավիճակների նախարարության Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը ՊՈԱԿ (մեխանիկական ծառայության բաժնի փոխարեն) հանդիսանում են պատասխանատու կազմակերպությունները: - Չնայած վերելակներ տրամադրող ընկերություններն արձագանքում են մեխանիկական անսարքություններին, երկրաշարժի դեմ կոնկրետ քայլեր կարծես թե չեն ձեռնարկվում: 	D	4	V	<ul style="list-style-type: none"> - Պատասխանատու կազմակերպությունների կողմից խրախուսվող միջոցառումների ապահովում: - Երկրաշարժից պաշտպանված տեսակի վերելակների տեղադրում, երբ դրանք նոր տեղադրվում են: - Մարդկանց խմբերի գործողություններին օժանդակում, ինչպես օրինակ աղետի ժամանակ տարահանման/ փրկարարական գործողությունների հաստատում առկա վերելակների համար:
13	Կենսապահովման շինությունների սեյսմիկ ամրացում	<ul style="list-style-type: none"> - Ստեղծվել են շինարարական ստանդարտներ, ներառյալ՝ սեյսմակայունությունը: - Պատասխանատու կազմակերպություններն են Երևանի քաղաքապետարանը, քաղաքաշինության նախարարությունը և էներգետիկայի նախարարությունը: 	D	2	III	<ul style="list-style-type: none"> - Պատասխանատու կազմակերպություններում կենսապահովման շինությունների ամրացման (քայքայվածների վերականգնման) համար պատասխանատու միավորման կամ բաժնի հստակեցում: - Շինությունների վերականգնման արագացման համար անհրաժեշտ

		<p>Մինչև 1988թ. կառուցված շինությունները կառուցվել են հին ստանդարտներով, որոնք չեն համապատասխանում այժմյան սեյսմիկ իրավիճակին: Այդ շենքերն ունեն ցածր սեյսմակայունություն:</p> <ul style="list-style-type: none"> - Բարձրահարկ շենքերի մեծ մասի շահագործման ժամկետներն անցել են: - Ջրամատակարարման խողովակները շատ մաշված են, իսկ լրացուցիչ խողովակների պաշարը սահմանափակ է, որի հետևանքով ջրամատակարարումը խողովակներով (երկրաշարժից վնասվելու դեպքում) երկար ժամանակով դադարեցվում է: 				<p>պլանի ձևակերպում՝ ելնելով կենսաապահովման ցանցի վնասի գնահատումից, ինչպես օրինակ ջրամատակարարման խողովակները և վերականգնման արագացման հետ կապված հարցերի պարզաբանում:</p> <ul style="list-style-type: none"> - Սեյսմիկ ախտորոշման և ամրացման պլանավորման և իրականացման խթանում՝ համաձայն կենսաապահովման հիմնական շինությունների արդյունքի:
14	<p>Տրանսպորտային և գետային շինությունների սեյսմիկ ամրացում</p>	<p>Երկրաշարժից կամուրջների վնասվելու և շենքերի փլուզման պատճառով առաջացած ճանապարհային խցանումները կարծես թե բավարար մակարդակով գնահատված չեն:</p> <p>Հնարավոր է, որ մինչև 1994թ. (երբ հաստատվեցին շինարարական ստանդարտները) կառուցված կամուրջները սեյսմակայուն չեն:</p>	C	3	II	<p>Կազմակերպչական շրջանակի հստակեցում, որպեսզի պատասխանատու կազմակերպությունը (քաղաքաշինության նախարարությունը) կարողանա շարունակել միջոցառումների պլանավորումն ու իրականացումը՝ համագործակցելով ՓՓ, տրանսպորտի և կապի նախարարության և Երևանի քաղաքապետարանի հետ շինությունների սեյսմակայունությունը բարձրացնելու համար՝ հաշվի առնելով վնասի գնահատման և աղետների դեպքում կիրառվող փոխադրումների պլանի արդյունքը:</p> <ul style="list-style-type: none"> - Աղետների կառավարման համար ռազմավարական ճանապարհների նախատեսում՝ հաշվի առնելով երկրաշարժի դեպքում կիրառվող տրանսպորտը և ապա ճանապարհային խցանումները կախելու համար անհրաժեշտ պլանի մշակում, ինչպես օրինակ՝ սեյսմիկ ախտորոշման կանոնակարգում և ռազմավարական ճանապարհների վրա կամուրջների ամրացում: - Վերոնշյալ պլանի վերաբերյալ միջոցառումների իրականացման հետ կապված հարցերի պարզաբանում: - Գետային կառույցների սեյսմիկ ախտորոշման կանոնակարգման համար անհրաժեշտ պլանի մշակում, որոնք կարող են տուժել երկրաշարժից և կառույցների սեյսմիկ ամրացում, ապա միջոցառումների իրականացման հետ

15	<p>Հենապատերի և կողմնային պատերի փլուզումների կանխարգելում</p>	<p>Պատերը նախատեսված են համաձայն շինարարական նորմերի, և Երևանի քաղաքապետարանն ու քաղաքաշինության նախարարությունը հանդիսանում են պատասխանատու կազմակերպությունները, իսկ տրանսպորտի և կապի նախարարությունը պատասխանատվություն է կրում ճանապարհների երկարությամբ կառուցված պատերի համար:</p> <p>Կարծես թե չեն իրականացվում պարզաբանումներ կապված պատերի՝ ստանդարտներին համապատասխանելու կամ տարիք հետ:</p>	D	4	V	<p>կապված հարցերի պարզաբանում:</p> <ul style="list-style-type: none"> - Վտանգավոր պատերի հայտնաբերում, որոնք կարող են վնաս պատճառել և ապա դրանց վերահսկման համակարգի հստակեցում: - Վտանգավոր պատերի համար հնարավոր միջոցառումների ապահովում:
16	<p>Մշակույթային սեփականության սեյսմիկ ամրացում</p>	<p>Մշակույթի նախարարությունը հանդիսանում է պատասխանատու կազմակերպությունը, և կարծես թե երկրաշարժի դեմ միջոցներ ձեռնարկվում են նախարարության կողմից:</p>	C	4	V	<p>Մշակույթի նախարարության վերահսկողության տակ գտնվող շինությունների վերաբերյալ հիմնական գաղափարի և պլանների պարզաբանում և ապա միջոցառումների խթանման պլանի ապահովում, որպես երկրաշարժի աղետի կառավարման պլանի մի մաս:</p>
17	<p>Սողանքների և ավերակների հոսքերի կանխարգելում</p>	<p>Քաղաքաշինության և արտակարգ իրավիճակների նախարարությունները հանդիսանում են պատասխանատու կազմակերպությունները, իսկ տրանսպորտի և կապի նախարարությունը պատասխանատու է սողանքների համար, որոնցից կարող են տուժել տրանսպորտային միջոցները:</p> <p>Սողանքային գոտիները պարզաբանված են, բայց կարծես թե երկրաշարժերի հետ կապված միջոցառումները պատշաճ ձևով չեն արվել:</p>	D	3	III	<p>Սողանքներից և ավերակների հոսքից առաջացած յուրաքանչյուր վտանգավոր տարածքի համար պատասխանատու կազմակերպության պարզաբանում:</p> <ul style="list-style-type: none"> - Վտանգավոր տարածքներով զբաղվելու համար հիմնական գաղափարի հաստատում պատասխանատու կազմակերպությունների միջև քննարկումների միջոցով, որոնք են քաղաքաշինության, արտակարգ իրավիճակների ու տրանսպորտի և կապի նախարարությունները: - Տիպիկ միջոցառումների ապահովում, որպեսզի հնարավոր լինի ձեռնարկել կոնկրետ իրավիճակին համապատասխանող միջոցառում:
18	<p>Սցենարային երկրաշարժերի վերաբերյալ հետազոտություն և ուսումնասիրություն</p>	<p>ՄՊԾ հանդիսանում է պատասխանատու կազմակերպությունն երկրաշարժի կանխատեսման, իսկ ՓԾ՝ իրավիճակի գնահատման համար:</p> <p>Կազմվել է սեյսմիկ աղետի կառավարման պլան յուրաքանչյուր մարզի համար:</p> <p>Գառնիի էպիկենտրոնի երկրաշարժը համարվում է Երևանի համայնքին ամենաշատ վնաս պատճառածը:</p>	B	3	II	<p>Վնասի գնահատման համար կիրառվելիք սցենարային երկրաշարժի հաստատում՝ ելնելով առկա տվյալների վերանայման և ակտիվ խզվածքների խրամատային հետազոտության արդյունքներից:</p> <p>Հետազոտման պլանների և ապագայում հետազոտման ու ուսումնասիրության ընդլայնման հարցերի պարզաբանում:</p>

19	Վնասի գնահատման վերաբերյալ հետազոտություն և ուսումնասիրություն	ՓԾ և ՍՊԾ հանդիսանում է պատասխանատու կազմակերպությունը: Իրականացվել է շենքերին և մարդկանց պատճառված վնասի գնահատում, և կազմվել են տարահանման և այլ պլաններ՝ հաշվի առնելով վնասի գնահատումը:	B	2	I	- 250 մետր քառակուսի բջջի վնասի մանրամասն գնահատման իրականացում՝ ելնելով շենքի հետազոտության արդյունքներից և բնակչության վերաբերյալ տվյալներից, ինչպես նաև հաշվի առնելով գրունտի սեյսմիկ տատանման հաշվարկները: - Ապագայում վերանայման ենթակա հարցերի և պլանների պարզաբանում և լուծումների ապահովում:
----	--	---	---	---	---	---

Առաջընթաց	Կարևորություն	Առաջնահերթությունը և հիմնական գաղափարները
A: Շատ լավ արված	1: Շատ բարձր	I: Ապահովել բազմակողմանի և կոնկրետ քայլեր, ներառյալ պատասխանատու կազմակերպությունների խթանման գործառնությունները մեծացման միջոցառումներ առկա և ավելի արդյունավետ քայլերին նպաստելու համար և ապա ապահովել հնարավոր լուծումներ այն հարցերի համար, որոնք անհրաժեշտ են արագ իրականացման քայլերն ապահովելու համար:
B: Լավ արված	2: Բարձր	II: Ապահովել պատասխանատու կազմակերպությունների խնդիրը և հիմնական գաղափարը/ ընդհանուր պատկերը, ինչպես նաև արդյունավետ քայլերը վերջիններիս նպաստելու համար և ապա հստակեցնել գործողությունների արագ իրականացման համար անհրաժեշտ հարցերը:
C: Արված	3: Միջին	III: Պարզաբանել պատասխանատու, իրականացնող և առնչվող կազմակերպություններն ու ապահովել գործողությունների հիմնական գաղափարը և գործողությունները խթանելու համար անհրաժեշտ կարևոր քայլերը:
D: Քիչ արված	4: Ցածր	IV: Ընկալել հարցի կարևորության և անհրաժեշտության վերաբերյալ գաղափարը, ապա հստակեցնել պատասխանատու, իրականացնող և առնչվող կազմակերպություններն ու նրանց խնդիրները և ապահովել կարևոր միջոցառումների շրջանակը:
E: Չարված	5: Շատ ցածր	V: Հստակեցնել պատասխանատու, իրականացնող և առնչվող կազմակերպությունները, հաստատել կազմակերպչական համակարգը, այսինքն՝ որ պատասխանատու կազմակերպությունն է վերահսկում իրականացնող կազմակերպությունների կողմից կատարվող գործողությունները, և ապա ընդլայնել անհրաժեշտության իրազեկվածությունը:

*: Առաջնահերթություն I և II-ի կետերն ընտրվել են որպես առաջնահերթ կետեր:

Առաջընթաց	Կարևորություն
A: Շատ լավ արված	1: Շատ բարձր
B: Լավ արված	2: Բարձր
C: Արված	3: Միջին
D: Քիչ արված	4: Ցածր
E: Չարված	5: Շատ ցածր

		Կարևորություն				
		1	2	3	4	5
Առաջընթաց	A					
	B		1, 19	4, 18		
	C	10	7, 8	3, 14	16	
	D		2, 13	5, 11, 17	12, 15	
	E		9	6		

Հավելված 3 Երևանի բնակչության տարահանման պլան

ՊԼԱՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ**

Գլուխ I. Ընդհանուր դրույթներ

Բաժին 1. Պլանի սահմանումը և նպատակը

1. Երևան քաղաքի ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության տարահանման պլանը (այսուհետ՝ Պլանը) սահմանում է երկրաշարժի ժամանակ Երևան քաղաքում բնակչության տարահանման հիմնական խնդիրները, կազմակերպումը և միջոցառումների իրականացման կարգը:
2. Պլանի նպատակը տարահանման մարմինների, ներգրավված պաշտոնատար անձանց գործունեության, բնակչության տարահանման կազմակերպման, կառավարման և միջոցառումների ծավալները, ուժերը և միջոցները որոշելն է, ինչպես նաև ելնելով կանոնակարգված փաստաթղթերից և մեխանիզմից, հանրությանը ծանուցման միջոցով, արտակարգ իրավիճակների ժամանակ տարահանվողների պատշաճ գործողությունների իրականացումն է:

Բաժին 2. Պլանում օգտագործվող հիմնական հասկացությունները

3. Պլանում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝
 - 1) վտանգավոր տարածք՝ տեղանք կամ առանձին բնակավայր, օբյեկտ, որտեղ արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացել կամ կարող են առաջանալ մարդկանց կյանքի, առողջության և բնականոն կենսագործունեության վրա բացասաբար ազդող գործոններ,
 - 2) անվտանգ տարածք՝ վտանգավոր տարածքից դուրս գտնվող, տեղի և տարահանվող բնակչության կենսաապահովման, ինչպես նաև կենդանիների և նյութական արժեքների տեղաբաշխման համար նախապատրաստված տարածք,
 - 3) տարահանում՝ վտանգավոր տարածքից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխում ու տեղաբաշխում.
 - 4) տարահանման հանձնաժողով (այսուհետ՝ ՏՀ)՝ համապատասխան ղեկավարի որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբ, որը կազմակերպում ու ղեկավարում է սովյալ տարածքի բնակչության և կազմակերպությունների տարահանման միջոցառումները,
 - 5) տարահանման հավաքակայան (այսուհետ՝ ՏՀԿ)՝ տարահանվող բնակչության ընդունման և հաշվառման հավաքատեղ,
 - 6) ընդունման հավաքակայան (այսուհետ՝ ԸՀԿ)՝ հավաքատեղի, որտեղ կատարվում են տարահանված բնակչության ընդունումը, հաշվառումը և բաշխումը,
 - 7) ժամանակավոր տեղակայման կետ (այսուհետ՝ ԺՏԿ)՝ տարահանված բնակչության կարճաժամկետ տեղակայման համար նախատեսված օբյեկտ կամ տարածք,

- 8) ժամանակավոր կացարան (այսուհետ ԺԿ)՝ տարահանված և անօթևան բնակչության տեղաբաշխման համար ազատ, կանաչ տարածքներում կամ նմանատիպ վայրերում ստեղծված վրանախն կամ տնակային ավանների տեքով տարածքներ:
- 9) երկարատև բնակության վայր (այսուհետ ԵԲՎ)՝ տարահանված բնակչության կենսաապահովման և երկարատև տեղակայման համար նախատեսված օբյեկտ,
- 10) նյութատեխնիկական մատակարարման կետ՝ տարահանված բնակչության տեղաբաշխման վայրերին մոտ ստեղծված տարածք՝ նախատեսված բնակչության և միջոցառումների բազմակողմանի ապահովման համար, որը հազեցված է անհրաժեշտ ուժերով և միջոցներով,
- 11) տարահանվողներին օժանդակություն ցուցաբերող մարմիններ՝ տարահանվածների ընդունման, տեղաբաշխման ու բազմակողմանի ապահովման ուղղությամբ խնդիրներ ունեցող մարմիններ՝ ՏՀԿ-եր, ԺՏԿ-եր, ԵԲՎ-եր և ԺԿ-եր,
- 12) տարահանման վայրի միավոր (այսուհետ ՏՎՄ)՝ ՏՀԿ-ից 500մ շառավիղով տարածք, ուր տուժած բնակչությունը տարահանվում է պաշտոնական օգնություն ստանալու համար,
- 13) տարահանման երթուղի՝ տարահանվող բնակչության բնակավայրը տեղաբաշխման բնակավայրին միացնող ճանապարհ (ճանապարհահատված),
- 14) պաշարների հոսք՝ տարահանման միջոցառումների բազմակողմանի ապահովման համար նախատեսված սննդամթերքի, նյութատեխնիկական, ջրի և այլ պաշարների անխափան մատակարարման, պահպանման ժամկետներից ելնելով շրջանառության կազմակերպման և անհրաժեշտության դեպքում համալրման կազմակերպում:

Բաժին 3. Պլանի իրավական հիմքը

4. Պլանը մշակված է՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունով, «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և բնագավառը կարգավորող այլ իրավական ակտերով:

Բաժին 4. Պլանում ներգրավվող մարմինները և դրանց գործառույթները

5. Պլանում ներգրավվում են՝
 - 1) տարահանման հանձնաժողովը,
 - 2) տարահանվողներին օժանդակություն ցուցաբերող մարմինները,
 - 3) հիմնարկ-ձեռնարկությունները, կազմակերպությունները և ընկերությունները (այսուհետ՝

օբյեկտներ):

6. Տարահանման հանձնաժողովները ստեղծվում են՝
 - 1) Երևան քաղաքի տարահանման հանձնաժողովը՝ քաղաքապետի որոշմամբ,
 - 2) օբյեկտի տարահանման հանձնաժողովը՝ օբյեկտի ղեկավարի հրամանով:
7. Տարահանման հանձնաժողովի նախագահ է նշանակվում Երևան քաղաքում՝ քաղաքապետի առաջին տեղակալը, իսկ օբյեկտներում՝ ղեկավարի տեղակալը (այդպիսին չլինելու դեպքում՝ տվյալ ղեկավարի կողմից նշանակված անձը):
8. Տարահանման հանձնաժողովները գործում են իրենց կանոնադրությունների համաձայն, որոնք հաստատվում են հանձնաժողովները ստեղծող մարմինների ղեկավարների կողմից: Կանոնադրությունների օրինակելի ձևերը մշակում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը:
9. Երևան քաղաքի տարահանման հանձնաժողովը ստեղծվել է քաղաքապետի 03.03.2010 թ. թիվ 941-Ա որոշմամբ, որով և սահմանում է Երևան քաղաքի ՏՀ-ի կազմակերպչական կառուցվածքը:
10. Երևան քաղաքի տարահանման հանձնաժողովի գործառույթները բերված են հավելված 1-ում:

Գլուխ II. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Բաժին 5. Տարահանման քաղաքականություն

11. Տարահանումը բնակչության պաշտպանության հիմնական ձևերից մեկն է այնպիսի արտակարգ իրավիճակի առաջացման կամ դրանց անմիջական սպառնալիքի դեպքում, որոնց հետևանքով որոշ տարածքներում (բնակավայրերում, օբյեկտներում) կարող են առաջանալ մարդկանց կյանքի, առողջության և բնականոն կենսագործունեության վրա բացասաբար ազդող գործոններ: Այն իրականացվում է վտանգավոր տարածքներից անվտանգ տարածքներ մարդկանց ժամանակավոր տեղափոխման և տեղաբաշխման միջոցով՝ համաձայն ստեղծված իրավիճակի, տեղաբաշխման վայրերի ծավալների ու պատրաստականության, կացարանների կառուցման ժամանակահատվածի և այլ պայմանների:
12. Բնակչության տարահանում նախատեսվում է՝
 - 1) Ուժեղ երկրաշարժի կամ հետցնցումների հետևանքով ավերված, սպառնալիքի տակ գտնվող և բնակվելու համար վտանգավոր բնակավայրերից, տարածքներից:
 - 2) Երկրորդային աղետների, ինչպես նաև օրինակ՝ Երևանյան լիճ ջրամբարի փլուզման

հետևանքով առաջացած վարարման, սողանքների, քիմիապես վտանգավոր որյեկտներում վթարի հետևանքով առաջացած քիմիական աղտոտվածության, ՀԱԷԿ-ի վթարի հետևանքով առաջացած ռադիոակտիվ աղտոտվածության, հրդեհների, պայթյունների կամ թունավոր նյութերի տրանսպորտային փոխադրումների ժամանակ տեղի ունեցած վթարի պատճառով վտանգավոր դարձած կամ սպառնալիքի տակ գտնվող տարածքներից:

3) Որպես սեյսմիկ աղետի հետևանք համաճարակների, հիգենայի վատ պայմանների տարածման պատճառով վարակավտանգ դարձած տարածքներից:

13. Տարահանման գործողությունների պլան-ժամանակացույցը (գործողություններ և ժամկետներ, պատասխանատու կազմակերպություններ և այլն) բերված է հավելված 2-ում:
14. Աղետների կամ դրանց սպառնալիքի դեպքում, ինչպես օրինակ քիմիական վտանգը, պայթյունը, հրդեհը, ռադիոակտիվ վտանգը, սողանք և տրանսպորտային փոխադրումները, տարահանումը պետք է իրականացվի համաձայն յուրաքանչյուր աղետի համար մշակված տարահանման համապատասխան հաշվարկների՝ հաշվի առնելով կոնկրետ ստեղծված իրավիճակը, ազդեցությունը և բնական պայմանները (կլիմայական, օդերևութաբանական և այլն): տարահանվողների թվի հաշվարկման արդյունքները քիմիական վտանգի և պայթյունի հրդեհի դեպքում բերված են հավելված 4-ում:
15. Երկրաշարժից հետո տարահանվածների իրական թիվը հաշվարկվում է կախված բնակավայրում տիրող իրավիճակից՝ ավերված շինությունների թվից, բնակչության հնարավորություններից և այլն, նախահաշվարկները հավելված 5-ում:
16. Տարահանման միջոցառումների ապահովումը և բնակչությանը օժանդակության տրամադրումը իրականացվում է համաձայն ՀՀ օրենքների և Երևանի քաղաքապետարանի կողմից սահմանված կանոնակարգերի, ըստ նախապես իրականացված հաշվարկների, որոնք բերված են «Կենսապահովման պլանում»:

Բաժին 6. Տարահանման ընդհանուր ընթացակարգը

17. Տարահանումը կարող է իրականացվել 3 փուլով:

- 1) Առաջին փուլում բնակչությունը վտանգավոր տարածքից տարահանվում է անվտանգ տարածքում գտնվող ՏՀԿ, որպեսզի տարահանվողները հանդիպեն իրենց ընտանիքի անդամներին, զբանջվեն և ստանան տեղեկատվություն հետագա գործողությունների և առաջին օգնության վերաբերյալ,
- 2) Երկրորդ փուլում բնակչությունը տարահանվում է ՏՀԿ-ից ԺՏԿ-եր որպեսզի կարողանան

ստանալ պաշտոնական օգնություն կարճաժամկետ բնակության համար:

3) Երրորդ փուլում տնական բնույթի արտակարգ իրավիճակների կամ մշտական բնակության վայր վերադառնալու անհնարինության դեպքում իրականացվում է բնակչության տեղափոխում ԺՏԿ-ներից ԺԿ-եր և ԵԲՎ-ներ, որպեսզի տարահանվողները կարողանան ստանալ պաշտոնական օգնություն երկարատև բնակության համար:

18. Տարահանվողների ընդունման յուրաքանչյուր կատեգորիայի համար հեռավորության չափանիշը, ծառայության տևողությունը, օգնությունը բերված է հավելված 2-ում: ՏՀԿ և ԺՏԿ հնարավոր վայրերը ընտրվում են նախապես: Յուրաքանչյուր ՏՀԿ գործառույթները և գործունեությունը հետևյալն են՝

1) ՏՀԿ-ում բնակչությունը հավաքվում է, գրանցվում և տեղաբաշխվում ԺՏԿ-ներ, եթե վերջիններիս անվտանգությունը հաստատվել է: Մեկ ՏՎՄ-ի համար նախատեսված է մեկ ՏՀԿ, որպեսզի հեշտանա տուժած բնակչության ընդունումը և անհրաժեշտ օգնության ցուցաբերումը: Կորած մարդկանց մասին հաղորդագրության գրանցումը և վերջիններիս վերաբերյալ տեղեկատվությունը նույնպես իրականացվում է ՏՀԿ-ում: Մարդկանց, ովքեր որոշում են տարահանվել սեփական որոշմամբ առանց պաշտոնական օգնության, ևս խորհուրդ է տրվում տեղեկացնել ՏՀԿ սեփական տարահանման մասին, որպեսզի պաշտոնական տեղեկատվությունը, օրինակ՝ վնասների փոխհատուցման վերաբերյալ հայտարարությունը, հասանելի լինի բոլորին: Հաշվառումը օգտագործվում է նաև տարահանված շենքերում անհարկի որոնողական աշխատանքներից խուսափելու համար:

2) ԺՏԿ-ում տրամադրվում է պաշտոնական օգնություն տրամադրելու և կարճաժամկետ բնակության համար: Հիմնական ԺՏԿ-ներ են հանդիսանում դպրոցների տարածքները, մարզադաշտերը և վարչական շինությունները: Սկզբունքորեն մեկ տարահանվողի համար ԺՏԿ-ում հատկացվում է 1մ²: ԺՏԿ-ում ծավալվող վրանների միջոցով կարող են ստեղծվել լրացուցիչ տեղեր: Այլ տարածքներից տարահանման դեպքում ՏՀԿ-երը որոնց անվտանգությունը հաստատված է, նույնպես կարող են օգտագործվել որպես ԺՏԿ:

3) ԵԲՎ-ում տրամադրվում են կացարաններ և օժանդակություն երկարատև բնակության համար, ինչպես օրինակ՝ առողջարանները, պոլիկլինիկաները, հանգստյան կենտրոնները, պանսիոնատները, տուրիստական բազաները, հյուրանոցները և այլն նախատեսված կառավարության 919-Ն որոշման հավելված 16-ով:

19. Բնակչությունը կարող է տարահանվել հետիոտն շարասյուններով, ավտոշարասյուններով կամ տրանսպորտային այլ միջոցներով: Տարահանումը դեպի ՏՀԿ և ԺՏԿ պետք է իրականացվի ոտքով: Փոխադրումը ԵԲՎ և ԺԿ, տարահանման հանձնաժողովի կարգավորմամբ, կարող է իրականացվել ավտոշարասյուններով: Անձնական մեքենաների օգտագործումը չի խրախուսվում, քանի որ այն կարող է խոչընդոտել տուժածների փոխադրմանը, որոնողական

գործողություններին, օժանդակող նյութերի տրամադրմանը և այլն:

20. Որպես տարահանման հիմնական երթուղիներ օգտագործվում են ավելի քան 8մ լայնություն ունեցող ճանապարհները, բացառությամբ ՏՀԿ տանող ճանապարհը: Տարահանման երթուղիներն ընտրվում են նախապես և մշտապես իրականացվում են դրանց բարեկարգում, բացատրական ցուցակների տեղադրում, և հարակից շինությունների ամրացում: Շենքերի կառուցումը և վերանորոգումը երթուղիների երկայնքով պետք է իրականացվի խիստ հսկողության ներքո և ապահովի անցանելիության առավելագույն մակարդակը բոլոր շինությունների փլուզման դեպքում: Տարահանման ժամանակ երթուղիներն ընտրվում են ելնելով տիրող իրավիճակից:
21. Հիմնական տարահանման երթուղիների անանցանելիության պատճառով, շարասյան կամ վերադաս ղեկավարի որոշումով դրանք փոխարինվում են երկրորդային երթուղիներով կամ շրջանցիկ ճանապարհներով:
22. Անօթևան մնացած բնակչությունը կացարաններով ապահովվում է հետևյալ ձևերով՝
 - 1) Ապակենտրոնացված տեղաբաշխման դեպքում՝ անօթևան բնակչությանը տեղավորում են բնակվելու համար պիտանի տեղերում՝ իրենց սեփական տներում, համատեղ կամ առանձին,
 - 2) Ճամբարներում տեղավորման դեպքում՝ անօթևան բնակչությանը տեղավորում են վրաններում՝ հիմնելով վրանային կամ տնակային ճամբարներ,
 - 3) Կոլեկտիվ տեղավորումն իրականացվում է անօթևան բնակչությանն ավերվածությունների գոտուց դուրս գտնվող հասարակական շենքերում տեղավորման միջոցով, որի համար նախատեսվում է ավերված գոտիներից բնակչության տարահանում անվտանգ տարածքներ:
23. Երևան քաղաքի անօթևան բնակչության կացարաններով ապահովումը և տարահանումը կազմակերպվում են ըստ վարչական տարածքների: Յուրաքանչյուր վարչական տարածքում ստեղծվող բնակչության պաշտպանության համակարգման կենտրոններին կից ստեղծվում են բնակչության տարահանման միջանկյալ հավաքակայաններ, որտեղից բնակչությունը տեղափոխվում է ընդունող բնակավայր:

Բաժին 7. Նախապատրաստական գործողություններ

24. ՏՀԿ նախապատրաստումն իրականացվում է յուրաքանչյուրի ղեկավարի կողմից (հիմնականում դպրոցի տնօրեններ) տարահանման հանձնաժողովի ղեկավարման և վերահսկման ներքո, նախապատրաստումը ներառում է՝
 - 1) Տարահանման հանձնաժողովի կողմից հաստատված քաղաքականության իրականացում և համագործակցություն առնչվող կազմակերպությունների հետ:
 - 2) Ներքին ղեկավարման կազմակերպում և հետևյալ գործողությունների համար պատասխանատու անգնակազմի որոշում,

- ա) դրսից, օրինակ՝ տարահանման հանձնաժողովից և ԺՏԿ-ից, տեղեկատվության ստացում և տարածում, ինչպես նաև տեղեկատվության փոխանակման գրառում,
- բ) տարահանվողների և կորած անձանց վերաբերյալ գրանցամատյանների ստեղծում և գրառումների վերահսկում,
- գ) ջրի և այլնի բաժանում,
- դ) առաջին օգնության և սանիտարական պայմանների ապահովում,
- ե) հասարակական կարգի, անվտանգության պահպանում,
- զ) հակահեղեհային միջոցառումներ և հրդեհաշիջում:

3) Տարահանվածների և ղեկավարման համար հավանական սենյակների կամ տարածքների ընտրություն:

4) ՏՀԿ ներսում և դրսում, հաղորդակցության համար սարքերի, նյութերի նախապատրաստում, պահպանում կամ ձեռքբերման կազմակերպում:

5) Դեղորայքի, ջրի և այլնի պահեստավորում և թարմացում:

25. ԺՏԿ-ների նախապատրաստումն արվում է ԺՏԿ ղեկավարի կողմից, ով նշանակվում է տարահանման հանձնաժողովի կողմից: ԺՏԿ-ի նախապատրաստումը ներառում է հետևյալը՝

1) Տարահանման հանձնաժողովի կողմից հաստատված քաղաքականության իրականացում և համագործակցություն առնչվող կազմակերպությունների հետ:

2) Ներքին ղեկավարման կազմակերպում և հետևյալ գործողությունների համար պատասխանատու անգնակազմի որոշում,

ա) դրսից, օրինակ՝ տարահանման հանձնաժողովից և ՏՀԿ-ից, տեղեկատվության ստացում և տարածում, ինչպես նաև տեղեկատվության փոխանակման գրառում,

բ) տարահանվողների և կորած անձանց գրանցման ուղղությամբ հաղորդակցություն և կարգավորում ՏՀԿ-ի հետ,

գ) ԺՏԿ ներսից և դրսից հարցումների, պահանջների, բողոքների հաղորդագրությունների ստացում և կանոնակարգում,

դ) տարածքի հատկացում յուրաքանչյուր տարահանվածի համար և առնչվող հարցերի կարգավորում,

ե) խորհրդատվություն բժշկական և հոգեբանական հարցերի ուղղությամբ և համագործակցություն բժշկական հաստատությունների հետ հիվանդների հետ վարվեցողության թեմայով,

զ) ջրի, սննդի և օժանդակող այլ նյութերի հայցում, ստացում, բաշխում,

է) սոցիալական անվտանգության և հակահրդեհային պաշտպանության ապահովում,

ը) սանիտարական պայմանների վերահսկում,

թ) կամավորների ընդունում և բաշխում,

ժ) գործողությունների գրառում և դրա պահպանում,

- 3) Տարահանվողների համար նախատեսված վրանների վայրերի, ինչպես նաև գործողությունների իրականացման և ղեկավարման սխեմատիկ պլանի պատրաստում:
 - 4) ԺՏԿ ներսում, ինչպես նաև դրսում, հաղորդակցության համար սարքերի, նյութերի նախապատրաստում, պահպանում կամ ձեռքբերման կազմակերպում:
 - 5) Պահեստավորված նյութերի կառավարում և թարմացում ու օժանդակող նյութերի ձեռքբերման ընթացքի հստակեցում:
26. Յուրաքանչյուր ԵԲՎ-ում և ԺԿ-ում պատրաստվածության բարձրացման ուղղությամբ մշտապես իրականացվում են նախապատրաստական միջոցառումներ, որոնք ներառում են քաղաքաշինական, պլանավորման, վերահսկողական և խրախուսման խնդիրներ: Այդ միջոցառումները հետևյալն են`
- 1) Տարահանման երթուղիների բարելավում` իրականացվում են ռազմավարական ճանապարհների սահմանում, իրականացվում է տարահանման երթուղիների օպտիմալացում, տեխնիկական վիճակի և թողունակության մշտական բարելավում և պահպանում:
 - 2) Տարահանման երթուղիների երկայնքով շենքերի ամրացում` իրականացվում է շենքերի ուսումնասիրություն, վտանգավոր հատվածների ապամոնտաժում կամ ամրացում, դրանց փլուզումներից խուսափելու և երթուղիների անցանելիությունն ապահովելու համար:
 - 3) Տարահանման վայրերի համար բաց տարածքների նաժապատրաստում` իրականացվում է առկա ազատ (կանաչ) տարածքների ուսումնասիրություն և այդ վայրերում տարահանված բնակչության տեղաբաշխման պլանավորում:
 - 4) Տարահանման վայրերում հարմարությունների բարելավում` պլանավորված տարածքներում ուսումնասիրվում և միջոցներ են ձեռնարկվում բնակչության տեղաբաշխման և կենսաապահովման պայմանների բարելավման և պահպանման համար:
 - 5) Անձնակազմի ուսուցում և կրթություն` խնդիրների սահուն և պատշաճ իրականացման համար անձնակազմը ուսուցում և կրթություն է ստանում` համաձայն քաղաքաշտպանության տարեկան պլան-ժամանակացույցի:
27. Բոլոր օբյեկտներում տարահանման մանրամասն պլանը պետք է պատրաստվի նախապես և թարմացվի ամեն տարի: Պլանը կարող է լինել քաղաքաշտպանության պլանի մի մասը և պետք է ներառի`
- 1) Բնակչության տարահանման անցկացման կարգն ու ժամկետները, տարահանման մարմինների և տարահանման երթուղիների համար տրամադրվող ուժերն ու միջոցները,

- 2) Աշխատանքներ տարահանվողներին օժանդակություն ցուցաբերող մարմիններում և տարահանման երթուղիներում,
- 3) Տարահանման հաշվարկը յուրաքանչյուր տրանսպորտի տեսակի ու տարահանման երթուղու համար,
- 4) Տարահանվողների տեղաբաշխման կազմակերպման և սնունդով, ջրով ու անհրաժեշտ նյութերով ապահովման կանոնակարգը,
- 5) Նյութական և մշակութային արժեքների դուրսբերման կարգը:

Բաժին 8. Հասարակության իրազեկվածությունը տարահանման վերաբերյալ

28. Քանի որ ուժեղ երկրաշարժի վնասներն այնքան մեծ են, որ պաշտոնական օգնությունը չի հասնում բոլոր տուժածներին, բնակչությունը պետք է ձեռնարկի միջոցառումներ սեփական որոշմամբ: Պատշաճ գործողություններ ձեռնարկելու համար անհրաժեշտ է բարձրացնել բնակչության իրազեկվածությունը և գիտելիքները հետևյալ ձևերով տեղեկատվության տարածման միջոցով`

- 1) Տարահանման հանձնաժողովը կանոնակարգում և կազմակերպում է անհրաժեշտ տեղեկատվության բաշխումը բնակչությանը` համագործակցելով արտակարգ իրավիճակների, կրթության և գիտության նախարարությունների և Երևանի քաղաքապետարանի կրթության վարչության հետ:
 - 2) Տրամադրվելիք տեղեկատվության հիմնական կետերը բերված են:
 - 3) Անհրաժեշտ տեղեկատվությունը տարածվում է ՓԾ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի, արտակարգ ալիքի, դպրոցների, ընկերությունների և լրատվական (հեռուստատեսություն, ռադիո, համացանց, թերթ, ամսագիր, ազդագիր) և այլ միջոցով:
29. Տարահանման վերաբերյալ հանրության կրթությունը և ուսուցումը ղեկավարվում է արտակարգ իրավիճակների նախարարության կողմից: Երևանի քաղաքապետարանը, Երևանի վարչական շրջանները, դպրոցները, ընկերությունները և առնչվող այլ կազմակերպությունները պատրաստում են պլաններ բնակչության պաշտպանության հարցերի վերաբերյալ` ներառյալ կրթությունը և ուսուցումը: ՓԾ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան, արտակարգ ալիքը, կրթության և գիտության նախարարությունը և այլ կազմակերպություններ պատրաստում են կրթական նյութեր:

Գլուխ III. Բնակչության տարահանման կազմակերպումն ու իրականացումը

Բաժին 9. Տարահանվողներին օժանդակություն ցուցաբերող մարմինների ծավալումը

30. Ուժեղ երկրաշարժի դեպքում տարահանվողներին օժանդակություն ցուցաբերող մարմինները ստեղծվում են հետևյալ ձևով՝
- 1) Որպես կանոն տարահանվողներին օժանդակություն ցուցաբերող մարմինների ստեղծումը որոշվում է տարահանման հանձնաժողովի ղեկավարի կողմից:
 - 2) Համաձայն որոշման տարահանվողներին օժանդակություն ցուցաբերող մարմնի պետը կազմակերպում է անհրաժեշտ բոլոր միջոցառումները համապատասխան մարմնի ստեղծման և գործարկման համար:
 - 3) Այն դեպքում, երբ տարահանման հանձնաժողովի ղեկավարի կողմից տրվում է «Տեղեկատվություն» բնակչությանը արտակարգ իրավիճակի սպառնալիքի վերաբերյալ, ՏՀԿ ղեկավարը և անձնակազմը պետք է սկսի ծավալումը: Այդ դեպքում տարահանման որոշում ընդունում է ինքը բնակիչը: Նույնիսկ եթե ՏՀԿ ծավալումը չի ավարտվել, բնակչության ընդունումը չպետք է մերժվի: Տարահանման «Խորհուրդ» տալուց հետո պետք է սկսվի ԺԿԿ ծավալումը, իսկ «Հրամանի» հայտարարելուց հետո պետք է պատրաստականության բերել ԵԲՎ-երը, ԺԿ-երի համար նախատեսված վայրերը և անմիջապես ծավալել օժանդակող համակարգը:
 - 4) Տարահանվողներին օժանդակություն ցուցաբերող մարմիններ ծավալելուց առաջ համապատասխան պատասխանատու անձի կողմից կամ դրա բացակայության դեպքում նշված մարմնի ղեկավարի որոշմամբ հաստատվում է շենքի անվտանգությունը:
 - 5) Եթե ծավալման որոշումը որևէ պատճառով չի հասնում տարահանվողներին օժանդակություն ցուցաբերող մարմնի ղեկավարին, ելնելով անհրաժեշտությունից նա կարող է ծավալման սեփական հրաման տալ, ընդունել տարահանվողներին և զեկուցել վերադասին:
31. Տարահանվողներին օժանդակություն ցուցաբերող մարմնի գործունեության դադարեցման որոշում ընդունվում է տարահանման հանձնաժողովի ղեկավարի կողմից՝ տարահանվածներին մշտական բնակության վայր կամ տեղաբաշխման ժամկետներից ելնելով այլ վայր տեղափոխելու դեպքում:

Բաժին 10. Տարահանվողների ընդունում

32. Բնակչության տարահանումն իրականացվում է ՏՀԿ-ից, որտեղ տարահանվողները ժամանում են ինքնակամ կամ շչակներով, բարձրախոսներով և այլ միջոցներով տարահանման ազդանշան ստանալու դեպքում:
33. Յուրաքանչյուր տարահանվողի առաջարկվում է՝

- 1) ունենալ անձը հաստատող փաստաթուղթ, երեք օրվա սննդամթերք ու ջուր և այլ անհրաժեշտ պարագաներ,
 - 2) հոսանքազրկել և գազազրկել տունը կամ բնակարանը և անվտանգ տեղեր տեղափոխել հրդեհավտանգ ու պայթյունավտանգ նյութերը և առարկաները,
 - 3) տարահանման ընթացքում կատարել ՏԿ ու շարասյան պետերի հրահանգներն ու հանձնարարականները:
34. Եթե տարահանումն իրականացվում է այլ տարածքներից ՏՀԿ կարող են ծառայել նաև որպես ԺՏԿ-եր:

Բաժին 11. Տարահանման միջոցառումների ապահովումը

35. Տարահանման միջոցառումների ապահովումն իրականացվում է հանրապետական գործադիր մարմինների, տարածքային կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ պաշտոնական մարմինների և կազմակերպությունների ուժերով ու միջոցով՝ համաձայն իրենց կանոնադրությունների:
36. Վնասի, օգնության, հաղորդակցության միջոցների, բժշկական ծառայության և սանիտարական պայմանների վերահսկման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է վտանգավոր գոտում գտնվող տարահանվածներին և մարդկանց: Տարահանվածների կենսաապահովումը տարահանման վայրերում իրականացվում է համաձայն «Երևան քաղաքի բնակչության տարահանման կենսաապահովման պլանի»:
37. Վնասի և անհրաժեշտ օգնության վերաբերյալ տեղեկատվությունը հավաքվում է հետախուզման միջոցով և տարածվում հաղորդակցության միջոցների օգնությամբ հետևյալ ձևով՝
- 1) Վնասի հետախուզություն
 - ա) պատասխանատու անձիք են Երևանի քաղաքապետը և Երևան քաղաքի փրկարարական վարչության պետը,
 - բ) իրականացվում է ընդհանուր և հատուկ հետախուզություն,
 - գ) հետախուզությունը կազմակերպվում և արդյունքների գնահատումը իրականացվում է Երևան քաղաքի փրկարարական վարչության կողմից, ներգրավվելով ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության, կենսաապահովման ընկերությունների և այլոց համապատասխան ստորաբաժանումներին՝ համաձայն հետախուզման խմբերի, օղակների խնդիրների և տվյալ աշխատանքային գոտիների:
 - դ) պատասխանատու անձիք որոշում են հետախուզության և արդյունքների

զնահատման վերաբերյալ զեկույցների տրման կարգն ու ժամանակը:

2) Հաղորդակցության հոսք և միջոցներ

ա) Հաղորդակցության տրամադրումն իրականացվում է տարահանման ժամանակ Երևանի կապի և ազդարարման ծառայության օգնությամբ՝ համաձայն կապի կազմակերպման սխեմայի:

բ) Տարահանման հանձնաժողովում հաղորդակցությունը կազմակերպվում է հետևյալ ձևով.

- Ուղիղ հեռախոսակապով տարահանման հանձնաժողովի և քաղաքի վարչական ղեկավարների հետ,

- Հեռախոսակապով տարահանման հանձնաժողովի և տարահանվողների ընդունման մարմինների ղեկավարի հետ,

- Բջջային և հեռախոսային և կապի այլ միջոցներով կազմավորումների հետ:

գ) Բնակչության ազդարարումը կազմակերպվում է կենտրոնացված ձևով՝ օգտագործելով ազդարարման համակարգը՝ շչակները, ռադիոն և հեռուստատեսությունը, ինչպես նաև տարահանվողների ընդունման մարմինների ուժերի միջոցով՝ կիրառելով բարձրախոսներ, հեռախոսային կապ և հաղորդակցության շարժական միջոցներ:

3) Տարահանման հանձնաժողովի ազդարարման հրաման արձակվում է տարահանման հանձնաժողովի ղեկավարի կողմից, համաձայն ազդարարման սխեմայի: Բնակչության ազդարարումն իրականացվում է Երևանի կապի և ազդարարման ծառայության, ինչպես նաև հաղորդակցության բոլոր հնարավոր միջոցներով, ներառյալ լրատվամիջոցները, որոնց հետ նախապես անհրաժեշտ է կնքել համաձայնագիր: Խոցման հետևանքով հանձնաժողովի անգործունակության դեպքում, հայտարարությունը արվում է վարչական շրջանների ղեկավարների, ճգնաժամային կառավարման կենտրոնի և ԱԻՆ-ի կողմից: Այդ դեպքերում հայտարարության բովանդակությունը պետք է միաժամանակ փոխանցվի տարահանման հանձնաժողով և ճգնաժամային կառավարման կենտրոն, որպեսզի հայտարարությունը համահունչ լինի ազգային մակարդակում արվող հայտարարությունների հետ: Ազդարարման երեք քայլերը՝ «Տեղեկատվություն», «Խորհուրդ» և «Հրաման» բնակչությանը հայտարարվում են հետևյալ ձևով.

ա) Տարահանման վերաբերյալ «Տեղեկատվությունը» հայտարարվում է նույնիսկ նախքան պաշտոնական լիազորված մարմնի կողմից վնասի վերաբերյալ տեղեկատվության հավաքը և վերլուծությունը: Տեղեկատվությունը (ինչպես օրինակ՝ իրական ժամանակում սեյսմիկ ինտենսիվության արտապատկերման համակարգի

միջոցով ստացված սեյսմիկ ինտենսիվությունը և այս պլանում նշված տարահանման վայրերը, ինչպես նաև վնասի վերաբերյալ մինչ այդ հավաքված տեղեկատվությունը) պետք է հայտարարվի, որպեսզի տուժածները կարողանան ձեռնարկել սեփական գործողությունները, առանց խուճապի մեջ ընկնելու այն դեպքում, նույնիսկ եթե պատասխանատու կազմակերպությունները լիարժեք չեն վերահսկում իրավիճակը և հնարավոր են լուրջ վնասներ:

բ) Տարահանման վերաբերյալ «Խորհուրդը» հայտարարվում է վնասի վերաբերյալ տեղեկատվության վերլուծության հավաքման հետ համընթաց: Չնայած վնասի վերաբերյալ տեղեկատվության վերլուծությունն ավարտված չէ, «Խորհուրդը» հայտարարվում է ընդունման կետերում տարահանվողների պատշաճ արձագանքման համար՝ ընդունման համակարգի ձևավորման նպատակով, այն դեպքում, երբ կանխատեսվում են որոշակի վնասներ և որոշ մարդիկ կարող են ցանկություն ունենան ինքնուրույն տարահանվել: Ուժեղ երկրաշարժի դեպքում հնարավոր է, որ «Խորհուրդը» հայտարարվի «Տեղեկատվության» հետ միաժամանակ:

գ) Տարահանման վերաբերյալ «Հրամանը» հայտարարվում է, երբ իրավիճակը վերլուծվում և հստակեցվում է: Հայտարարությունն արվում է այն դեպքում, երբ անհրաժեշտ է համարվում բոլոր առնչվող կազմակերպությունների, պատասխանատու անձանց կողմից արձագանքել տուժածներին փրկելու համար:

38. Հասարակական կարգի պահպանության ապահովումն իրագործում է ՀՀ Ոստիկանության Երևանի վարչությունն իր ստորաբաժանումներով և իրականացնում հետևյալ միջոցառումները՝

- 1) Անցագրային ռեժիմի իրականացում,
- 2) Տարահանման միջոցառումներում ներգրավված տրանսպորտային միջոցների ընտրանքային հսկողության իրականացում,
- 3) Օգնության ցուցաբերում տարահանման համար պատասխանատու անձանց՝ նվազագույն ժամանակահատվածում վտանգավոր գոտուց մարդկանց դուրս բերելու նպատակով տրանսպորտային միջոցների մոբիլիզացման ուղղությամբ,
- 4) Հասարակական կարգի պահպանում և անվտանգության ապահովում տարահանման բոլոր փուլերում,
- 5) Օբյեկտների պահպանություն,
- 6) Ճանապահային երթևեկության կարգավորում,
- 7) Տարահանվածներ տեղափոխող ավտոշարայունների ուղեկցում,
- 8) Վտանգավոր գոտում տրանսպորտի մուտքի ռեժիմի ապահովում,
- 9) Պայքար հանցագործության դեմ,

10) Հասցեատեղեկատվության աշխատանք (տարահանվածների տեղաբաշխման վերաբերյալ տեղեկադարանի ստեղծում),

ա) խուճապի և զանգվածային անկարգությունների կանխմանն ուղղված միջոցառումների անցկացում,

բ) տարահանված վայրերում ու տարածքներում պարեկային ծառայության իրականացում,

գ) տարահանման երթուղիների անցողունակության և տարահանված տարածքներում մնացած գույքի և օբյեկտների պահպանության միջոցառումներ,

դ) համագործակցելով ԵՓՎ-ի հետ տարահանման ընթացքում իրականացնում է նաև բնակչության տեղեկատվության հաղորդում և գործելակերպի վերաբերյալ հրահանգավորում:

39. Բժշկական ապահովումը ներառում է առողջապահական կազմակերպությունների կողմից անցկացվող կազմակերպական, բուժական, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումներ: Բժշկական ապահովման միջոցառումներն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչությունը՝ մայրաքաղաքի բուժօգնության կենտրոնի և միջոցներով: Տարահանման ընթացքում իրականացվում են բժշկական ապահովման հետևյալ միջոցառումները՝

1) Բժշկական կետերի ծավալում և անձնակազմի հերթապահության կազմակերպում տարահանվողների ընդունման մարմիններում,

2) Հիվանդների սպասարկման կազմակերպում,

3) Սանիտարական իրավիճակի նկատմամբ մշտական հսկողության իրականացում,

4) Հակահամաճարակային իրավիճակի պարբերաբար ուսումնասիրում, հիվանդների հայտնաբերում և այլ միջոցառումների իրականացում,

5) Բժշկական միջոցներով ապահովում:

40. Քաղաքի տարածքի հիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողությունն իրականացվում է առողջապահության նախարարության պետական հակահամաճարակային հսկողության տեսչության տարածքային ստորաբաժանումների և Երևանի լաբորատոր դիտարկման համակարգի համապատասխան հաստատությունների կողմից: Ձևավորվում են նաև սանիտարական խմբեր գոհերի փոխադրման և թաղման վայրերում սանիտարական մշակման համար:

41. Տրանսպորտային ապահովումը միջոցառումների համալիր է, որն ընդգրկում է տարահանման փոխադրումների համար նախատեսված տրանսպորտային միջոցների նախապատրաստումը, բաշխումը և շահագործումը: Տարահանման միջոցառումների տրանսպորտային ապահովումն իրականացվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության

միջոցով՝ համաձայն ներկայացված հայտերի: Բնակչության տարահանման համար կարող են օգտագործվել մարդատար տրանսպորտի բոլոր տեսակները: Անհրաժեշտության դեպքում կարող են օգտագործվել նաև և այլ տրանսպորտային միջոցներ, որոնք նախապես պետք է հարմարեցնել մարդկանց փոխադրելու համար: Տարահանումն ընդգրկում է ողջ տրանսպորտը (անկախ սեփականության ձևից), այդ թվում՝ քաղաքային: Ավտոտրանսպորտային փոխադրումների կազմակերպված իրականացման նպատակով ստեղծվում են հատուկ ավտոմոբիլային կազմավորումներ: Անձնական օգտագործման տրանսպորտը սեփականատերերի համաձայնությամբ նույնպես ներգրավում են այդ աշխատանքներում: Տարահանման ընթացքում իրականացվում են տրանսպորտային ապահովման հետևյալ միջոցառումները՝

- 1) Բնակչության, կենսաապահովման և նյութական միջոցների տեղափոխման համար,
- 2) ԱՊՄ-ն մոբիլիզացիոն պահեստներից բաշխման կետեր տեղափոխելու համար:

42. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչությունն ապահովում է տարահանվող բնակչությանը սննդամթերքով, ջրով, հագուստով, սպիտակեղենով, կոշիկեղենով՝ առևտրի ձեռնարկությունների ցանցերի, սննդի օբյեկտների և նրանց բազայի վրա ստեղծված պարենային, իրային և ջրամատակարարման շարժական կետերի միջոցով: Մննդի ապահովումը ներառում է տարահանման ընթացքում բնակչության և կազմավորումների ապահովում: Այն կարող է իրականացվել ինչպես հասարակական սննդի օբյեկտների, այնպես էլ ծավալված և շարժական մատակարարման կետերից: Մննդի, ջրի և առաջին անհրաժեշտության պարագաների ապահովումն իրականացվում է համաձայն կենսաապահովման պլանով սահմանված չափաքանակների:

43. Երևանի քաղաքապետարանի առևտրի վարչությունն իրականացնում է նաև նյութատեխնիկական ապահովումը, որը ներառում է տարահանման ընթացքում տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման կազմակերպում, պահեստամասերի և վառելիքաքսուկային նյութերի և գույքի մատակարարում: Նյութատեխնիկական ապահովման նպատակով ստեղծվում են մատակարարման կետեր, որոնք իրականացնում են ուժերի և միջոցների ապահովում:

44. Տարահանման երթուղիների ապահովումը իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության վարչության կողմից և ուղղված է վտանգավոր գոտուց բնակչության տարահանման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը և իր մեջ ներառում է հետևյալ միջոցառումները՝

- 1) Ինժեներական հետախուզություն, որի ժամանակ ճշտվում է ճանապարհների, շենքերի, կամուրջների և անցումների վիճակը,
- 2) Տարահանման ուղիների և ճանապարհների անցանելիության ապահովում,

- 3) Վնասված կարևորագույն նշանակության կամուրջների վթարավերականգնողական աշխատանքների իրականացում,
- 4) Տուժածներին ժամանակավոր կացարաններով ապահովում՝ արագ կառուցվող միջոցներով բնակելի շինությունների կառուցում,
- 5) Փրկարարական աշխատանքների տեղամասերում փլուզման վտանգներ կայացնող կոնստրուկցիաների ապամոնտաժում, վնասված և փլուզված շինություններից տուժածների դուրսբերման աշխատանքների աջակցություն (համագործակցելով փրկարարների հետ):

Բաժին 12. Տարահանման կառավարումը

45. Բնակչության տարահանման պլանավորումը և կազմակերպումը, տարահանվածների տեղաբաշխումը, բազմակողմանի կենսաապահովումը և արտակարգ իրավիճակների վերացումից հետո նրանց վերադարձը մշտական բնակչության վայրերն իրականացնում են պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները՝ տարահանման հանձնաժողովների միջոցով:
46. Տարահանման հանձնաժողովը որոշում է տարահանման միջոցառումների իրականացման ժամանակ դրանց մասնակցող կազմակերպություններն ու մարդկանց կազմը, ինչպես նաև վերջիններիս կոնկրետ խնդիրները:
47. Գործողությունների պլանները կազմվում են միջոցառումների իրականացումն արագացնելու համար, հնարավոր խնդիրներից կարևորներն ընտրությունից հետո, ինչպես օրինակ՝ տարահանման կետերի ծավալումը, իրավիճակի հետախուզությունը, վերլուծությունը, տարահանվողների տեղաբաշխումը, թույլերի նկատմամբ հատուկ հատուկ խնամքը, տարահանվողների ցուցակների պատրաստումը, տարահանվողների կարիքների հավաքագրումը, համակարգման աշխատանքներ առնչվող հանրային պաշտոնյաների, ՋԼՄ-ների հետ, տեղեկատվության տրամադրումը (վնաս, իրավիճակը, հակամիջոցներ, իրականացման քաղաքականություն, կենսաապահովման վերականգնում և այլն), սանիտարական համապատասխան պայմանների պահպանումը, բուժապասարկումը, համապատասխան հանրային իշխանությունների հետ համագործակցությամբ սննդի և ապրանքների բաշխումը, կամավորների ընդունումը, տարահանվողների շրջանում տարաձայնությունների, վեճերի լուծումը, տարբեր ձևաթղթերի պատրաստումը և այլն:
48. Տարահանման ուղեցույց
 - 1) Չնայած տարահանման վերաբերյալ «Տեղեկատվությունը» հայտարարվում է, անմիջապես ուժեղ երկրաշարժից հետո հնարավոր է, որ պաշտոնական օգնությունը հասանելի չլինի տարահանումն ուղղորդելու համար: Բնակչությունը, ովքեր մտադրվում են տարահանվել, կարող են տարահանվել սեփական որոշմամբ: Սահուն և ապահով տարահանման համար պետք է ունենան գիտելիքներ և հմտություններ, ձեռքբերված կրթության և ուսուցման միջոցով:

2) Տարահանման ժամանակ անվտանգության ուղղությամբ ոստիկանության ուղղորդումը կիրականացվի երթևեկության վերահսկման հետ միասին: Այն դեպքում, երբ ոստիկանների քանակը չբավարարի լայնամասշտաբ վնասների համար, ոստիկաններ կուղարկվեն հիմնական տարահանման երթուղիներ:

3) ՏՀԿ-ում գտնվող համապատասխան պաշտոնյաները պետք է ուղղորդեն տարահանվողներին ԺՏԿ-ներ տեղաշարժվելիս: Ուղղորդումը ներառում է ԺՏԿ գտնվելու վայրը, որի անվտանգությունը հաստատված է, ԺՏԿ տանող երթուղին, տեղաշարժվելու համար անհրաժեշտ անվտանգության տեղեկատվությունը, ԺՏԿ-ում տրամադրվող օգնությունը և այլն:

49. Կամավորները նույնպես ներգրավվում են տարահանման, արձագանքման, վերականգման գործողություններում:

Գլուխ IV. Վերականգնում

Բաժին 13. Ժամանակավոր կացարաններ

50. Ժամանակավոր կացարանները կառուցվում և բաշխվում են անօթևան մնացած մարդկանց՝ վրանային ավանների համեմատ ապրելու ավելի լավ պայմաններ ապահովելու համար:
51. Այդ նպատակով կազմակերպվում է նաև կենսաապահովման միջոցառումների իրականացումը և միաժամանակ ձեռնարկվում են միջոցներ զբոսաշրջության, կրթության և այլ խնդիրների լուծման համար:
52. Ժամանակավոր կացարանները գործում են մինչև տարահանվածներին մշտական բնակության վայրերով ապահովումը:

Բաժին 14. Վերականգնման միջոցառումները

53. Վերականգնման համար իրականացվող միջոցառումները պայմանականորեն կարելի է բաժանել 3 փուլի՝
- 1) Նախապատրաստական,
 - 2) Տարահանման ընթացքում իրականացվող
 - 3) Միջոցառումներ ուղղված բնակչության վերջնական տեղաբաշխմանը:
54. Նախապատրաստական միջոցառումներն են՝
- 1) Կառավարման մարմինների պատրաստության բարձրացումը
 - 2) ԱԻԿԿ տեխնիկական հագեցումը
 - 3) Ազդարարման 3 մակարդակների բարելավումը
 - 4) Շենքերի ամրացման ծրագիր
 - 5) Պլանների բարելավումը
 - 6) Ազատ (կանաչ) տարածքների ավելացումը

- 7) Ջրամատակարարման տարողությունների տեղաբաշխումը
 - 8) Պահեստների ստեղծումը և օպտիմալ տեղաբաշխումը
 - 9) Ճանապարհների կառուցումը և պահպանումը:
55. Տարահանման ընթացքում իրականացվող միջոցառումներն են՝
- 1) Ժամանակավոր կացարանների կառուցում
 - 2) Բազմակողմանի ապահովում:
56. Միջոցառումներ ուղղված բնակչության վերջնական տեղաբաշխմանը
- 1) Վնասված շենքերի վերականգնում,
 - 2) Նոր շինությունների կառուցում,
 - 3) Կենսապահովման համակարգի լրիվ վերականգնում,
 - 4) Այլ գործողություններ ուղղված սոցիալական, հոգեբանական իրավիճակների վերականգմանը, որոնք պետք է իրականացվեն վերականգման այլ պլանների օգնությամբ:

Հավելվածներ՝

- ա) պլանի N 1 հավելված՝ տարահանման մարմինների գործառնական պարտականությունները,
- բ) պլանի N 2 հավելված՝ տարահանման պլան-ժամանակացույց,
- գ) պլանի N 3 հավելված՝ տվյալներ տարահանվողների ընդունման մարմինների տեղաբաշխման վայրերի վերաբերյալ,
- դ) պլանի N 4 հավելված՝ պայթուցավտանգ, հրդեհապայթուցավթանգ, հրդեհավտանգ և քիմիապես վտանգավոր օբյեկտներում վթարի և դրա սպառնալիքի դեպքում բնակչության տարահանման հաշվարկը,
- ե) պլանի N 5 հավելված՝ երկրաշարժից հետո տարահանվածների թիվը ըստ ժամկետների:

Հավելված 1
Երևան քաղաքի ուշեղ երկրաշարժի դեպքում
բնակչության տարահանման պլանի

ԳԱՐԾԱՌՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևան քաղաքի տարահանման մարմինների

Երևան 2012թ

ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. ՀՀ ԱԻՆ ՓԾ ԵՓՎ հետ համատեղ մշակում է բնակչության տարահանման պլանը:
2. ՔՊ ծառայությունների հետ համատեղ մշակում է տարահանվող բնակչության պաշտպանությանն և համակողմանի ապահովմանն ուղղված միջոցառումները:
3. Կազմակերպում է տարահանման և ընդունման հավաքակայանների վարչակազմի նախապատրաստումը:
4. Ճշտում է բնակչության տարահանման պլանը, համակողմանի ապահովման միջոցառումները:
5. Կազմակերպում է հետիոտն տարահանման երթուղիների նախապատրաստումը: Հսկում է տարահանված բնակչության ընդունման հավաքակայանների նախապատրաստումը ընդունելության համար:

Բնակչության տարահանման իրականացման վերաբերյալ կարգադրություն ստանալուց հետո

Տարահանման մարմինը

1. Կազմակերպում է տարահանման հավաքակայանների ծավալումը:
2. Հավաքում և ամփոփում է տվյալներ մեկնման /ժամանման/ մասին, բնակչության տեղաբաշխման մասին զեկուցում է վերադաս տարահանման հանձնաժողովին:
3. Համապատասխան ծառայությունների հետ համատեղ կազմակերպում է մեկնող /ժամանող/ բնակչության պաշտպանությունը և համակողմանի ապահովումը:

ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Կազմակերպում է բնակչության հավաքը, հաշվառումը և ուղարկումը տեղաբաշխման կետեր տրանսպորտով և հետիոտն կարգով:
2. Զեկուցում է տարահանման հանձնաժողովին բնակչության քանակի և ժամանման /մեկնման/ ժամկետների մասին:
3. Կազմակերպում է հավաքակայանում գտնվող բնակչությանը առաջին բժշկական օգնության ցուցաբերումը:

4. Ապահովում է հասարակական կարգի պահպանումը, բնակչության պատսպարումը:

***ՏԱՐԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՆԵՐԻ
ԽՆԴԻՐՆԵՐԸ***

1. Դիմավորում է ժամանող գնացքները, ավտոմոբիլային և հետիոտն շարասյուները և իջեցման կետի վարչակազմի հետ համատեղ ապահովում է բնակչության իջեցումը:
2. Կազմակերպում է մարդկանց ժամանակավոր տեղավորումը մոտակա բնակավայրերում:
3. Բնակչությանը ուղարկում է մշտական տեղակայման վայրեր:
4. Ձեկուցում է մարզային /քաղաքային/ հանձնաժողովին բնակչության քանակի և ժամանման /մեկնման/ ժամկետների մասին:
5. Կազմակերպում է բնակչության բժշկական օգնության ցուցաբերումը:
6. Ապահովում է հասարակական կարգի պահպանումը և բնակչության պատսպարումը ՔՊ ազդանշաններով:
